Յիւեթիոն Եղիսպաւլիս, որ է երեք քարն Պաղլպաքոյ:

---

[1]) Die Hdschr. hat տաղան.
[2]) Die Hdschr. hat մնաց.
[3]) Die Hdschr. hat ատարցն.

Digitized by Google

բ·

Կապիտաւլին Ռոմիս, որ էր տաճար ի Հռոմ, յորս յարկ|ին էին 270a անդրիք խաւթանասուն և երկուք, զանկակ ի ձեռն և ագո|աւք խաւթանասուն և երկու, որք, ըստ ազգաց իւրաքանչիւր շարժ|ելոյ ի պատերազմ ընդ նոսա, յառաջագոյն նշանակէին գոչելով | կամ զանկակ արկանելով. որք հոսեալ կործանեցան ի կարդալ զ|թուխթ առաքելոյն. և վասն զի խանկարեցան զարմանքն այն | ամենայն, յետոյ ի տեղի նորա կանգնեցին զաւագ եկեղեցին | Կոստանդինուպաւլսի:

գ·

| Թէատրոնն Երակլեա, որ է տեսարան շինեալ ի վերայ անդր|իոյ միոյ, որ տանի իդ մարդ յԵրակլիայ քաղաքի ի Թրիակ:

դ·

Բելեռաքանդիս և Զմիւռնիայ, որ է այր հեծեալ ի ձիս և ի նի|զա-կին ցցեալ, գունդ կապարեա և վերայ գ գլխի առիւծուն | ոչ որ հասանելով. և է սա ի Զմիւռնիայ քաղաքի:

ե.

ՅԱսիայ նաւ ոսկի և զեկոս, որ է տաճար ի մեծամեծ քարանց | ի Կիզիկոն քաղաքի ի Բիւթանիայ:

զ·

Պալսաւդ, որ է անդրի ի կգ կանդնոյ յՌաւդոս կղզոջ:

է.

Փարաւս ի յԱղեքսանդրիա, որ է սիւն ը վտաւանեաւ շինե|ալ ի վերայ ապիկէ կրիայից ի ծովեզերին Աղեքսանդր, և փոխ|անակ ապարանից Նաբուգոդոնոսորա եղեալ, տարաւ Նոնէոս | Հռոմայեցւոց թագաւորն զկապիտաղին կազմեաց Տարկե|նիս Սուպերբոս եգիտ բանդս, կապանս, շղթայս և պղնձա|հատս և դարբինս: Յամն Դարեհի Սերքսիա Պարսք սկիզբն ա|րարին պաշտելոյ զհուր, որ բերաւ յԵրուսաղէմէ ի բակիրացիս և աթա|յան անկաւ զի և անուն մոգինաթող Սշտապեա կոչեցաւ:

Digitized by Google

XXV.

(Vgl. Einl. Nr. 33)

Սահմանք մասանց պէսպէս շարժմանց և կէից: 271a 1.
| Բնութիւն է սկիզբն շարժման և դադարման: Երկեղ է ակն|- 2. 3.
կալութիւն չարի: Ցանկութիւն է անխափան ներգործութիւն բնական 4.
ունակութեան: Տրտմութիւն է եռեալ շուրջ զսրտիւն արեան: Խաբէու- 5.
թիւն է ընդդիմակ ճշմարտութեան: Ամբար|հաւաճութիւն է պատճառք 6.
բարոյ ոչ էր. Հպարտութիւն է հա|ճութիւն իւր միայնոյ: Բարի է, որում 7.
ամենեքեան ցանկան: | Չար է, յորմէ ամենից է փախչելի: Ընծանձնութիւն 8.
է նմա|նաբար բերել զպատահումն վատ և լաւ: Բարէբախտութիւն է | 9. 10.
բարիոք վրճարիլն յելս կենաց: Բարի թէ յոգուոջ է խնդու|թիւն առնէ, 11.
թէ մաւտ է յոյս, թէ հեռի դժուարահաւատու|թիւն, թէ եւ հեռի 12.
անհաւատութիւն: Չար, թէ յոգուոջն է, | տրտմութիւն առնէ, թէ հեռի 13.
երկեղ. թէ եւ հեռի քաջալերու|թիւն կամ արհամարհութիւն: Խնդութիւն 14.
և յոյս բարէյուսու|թիւն առնէ. յոյս և դժուարահաւատութիւն կեղծաւո- 15.
րութիւն. | երկեղ և տրտմութիւն՝ տարակուսանք. երկեղ և քաջալե- 16.
րու|թիւն՝ վստահութիւն և համարձակութիւն: Արդարութիւն է | հաւասա- 17. 18.
րաբաշխութիւն և կրկին է. է՛ որ ըստ հաւասարութիւն | իրի, և է՛ որ ըստ 19.
դիմաց: Անիրաւութիւն է անհաւասարութեան | բաշխողութիւն: Սէր է 20.
բարէկրութիւն, ի փոխարկութիւն ա|նմանաց գոլով: Բարեմտութիւն է 21.
կամք առաքինեաց, ոչ յա|ղագս իւր, այլ սիրելոյն գ̅ սկիզբն ունի[1]), և ոմն 22.
զպէտսն և | ոմն զցանկութիւնն, և ոմն զլաւութիւնն, զի սիրելիք կամ 23.
վասն | պիտոյից են կամ վասն ցանկութեան կամ վասն լաւին. բնութիւն 24.
է. | որ փոխանակ սեռի և տեսակի առի, զի բնութիւն մարդոյ տեսակն|իւր 25. 26.
է. և բնութիւնն արարչական կոչեցաւ, որպէս յարմարիչ | նիւթոյ, սկիզբն 271b 1.
շարժման և դադարման, որպէս ի ձուն շարժէ | զտեսակ ձագուն և դադարէ 2.
յետ կերպացնելոյն: | Մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և 3.
մակացու|թեան ընդունակ: Անասուն է շնչաւոր զգայական: | Բոյս է 4. 5.
շնչական անզգայուն: Անուն է ձայն արարողի | կամ կրաւղի. որպէս 6.
դատաւոր և դատեցեալ: Բան է | լման խորհրդոյ յայտնական: Բայ է 7.
ձայն, գրոյ նշանակ, շա|րկապէ ձայն՝ դասու նշանակ: Ձայն է վիրաւո- 8.
րութիւն | աւդոյ: Գիր է յաւդաւոր ձայնի մասն: Իմացական է, | որ ի 9. 10.
մտաց իմացեալ լինի: Մակացութիւն է ուղեղ թուեցու|մն կապեալ 11.
պատճառաւ: Մոռացումն է խաւար հոգւոյ: | Յիշումն է փրկութիւն ի 12.
զգայութեան: Զգայութիւն է ախտ ան|ձին ի ձեռն մարմնոյ: Տարակոյս 13.
է սաստկութիւն հակառա|կաց: Դատումն է հաւաքումն հասարակ մտածու- 14.
թեան: | Կարեւոր է բառնալ զկարիսն: Անկարեւոր է, որ ոչ է հա|րկաւոր: 15. 16.
Հաւատ է կարծիք ուժգնակի: Ստարասութիւն է | դրութիւն իրաց: 17.
Բացասութիւն է բառնալն զեղեալն: | Ապացոյց է բան ցուցող առաջնոցն: 18.

---

[1]) Die Hdschr. hat և ոմն գ̅ սկիզբն ունի.

Digitized by Google

Հաւանութիւն և ընդարձակութիւն ոգւոյ։ Անհաւանութիւն է նեղութիւն մտաց։ | Ստահութիւն է արիութիւն հեզոց։ Հոգի է էութիւն ինքնակատար, անմարմին։ Միտք է ակն հոգւոյ իմանալի։ Մարմին է | ընդարմացուցիչ անձինն։ Աշխարհ է աշխար[1]) և սուգ | լալեաց։ Երկիր է զարհուրումն և երկեղ հոգւոյ։ | Երկին է կայական մարմին մշտաշարժ։ Ծով է ծաւալեալ | ծփումն յարակիր։ Մահ է որոշումն հոգւոյ ի մարմնոյ։ | Յարութիւն է հաւատոյ ծանաւթութիւն։ Կեանք է պատկեր | անեղական էին։ Նորոգումն է արծածումն հնացելոյն։

XXVI.

(Vgl. Einl. Nr. 34.)

273a | Երկոտասան առաքելոցն անուանքն յաւետարանէն յայտնի են, | զիասեն թէ երկոտասան անուանքս այս են. Պետրոս և Անդրէաս, Յակոբոս և Յոհաննէս, Փիլիպոս և Թովմաս, Բարդուղիմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփեա և Թադէոս, Սիմոն | և Մատաթիա։

| Իսկ [եւ]թանասուն և երկու առաքելոցն անուանքն յաւետարանին ոչ յիշին, բայց ի պատմութեանց գտեալ եղաք զանուանս | նոցա։ Առաջինն Ադդէ, որ կատարեցաւ յՈւռհա։ Ախէ, որ կատարեցաւ ի Սիրինոսէ Աբգարու որդոյն։ | Անանիա, զոր Փաւլ զաւրավարն եսպան ի Բարիլն. սա զՊաւղոս մկրտեաց։ Ղազար, զոր յարոյց Տէր՝ ի Կիպրոս կատարեցաւ։ | Մելեաւ, որ ի Ռոդոս ծովակուլ եղև։ Կեփաս ի Փշիգար մեռաւ։ Բառնաբաս ի Սամոս մեռաւ։ Յովսէփ որ զՏէրն թաղեաց, ի տան իւրում մեռաւ։ Նիկոդիմոս յԵրուսաղէմ կատարեցաւ։ | Նաթանայէլ քարկոծեցին ի լեառն Խառանու։ Յուստոս ի | Փիլիպպեայ Կեսարիայն կատարեցաւ։ Շիղայ ի Փիլիպուպաւլիս կատարեցաւ։ Յուդայ Յակոբեան ի Բլուդ կատարեցաւ, ըստ | այլոց՝ եթէ յՈրմի քաղաք Հայոց։ Յուդայ, Շապիու որդի, ի Խլաթ կատարեցաւ։ Մարկոս, որ կոչեցաւ Յոհաննէս, յԱղիազու կատարեցաւ։ | Ումնաս ի Մելտենի կատարեցաւ։ Նիկէ ի Պտունի կատարեցաւ։ | Յասոն գազանք կերան ի Պոլոմպոս։ Մանիլ այրեցաւ յԱքքա։ | Բուփոս ի Տլուք սպանաւ։ Աղեքսանդրոս ընկեցաւ | ի վիհ յԵրակլեայ։ Սիմոն Կիւրենացի ի Բաքիուս կատարեցաւ սրով։ | Պինոս ի ձիոց կոխեցաւ։ Ովսէս և Յակոբ եղբարք քարկոծեցան ի Սպարտա։ Թէոդորոս ի Լաւոդիկա հրով կատարեցաւ։ | Պեստորիոս ի Բալու կատարեցաւ։ Ափղիոն և Մամոոն | ի Քուշացւոց երկիրն կատարեցան։

273b Յոնիաս ի Սամոս կատարեցաւ։ | Տիտոս ի Պաղրիտի կատարեցաւ։ Պատրոբաս ի Քաղկեդոն կատարեցաւ։ | Յասոն Կրիտէ ի Խուզիա կատարեցաւ։

[1]) Die Hdschr. hat աշխարհ.

Երմեայ հովիւն յԱնտիո|ք Պիսիդեա կատարեցաւ։ Միւս Կիրակոս ի 3.
Կեսարիա կատարեցաւ։ | Խորիսիմոս ի Բեղնունիս, Նարկեսոս ի Լատիկն 4.
կատարեցաւ։ | Արսլոս ի Կեսարիայ կատարեցաւ։ Տամու ի Միկիլիա 5.
Հռոմ կատարեցաւ։ Տիմոթ յԵփեսոս մեռաւ։ Մարկոս աւետարանիչն 6. 7.
յԱղեքսանդրիայ կատարեցաւ սրով ի Խրոմսէ։ | Եփրեմիոս ի Մայշաւ 8.
կատարեցաւ։ Նիկիտոս ի Տիբերիայ սղո|ցեցաւ։ Բոդոս և Պինոս ի 9.
յԱքայիայ սպանվան։ | Յոհաննէս և Թէոդու ի Բալքա գաղանաց արկան։ 10.
| Ստեփանոս յԵրուսաղէմ քարկոծեցաւ։ Նիկիէս սպանաւ յեկե|ղեցին 11. 12.
ի Խիսոնայ։ Մարտէլոս ի Պալնամոտոս կատարեցաւ։ | Իասաւն ի 13.
Պամփիսկա Զաքարիայ այրւոյն որդի քարկոծե|ցաւ ի Հուրինայ. և այլ 14.
Զաքարիայ ընդ նմա։ Եւ բ. Զակքէ | յանապատն կատարեցաւ։ Աւլումպոս 15.
և Ստեփանէ և Ստուփփի ի Տաքարիա ի բանդի մեռան։ Եպենտիոյ ի 16.
Կանկրեայ այրեցաւ ի դատաւորէն։ Թէոկրիտոս ի Պէլխորե|րախա կատա- 17. 18.
րեցաւ։ Անանիայ և Միմէոն ի Բիւզանդիա | սրով կատարեցան յեպարքոսէն։ 19.

| Այոքիկ Թիւք պատուեալք, յորովայնէ ընդրեալք | և յառաջ քան 20. 21.
զլինելն աշխարհի նկատեալք կազմեցան, բազկաւ|ք Բանին և եղան հիմունք 22.
եկեղեցոյ, և սոքաւք սկսաւ հաւատն, որ է կաթողիկէ եկեղեցի և բնակարան 23.
փառացն Տեառն, խաւսուն աստեղաւք բացափայլեալ ի փառս երկնաւոր 24.
փեսային։ | Եւ է տաւն հբ առաքելոցն յամենայնն հոկտեմբերի բ և յապրիելի 25.
| ի. Թ ի փառս Քրիստոսի. և նմա փառք յաւետեան։ 26.

XXVII.

(Vgl. Einl. Nr. 35).

Յաղագս Թէ ով յառաքելոցն ամուսնացեալ էին և կամ ով ոչ։ 274a 1.

Պետրոս և անուն կնոջ իւրոյ Կուզիա, և որդիք Յովէդ և Յովնան | 2. 3.
և դուստր մի Մոփիա։ Յոկոբոս և Յոհաննէս կոյսք։ | Անդրէաս և 4.
անուն կնոջ նորա Անատաւլի և դուստր մի Մափրի։ Պաւղոս և անուն 5.
կնոջ նորա Մարիգուն և որդիք նորա Սաւուղ և Եւտիքիկոս։ Փիլիպպոս 6.
և անուն կնոջ նորա Թեոփկտի և որդի նորա Թեոփիլէ։ Թովմաս կոյս 7.
էր։ Բարթողիմէոս և կին նորա Թէովդոսիա և որդի նորա Բարտէմիոս։ 8.
| Մատթէոս և կին նորա Կոստիանէ և որդի մի Մատաթիա։ | Յակովբոս 9. 10.
կոյս էր։ Միմոն և կին նորա Մարի և որդի մի | Ասերգի։ Յուդա Յա- 11.
կովբեան և կին նորա Թէովպիտն և | որդի մի Կալիստրատոս։ 12.

Digitized by Google

XXVIII.

(Vgl. Einl. Nr. 36).

274a 13. Յաղագս աւետարանացն գրութեան ։
14. Մատթէոս, աւետարանիչ ի կողմանէ փրկչին, երթեալ զհետ Քրի-
15.ստոսի, | ականատես եղեալ սքանչելեացն Տեառն և վարդապետութեանն,
16. յետ ութն | ամի համբառնալոյ Տեառն մերոյ և փրկչի գրէ զաւետարանն
17. յԱնտի|ոք քաղաքի, հեբրայեցի բարբառով, որ բաւանդակեալ ունի
18. յինք|եան թիւս ճծէ և աւետարանս գլխաւորս կզ, տունս սռ ։
19. 20. | Մարկոս աւետարանիչ աշակերտ Պետրոսի առաքելոյ․ հրամանաւ նորա
21. գրեաց զաւետարանն յԱղեքսանդրիա քաղաքի, յետ եժան | ամի վերանալոյ
22. փրկչին[1]) մերոյ, և գրեաց եբրայեցի բարբառով, | որ բաւանդակէ յինքեան
23. թիւս մլբ, աւետարանս գլխաւորս ծբ |, տունս ռռ ։
24. Ղուկաս աւետարանիչ աշակերտեալ Պաւղոսի | առաքելոյ ի Հռոմ
25. քաղաքի, յետ Ի ամի համբառնալ ոյՏեառն յերկինս, գրեաց զաւետարանն
26. հռովմայեցւոց բարբառով, որ բաւանդակէ յինքեան թիւս յխբ, աւետարանս
27. գլխաւորս հբ, տունս սպ ։
274b 1. Յոհաննէս աւետարանիչ ականատես եղեալ սքանչելեաց փրկչին և
2. վարդապետութեան, յետ ծբ ամի վերանալոյ | փրկչին մերոյ, գրեաց
3. զաւետարանն յԵփեսոս քաղաքի յունական բարբառով, որ բաւանդակէ
4. յինքեան թիւս մլբ, աւետարանս գլխաւորս ոյ ։

XXIX.

(Vgl. Einl. Nr. 37).

274b 5. 6. Աշխատասիրութիւնք ցուցմանց արհեստաբանութեանց ցուցակիս ։ | Եթէ ոչ ով կամ
7. յորում ժամանակաց հայրապետացն են արարեալ զկարգս արհեստաբանութեանց ցուցակիս, և
8. 9. Եթէ ոչ ով էջեր | է Հայաստան աշխարհս և որոց հրամանաւ կամ կարգաւ թարգմանեցին ։
10. Երանելոյն Մովսէսի Խորենացոյ թարգմանչի, որ է | գրիչ սրբոյն
11. Սահակա հայրապետին Հայոց, որդւոյ սրբոյն Ներսեսի ։ Յետ ճժա ամի
12. սրբոյն Գրիգորի եղև սկիզբն թարգմանութեան ի հայերէն լեզուս․ յերկրորդ
13 ամի թագաւորութեանն | Վռամշապհոյ առաքէ սուրբն Սահակ ի Կոստանդնու
14. 15. քաղաքն | և նա բերեալ զսերմնաւրհնէքդ զկալի և զՆձանի, զոր արարեալ
16. էր ի Ն ամի հայրապետութեան իւրոյ սրբոյն Գրիգորի աստուածաբանի ։
17. Իսկ կանոն ջրաւրհնէիցն սրբոյն Բարսղի է արարեալ եպիսկոպոսապետին
18. Կեսարու Կապադովկեցւոց, | յ է ամի հայրապետութեան իւրոյ յԵրուսաղէմ․
19. զի անդ հանդիպեցաւ | և Խոսրով թարգմանիչն իւեր ի Հայս, որ երթեալ
20 21. էր յԵրուսաղէմ հրամանաւ սրբոյն Սահակա ։ Իսկ զապաշխարողսն կարգեալ
22. և դարձեալ ի մեծի հինգշաբաթո ջն արձակեալ սրբոյն | Կիւրղի է արարեալ

---

[1]) Die Hschr. hat փրկիչն.

ի ա̅ ամի հայրապետութեան իւրոյ ի դուռն | սրբոյն Սիոնի յաւուր, յորում 23.
ընծայեցուցանէր զԵդոմայեցիսն յԱստուած. և Արջեան և Կորիւն 24.
թարգմանիչքն բերին ի Հայս: | Իսկ զկարգս մայր աւրհնէիցն սրբոյն 25.
Կիպրիանոսի է արարեալ, որ և զՅուստինէ սուրբ կոյս մայր արար 26.
կանանց հաւատաւորաց: Իսկ զաւանդապս առնելոյ, որ հոգէհանգիստ ասի, 27.
և | վասն քահանայաթաղից, որ է ժ̅ը աւետարան, զոր արարեալ է երանելւոյն 275a 1. 2.
Եփրեմի Խորին Ասորոյ ի Նկոմիտացւոց քաղաքին յլբ̅ ամի հայրապետութեան 3.
իւրոյ. և Ղազար թարքմանիչն եբեր ի Հայս ի ժ̅գ ամի | թարգմանու- 4.
թեան սրբոյն Սահակայ Պարթևի առն Աստուծոյ, որ էր նախանձախնդիր 5.
կարգաց եկեղեցւոյ, որ և ժ̅ թիւ էր ի սրբոյն Գրիգորէ, որ էր յետ | 6.
ճժա ամի անցանելոյ, յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցան
հրամանաւ սրբոյն Սահակայ, ձեռամբ իմով Մովսէսի գրչի Սահակայ | 7. 8.
Պարթևի ի փառս Աստուծոյ: Իսկ վասն Տեառնականի և աղօրհնէիցն
սրբոյն Յուստոսի է արարել, որ չորրորդ եպիսկոպոս էր Երուսաղէմի 9.
յառաքելոյն Յակոբայ: | Ի յերկրորդ ամին (dann in ամէն geändert) սրբոյն 10.
Սահակայ մինչև ի ժ̅գ ամն նորա կատարեցան ի | փառս Աստուծոյ: Իսկ 11.
զաքեմարկեստ Թէոդորոսի եպիսկոպոսի Սիդաւրէ Պանփիւլացւոց քաղաքին 12.
արարեալ է ի ա̅ ամի իւրոյ հրամանաւ մեծին Անտոնի և ք̅. թեբայեցւոցն 13.
սուրբ հօրն Անտոնի և գ̅ Սկիւթացւոց լերինն: Իսկ վասն զրակարգացի 14.
և նկարելոյ եկեղեցւոյ, յետոյ օրհնութիւն և դուռն յետոյ դնելոյ և վասն 15.
որ զնշխարսն ի հանգիստ փոխեն՝ այս | ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն 16.
Գրիգորէ մերոյ լուսաւորչէն: Իսկ վասն | քահանայօրհնէիցն սրբոյն 17.
Սահակայ է արարեալ յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրում. ի Նա- 18.
ւասարդի ամսոյ, որ օր մի էր և յիշատակ սրբոյ | Կարապետին, արար 19.
զքահանայօրհնէքդ և զքահանայթաղէքդ, որ | ունի է̅ աւետարան, և 20.
զաշխարհականի թաղումնդ ի յԱյրարատ գաւառի, ի Վաղարշապատ 21.
քաղաքի, ի վկայարանի սրբոյն Հռիփսիմէի, յետ | ճժա ամի սրբոյն 22.
Գրիգորի, զի մինչև ցայն հնում վարէին. արար սա | և զգիշերոյն քարոզն 23.
և զնոցունց զչորս աղօթսն, որ են այսուքիկ. Վասն | ի վերուստ, Վասն ի 24.
գիշերի, Վասն ուղղելոյ, Վասն գտանելոյ, առաջին կանոնին աղօթք Տէր տու- 25.
ընջեան, փոխն Օ քեզ որ յամենայնի, երկրորդին՝ ի գիշերի և ի տու[նջեան]. 26.
փոխ՝ հովիւ քաջ, երրորդին՝ Տէր երկնի և երկրի, փոխ՝ | Բում ամենազօր, 27.
չորրորդին՝ Գոհանամք, փոխ Կենդանարար զօրու[թիւն]: | Իսկ վասն հիմնար- 28.
կութեան սրբոյ տաճարիդ, ժամահար օրհնելոյ, սկիհ և | մաղզմայ և գիրք և 29.
կնունք առնելոյ և խաչ օրհնելոյ և պսակ օրհ|նելոյ և զքառասնորդացն գ̅ ժամե- 275b 1.
րոյն քարոզն և զաղօթսն Յովհաննու Մանդակունոյնէ արարեալ, որ չորեք- 2.
տասեան թիւ էր ի սրբոյն | Գրիգորէ: Այսքան է, եղբայր գիտնական. յորժամ 3.
կամիցիս քերել ցու|ցակ զՄաշտոցին, զ.քերեալսդ նախ գծեսցես: Եւ 4.
Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է | օրհնեալ յաւիտեանս. Ամէն: 5.

(Nonnos.)

Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz.

Herausgegeben

von

Agop Manandian.

Die mythologischen Erklärungen zu vier Reden des Gregor von Nazianz werden bekanntlich einem gewissen Abte Nonnos zugeschrieben. Sie sollen zu Anfang des VI. Jahrhunderts entstanden sein. (Vergl. Edwin Patzig, De nonnianis in IV. orationes Gregorii Nazianzeni commentariis. Leipzig. 1890; K. Krumbacher. Gesch. der byzan. Lit. Zw. Aufl. 1897, p. 137 und 680).

Diese Scholien besitzen wir in einer altarmenischen Uebersetzung, nicht aber zu vier, wie im Griechischen, sondern zu fünf Reden: 1. Ueber die Epiphanie des Herrn, 2. Ueber Basilius von Caesarea, 3 u. 4 An den König Julian (die zwei Strafreden), 5. Auf den Bischof und Märtyrer Cyprianus.

Der altarmenische Text von Nonnos war bis jetzt noch nicht ediert. In der Bibliothek der alten armenischen Uebersetzungen von Pt. G. Zarbanalian, Venedig, 1889 (neuarmenisch) S. 634 folg. sind zwei Venezianer Handschriften der Scholien erwähnt, von welchen die ältere aus dem Jahre ոծէ (= 1208) stammt. Auf ein handschriftliches Sammelwerk der Ejmiaciner Bibliothek mit den Scholien (aus dem Jahre 1223) hat mich Galust Ter-Mkrtschian aufmerksam gemacht (Hdschr. N. 2093 = Ցայր ցուցակ Nr. 2050). Bald darauf wurde von mir in dem Ejmiaciner Sammelwerk N. 1775 (Ցայր ցուցակ N. 1733) ganz zufällig noch eine zweite Handschrift von Nonnos entdeckt, die an Korrektheit des Textes alle bekannten übertrifft. Dieselbe ist in alter Transitions-Rundschrift geschrieben, so dass ich die Zeit ihrer Abfassung ungefähr ins XIII. Jahrhundert setze.

In dem Ejmiaciner Ցայր ցուցակ (Karenian, erschienen 1863 in Tiflis) enthält das aus Versehen als ‚laconische Geschichte‘ angeführte

Digitized by Google

Werk[1]) dreissig Kapitel (ա̅—լ̅) ‚mythologischer Geschichten‘, welche aus verschiedenen Teilen der Scholien von einem unbekannten Schreiber *Hovsēp‘* zusammengestellt sind (Hschr. N. 1808 = Մայր ցուցակ N. 1765, aus dem Jahre ռճլթ = 1690). Ausserdem liegt uns eine zusammenfassende Kompilation der Scholien, wie P. J. Daschian richtig vermutet hat, im „Liber Causarum“ vor (Vgl. P. J. Daschian. Cat. der arm. Hschr. in der Mech.-Bibl. zu Wien, 1895 S. 225—229).

Für unsre Ausgabe haben wir den ausführlichen Text der zwei genannten Ejmiaciner Handschriften benutzt und bei unverständlichen Stellen auch die Auszüge des Hovsēp‘ und „Liber Causarum“ möglichst berücksichtigt.

Ueber den Autor der Scholien giebt uns der Schreiber Hovsēp‘ in der Nachschrift zu den Auszügen ein Zeugnis, und zwar nennt er als Verfasser den armenischen Philosophen David Anhałt‘: « *Զայս քանի մի առաջնոց հեթանոսաց առասպելական պատմութիւն, զոր արարեալ է դաւիթ յանյաղթ փիլիսոփայի և ես պիտո՞կ և վրիպակ յոլնէփս զպիտանացուն ընտրեցի և ծրեալ եդի ի վերջ գրգիս* ... » (N. 1808 = Մայր ցուցակ N. 1765, Bl. 340b). Die Hschr. N. 1775, die ausser Nonnos (Bl. 2a—Bl. 108a) noch Bruchstücke aus Hesychius Miles. (Urgeschichte Konstantinopels, Bl. 108b - 117b), aus Eusebius von Caes. (Bl. 117b bis 127a) und dem „Liber Causarum“ enthält, weist eine Nachschrift auf, die sich wahrscheinlich auf den wesentlichen Teil des Sammelwerks, die Scholien, bezieht und gleichfalls David Anhałt‘ für den Verfasser der „Mythologie der auswärtigen Philosophen“ erklärt. Diese später von einer anderen Hand geschriebene Nachschrift lautet so: « *Գիրքս իմաստասիրաց արտաքնոց առասպելաբանութեն արարեալ դաւթի անյաղթ փիլիսոփայի* » (N. 1775, Bl. 150b). Dem armenischen Philosophen David Anhałt‘ sind auch sonst einige Schriften zugeschrieben, die keineswegs von ihm herrühren. Die Feststellung des Verfassers und der Zeit der Uebersetzung erfordert noch eine eingehende kritische Untersuchung.

1) N. 1765, S. 194 « *պատմութիւն լակոնացւոց արարեալ ի Դաւիթ փիլիսոփայէ և համառօտեալ ի Յովսէփայ ումեմնէ, ունի զյիշատակարան* »։ Diese falsche Angabe ist dann von P. G. Zarbanalian benutzt worden (Bibl. d. a. arm. Uebers., S. 756).

Ծանօթութիւնների մէջ գործածուած կրճատումների.

A. = Ձեռ. N. 1775 Էջմ. մատ. (Մայր ցուցակ, N. 1733).
B. = Ձեռ. N. 2093 Էջմ. մատ. (Մայր ցուցակ, N. 2050).
A լուս. = A ձեռ. լուսանցքի ծանօթութիւնները. (գրիչը և թանաքը չեն տարբերւում բնագրի գրչից և թանաքից).
B. մի ն. գ. = B ձեռագրում մի նոր գրչի սրբագրութիւնները.
Զարբ. = Զարբանալեան. Հ. Գ. Մատենադարան հայկ. թարգման. Վենետիկ, 1889.
Պատմ. գիրք. = Ձեռ. N. 1650 Էջմ. մատ. (Մայր ցուցակ, N. 1608).
(«ե»-երի և «է»-երի գրութիւնը երկու ձեռագրի մէջ էլ երբեմն անորոշ էր. ծանօթութեանց մէջ սոցա տարբերութիւնները նշանակած չենք. իսկ բնագրում հետևել ենք սովորական հին ուղղագրութեանը)։

I.

ԺՈՂՈՎԱՐԱՆՔ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑՆ ԱՑՆՈՑԻԿ, ԶՈՐՍ ՅԻՇԱՏԱԿԵԱՑ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ Ի ՃԱՌԻՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

Ոչ Արամազդայ այսոքիկ ծնունդք և գողութիւնք Կրետացւոց բանսարկք... ԶԱրամազդ աստուածաբանքն հեղլենացւոց ի Կրոնոսէ ասեն ծնեալ, և ծնանելով կեցեալ այսպէս՝ Կրոնոս ընդ Հռէի ամուսնացեալ և նորին եղեալ բնակակից, զմանկունսն զորս ծնանէր, առեալ սա՝ կլանէր, և այսպէս բազում անգամ այսմ իրի լինելով՝ անզաւակ մնացեալ լինէր Հռէ։ Արդ՝ յորժամ զԱրամազդ ծնաւ, երկուցեալ, թէ գուցէ և զայս կլանիցէ և կորուսցէ, վէմ պատեալ ի խանձարուրս, իբր թէ տղայ, ետ ցԿրոնոս զի կլանիցէ, և զԱրամազդ արտաքրեալ՝ պահեաց ի Կրետէ և կարգեաց առ տղային զկորիւբանտսն և զկուրետսն՝ կաքաւել և զինուք թնդիւնս առնել, զի լինիցին հնչմունք այսպիսիք հնարաւորք, մինչ և գողանալ և մոլորեցուցանել զձայն լալոյ մանկանն, զի մի գիտասցէ Կրոնոս զթաքուստ մանկանն և առեալ կլանիցէ զնա։ Արդ՝ այժմիկ հայր ասէ

---

1) B. պատմութեց. 2) B. զոր. 2) A. ի ճառի. 4) AB. Արամազդա.
5) B. հելլենացւոց. 5) B. կրաւնոսէ. 6) B կրաւնոս [յուն. Κρόνος.]
10) B. տղա. 11) B. ցկրաւնոս. 12) B. առ տղայիւն. 12) B. զկորըբանտն.
12) A. կաքաւեալ. 13) B. թնդիւն. 14) B. մանկանն. 14) B. կրաւնոս.
15) B. այժմ.

Digitized by Google

վարդապետս որդխառեաց զԿրոնոս և մանուկ լացեալ զԱրամազդ. և կուրետս և կորիբանտս, զորս կարգեաց Հռէ կաքաւել առ մանկամբն, դևք ոմանք են, և զինուք կաքաւումն զաղավերջն (?) ասէ, քանզի թնդմունս առնէին բախելով զասպարսն, զի ծածկիցի լալիւն մանկանն. իսկ կրետացւոց բռնաւորին ասաց, քանզի առասպելաբանքն եղղենացւոց աստուած ասեն եղեալ զԱրամազդ, այլ հանդիսական պատմութիւնն, զոր և ստուգէ աստուածայինն Գրիգորիոս, ասէ, թէ Արամազդս բռնաւոր էր կրետացւոց, և կամելով հանել զնա հպատակքն իւր՝ առասպելաբանէին թէ ի Կրոնոսէ և Ըռէէ ունի զլինելութիւն, սակայն մարդ էր, վասն որոյ և ի վերայ հասեալ լինի. թէպէտ և եղղենացւոց հաճոյ ոչ թուիցի, քանզի եղղենացիքն ոչ կամին զԱրամազդ մարդ գոլ ասել և բռնաւոր կրետացւոց, այլ աստուած։

Բ.

Բ. Ոչ փռիւգացւոցն հատումն և փող և Կորիբանտք . . . Այս պատմութիւն կայ և յարձանականսն և է այսպէս. ի փռիւգիա պաշտեալ եղև մայր աստուածոցն Արամազդայ, Պոսիդոնի, Պղուտոնի և Հերայ. արդ մայր աստուածոցս այսոցիկ էր, այլ Կրոնոսի կին էր։ Սմա ի փռիւգիայ լինէին ձաւնմունք, և կատարողքն սոցունց, իբր ափշեալք հեշտութեամբ՝ զմարմինս իւրեանց յաւշէին սրով, ի ձեռն փողոյ հրճուեցուցանելով զինքեանս և յարուցանելով կայտառագոյն ի հարուածսն։ Իսկ մինչև ցարդ եղղենացիք, առ լեռնակողմանս կարիացւոց, անզգամք ոմանք աղճատեալք հատանեն զինքեանս, նախնի սովորութեամբն ըմբռնեալք։

Գ.

Գ. Եւ ոչ Աղջիկ ոք մեզ յափշտակեալ լինի . . . և այս պատմութիւն գրեալ կայ յարձանականսն, և է այսպէս. Դեմետեր, աստուած գոլով ծնաւ

1) B. ղկրաւնոս. 2) B. կուրիբանդս, [յուն. Κορύβαντες, Κουρῆτες]. 2) A. ռե. 2) B. առ մանգանն. 4) B. ծածկեսցի. 4) B. կրետացոց. 5) A. առասպելապանքն. 5) B. ելլացւոց. 6) B. ստուգէին. 7) B. ա̃ծային Գրիգորոս. 7) B. արամազդ. 7) B. կրետացւոցն. 8) B. ի կրաւնոսէ. 9) B. յըռէէ, [յուն. ῾Ρέα.]. 9) B. զլինելութին. 9) B. ի վերա. 10) A. լուսանցքում գրած ունի «ծանուցեալ», B. ծանուցեալ հասեալ. 10) B. ելլենացւոցն. 10) B. ելլենացիք. 13) B. փռիւգեցւոց. 13) B. կորիւտքն. 14) B. կա յարձանականսն. 14) B. այսպիսի. 14) B. (ի) փռիւգիեայ. 15) A. արամազդա. 15) B. պիսիդոնի, [յուն. Ποσειδῶν.]. 15) AB. պղատոնի, [յուն. Πλούτων]. Պղուտոնի մեր ուղղածն է. 15) B. Հերեայ. 16) A. այղ. 16) B. կրաւնոսի. 16) B. փռիւգիա. 17) B. լինի. 17) B. ափեալք. 20) B. ելլենացիք. 20) B. ի առ լեառնակողմամբքն. 23) Աղջիկ յատուկ անուն. [յուն. Κόρη]. 24) A. կա, B. կայ։

Digitized by Google

դուստր յԱրամազդայ, զոր կոչէին Աղջիկ և Պերսեփոնէ. սմա տուփեալ Պղուտոն յափշտակեաց և էջ ի դժոխս: Արդ Դեմետեր շրջելով խնդրէր զԱղջիկն, և բազում ժամեալ եկն յԱտտիկէ. իսկ զտեղին, յոր եկն կոչեաց Եղևսինէ, որ նշանակէ զգալն անդանաւր. այլ ուսաւ առ ի Կեղէոսէ և ի Տրիպտողոմէոսէ, թէ Աղջիկն յափշտակեալ առ ի Պղուտովնոսէ, և է ի դժոխս: Արդ իմացեալ զայս աստուածուհին դադարեաց ի յածմանէն, և փոխարինելով զարսն յաղագս շնորհիս այսորիկ ետ նոցա սերմանիս ցորենոյ և գարւոյ և այլոց հնդից, քանզի ասի սերմանական պտղոց գոլ վերատեսուչ Դեմետեր: Այլ տուեալ զսերմանիսն ետ և վիշապս և կառս թևաւորս առ ի շրջել և բաշխել ամենեցուն զցորեանն և զգարին, զի ոչ ևս գիտէին մարդիկ ուտել հաց կամ վարել ցորենով, այլ ճարակական կենցաղով կէին. սակայն ոչ միայն զցորեանն, այլ և զամենայն սերմանական պտուղսն ետ, և զմիստերիոնս կատարեաց և ուսոյց նոցա, թէ որպէս պարտ է կատարել և կատարեալ լինել. այլ գիշերի եղև կատարելութիւնն յԵղևսինէ, զի և տաճար անդանաւր շինեցաւ նորին Դեմետերեայ: Եւ այլ ասէ այսպէս վարդապետն, թէ զոմանս առնէր բարիոք և զոմանս կրէր, վասն զի Դեմետր կրեաց բարւոք, լուեալ յաղագս դստերն և դադարեալ ի յածմանէն: Եւ ինքն բարի առնէր կրելեացն վասն տալոյն զսերմանիսն և կատարելոյն զմիւստերիոնսն. այլ ասէ լռելեայն և լռելի գոլ արժանաւորացն, վասն զի օրէն էր, որ հրամայէրն ոչ և մի ինչ ումեք ի կատարելոցն և յորոց կատարեալքն լինէին զխորհուրդսն հրապարակել զկատարելութեանն, այլ լռութեամբ ունել և ոչինչ արտայայտել անխորհրդիցն:

Գ.

Գ. Ու Դիոնիսոսի ազդրէն և անդ առ երկանցն անկատար ծնունդ... Սեմեղի դուստր էր Կադմոսի թեբացւոց արքային. սմա տուփեալ Արամազդայ շաղաշարեցաւ ընդ նմա և ի նախանձ շարժեաց զ—երա զկինն իւր, և

1) B. արամազդ. 2) B. պղատոն. 2—3) A. շրջ խնդրելով. 4) A. այդ. 5) A. առ ի կեղեղոսէ. 5) B. ի տրոպտողմիոսէ. ճիշդը պիտի լինիր ի Տրիպտողեմոսէ [Τριπτόλεμος.] 6) B. պղատոնոսէ. 7) B. (ի) յածմանէն. 8) B. սերմանս. 8) B. (և) գարոյ. 9) B. վերատեսուչ Դեմետր գոլ. 9) A. այլ տեսեալ. 10) A. (և) վիշապս. 10) B. ամենիցուն. 11) A. (ևս) չիք. 11) A. վարիլ. B. վարել. 12) B. զցորենն. 13) B. պտուղ. 13) B. զմիւստոոնսն. 16) B. դիմետրեայ. 16) B. (եւ) չիք. 17) B. բարիոք. 19) B. զմեստրիոնն. 19) A. լռելեացն. B. լռելեան. 20) AB. հրամաերն. 21) B. (ումեք) չիք. 21) A. կատարեաքն. B. կատարեալքն. 22) A. զկատարելութի. B. զկատարելութեանն. 22) B. և ոչ. 25) B. դիոնոսիոսի. [յուն. Διόνυσος, Διώνυσος]. 26) B. սեմելի. [յուն. Σεμέλη]. 26) A. թեբէացւոյ. 26) B. արքաին. 26) A. սմայ. 26) B. արամազդ. 27) A. նմայ. 27) A. զհերայ. 27) B. զկին.

նախանձայոյզ լեալ Հերայ երթայ առ Սեմեղի և ասէ ցնա թէ «Պատրեալ լինիս ամենևին, քանզի, որ մերձենայ առ քեզ՝ Զևս ոչ է. քանզի առ իս գալով՝ հանդերձ փայլատակմամբք և որոտմամբք շաղաշարեալ լինի։ Արդ եթէ եկեսցէ առ քեզ Զևս՝ ասա՛ ցնա, թէ որպէս ընդ Հերայ շաղաշարիս՝ այնպէս եկ առ իս, և եթէ մերձենայ առ քեզ փայլատակմամբք և որոտմամբ՝ ճշմարտապէս Զևս մտանէ առ քեզ, ապա թէ այլպէս՝ Զևս ոչ է»։ Զայսոսիկ այսպէս ենթադրելով Հերայ, յորժամ եկն Զևս առ Սեմեղէ հայցէ առ ի նմանէ շաղաշարիլ ընդ նմա որպէս ընդ Հերայ։

Եւ մերձեցեալ որոտմամբ, ոչ հանդուրժեալ Սեմեղեայ բռնութեանն որոտմանցն մահացաւ։ Արդ Զևս՝ փաղփաղակի զմանուկն, որ էր առ նմա, առեալ՝ եհերձ զբարձն իւր և եդ ի ներքս, մինչև լինիցի ամսոց իննուց։ Եւ էր նա Դիոնեսոս։ Արդ անկատար ծնունդ ասէ զմանուկն, որ արկաւ ի բարձն, և բարձն երկնեալ ասէ, զի ծնաւ ի բարձիցն Արամազդայ, և աստուած այրակին անուանէ զԴիոնեսոս, իբրու երբեմն զկանանց կրեալ և երբեմն զարանց գործեալ. և պար արբեցելոցն ասէ զսատիրոսն և զբաքոսն և զսիղենոսն, որք են դեք հետևողք և ուղեկիցք Դիոնեսեայ. զնոյնս և զատս լքեալս ասէ այս ինքն դևս. այլ լքեալս կոչէ զնոսա վասն արբեցութեան, քանզի գինոյ արարիչ զԴիոնիսոս ասեն վայելչապէս և զհետևեալսն նմա արբեցեալս ի ներքս մուծանեն. այլ Թեբէացւոցն անմտութիւն զսա պատուելով ասացեալ է, զի Թեբէացի էր ազգաւ Դիոնեսոս, իբրու ի Սեմեղեայ ծնեալ. անմտութիւն բարւոք ասաց Թեբէացւոցն, քանզի յիմարութեամբ հեգնեալ լինին Թեբէացիքն, վասն որոյ առակ է ասացեալ, թէ ի բիովտացւոց դաշտն նաւ շրջի, այլ հրդեհ երկրպագեալ ընդէ՛ր լինի. ասասցուք, թէ վասն կիզմանն Սեմեղեայ։ Եւ իբրու այլ ինչ գլուխ յառաջագոյնն այլ պատմութիւն է, այլ քանզի շարամանեալ եղև ընդ սմա՝ հարկաւոր է մեզ պատմել։ Գլուխն Արամազդայ գլուխ ասի

---

1) B. լինել. 1) B. երթա. 1) B. սեմելի. 1) A. ցնայ. B. (ցնա). 1) B. պարտեալ. 2) B. մերձենա. 3) B. գոլով. 4) B. ընդ Հերա. 5) B. մերձենա. 5) B. փայլատակմամբ. 6) A. ապայ. 7) B. ընթադրելով. 8) B. առ սեմելի. 8) A. նմայ. 9) B. մերձեցաւ. 9) A. սեմեղեա. B սեմելեայ. 9) B. բռնութեան. 10) AB. նմայ. 11) B. լիցի. 11) A. իննունց. 12) A. դիոնեոս. B. դիոնեսիոս. 13) A. և բարձ. 13) B. արամազդա. 14) B. զդիոնոսիոս. 15—16) B. զսատիրոսն և զբաքոսն և զսեղենոսն. [յուն. Σάτυρος, Βάκχος, Σειληνός]. 16) A. ուղղեկիցք. B. ուղղակիցք. 16) B. դիոնեսիոսի. 17) B. զնոյն և զատ լքեալ ասէ. 18) A. զդիոնեսոս. B. զդիոնիսոս. 18) A. վաելչապէս. 19) A. նմայ. 19) B. այլ Թեբացւոցն այլ Թեբացւոցն. 20) B. Թեբացի. 21) A. ի սեմեղեա. B. ի սեմելէ. 21) B. բարիոք. 21) B Թեբացւոցն. 22) B. Թեբացիքն. 22) B. յառակ. 23) B. ի բովտացւոց. 23) A. հերդեհ. 24) B. կիզման. 24) A. սեմեղեա. B. սեմելեայ. 25) B. յառաջագոյն. 26) A. սմայ. B. նմա. 26) B. արամազդա. 26) B. ասէ.

Digitized by Google

երկնից, որպէս և բարձքն բարձք երկնի, յորժամ եդ ի նմա զԴիոնեսոս: Արդ՝ ասասցուք, թէ յո՛րժամ եղև գլուխ նորա երկնի. յորժամ ունէր ի նմա զԱթենա, քանզի ասի թէ Աթենա ի գլխոյն Արամազդայ ծնաւ, վասն զի անդ ունէր զնա յղացեալ, և առեալ ի Հեփեստոսէ տապար՝ եհերձ զգլուխն և ծնաւ զԱթենա:

Ե.

Ե. Ու. Աֆրոդիտեայ պոռնկական խորհրդոցն.. Ասի թէ յերկուորեացն երկնի Աֆրոդիտէս ընկալաւ (?) զլինելութիւնն, զի Կրոնոս ասէ որդի էր երկնի, առեալ գերանդի եհատ զերկուորիսն հաւր իւրոյ և ընկեց ի ծով. և յայնժամէ հաւաքեալ փրփուր՝ բացածնեալ լինի Աֆրոդիտէս, ուստի և զանունն ընկալաւ, որ է փրփրածին, իբրու թէ ի փրփրոյ և ի յածմանէ ծնեալ. վասն որոյ և ասաց թէ «գարշաբար ծնելոյն իսկ և պատուեցելոյն». զի և պատիւքն նորա և տաւնքն ի ձեռն գարշագործութեան և հեշտախտութեան և պոռնկութեան կատարեալ լինէին, և նոյն ինքն Աֆրոդիտէս պոռնկութեան է վերատեսուչ:

Զ.

զ. Եւ ոչ ֆալլոսք ամէք և ուղղոֆալլոսք . . . Ի տաւնին Դիոնեսոսի փաղղոսս մորթեղէնս ձեւացուցանէին առն պատկառանաց եղղենացիքն, և զոմանս կախէին ի պարանոցս իւրեանց, և զոմանս՝ ի մէջսն, ի պատիւ աստուծոյն իւրեանց, ուղղապէս կախելով ի նմանութիւն պատկառանաց ուղղորդս առնէին, զորս և ուղղափաղղոսս կոչէին, և զմիւսսն՝ կողմնափաղղոսս: Եւ զայս առնէին, պատուելով զտաւնն Դիոնիսի. քանզի սա, նախ քան զհանդիպելն պակշոտութեամբ, ընկղմեալ ի ծովն Կենեայ՝ մեռաւ: Արդ՝ Դիոնեսոս, մխիթարել կամելով զտփումն պատանեկին, թզենի պատկառանս տաշեալ՝ կախեաց զպարանոցէն, և այսպէս շրջէր. վասն որոյ և պատուելով (?) զԴիոնեսոս՝ և եղղենացիքն զփաղղոսսն զէնքեամբք առնուն:

---

1) A. նմայ. 1) B. զդինոնոսիոս. 2) A. նորայ. 3) A. զաթենայ. 3) A. աթենայ. 3) AB. արամազդա. 5) B. զաթենայ. 7) A. պոռընկական. 7) A. ասէ. 7) B. յերկուորացն. 8) AB. ընկաւ, Զարբ. ընկալաւ. 8) B. կրաւնոս. 13) A. նորայ. 14) A. պոռընկութեան. 14) A. պոռընկութեան. 17) B. (ոչ) չիք. 17) A. ուղղփաղոսք. B. ուղափաղղոսք. 17) B. դիոնոսեայ. 18) B. փաղոս. [յուն. φαλλός]. 21) B. ուղորդս. 21) B. ուղափաղոսս. 21) B. զմիւս կողմափաղոսս. 22) B. առնելով պատուէին. 22) A. զտուղն (?). 22) B. դիոնոսեայ. 22) B. (քան) չիք. 24) B. դիոնոսոս. 24) A. զպատանեկին. B. պատանեկին. 25) A. այնպէս. 25) A. պատուիրելով. B. պատուել. «պատուելով» մեր ուղղածն է. 26) B. զդիոնոսիոս. 26) B. (և) ելլենացիքն. 26) B. փաղղոսս. 26) B. զէնքեամբ.

Է.

Է. Յաղագս տաւրացւոցն օտարասպանութեան: Տաւրոս ազգ է սկիւթական, յորում էր տաճար Արտեմիդեայ, յորում տաճարի քահանայուհի էր Իփիգենիա դուստր Ագամեմնոնի թագաւորի: Յայսմ տաճարի զամենայն մարդ եկեալ յաւտարաց զոհէին Արտեմիդեայ: Յաղագս այսր պատմութեան յարձանականսն հաւաստեաւ ստացուք:

Ը.

Ը. Պարմենեան լակոնացւոց մանկահասակացն և որ առ Բագնաւքն արեանն: Այս է այսպէս. Լակեդեմոնացիքն, առ ժուժկալութիւն կրթելով՝ տաւն առնէին, յորում տանջէին զմիմեանս գանիւք փոկոց, և յարիութիւն այսպէս հրահանգէին. քանզի, եթէ ժուժկալք աստանաւր գտանէին համարէին և առ պատերազմունսն նոյնպիսիս լինել: Այլ պատուէին լակոնացիքն ի տաւնս տանջանաւք այսպիսեաւք զԱրտեմիս, զի զնա ասէ կոյս աստուածուհի, զի ժուժկալ է և գեր ի վերոյ ամենայն զանգիտութեան և ներախտութեան. այլ և զխենեշութիւն ասէ պատուեալ ղակոնացւոցն, քանզի առնէին տաւն ինչ, զոր կոչէին զուգաստաղութիւն, յորում հասարակաբար ամենքեան կերակրէին և խրախացեալք իգանային, և կամ զի անդանաւր ճարակէր մանկամոլութեանն ախտ, որպէս ունիմք յաղագս Պաւսանի և Արգիւղիայի. այլ զյանդգնութիւն պաշտեցին ասէ: Յաղագս ժուժկալութեանն և արութեանն է բանս:

Թ.

Թ. Յաղագս Պեղոպայ խոհագործութեանն: Պեղղոմպոս որդի էր Տանտաղեայ: Արդ՝ այսմ Տանտաղոսի եկին հիւրք աստուածքն, և սա կամեցեալ

---

2) B. տաւրացն. 3) A. արտեմիդեա. 3) B. քահանաուհին. 4) B. իփիւգինիա. 4) B. ագամենմոնի. 5) B. արտիմիդեայ. 8) A. գրած է «լակոնացւոց», իսկ յետոյ նոյն գրիչը ուղղել է «լակոնացի». 8) B. մակահասակացն. 8) A. բաքնաւքն. 8) B. արիւն. 9) B. ղակեդոմնացիքն. 11) B. աստաւր. 12) A. այղ. 12) A. պատմերին. 13) B. տանջաւք. 13) B. այսպիսիւք. 14) B. զժուժկալ. 15) B. (և ներախտութեան) չիք. A. ներաւստութեան. Պտճ. գիրք. «ներախտութեան». 15) B. լակոնացոցն. 17) A. ամեքեան. B. ամենիքեան. 17) AB. իգանաին. 18) B. անդաւր. 18) B. մանգամոլութեն ախտն. 19) B. պաւսանիաի. 19) A. արգիւղիաի. B. արգիղիաի. 20) B. յարութե. 22) B. Պելոպոսի խահագործութե. [յուն. Πέλοψ.] 22) B. Պեղոպոս. 22) B. տանտաղա.

Հիւրընկալութիւն առնել՝ եզեն զորդի իւր և եփեալ եդ առաջի նոցա։ Արդ՝ աստուածքն սքանչացան միանգամայն, և ողորմեալ Տանտաղոսի և Հաւաքեալ զմասունս մարմնոյն՝ շարադրեցին և վերստին կենդանացուցին զՊեղղոպս։ Իսկ մի ոմն յաստուածոցն յուսոցն կերեալ ի մարմնոյն Պեղղովպոսի, ի շարադրելն զմարմինն, քանզի պակաս էր մասն, փղոսկր ինչ եդեալ առ ուսն՝ լցոյց զպակասութիւն։ Եւ այսպէս Պեղղովպոս վերստին կենդանացեալ՝ զուսն փղոսկրեայ ունէր. և ամենեքեան պեղղովպիդեանքն յուսոցն լինէին ծանուցեալք. քանզի ծնեալք ի նմանէ զմասն ուսոյն փղոսկրեայ ունէին։

Ժ.

ժ. Յաղագս Ենկատեայ։ ԶԵնկատէ աստուածուհի գոլ խորհին եղլենացիք, և ոմանք ասեն զնա գոլ զԱրտեմիս, և ոմանք՝ զլուսինն, և այլք՝ զհնդիկ ոմն աստուածուհի, անտեղի երևմամբք յայտնեալ կարդացողացն առ նա և մանաւանդ այնոցիկ, որք անիծանեն զոմանս։ Ի տեսիլ վիշապագլուխ մարդոյ երևեալ, գերագոյն քան զչափ երկայնութեան մարդոյ, իբր զի ի տեսլենէն միայն զարհուրեալ և սքանչանալ տեսողացն։

ԺԱ.

ժա. Յաղագս Տրովփոնոսի։ Ի՛ և սա գրեալ ի ճառսն, որ է ընդդէմ Յուլիանոսի։ Տրովփոնոս և Ագամիդէս երկոքին եղբարք էին՝ արուեստիւ դիւթք։ Ի սոցունց առաջինն՝ Տրովփոնիոս սնափառութեամբ զինքն ի խորս ընկեց, զի կարծիցի ի վեր առ աստուածսն յափշտակիլ, և աներևոյթ եղեալ ընդ երկրաւ յայրի ուրեմն։ Իսկ աստուածքն ասէ ողորմելով նմա՝ զտեղին զայն, յորում անշնչացեալն էր՝ արարին դիւթարան. և իջանելով յայրն և ձաւնմունս ոմանս առնելով՝ ելանէին անդուստ ընկալեալք

---

1) A. *նոցայ*. 2) B. *միայն անգամայն*. 3) B. (*և*) *Հաւաքեալ*. 3) A. *վերըստին*. 4) B. *զպեղլոպոս*. 4) B. (*յուսոցն*) *չիք*. 5) B. *պեղլոպոսի*. 5) B *զմարմին*. 6) A. *ուսսն*. B. *ուսն*. 6) B. *փեղոպոս*. 7) A. *վերըստին*. 7) B. *կենդացեալ*. 7) A. *զուսսն*. 7) B. *ունելով*. 7) B. *ամենիքեան*. 8) B. *պիլլիպիդեանքն*. 8) B. *յուսուցն լինին*. 8) A. *քանզի ծանէաք*. 9) AB. *փղոսկրեա*. 11) B. *զեկատեա*. 12) B. *ելլենացիքն*. 12) A. *զնայ*. 14) B. *ի տեսիլ վիշապագլուխ մարդոյ իբր զի ի տեսլենէն միայն զարհուրեալք զի երևեալ գերագոյն քան զչափ երկայնութեան մարդւոյ մինչ սքանչանալ տեսողացն*. 18) B. *տրոփոնոսի*. [*յուն*. Τροφώνιος.] 18) B. *ի ճառս*. 18) B. (*է*) *ընդէմ*. 19) B. *տրոփոնոս*. 20) B. *և արեստիւ դեք*. 20) B. *առաջին*. 20) B. *տրոփոնոս*. 22) B. *որումն*. 22) B. (*ասէ*) *չիք*. 22) A. *նմայ*. 23) B. *անշնչացեալ*. 24) A. *ձունմունս*. B. *ձաւնմուն*. 24) B. *ընկալեալ*.

Digitized by Google

զխնդիրս իւրեանց։ Այլ ասի թէ ամենայն որ իջանէր յայրն այնուհետեւ ոչ ծիծաղէր բնաւ։

ԺԲ.

ժբ. Յաղագս Կաղնոյն Դոդոնեայ։ Դոդոնիայ քաղաք էր առ Հին ցամաքաւն։ Ի սմա էր կաղնի մի, յորում ասի Արամազդայ հովանանալ, և դիւթականութիւն պարգևել կաղնոյն, որպէս զի ի շարժմանէ ոստոցն և տերևոցն յայտնել անյայտիցն և պիտանացուաց նշանակութիւնք։

ԺԳ.

ժգ. Յաղագս դելփական եռոտանոյն։ Դելփիէ քաղաք է փովկիդեայ, և փովկիդեա գաւառ է յԵլլադա. իսկ առ ոտքաւք Դելփիք, և ի սմա էր տաճար Ապողոնի, յորում հարցմունք լինէին։ Անդ էր հաստատեալ պղնձի եռոտանին, յորմէ դիւթութիւնք արտաբերեալ լինէին. քանզի էր ի վերայ եռոտանոյն անաւթ ինչ, յորում դեք դիթական (?) խաղային և վազս առնէին, յորժամ Ապողոն զդիւթութիւնսն արտաբերէր։ Իւ եռոտանի վասն այնպիսի իրի էր, զի զդիւթութիւն երիւք ամանակաւք ստեղծանէր, և ճշմարիտ դիւթութիւն ասէ զանցեալն, զներկայն և զապառնին։

ԺԴ.

ժդ. Յաղագս Կաստաղեան ըմպելոյն։ Աղբիւր ելանէ ի մեծն Անտիոք, որոյ վերատեսուչ Ապողոն է։ Ի նմա դիւթութիւնք արտաբերեալ լինէին ըստ որպիսութեան ջրոյ արտահոսութենէ։ Բանք ոչ ինչ ասացեալ լինէին անտուստ, այլ պարզաբար հնչումն և հողմ ինչ ելանէր ընդ հոսման ջրոյն, առ որս ոմանք կալով և իմանալով զնշանսն զայսպիսիս ասէին զհանդերձեալսն։

ԺԵ.

ժե. Յաղագս մոգուցն քաղդէական նախագիտութեանն։ Մոգքն ի ձեռն զենլեացն առնէին զնախագիտութիւնն. քանզի զենլով և բանալով զփորո-

1) B. իջանէ. 4) B. կաղոյն դոդոնա. 4) B. դոնդոնն. [յուն. Δωδώνη.] 5) B. որ. 5) AB. արամազդա. 6) B. պարգևեալ. 6) B. շարմանէ. 7) A. տերևոյն. 7) A. նշանակութքք. 8—23) A. ժգ և ժդ գլ. համառօտած է այսպէս. «Յաղագս դելփական եռոտանոյն։ Դելփիէ քաղաք է փովկիդեայ զայնպիսիս ասէին զհանդերձեալսն։» 9) B. քաղաք (է). 12) B. պղընձի. 13) B. վերա. 13) B. խաղաին. 16) B. զներկաին. 19) B. ապոն. 25) A. մուգուցն. B. մոգոցն. 25) B. նախագիտութե. 26) B. զենլեաց.

տիսն, և տեսանելով զհատուածս անդամոցն զլերդին և զայլոցն աւէին զոր ինչ պատահելոցն էր։ Այլ մոգքն ազգաւ ի գամրաց են, ուստի և լերդահմայութիւնն լինի.

ԺԴ.

ժդ. Յաղագս քաղդէացւոցն աստեղաբաշխութեան։ Քաղդէացիքն, որոց առաջինն Զորոաստր է և երկրորդն Բսարաթրուստէս և յետ սոցունց Ոստանէս — մակացու եղեալք երկնային շարժութեանն և աստացին, իբրու յորպիսութենէ շարժութեան երկնայնոցն ծննդոցն իրաց պատահիլ, յորոց ուսեալ եղլենացւոցն զաստեղաբաշխութիւն սկսան ծննդաբանել։

ԺԵ.

ժե. Յաղագս Թրակացւոցն յանմանց։ Ասի Թրակացւոցն լինել սկիզբն ամենայն մարդկան, կրաւնից և հաճութեան աստուծոյ, և տեղետս կատարել, և միւստերիոնս հաստատել, և ի Թրակացւոցն Թրասկէալ անուանեցաւ առ աստուած բարեպաշտութիւնն, զոր մեք կրաւնս անուանեմք։ Այլ յառաջ քան զամենայն Թրակացիս Որփեւս ասի թէ պատմեաց զտեղետսն և զյեղանակս նոցունց, և թէ որոյ աստուծոյ վայելեն տեղեաքն։ Զսմանէ ասի ի ձեռն քնարին իւրոյ զանշունչսն հրճուեցուցանել և զվայրենիսն հանդարտեցուցանել։

ԺԸ.

ժը. Յաղագս տանջանացն Միթրեայ։ Զմիւթրոսէ այլ և այլ տան կարծիս. քանզի ոմանք զարեգակն գոլ զնա ասեն և ոմանք զվերատեսուչն հրոյ, և այլք՝ յատուկ ինչ գոլ զաւրութիւն։ Լինէին և Միւթրոսի տեղեաք ոմանք և մանաւանդ՝ առ ի քաղդէացւոցն. քանզի որք սովաւ

---

1) B. տեսանել. 2) B. մոգքքն. 3) AB. լերդահմաութին. 5) B. քաղդէացիք. 6) B. առաջին. 6) A. զորոյաստրէն. 6) A. (է). 6) B. քսարաթրատէս. 6) A. սոցուն. 7) B. ոստանէս. 7) AB. երկնաւին. 7) B. շարժութեց. 8) B. յորպիսութե է շարժութի երկնաւին ծննդոցն. 8) A. ծնընդոցն. 8) B. պատահել. 8) B. որոց. 9) B. ելլենացւոցն. 9) B. զաստեղաբաշխութին. 9) A. սկան. 9) A. ծնընդաբանել. 11) B. Թարակացւոց. 11) B. սկզբն. 12) B. տելետս. 13) B. միւտրիոնն. 12) B. (ի) Թրակացոցն. 13) B. Թրասկալ. 15) B. զտելետսն. 15) B. զեղանակս. 16) B. եթէ. 16) AB. վաելեն. 16) B. տելեաքն. 17) B. զանշունչն. 18) B. հանդարտեցուցանել. 20) B. մութրոսի. 20) B. զմութրոսէ. 21) A. զնայ. 22) B. լինին. 22) A. եւ միւթրոսի. B. և մութրոսի. 23) B. տելեաք. 23) B. քաղդիացւոցն. 23) B. (որք) չիք.

կատարեալք կամէին լինել՝ ըստ աշտիճանաց տանջանաց կարաւտանային, ի թեթեւագոյն տանջանացն սկսեալ՝ ի դժուարագոյնսն կատարէին. յառաջագոյն սովով ճնշեալ զանձինս իբրեւ աւուրս յիսուն՝ եւ զայնմ ժուժկալն ի քերանս արկանէին աւուրս երկու, եւ ապա ի ձեան կացուցանէին աւուրս քսան, եւ այնպէս ըստ փոքու աճեցուցանելով զտանջանսն, զչարրըմբերն որ կատարեալն եղեւ՝ հաւուցանէին այնուհետեւ ի կատարելագոյն տեղեաւն:

ԺԹ.

ԺԹ. Յաղագս աղաւթանցն Օսիրեայ: Օսիրիս առ ի յեգիպտացւոցն աստուած կարծի, եւ ոմանք ասեն գոլ զնա նման Դիոնեւսի եւ ոմանք՝ այլ զոմն: Արդ՝ զսա առ ի Տիփոնոսէ աւշատեալ ասեն, եւ յաղագս այսորիկ ասեն սուգ մեծ եղեալ եգիպտացւոցն առ ի յիշատակ անմոռաց աւշատմանն Օսիրեայ: Այլ որպէս ասեն զԴիոնեւսոս՝ ի տիտանեացն աւշոտեալ՝ այսպէս եւ զՕսիրիս՝ ի Տիփոնոսէ:

Ի.

Ի. Յաղագս Իսիդայի: Իսիս կարծի Յոհի աղջկանն յափշտակեցելոյ յԱրամազդայ. քանզի Զեւս յափշտակեաց զՅով եւ երկուցեալ ի Հերայ կնոջէ իւրմէ փոխարկեաց զՅով յերինջ, երբեմն սպիտակ առնելով զնա, եւ երբեմն ծիրանագոյն. եւ այսպէս զհետ նորա յածեալ լինէր: Եւ արդ Արամազդ յԵգիպտոս՝ յածեալ զհետ Յովայ: Եւ պատուեն եգիպտացիքն զՅով, զոր Իսիս կոչեն, վասն որոյ եւ ի վերայ գլխոյ պատկերին եղջիւրս արջառոյ նկարեն՝ նշանակեալ զաղջկանն յերինջ փոխաբերութիւն:

---

1) B. (կատարեալք) չիք. 1) AB. կարաւտանաին. 2) A. դժոխագոյնսն. 2) A. կատարեն. 3) A. ճշեալ. 3) B. աւուր. 4) B. ի ձիւն. 5) B. այսպէս. 5) B. ըստ փոքունց. 6) B. կատարեալ լինէր. 6) A. հատուցանէին. 6) B. տեղեաւն. 8) B. ոշտմանց ուիրա. 8) A. ուիրեա. 8) A. ոսորիս. [յուն. Ὄσιρις.]. 9) B. զնա նման գոլ Դիոնոսիոսի. 9) A. դիոնւոսի. 10) A. Տւփանոսէ. [յուն. Τυφῶν, Τυφάων.]. 10) B. յաղագ. 11) A. (ասեն) չիք. 12) B. յաւշոտմանն. 12) A. ոսիրեա. 12) B. զդիոնոսիոս. 12) B. ի տիտանանցն. 13) A. ի տւփանոսէ. 15) B. իսիսիդոսի. [յուն. Ἶσις]. 15) B. յուհի. [յուն. Ἰώ.] 15) A. յապշտակեցելոյ. B. յափշտակելոյ. 16) A. առ ի յարամազդա. B. յարամազդա. 16) A. յապշտակեաց. 16) AB. ի հերա. 17) A. ի կնոջէ. 18) A. ծիրանեգոյն. 19) B. (արդ) չիք. 19) AB. յովա. 20) AB. ի վերա. 20) A. «պատկերի նոր». Պատճ. գիրք. «պատկերի նորա». 21) A. նըկարեն. 21) B. նշանակեն զաղջկանն յերինջ փոխաբերութին.

ԻԱ.

իա. Յաղագս Մենդիսացի Նոխազին։ Եգիպտացի լեզուաւն կոչի նոխազն Մենդէս։ Եւ ոմանք յեգիպտացւոցն պաշտէին զնոխազս, որպէս վերադրեալ ծննդական զաւրութեան. քանզի ասի վարար գոլ կենդանին։ Արդ՝ որք բնակեալ էին առ Մենդեսեայ տեղեաւն զնոխազս ոչ ուտէին, խորշելով ի ծննդական զաւրութենէն։ Պատուէին մեծապէս և զայծարածսն, և էր տաճար Մենդիսի առ եգիպտացիսն, յորում տաճարի կայր պատկեր նոխազարուն, ուղղորդ ունելով զպատկառանսն։

ԻԲ.

իբ. Յաղագս Ապեայ և մօրս խորոյ։ Ըստ շրջաբերութեան ժամանակաց ոմանց ծնեալ լինէր եգիպտացւոցն արջառ ինչ, յղացեալ ի նշուղից լուսնոյ, կոչեցեալ առ ի նոցանէ Ապիս, որ ունէր նշան ի մազ ոտիցն և ի լեզուն, յորոց նշանաց ծանուցեալ լինէր թէ Ապիս է։ Արդ զծնունդ սորա տաւնեն եգիպտացիքն, իբր զգալուստ աստուծոյ առ նոսա, և դարմանէին զարջառն ի մսուր, խրախութեամբ բազմաւ խրախացուցանելով զաստուածն իւրեանց։

ԻԳ.

իգ. Յաղագս Կնեփայ. Յեղանելն նորա պատուեն զնա, իբրև զաստուած, կարծելով զաճումն ջրոյն աստուծոյ գոլ զաւրութիւն։

ԻԴ.

իդ. Յաղագս շնանցն և օձոց։ Քանզի պաշտէին եգիպտացիքն զկրոկոտիղոսս և զաւձս, և զաքիսս, և զայլս ոմանս ի թարմատարացն, և զազգս ոմանս ի ձկանց, յանբանից պատուոյն անձանց իւրեանց անարգանս յարմարելով։

---

2) B. մենդեսացի. 3) B. մենդիս. [յուն. Μένδης.] 3) A. զնոխազ. 3) B. վերագրեալ. 4) A. ծնընդական. 5) A. առ մենդիսացին. B. առ մենդեսեա. 6) A. ծնընդական. 6) B. զաւրութենէ. 6) B. զայծարածս. 7) A. առ յեգիպտացիսն. 8) B. ողորդ. 10) AB. ապեա. [յուն. Ἄπις.]. 11) B. ի նշուից. 13) B. յորոց (նշանաց) ծանուցեալ (լինէր). 13) B. զծնունդն. 14) B. իբրև. 14) A. նոսայ. 15) B. (բազմաւ)չիք. 15) B. խրախացուցանէին. 16) B. իւրեանցն. 16—18) B. իգ. գլ. չունի. 19) A ածա գոլ. «աստուծոյ» մեր ուղղածն է. 21) B. ուրիշ վերնագիր ունի. «յաղագ նիղոսի.» 22) B. զկոկորդիլոսս. 23) A. (ի) ձկանց. 23) A. յանբան; 23) B. յանձանց.

II.

ՀԱՒԱՔՈՒՄՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑՆ ԶՈՐՍ ՅԻՇԱՏԱԿԵԱՑ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ Ի ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ.

Հռետորքն և սոփեստէսք արտաքնոցն, զառ ի նոցունց ներբողեալսն կամելով ազնուականագոյնս ցուցանել՝ ասեն թէ սա ազգաւ ի Պեղղովպոսէ է և ի Կեկրովպոսէ, կամ ի Հերակղեայ, կամ յայլոցն առ ի նոցունց կարծեցելոց դիւցազանց, կամ յայլապէս բարի արանցն թուեցելոց դիմեալ գայ։ Ասէ արդ աստուածայինն Գրիգորիոս, թէ սրբազունին Բասիլիոսի նախահարքն մեծագոյնք և ազնուականագոյնք էին, քան թէ յարտաքնոցն ազնուականագոյն կարծեցեալքն. իսկ արդ միտք բանին այսպիսի է։ Այլ պարտ է ասել, թէ սոքա ո՛յք ոմանք էին Պեղղովպոս և Կեկրովպոս, և Աղկմէովն, և Հերակղէս, և զինչ ի սոցանէ ծնեալքն։ Ի Պեղղովպոսէ պեղղովպեանք ասին, և ի Կեկրովպոսէ Կեկրովպեանք և յԱղկմէոնէ աղկմէովնեանք, և ի Հերակղեայ հերակղեանք, և յԷակոսէ էակեանք։

Ա.

ա. Արդ ասասցուք յառաջագոյն, թէ ո՛ ոք էր Պեղղովպոս։ Սա էր որդի Տանտաղոսի փռիւգացւոց թագաւորին, և Տանտաղոս այս մարտ ունելով ընդ Իղոսի, որ շինեաց զԻղիոն, որ ի Տրովադա է, երկուցեալ ի պարտանաց՝ յորդորէ զորդի իւր զՊեղղովպոս, զի առեալ զինչս բազումս գաղթեսցի առ եզերսն ասացեալ այսպէս. «Եթէ պարտեսցուք յԵւրոպէ ապրեսցուք անդանաւր»։ Առեալ արդ ինչս Պեղղովպոս հօգաւ յԵլլադա՛

3) B. Հաւաքումն մեկնութեան զորս յիշատակեաց ի գերեզմանական բանի սրբոյն Բարսղի Գրիգոր Աստուածաբան. 4) B. սոփեստէսքն. 4) B. արտաքնոց. 4) B. ներբողեալս. 5) B. ազնուականագոյն. 5) B. ի պելոպէ. 6) A. ի Հերակղեա. B. ի Հերակղէ. 6) B. յայլոց. 7) B. յայլոց բարի արանց. 8) AB. գա. 8) AB. ա̃ծայինն. 8) B. բարսղի. 10) B. այսպիս. 11) B. պելոպոս. 12) B. աղմկէոն. 12) A. և զի. 12) B. ծնեալն. 12—13) B. ի պելոպոսէ պելոպեանքն ասեն. 13) B. ի կեկրոպոսէ կեկրոպեանքն. 13—14) A. (և յԱղկմէոնէ աղկմէոնեանք) չիք. B. յաղմկէոնէ աղմկէանքն. 14) A. ի Հերակղեա. B. ի Հերակղէ. 14) B. Հերակլեանքն. 14) B. էականքն. 16) B. պելոպոս. 17) A. թագաւոր և յաղկմեոնէ աղկմեոնեանք որին և Տանտաղոսս. 17) B. տանտաղոս (այս). 18) A. շինեց. 18) B. զելիոն. 19) A. ի պատրանացն. A. լուս. «ի պատրիգեանցն». 19) B. յորդորեաց. 19) B. (իւր) չիք. 19) B. զպելոպոս. 19) B. ինչս. 20) B. յեւրոպէ. 21) B. պելոպեայ.

Digitized by Google

ի գաւառն որ կոչի Ափփիա, որ թագաւոր ունէր զՈւնեմաոս, որոյ էր դուստր անուանեալն Իպպուդամիա: Ապա աշխատեալ սաստ Պեղղովպոս յերկվարական մրցմունս ընդ Ունեմաոսի և յաղթեալ նմա առ կին զդուստր նորա զԻպպուդամիա և ըմբռնեաց զգաւառն և փոխանակ Ափփիայի կոչեաց զնա Պեղղովպոննիսոն. այսինքն՝ Պեղղովպոսի կղզի: Արդ ամենեքեան, որ ի Պեղղովպոսէ ծնեալ են՝ կոչին պեղղովպեանք, որպէս Ատրևս և Թիւեստէս, Ագամեմնոն, Մենեղաոս, և ի կատարածի սոցունց՝ Որեստէս: Յաղագս Պեղղովպոսի այսչափ:

Բ.

բ. Իսկ յաղագս Կեկրովպոսի ասել առաջի կայ ահաւասիկ. Կեկրովպոս թագաւոր էր աթենացւոց, որ և մեծապէս զԱտտիկէ զարդարեաց սա: Երկաբնակ կոչեցաւ վասն գոլոյն տեղեակ երկուց ձայնից՝ եղլադացւոյն և եգիպտացւոյն, որ էր ի քաղաքէ Սաիոյ: Արդ՝ իշխան բացաբնակութեանն գոլով այս Կեկրովպոս և եկեալ յԵղղադա՝ ուսաւ զեղլադացի ձայն, ունելով և զեգիպտացին: Այլ բանն որ ասի, թէ ինքներկրայք են աթենացիքն՝ առասպել է, առեալ զստեղծուածն ոչ երբեք փոփոխելոյն զբնակեալսն յԱտտիկէ. քանզի անաւսրահող գոլով գաւառին՝ ոչ է յոյժ նախանձելի, որպէս զի որ ենն հալածեսցին, և այլք բնակեսցեն ի նմա: Իսկ և յաղագս Կեկրովպայ ասացեալդ բաւական լիցի:

Գ.

գ. Այլ և Աղկմէոն աթենացի էր ազգաւ նշանաւոր, զաղատութիւնն միշտ պահել կամելով աթենացւոցն: Արդ՝ բռնադատելով քաղաքին ի Պւսիստրատոսէ՝ անց սա, ոչ հանդուրժեալ տեսանել ընդ ծառայութեամբ

---

1) A. լուս. «Ինովմաոս». B. զԵնամանոս. [յուն. Οἰνόμαος.]. 2) A. (ապա) ապաշխարեալ (սաստ). 2) B. պեղոպոս. 3) A. յիրիւարական. B. յերևվարական. 3) B. Ենամոսի. 3) A. զդուստրն. 4) B. զԻպաւդամիայ. 4) AB. ապիափ. 5) B. պեղոպիսոն. 5) B. ամենիքեան. 6) B. պեղիպոսե. 6) B. կոչ. 6) B. պեղոպեանք. 6) A. ատրեովս. A. լուս. «ատրևս». B. ատրիովս. 6) A. լուս. «Թեխստես». B. Թիոստեայս [Θυέστης]. 7) A. (Մենեղաոս)չիք. 10) B. Կեկրոպոսի. 10) B. (ասել)չիք. 10) AB. կա. 10) A. աւասիկ. 10) B. Կեկրոպոս. 11) B. աթենացւոցն. 12) A. լուս. «երկաբբոյս». 12—13) B. եգիպտացւոցն և ելլադացւոցն. 13) B. սաւոյ. 14) B. բացաբնակութե գոլ. 14) B. կեկրոպոս. 14) B. յելլադա. 14) A. «զելւեդացի զձայնն». «լ» տառի վերև գրուած է «ղ». 15) B. ինքներկայք. 16) B. աթենացիք. 16) B. յառասպելե առեալ ստեղծուածն. 18) B. (և այլք բնակեսցեն) չիք. 19) B. (և) չիք. 19) A կեկրովպա. B. կեկրոպա. 19) B. ասացեալ. 21) B. աղկեմոն. 22) B. աթենացւոց. 23) B. հանդուրժելով.

լեալ զԱթենս և ել հնարիւք, դիտաւորութիւն ունելով զազատութիւնն դարձեալ հաստատել զաթենացւոցն, և գնացեալ ի Դեղփուս յապողոնեան տաճարն՝ վարձէ պանդանդով զտաճարն և վարձեալ ունի ընդ ինքեամբ զամենայն արս և զկանայս պաշտաւնեայս. հաւանեցուցանէ և զքահանաուհին զՊւթիա, զի եթէ եկեսցէ երբեք ղակեդեմոնեացի դիւթութիւն խնդրել ոչ ինչ այլ ասել, քան թէ աստուած հրամայէ ձեզ, զի ազատիցէք զԱթենս: Նայորիկ փութապէս և յոլովակի լինելով խիզախեցին ղակեդեմոնեացիքն և եկեալ արտաքս հանին զբռնաւորսն յԱթենաց: Արդ մեծ գովասանութիւն յայնմ հետէ ընկալաւ Աղկմէոն, ազատեալ իմաստութեամբ զԱթենս. Եւ այսչափ յաղագս Աղկմէոնին ասացաւ:

Դ.

դ. Արդ Եւակոս չորրորդ մեզ ենթակայեալ լինի: Սա որդի գոլ ասի Արամազդայ արդարագոյն յոյժ, վասն որոյ և երբեմն երաշտացեալ գոլով Եղղադայ՝ չոգան առ նա նախարարք քաղաքացն աղաչել զնա աղաւթս առնել առ հայրն իւր Արամազդ, զի լիցի անձրև: Եւ նա լուեալ ըղձացաւ, և լուծեալ ի ձեռն ըղձմանն զտոչորումն՝ ի վայր հոսեաց ջուր և ոռոգեաց զԵղղադա, և առաւել յայսմ ցուցաւ բարեպաշտութիւնն Եւակոսի: Սա ծնաւ ուստերս երկու զՊեղղէս և զՏեղամոն. և Պեղղէս ծնաւ զԱքիղէս, իսկ Տեղամոնն զԵաս, որոյ ծնունդքն կոչին էակիդեանք զառ ի հաւրէն իւրեանց այսու զպատիւն յառաջ բերելով:

Ե.

ե. Արդ այսուհետև լիցի մեզ ենթակայեալ Հերակղէս: Սա ասի որդի գոլ Արամազդայ. քանզի Զևս նմանեալ Ամփիտրիոնի շաղաշարի ընդ Աղկմէոնեայ և ծնանի ի նմանէ զՀերակղէս, որ և զմեծագոյն

23—1) B. զաթենս ընդ ծառայութ̅ը լինել. 2) B. զաթենացոցն. 2) B. դելփոս. A. դեղփուս = Δελφούς. (?) 3) A. պատանկով. 4) B. այր. 4) B. հաւանեցանե. 5) B. զպւթիայ. 5) B. լակեդոմնացի. 5) A. լուսանցքում «ըղձութի». 6) A. հրամաէ. 7) B. այսոքիկ. 8) A. լուսանցքում՝ «յանդգնեցան». 8) B. լակեդոմնացիքն. 8) B. յաթենացոցն. 9) B. ակղեմոն. 10) B. աղկեմոնի. 12) B. չորորդ. 12) A. ենթակաեալ. B. ենթակացեալ. 12) B. գոլով. 13) B. արամազդա. 13) B. (և) երբեմն. 14) B. ելլադա. 14) B. չոգան աղաչել զնա նախարարք. 15) A. լիցիցի. 17) B. զելլադա. 18) A. սայ. B. նա. 18) B. զպեղ. [յուն. Πηλεύς.] 18) B. պելևս. 19) B. պեղամոն. 19) A. էակիդանք. 22) B. ենթակաեալ. 22) B. հերակլէս. 23) AB. արամազդա. 23) B. ամփիտրոնի. 24) A. «աղկմէոնինեոյ». յետոյ ուղղած «աղկմիոնինեա»». B. աղկեմոնեյա. 24) B. ծնաւ. 24) B. զհերակլես.

Digitized by Google

մրցմունսն զայնոսիկ կատարեաց։ Եւ բազումք եղեն ի Հերակղեայ, որոց առաջինն և կարծրագոյն Հիւղէս էր, յորմէ և լակեդեմոնացւոց թագաւորքն ծնան, ուստի և Հերակղեանք ամենիքեան ասին։

Ծ.

գ. Յաղագս եղջերաահարաց Ովրիոնի և Ակտէոնի։ Ծ Արտեմիս ասեն որսոյ և աղեղնաւորութեան վերատեսուչ գոլ։ Ասի արդ աստուածս այս և զեղինսն քաջ հարկանել, մինչ կոչիլ աստուածուհոյն Արտեմիս եղջերուահար։ Այլ Ովրիոն և Ակտէոն որսորդք էին և սոքա. իսկ Ակտէոնն շամբք որսայր, ետես զԱրտեմիս մերկ, և քանզի անմարթ էր զաստուածուհին մերկ տեսանել, մանաւանդ զկուսանսն ի նոցունց բարկացեալ արդ Արտեմիս կատաղեցոյց զշունսն Ակտէոնի, որք գտեալ զնա սպանին. իբրու ասի Ակտէոնն առ ի շանց գիշատիլ։ Այլ Ովրիոն ասի ի պատահման աստուածոցն առ մորթով արջառոյն, զոր եղեն Իւրեւս թագաւոր թեբէացւոց առ ի հիւրընկալութիւն աստուածոցն. քանզի յայնժամ էր ծնեալ և լեալ։ Այս Ովրիոն եղև սպանանող գազանաց, այլ և տռփեալ Արտեմիդեայ, վասն որոյ բարկացեալ աստուածուհին յարոյց կարիճ ընդդէմ նորա, ուստի ընկալեալ հարուածս մեռաւ, վասն որոյ և յերկինս նկարեալ եղև առ կարճին։

Ե.

է. Յաղագս փոխադրութեան եղջերուին ընդ կուսին. որ է եղեալ յեւթներորդ պատմութեան յարձանականսն ընդդէմ Յուլիանոսի։

Յորժամ յԱւլիդայ նաւարկութիւնն եղղենացւոց եղև ի վերայ Տրովադայ առ ի Յովղեդէ բիովտացւոց, զոհ լինելով Արտեմիդեայ, եւ

1) B. հերակլեա. 2) հեղես. [յուն. Ὕλλος.]. 2) B. (և) լակեմոնացոց. 3) B. հերակլեանքն. 3) A. ամենքեան. B. ամենիքեան. 5) A. «ե» կամ «է». 5) B. եղջուրահարացն. 5) B. էաքտոնի. 6) B. (գոլ)չիք. 7) B. զեղինս. 7) A. լուսանցքում «արտեմեա». 8) A. եղջեւրուահար. B. եղջիւրահար. 8) B. ովրիոնի. 9) B. աքէոն. 9) A. (և) չիք. 9) A. լուսանցքում «տեղեակ». 10) B. զածուհին. 11) B. կաղացոյց. 11) B. աքտոնէի. 12) B. առ ի շանց գլխատեալ. 13) A. արջառոցն. B. արջառոյն. 13) B. ուրեւիս [Hyrieus.]. 14) B. թեբացոց. 15) B. լիեալ. 15) B. սպանող. 16) AB. արտեմիդեա. 17) B. յարոց. 17) B. կարիճս ընդեմ. 17) A. նորայ. 18) B. (և)չիք. 18) B. կարիճն. 20) B. կուսին եղջիւրուին ընդ կուսին. 20) A. լուսանց. «եղին». 22) A. լուանցքում «յորժամ»-ից առաջ. «էէ», «ժդ», «գ». 22) B. նաւարկութի ելլենացոցն. 22) AB. վերա. 23) A. տրովադա. B. տրովդա. 23) A. (ի)չիք. 23) B. յովղեդէ. 23) B. բւովտացոց. 23) A. արտեմիդեա.

դստերն Ագամեմնոնի, որում անուն էր Իփիգենիա, ի սպանդ աւանդելով, Արտեմիս ողորմեալ կուսին յափշտակէ զնա և ի բաց տանի առ Տաւրոսս ի Սկւթիա, և երևեցոյց փոխանակ կուսին եղն, զոր առեալ եղլենացիքն զոհեցին. իսկ Իփիգենիա ի Սկիւթս քահանաուհի եղև Արտեմիդեայ:

Ը.

ը. **Յաղագս Նեստորականն այցին:** Սնեալ Աքիւղլեւս ի Թետիսէ աւանդեցաւ ի Քերոն, որով վարժեալ լինէր սնուցանողաւն, համանգամայն և վարդապետաւ, աղեղնաւորութեանն: եւ էր այս Քերոն Իպպակենդովրոս, բնակեալ յայրս ինչ քարանձաւացն ի Թետտալիայ: Արդ առեալ Քերոն զԱքիղլես և Նստուցեալ յետուստ իւր ի վերայ ձիեղէն կողմանն, սնուցանելով զնա ոչ կաթամբ կամ հացիւ, այլ ուղղովք եղջերուաց և այլոց կենդանեաց, վասն որոյ և Աքիւղլես անուանեցաւ, իբր ոչ հաղորդեալ քիղոսի, քանզի քիղոս սովորական կերակուրս է:

Թ.

թ. **Յաղագս ըստշրջմանն ափենդոնին Գրէգորի:** Զայս պատմութիւն յիշէ յարձանականսն ի յիսներորդ պատմագրութեանն: Պղատոն ի քաղաքավարութիւնսն ասէ թէ Գիւգէս հովիւ էր, և մինչ արածէր զհաւտ իւր եգիտ ձի պղնձի և ի ներքոյ նորին եգիտ մարդ մեռեալ, որ ունէր մատանի: Նա առեալ զմատանին զայն ունէր, և յորժամ շրջէր զափենդոնոնն մատանոյն աներևոյթ լինէր ի մերձակայիցն: Այլ սփենդոնն գլուխն ասի մատանոյն, որ էր շրջշրջուն: Արդ ունելով զմատանին եկն առ թագաւորն Լիւդացւոց, և շրջեալ զափենդոնն եղև աներևոյթ և մտեալ սպան

1) B. ագեմեմնի. 1) B. (որում)չիք. 1) B. փիգենիա. 1) B. սպանդելով. 1) B. (աւանդելով)չիք. 2) B. տորոսս. 3) B. սկւթիայ. 3) A. (և) երևեցոյց. 3) A. «եղն». լուսանցքում. «եղջիւրու»: 3) B. ելլենացին. 4) B. իփիգինեայ. 4) B. սկւթս. 4) A. արտեմիդեա. 6) A. լուսանցքում. «գ». 6) B. աքիլլեւս. 6) B. թետեսէ. 7) A. վարեալ. 7) B. սնուցողաւն. 8) B. վարդապետաւն. 8) Պէտք է լինէր «Հիպպոկենդավրոս» = յուն. ἱπποκένταυρος. A. լուսանցքում «կենդավրոս». 9) B. թետալիայ. 10) B. զաքիւղլեւս. 10) AB. վերա. 11) B եղովք. 11) A. եղջեւրուաց. B. եղջիւրուացն. A. լուսանցքում. «առեւծուց». 12) B. քեղոսի. A. լուսանց. «ոչ կերակրեալ քիւղոսիւ». 13) B քեղոս. 15) A. ե. 15) B. ըստշրջման. 15) B. սեփենդոննին. 15) B. գիւգոսի. 16) B. պատմագրութին. 16) B. պղատոն. 17) B. քաղաքավարութեն. A. լուս. «ի քաղաքականութն». 17. A. գիւգէոս. A. լուսանցքում. «գիուգեսս». 17) A. (և)չիք. 17) B. զհաւտս. 18) AB. պղընձի. 18) B. նորա. 20) A. մերձակիցն. 20) B. գլուխ. 21) B. (որ էր)չիք. 22) A. լուսանցքում. «ի թագաւ..ուին». 22) B. ղիւդացոց. 22) B զափենդոնոն.

զԹագաւորն և առ զԹագաւորութիւնն։ Բայց Հերոդոտոս այլպէս պատմէ յաղագս Գիւգեսի. որպէս թէ հրամանաւ դշխոյին եսպան զԿանդաւղէս Գիւգէս և Թագաւորեաց։

Ժ.

ժ. Յաղագս Միդասայ։ Միդաս այս Թագաւոր էր փռիւգացւոց և էր արծաթասէր յոյժ և ոսկեմոլ, որպէս և գործք նորա յայտնեն։ Ըղձացաւ արդ սա, զի յոր ինչ և մերձենայցէ ոսկի լինիցի։ Եւ կատարեցան իղձք սորա. եւ յոր ինչ մերձենայր ձեռամբ կամ բերանով՝ ոսկի լինէր։ Եւ այնպէս ամենայն ինչ նմա ոսկի էր, այլ ուտել ոչ կարելով՝ մահուամբ կորուսեալ լինէր, զի տուեալն նմա կերակուր ի ձեռն բերանոյն ոսկիացեալ լինէր, վասն որոյ և ապականեցաւ սովով։ Այլ պատմեն այլք ոմանք, թէ հրաման առեալ՝ եկաց. եւ հրամանն էր այսպիսի ինչ՝ վարել զկառսն, եւ ու՛ր արգելցին կառքն շինել քաղաք։ Եւ արար այնպէս և շինեաց զԱնկիւրա զգաղատացւոց. քանզի խարիսխ երկաթի գետանաւու կառուցեալ ի կառսն՝ առկայացոյց զՄիդաս. եւ այնպէս շինեցաւ քաղաքն և կոչեցաւ Անկիւրա, որ թարգմանի խարիսխ։

ԺԱ.

ժա. Յաղագս Նետին Աբարեայ. զոր եւ յիշէ Հերոդոտոս ի չորրորդումն։ Աբարիս այս դերհիւսիսային այր ոմն էր, և են դերհիւսիսայինքն եղլենախոհք և կարծրագոյնք քան զայլ սկիւթացիսն։ Արդ այս Աբարիս ասի թէ փչմամբ ինչ լի եղև, և շրջէր յԵղղադայ շուրջանակի հանդերձ նետիւն, եւ հրամանս ինչ և դիւթութիւնս պատմէր, իբրու յաստուածուստ փչումն ընկալեալ։ Այլ Լիւկուրգոս հռետոր յիշէ զԱբարիս ի ճառին յորում ընդդէմ Մենեսքիոսի, եթէ սով եղեալ ի դերհիւսիսային կողմանս եկն Աբարիս յԵղղադա, և վարձաւոր եղև Ապողոնի, և ուսաւ առ ի նմանէ

1) B. հերովդիտոս. 2) B. գիւգոսի. 2) B. դժխոյին. 2) AB. զկանդուղէս. 5) A. զ̄. 5) A մինդասա. B. մինդասեայ. 5) B. Մինդաս. 5) B. է. 5) B. փռիւգեցոցն. 6) B. վկաեն. 7) B. (արդ)չիք. 7) B. թե. 8) B. ըղձք նորա. A. սորայ. 8) B. (եւ) յոր ինչ. 9) B. (եւ այնպէս ամենայն ինչ նմա ոսկի էր)չիք. 9) A. նմայ. 14) B. գաղատացոց. 14) A. գետայնաւու. B. գետանաւ. 15) B. առկաացոյց. 16) B. անկիւրիա. 18) A. է̄. 18) B. աբարիս. 18) B: զորս. 18) B. (եւ) չիք. 18) B. հերովդիտոն. 19) A. դերհիւսային. B. դենհւիւսաին. 19) A. դերհիւսաինքն. B. դենհաւսաինքն, 19) B. ելլենախոհք. 20) B. կարծրագոյն. 20) B. սկութաինքն. 20) B. սաբարիսս. 20) B. (թէ)չիք. 21) A. լուսանց. ‹հօգով›. 21) B. յելլադա. 21) B. նետիւ. 23) B. լիւկուրդոս. 24) B. ընդեմ. 24) B. մենեքսիոսի. 24) AB. դերհւսւսաին. 24) B. կողմանսն. 24) B. և եկն. 25) B. նաբարիս. 25) B. յելլադա. 25) B. ապողոնի. A. լուանցքում. ‹ի դեղփե. ժգ..դեղփք›.

Digitized by Google

զդիւթութիւնն և զհրամանաբանելն, եւ այնպէս ունելով զնետն, իբր նշան ինչ յԱպողոնէ (քանզի աղեղնաւոր է աստուածն այն) շրջէր հրամանաբանելով յԵղղադա։

ԺԲ.

ԺԲ. Յաղագս Պեգասոսի որ է հասարակ յաղագս Բելլերոփոնտեսի։ Քանզի պատարային քիմեռին վերստին բուսանելով, զոր յիշէ աստուածայինս այս Գրիգորիոս յարձանականսն ի յիններորդ պատմութեանն՝ ապականէր զգաւառն ղիւկիացւոց. եւ Պռիւտոսի թագաւորելով Լիւկիոյ՝ հրաման առ Բելեռոփոնտոս սպանանել զքիմեռն։ Եւ էր գազանն, որպէս անդանաւր ասացաք, առաջին կողմն որպէս առեւծ և վերջինն՝ վիշապ, և ի մէջ նոցա՝ քիմեռ, ուստ հուր թափէր. և էր գազանն դժուարյաղթ։ Արդ զձին Պեգասոս յաստուածուստ գտեալ Բելեռոփոնտոս, զորմէ ասի թեւս ունել, եւ ի սմբակացն հուր թափէր, եւ մարտակից ունելով զթռիչսն զերիվարին, քանզի որպէս ասացի թեւաւոր էր՝ սպան զքիմեռն։

ԺԳ.

ԺԳ. Յաղագս Աղփէոսի։ Աղփիոս գետ է արկադացւոց, եւ Արկադիա քաղաք է Պեղղոպոնիսոյ։ Է և աղբիւր ի կղզւոջն ի Սիկեղիա որ անուանեալ կոչի Արէթուսա։ Եւ գետն այն ասի թէ տարփեցաւ աղբերն Արեթուսայ, եւ տարփեալ եմուտ ընդ խորս ծովուն, եւ վերստին երեւեցաւ ի Սիկիլիա առ աղբերն այնմիկ, ոչ խառնեալ ընդ աղի ջուրս ծովուն, այլ մաքուր և յստակ պահելով զջուրն՝ առ տարփեալն եհաս։

Հանդերձ այսուիկ է եւ յաղագս սաղամանդրացն պատմութիւն։ Սաղամանդրն կենդանի ինչ է — մեծութեամբ՝ քան զոր կովածուծն կոչեն, եւ կամ որպէս փոքր ցամաքային կոկորդիղոս։ Եւ է ցուրտ բնութեամբ կենդանին գերագոյն քան զբան, իբր զի, ի հուր մտանելով նորա՝ շիջանել բոցոյն, և նա ոչ այրի։

---

1) A. զնետս. 1) B. իբրև. 3) B. հրամաբանելով. 3) B. յելլադա. 5) A. լուսանցքում. «խն, ն։ ը̄. ռ,». 5) B. բերողոփոնդոսի. 6) A. պատարաին. B. պատարին. [յուն. παταρικός.] 6) վերըստին. 6) AB. ա̄ծաինս. 7) B. պատմութ̄ե. 7) Տես. III, խ̄է. 8) B. լիկիացւոց. 8) B. (եւ) պռիւտոս. 8) B. լիկիոյ. 9) B. բեղեռոփոնէս. 10) B. ասաց. 10) B. վերջին. 11) B. ուստի. 12) B. բեղեռոնփեննտես. 14) B. զթռիչս. 14) A. զերիւարին. 14) B. և սպան. 16) B. աղփւոս. 16) B. արկգացոց. 16) A. արկադիայ. 17) B. պեղղոպինոսոյ. 17) B. (է) չիք. 17) B. աղբեւր է. 17) B. կղոջն. 17) B. սիկիլա. 18) A. արիթուսա. B. արութուսա. 18) B. (այն)չիք. 19) A. «վեր». լուսանցքում «ըստին». 21) A. եւ եւ. 21) A. յըստակ. 22) B. (է)չիք. 22) B. յագագս. 22) B. սաղմանդարացն. 23) B. սաղամադրն. 24) B. (եւ)կամ. 24) A. ցամաքաին. B. ցամաքին. 24) A. կոկոդիղոս. B. կոկորդոլոս. 26) B. շիջանի բոցն. 26) A. այրել.

ԺԴ.

ժդ. Յաղագս վիշապացն կառացն. որ է առակ վասն կամողացն մաքառել եւ հասանել ոչ կարողաց: Ասի յառակն այսպէս. ի լիւդացի կառացն սկսանելով, քանզի արագագոյնք են եւ դժուարահասք՝ ասեն, եթէ հետեւակ ընդ լիւդացի կառաց ընթանամք: Եւ այլք ասեն թէ վասն Պեղոպսի կառացն ասացաւ առակս. զի Պեղոպս փռիւգացի էր եւ ոչ լիւդացի. Արդ՝ իւրովք կառաւքն յաղթեաց Ենոմոսի, եւ յայնմ հետէ ասացաւ առակն՝ ընդ լիւդացի կառացն ընթանալ:

ԺԵ.

ժե. Յաղագս Որեստեայ և Պիւղադեայ: Որեստէսս այս որդի էր Ագամեմնոնի. այլ սիրելութիւն այնչափ ունէր առ Պիւղադէս, եւ Պիղադէս առ Որեստէս, մինչ զի մեռանելով Պիւղադեսի՝ ընդ նմին իջանել Որեստեայ ի դժոխս:

ԺԶ.

ժզ. Յաղագս մողոնիդեանցն: Մողոն էր կին ոմն բնակեալ առ սահմանաւքն Թրակացւոց: Սա ունէր որդիս երկուս, առաջնոյն Ովտոս անուն, եւ երկրորդին Եփիալտէս: Սորա ըստ ամի աճեցեալք լինէին, ըստ երկայնութեան կանգուն մի, և ըստ լայնութեան թիզ մի. եւ եղեն թշնամանողք և ամբարտաւանք, եւ այնչափ ամբարհաւաճեցին, մինչ զի խորհեցան հակառակել ընդ երկնային աստուածոցն: Արդ՝ զՈվս ի վերայ Աթովի խորհեցան դնել և նոքաւք յերկինս ելանել: Եւ են Ովս և Աթովս երկու լերինք ի սահմանս Թրակացւոց: Իսկ Զեւս բարկացեալ, որոտմունս հանդերձ փայլատակմամբք արձակեալ՝ եկեղ զնոսա, և կորեան: Այլ յառաջագոյն, յաղագս կիզմանն նոցա, հրամանաբանութիւն տուեալ էր մաւրն, թէ վասն ամբարտաւանութեանն իւրեանց ամպահար լինելոց են:

---

2) A. ժ. 2) B. լիւդացի. 3) B. կարողացն. 3) B. այսպիսի (ի). 4) B. արագագոյն. 4) B. թէ. 4) A. լուսանցքում. «ի հետիոտս». 5) B. կառացն. 5) B. (թէ)չիք. 5) B. պեղլոպսի. 6) B. (զի Պեղոպս փռիւգացի էր) չիք. 7) A. իւրաւքն (կառաւքն). 8) B. ասացաւ ընթանալ. 10) A. ժա. 10) A. ովրեստեա. 10) B. պեղադեսի. 11) B. արտեմոնի. 11) B. անչափ. 11) B առ պեղադէս. 12) B. պիւղադիսի. 13) A. ովրեստեա. B. ովրեստի. 15) A. ժբ. 15) B. մողիդիեանցն. 16) B. առաջոյն. 19) B. ամպարտաւանք. 19) B. անչափ. 19) B. ամբահաւաճեցին. 20) B. երկային ածս. 20) B. վերա. 21) B. աթովիէ. 22) B. թրակացւոցն. 23) B. փայլատակմամբք. 25) B. ամբահար.

ԺԷ.

ժէ. Յաղագս Ղաբիւրինթին։ Ի կղզւոջն Կրետէ լեառն ոմն է, յորում է այր ինչ դժուարին և քարանձաւ, յոր իջանելն և ելանելն ի վեր ոչ և միոյ ումեք է դիւրին, յոր ասի թէ ածաւ Մինովտաւրոս։ Արդ՝ քանզի դժուարին էր ելանելն ի ղաբիւրինթէն, այժմիկ աստուածայինն Գրիգորիոս բուռն եհար ընմանէ առ ի յապացոյց անճողոպրելեաց բանիցն, յորոց ոչ զաւրէր ոք զերծանիլ, այլ ըմբռնեալ լինէր, քանզի ի վերայ ածէ և զարկն. այլ յարկն է ինչ տեսակաւ ուռեկաց թանձրալարի, զոր կազմեն յորոգայթ արջոց և եղանց, և զաւրեղագունից ի սոցունց կենդանեաց։

ԺԸ.

ժը. Յաղագս Մինովսի և Ռադամանթեայ։ Մինովս և Ռադամանթոս ասին գոլ որդիք Արամազդայ. յորոց մին Մինովս էր աւրինադիր, ի հաւրէն ընկալեալ զաւրինադրականն. իսկ Ռադամանթէս արդար դատաւոր էր, իբր առ ի հաւրէ իւրմէ ուսեալ զարդարութիւն։ Արդ՝ ասեն յաղագս նոցա քերթողքն և նոյն ինքն Պղատոն, թէ սոքա մեռեալք ոչ ընդունակ լինին խաւարի. այլ երանելեացն կղզիքն և Եղեւսինայ դաշտն ընկալաւ զնոսա, — որ է անուն տեղւոյ Եղեւսինայդ, իբր թէ ընդարձակ և ի տանջանաց ազատ։ Արդ՝ ասեն թէ ի նոսա յեղղենացւոցն արդարք յետ մահուանն իւրեանց բնակին։ Ասփոդեղոսն տնկոյ անուն է, զհոտն անոյշ ունելով, և զծաղիկն՝ հրճուելի։

ԺԹ.

ժթ. Յաղագս Գադիրայ։ Գադիրա տեղի ինչ է ի կողմանս մտիցն արեւու. և տեղին այն վախճան է ծովու, իբր արտահոսութիւն ինչ գոլով յայսմանէ որ առ մեզս է ծովէս առ ծովն ատղանտական։ Արդ ասի յայնկոյս Գադի-

---

2) A. $\overline{\text{ժգ}}$. 2) B ղաբերինթին. 2) B. կղոջ. 3) B. ելանելն և իջանելն. 4) B. (և միոյ ումեք) չիք. 4) B. միովտաւրոս. 4) B. թէպէտ և. 5) B. է. 5) B. լաբիրիթոսէ. 5) B. այժմ. 5) B. մեծս այս գրիգորիոս. 6) B. հարեալ. 7) A. զերծանել. 7) B. վերա. 8) A. զյարկն. 8) $\overline{\text{B.}}$ թանձրաշարի. 9) B. յորոյգայթ. 9) B. արջառոյ. 9) B. զաւրագունից. 11) A. $\overline{\text{ժդ}}$. 11) B. մինոսի. 11) B. հռադամանթաց. 12) B. (ասին գոլ) չիք. 12) B. արամազդա. 12) B. (մին) չիք. 12) B. աւրէնսդիր. 14) B. հաւրէն. 15) B. քերդողքն. 15) B. (ինքն) չիք. 16) B. խաւարին. 16) A. այղ. 16) B. երանելեաց կղզիք. 16) A. եղեւսինա. B. եղինսա. A. լուսանց. «եղեւսիոն». [յուն. Ἠλύσιον πεδίον]. 17) B. տեղեաց. 17) A. լոււ. «եղեւսիոնդ». 18) B. սոսա. 18) B. ելլենացոցն. 18) B. արդարքն. 19) B. բնակեն. 19) B. ասփովղելոս. 22) A. $\overline{\text{ժե}}$. 22) B. դադիրայն. 22) B. դադիրա. 22) B. մտից. 23) B. իբրև. 24) A. ադշանտական. B. անդղանդական. 24) A. յայնկոյսկոյս.

բայն ոչ ևս զուղելի լինել ծովուն, վասն գոլոյն քարախիտ և մթացեալ: Այլ Գադիրա լսի առ ի «գէէ» որ է երկիր, և «դիրէ» որ է պարանոց: Արդ քանզի պարանոց երկրի է տեղին՝ անուանեցաւ Գադիրա:

Ի.

ի. Յաղագս Երիւարին որ զնոյն եղէ: Յամերոս քերթող կամեցեալ զԴիովմեդեայ զաւրութիւնն և զջերմութիւնն զառ մարտսն արտասել՝ ի ձեռն առակի նմանեցուցանէ զդիւցազինն ասելով. «Իբր երիւար ոմն ուժգին պարարեալ և որոտացեալ առ մսուր»:

ԻԱ.

իա. Յաղագս սերմանելոյն և բուսանելոյ զաւրեայ հսկայիցն: Ի Թեբաս բիովտացւոց ասի թէ Կադմոս և կամ այլ ոմն առեալ զՄդեղփիւնոս վիշապին զատամունսն սերմանեաց յերկիր, և վերաբուսեալք եղեն արք սպառազինեալք. այլ եղեն վերաբուսեալք ի բարձիցն մինչև ի վեր, և այնպէս կալով՝ մարտնչէին ընդ միմեանս և ընդ այլս:

ԻԲ.

իբ. Յաղագս Եւթնադրանն Թեբայ և Եգիպտացւոյն: Աստուածայինն Գրիգորիոս յաղագս Հրաշից աստանաւր կամեցեալ մեզ ասել, թէ բիովտացոց Թեբաս — եղղադացւոց՝ եւթնադուռն է, այն որ յԱմփիոնէ և ի Զինթոսէ Թմբկաւք եղև շինեալ. այլ եգիպտացի Թեբաս Հարիւրադուռն է, քանզի մեծագոյն լեալ է յառաջ, և այնչափ մեծ, մինչ զի դրունս ունել այսքան: Այլ պարիսպքն Բաբիղոնի ասին ամրագոյն գոլ. քանզի խորովեալ աղիւսով և հալեալ կպրով եղև շինեալ, զլայնութիւնն և զերկայնութիւնն ունելով յոյժ բազում, և զշրջաբերութիւնն ընդարձակ:

---

1) A. գադիրա. B. դադիրայն. 1) B. զուղելի. 2) A գադիրայ. B. դադիրա. 2) B. գաէ. 2) B. դիր. 3) B. դադիրա. 5) A. ժզ. 5) B. խղէր. 5) B. քերդող. 6) A զդիովմեդեա. B. զդիոմիդեա. 6) B. զաւրութի. 6) B. արտասսուել. 6) B. ի ի. 7) B. նմանեցուցանել. 7) B. իբրև. 7) B. երիվար. 7) A. ումն. 8) A. լուսանցքում. «որոտալով». 10) B. բուսանելոյն. 10) B. սկայից. 11) B. բովոտացոցն. 11) B. ասէ. 11) B. զադելփիլոս. 12) B. յերկրի. 14) B. սոյնպես. 16) A. ժը. 16) B. թեբա. 16) B. եգիպտացւոցն. 16) B. ածաինն. 18) A. եղղեդացւոց. B. ելլադացոց. 18) B. յամփիունէ. 19) A. այզ. 20) B. լինեալ. 20) B. լեալ ի. 20) A. լուսանց. «կանխաւ». 21) B. բաբելոնի. 22) B հարեալ. 23) B. շրջաբերութի.

Այլ Մոսովղոսի Կարոսի շիրիմն՝ և սա էր մեծագոյն․ քանզի Մոսովղոս կարիացւոց եղև բռնաւոր, որ և շինեաց շիրիմ ինքեան յոյժ անուառ ի հողի ուրեք և ի ծովացեալ լճամիջի տրամակայեալ։ Այլ գրեցաւ «կարիական շիրիմ», զի ցուցցի առ ի նմանէ շինեալ․ գրեալ լինի և «Կարոսի», զի իցէ ազգին իւրում նշանակ Մոսովղոս Կարիոս։ Այլ պիւռամիդքն և սոքա արժանի են հրաշից, շինեալք յԵգիպտոս յոյժ անըմբռնելիք, զոր քրիստոնեայքս ասեմք շտեմարանս Յովսեփու գոլ․ իսկ ելլենացիք, յորոց մի է Հերոդոտոս, ասեն թէ թագաւորաց շիրիմք են։ Այլ յաղագս կովղոսի, որ յԵւրոդոնէ վերակայեալ՝ ասի թէ մեծագոյն է անդրիանդն և սքանչման արժանի։

III.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՑՆՈՑԻԿ ՈՐ ԵՒ ՑԱՌԱՋՆՈՒՄ ԱՐՁԱՆԱԿԱՆԻՆ ԵՂԵՆ ՑԻՇԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑՆ։

Արձանականն բան պարսաւ է Յուլիանոսի գործոցն․ այլ զանազանի ի պարսաւէ արձանականն, քանզի է պարսաւն ի ձեռն ներբողական գլխոցն․ որզան՝ յազգէ, ի վարժից, ի գործոց, ի բաղդատութենէ։ Այլ արձանականն ի ձեռն գործոցն միայն է, և թէ պատահէ՝ ի բաղդատութենէ։ Այլ արձանական ասացաւ ի տարբերութենէ արձանին։ Արձան է՝ քար կամ պղնձի երկարաձիգ, քառանկիւնի ձևով, յորում գրեալ լինի արձանելոյն անարգանք․ իբր զաթենացին զԵղիտէս զԱրիթմեանն զայն, որ ապականէր զեղլենացիսն վասն ընչիցն․ զի կարասեաւ հաւանեցուցանէր զպարսիկն մանաւանդ, զի հպատակ լինիցի Պերսեւս․ ի յարձանի վերագրեցին անարգանս նմա, և ամենայն ազգի նորա իշխանութիւն տալով ի գրեցեալսն,

---

1) B. մոսովղի․ 1) A. լուսանցքում․ «կարվական»․ 2) B. կարա-ցոց․ A. լուսանցքում․ «կարիացի»․ 3) A. լուսանցքում․ «իւր»․ 3) B. տրամակաեալ․ 4) A. լուսանց․ «դարձեալ»․ 5) B. մոսովղոսի և կարոսի․ 5) A. այղ․ 5) A. պիւռամիդին․ 6) B. արժանն․ 6) B. յեգիպտացոցն․ 7) B. քրիստեայքս․ 7) A. ըշտեմարանս․ B. շտեմարանք․ 7) B. յուսի-փու․ 8) B. հերոդիտոն․ 8) A. եթէ․ 8) A. այղ․ 9) B. կողղոսի․ [յուն․ κολοσσός]. 9) B. յերիդոննէ․ 9) B. վկայեալ․ 9) B. անդիանդն․ 12) B. (և)չիք․ 12) B. յառաջնումն․ 13) B. պատմութեց․ 14) AB. ա̃․ 14) B. արձանական բանն․ 14) B. յուլիանոսի․ 15) A. գլխոցն․ B. գործոյն․ 16) A. այղ․ 17) B. մեան․ փխ․ միայն է․ 17) A. (և)չիք․ 17) B. պատեհ է․ 18) A. այղ․ 18) A. լուսանց․ «ի փոխաբերութենե»․ 18) B. և արձան․ 19) AB. պղընձի․ 19—20) B. արձանելոյն․ 21) B. զաթենացիսն․ 21) B. վասն ըղձից․

Digitized by Google

զի որ ոք ախորժեսցէ՛ սպանցէ զնա․ գրեալ և զպատճառն յարձանին, և թէ որպիսի զատավճիռ հատեալ էր Արիմժոսի, զի ասէ՛ զոսկին, զոր ի գամրաց ած ի Պեղոպոննեսոս եբեր։ Այլ գիտել պարտ է, զի բազում անգամ և երախտաւորաց բարերարութիւնք յարձանս գրին, որպէս և Պեւկոնոսին Յովսպովրոցի իշխանին երախտիքն գրեցաւ յԱթէնս։ Արդ ենթադրութիւն արձանիդ այսպիսի է։

Ա․

ա․ Այլ յաղագս պատմութեանցն, որպէս հնար է, ի ձեռն սղից յիշեսցուք։ Առաջին պատմութիւն․ «ըւյսոաէկ խոլոսցէն (?) առ Նոսա Եմպե-դոկղէանէ և Արքիտեանէ, և Եմպեդոտիմեանէ և Տրովփոննեանէ»։ Եմպեդոկղէսս այս սիկեղացի էր ազգաւ, պիւթագորական իմաստասիրութեամբ, և կամեցեալ սնափառիլ, եթէ սրբազանեալ յերկինս վերացաւ՝ արկ զինքն ի հուրն, որ ելանէ ի լեռնէն սիկեզիացւոց յԵտնեայ։ Այլ այս հուր ասի եթէ Հեփեստոսի խառնարանն է։ Արդ նա կորեաւ ի ձեռն հրոյն․ այլ աստուած կամեցեալ հրապարակել զսնափառութիւն նորա՝ զկաւշիկս նորա ողջ հրոյն ի բաց ետ թքանել։ Եւ այսպէս ծանուցաւ, թէ ոչ վերացաւ, այլ կիզաւ ըստ արժանի սնափառութեանն իւրոյ։ Իսկ Տրովփոննեանքն և Եմպեդաւ-տիմեանքն էին ի գաւառէն բիովտացւոց, ի քաղաքէն Պեբատիայ, դիւթք արուեստիւ։ Այլ և սոքա կամեցեալ սնափառիլ և ցուցանել, թէ համբարձան՝ արկին զանձինս ի տիղմ յայրս ոմանս, զի մեռանիցին, և անյայտ մարմինքն լինիցին։ Այլ նոքա մեռան, և յայտ եղև, ուրանո՛ւր մեռանն և ո՛րպէս։ Եւ դիւթարան եղև տեղին․ որում և բան հետևի թէ «Առ Տրովփոնիոս ես դիւթացեալ»․ և ասի բանս առ դեղնեալսն, որք ոչն երբեք ծիծաղին․ զի իջեալք ի դիւթարանն յայն անծաղրացեալք

1) A. լուսանց․ «թէ հաճոյ ումեք իցէ կամ ուղեսցի» (?) 1) B. ի վերա արձանին․ 2) B. զոսկի․ 3) B. ի պոլեպոնոս․ 3) A. այղ․ 5) B. զևկոնոսին․ 5) B. զովսպովրացի․ [հաւանօրէն՝ բոսպորացի․]․ 8) A. բ․ 8) B. պատմութեց․ 8) A. լուսանցքում․ «որչափ»․ 9) A. յիշեցուք․ 9) A. լուս․ «խաղացին առ նոքաւք»․ 9) Գր․ Ա․ «այսոքիւք»․ 9—10) A. եմպոկղեանք․ B. եմպոկղեանքն․ 10) B. արիստեանքն․ 10) B. եմպեդիաւ-տիմեանքն․ 10) B. տրովփոննեանքն․ 10) AB. եմպեկղէսս․ 11) B. սիկիլացի․ 12) A. լուս․ «զանձն իւր ի լեառն»․ 13) B. որ է ի լերինն սիկիլացւոց․ 13) B. թե․ 14) A. լուս․ «խառնելիսն»․ 15) B. կամեցաւ․ 15) B. զսնափառութին․ 15) B. նորայ․ 15) A. լուս․ «զգին»․ 17—18) B. եմպեդիմաւտեանքն․ 18) B. ի գաւառէ․ 18) B. բովտացւոց․ 18) A. զեբատիա․ B. ղաբատիա․ 19) B. կամեցան․ 19) B. սափառիլ․ 20) A. լուս․ «իւրեանց ընդ տղմով»․ 21) B. և յայտ եղեն և յայտ եղեն․ 21) B. ուր․ 22) B. (և)չիք․ 22) B. (եւ)դիւթարան․ 22) B. որպէս բանն հետևի․ 23) A. լուս․ «դիւթեալ»․ 23) A. դեղեալսն․ 24) B. որ ոչ․ 24) A. անծաղրացեալ․

ելանեն և դեղնեալք հանապազ։ Իսկ է այս ի յանդիմանութիւն նոցա, զի դեղնեալք և առանց ծիծաղելոյ ընդ տղմով մեռան։ Այլ արժանացան Տրովփոնիոս և Ագամիդէս նորին եղբայր դիւթութեան վասն շինելոյ յընչից իւրեանց զտաճարն Ապողոնի, որ ի Դեղփքն էր։

Բ։

բ. Յաղագս Պրովտեայ։ Պրովտէսս այս Թրակացի էր ազգաւ և ունէր որդիս երկուս՝ զՄողոն և զՏեղեգոմնոս։ Սոքա աւազակք գոլով՝ Հերակղէս եկեալ սպան զնոսա յանցանելն վասն անդէոցն Գերիոմնեայ։ Որդ՝ զգացեալ Պրովտէաս վասն սպանման զաւակաց իւրոց՝ ընկեց զանձն իւր ի ծով, զոր անմահացուցին աստուածքն, ողորմելով նմա։ Իսկ եղեալ դև ծովային՝ եկն բնակեցաւ ի փարոս կղզւոջ։ Ոմանք ասի թէ առ փովկիդեանսն դեգերեալ լինէր. և սա յԱղէքսանդրոսէ առ զՀեղինէ ի գալն նորա յԻլլադա և ետ նմա զպատկերն Հեղինեայ։ Այլ յետոյ Մենեղայոս, յետ տրովական պատերազմին, իմացեալ թէ յԻգիպտոս է Հեղինէ, և գալով նորա առ Պրովտէս՝ զինքն ետ ցնա։ Այլ ասի զՊրովտեայ կերպափոխիլ առ հանդիպողսն պէսպէս՝ բայց ի սպիտակութենէ, և երբեմն երևիլ այսպէս, և երբեմն՝ այլպէս։

Գ.

գ. Յաղագս Հերակլեայ և խոյրակին։ Աւժգին ճառ հրատարակեալ լինի զՀերակղեայ. իբր թէ որդի է Արամազդայ և Աղկմենեայ, և դիւցազն գոլով զերկոտասան նահատակութիւնսն կատարեաց։ Այլ այժմիկ, յայսմ վայրի, յաղագս խարուկին ասասցուք։ Հերակղէս կին ունէր, որում անուն էր Դէիանիրա, զոր էր առեալ ի Յունէոսէ, հակառափող գոլով Աքեղաւոս գետոյ, յորմէ կնոջէ ծնաւ զՀիւղղոս։ Որդ՝ համանգամայն յառնուլն զԴէիհանիրա և տանել ի գաւառ իւր տեսեալ Նեսոսի,

1) B. և այս յանդիմանութին. 3) B. տրոփոնոս. 4) B. ապողին. 4) B. ի դեղփն. 6) A. պրովտեա. 6) B. պրոտեայ. 7) B. երկու որդի. 7) B. զտեղեգոմէս. 8) B. հերակլես. 8) A. լուս. «անցանելով». 8) B. անդէոց. 8) B. գիրէոնեայ. 9) B. պովրտեսի. 9) A. զաւակացն. B. զաւակաց. 11) B. ծովաին. 11) B. կղզոջ. 11) B. զմանէ. 11) B. ասեն. 12) B. փովդեանսն. 12) B. դեդերեալ. A. լուս. «դեգերեր». 12) B. նա. 13) A. յելլադայ. B. յելլադա. 13) A. հեղինեա. 13) A. այղ. 14) B. մենեղաոս. 15) B. պիովտես. 16) B. զպրովտոս. A. զպրովտեա. 16) A. լուս. «ի սպիտակէ». 17) B. (և) երբեմն երևիլ. 19) B. հերակլեայ. 19) B. հարուկին. 20) A. զհերակղեա. B. զհերակլեայ. 20) AB. արամազդա. 20) A. աղկմենեա. B. աղկմենայ. 21) B. այժմ. 22) B. հերակլէս. 23) B. առեալ էր. 23) B. ի յունէասէ. 23) B. որ է հակառափող. 24) B. աքաեղոոս. 24) B. ծնեալ զհեղղոս.

որ մին էր կենտաւրոսացն տափեցաւ կնոջն, և առ գետաւ ուրեմն կամեցաւ շաղաշարիլ ընդ նմա: Այլ Հերակղէս իմացեալ՝ նետահարէ զՆեսոս. և մեռանելով սորա՝ տայ յարենէ իւրմէ ցԴէջանիրա, ասացեալ պատրելով եթէ «Ացէ քեզ արիւն այս առ ի սիրելութիւն Հերակղեայ. և փոխարկեսցես զնա ի փափագանս քո. արդ՝ եթէ իմասցիս — ասէ — թէ այլոյ ումեմն կնոջ տափեալ իցէ՝ աւծցէս արեամբս այսու զհանդերձսն Հերակղեայ»: Եւ յաղագս այսորիկ ունէր զարիւնն զայն Դէջանիրա: Այլ յորժամ Հերակղէս տափեալ Յաւղղեայ դստերն Եւրիտեայ և առեալ զնա՝ ի ձեռն Դիքասայ արձակեաց իբր զգերեալ առ Դէջանիրա՝ զմտաւ ած և ի նախանձ շարժեցաւ: Կամեցեալ զսէրն յինքն դարձուցանել՝ զպատմուճանն Հերակլեայ աւծանէ արեամբն Նեսոսի, և տայ նմա զգենուլ: Այլ արիւնն այն այրասպան քանզի յորժամ զգեցաւ Հերակլէս, վառեալ պատմուճանն այն՝ եկէզ զնա: Իսկ նա, մինչդեռ այրէր՝ ընկեց զինքն ի գետն, որ մերձն էր, և ջերմացոյց զջուրսն, յորմէ և եղեն ջերմաջրութիւնք ի մէջ Թեսաղացւոցն և Փովկիսոյ:

Դ.

դ. Յաղագս Պեղղոպեայ խահագործութեանն:

Ե.

ե. Յաղագս աւշտամանցն փռիւգացւոց: Որ փռիւգացին պաշտեցեալ լինէր մայր աստուածոցն Ռէա, առաւել քան զայլսն: Եւ սմա տուն հաստատելով փռիւգացւոցն սուսերաւ զմարմինս իւրեանց հատանէին, ոչ եթէ սպանանել կամելով, այլ միայն արեամբ շաղախել. և զայն առնէին փքացեալք փողովք, զի առանց ցաւոց հանդուրժեսցեն խոցոտեալքն. և յետ այսորիկ դառնային յանմաքուր խառնակութիւնս կանանց:

---

1) B. է որ. 1) B. կենտորոսացն. 2) B. Հերակլես. 3) AB. տա. 4) B. թէ. 4) B. Հերակլեայ. 5) B. եթէ. 5) B. ումեմ. A. լուս. «այլում կնոջ». 6) B. այսու արեամբ. 6) A. Հերակղեա. B. Հերակլեա. 7) A. լուս. «ի պատճառս այսր». 8) B. Հերակլէս. 8) AB. յաւղղեա. 8) A. Եւրիտեա. B. Եւրիտեայ. 9) A. Դիքասա. 10) B. և կամեցաւ. 11) A. Հերակլեա. 11) B. արեամբ. A. լուս. «յարեննեն». 11) AB. տա. 11) A. այլ. 12) A. լուս. «առն սպանելոյ». 13) A. (այն)չէք. 13) B. սպան զնա. 14) B. ջերմացոյց. 14) B. (և) եղեն. 14—15) B. Թեսաղացւոցն. 15) A. «փովկէոյ». լուս. «իս» = փովկիսոյ. B. փովկիսոյ. 17) A. պեղղովպեա. B. պելոպ... 17) B. խահագործութ̄. 19) B. աւշտամանցն փռիւգացւոցն. 20) B. մայր անոց պաշտեցեալ լինէր. 20—21) B. տուն կատարելով. 21) B. փռիւգեցոց. A. լուս. «իք» = փռիւգացիք. 21) A. լուս. «սրովք». 21) B. զմարմինսն (իւրեանց). 21) B. հատանելով. 22) B. զայս առնելով. 23) A. լուս. «անցաւաբար». 23) B. խոցոտեալք. 24) B. դառնաին.

Զ.

զ. Յաղագս Միհրայ: Միթրոս կարծի առ ի պարսից արեգակն գոլ. և զոհս առնէին նմա և տաւնս կատարէին: Արդ՝ ոչ կարէ ոք ձաւնել նմա, եթէ ոչ յառաջագոյն ընդ աշտիճանս տանջանացն անցանիցէ: Եւ աշտիճանքն են թուով ութսուն, ունելով նուազութիւն և առաւելութիւն. և տանջէին յառաջագոյն թեթևագունիւքն և ապա դժուարագունիւքն. և յետ անցանելոյ ընդ ամենայն տանջանսն՝ լինի կատարեալ, որ կատարելոցն իցէ: Իսկ տանջանքն՝ ընդ հուր անցանել, ընդ սառնամանիս, ընդ քաղց, ընդ ծարաւ, ընդ երկայն ճանապարհս և ընդ ծով գնալ, և պարզաբար՝ ընդ ամենայն այսպիսի դժուարութիւնս:

Է.

է. Յաղագս տաւրացւոց աւտարասպանութեան: Տաւրոսք ազգ են սկիւթացւոց. առ որս փոխադրեցաւ ի ձեռն Արտեմիդեայ Իփիւգենիա՝ դուստր Ագամեմնոնի, յորժամ հանդերձեալ էին զոհել զնա յաղագս եղլենացւոցն յԱւղիդեայ. յաղագս որոյ եղն փոխանակ տուեալ աստուածուհւոյն՝ ետ զոհել: Արդ այս Իփիւգէնիա ի Տաւրոսս գոլով, զի մի ծանիցի ի հիւրոցն եկելոց, թէ ո՛ ոք իցէ՝ հրամայէր զոհել զնոսա Արտեմիդեայ. և նա էր աւտարասպանն, զոր ասէ աստուածայինն Գրիգորիոս: Յետ այնորիկ՝ Ովրեստէս երկուցեալ յԵրինեանցն և եկեալ ի Տաւրոսս, և ըմբռնեալ իբր հեւր՝ ի սպանումն ածաւ առ քոյրն Իփիւգենիա, իբր առ քահանայուհի, և ծանուցաւ ի ձեռն փղոսկրէից ուսոցն և թողաւ ի զենմանէն: Եւ այսպէս՝ առեալ Ովրեստէս զքոյրն իւր զԻփիւգենիա՝ բերէ յԵլլադա:

---

1) A. լուս. «ժը». (= տես. I, ժը.) 2) B. միւթրոսի. 2) B. միւթրաս. 2) B. (ի)չիք. 3) B. զոհ. 3) B ոք կարէ. 5) B. նուազութի. 6) B. թեթևագոյնիւքն. 6) B. դժուարագոյնիւքն. 7) B. անցանելոյն. 9) B. ճանապարհ. 12) B. Տաւրացոցն. 12—13) B. Տաւրոս քաղաք է սկիւթացոցն. 13) A. արտեմիդեա. 13) B. իփիւգենիեա. 14) B. ագամեմոնի. 14) B. «Յաղագս ելլենացւոցն յուղիդայ» նոր գլուխ է համարում. B. ելլենացւոցն. 15) A. յաւղիդեա. 15) A. լուս. «վասն». 15) A. (տուեալ)չիք. 15) A. լուս. «ին» = «աստուածուհին». 16) A. ի փռիւգիա. B. իփիւգինիա. 16) B. ի տաւրոս. 17) B. եկելոցն. 17) B. հրամեր. 17) B. արտեմեայ. 18) B. (ասէ)չիք. 18) B. ածաին. 19) B. ի սիրինեանցն. 19) A. լուս. «քրիւսես»(?) 19) B. ի տաւրոս. 20) B. իբրև. 20) B. հուր. 20) A. լուս. «առ ի կղեիւտեմնեստրու». 20) B. իփիւգինիեայ. 20) B. քահանաուհի. 21) A. լուս. «մն». 22) B. զքոյր. 22) B. իփիւգինեա. 22) B. բերել. 22) A. յեղղադայ. B. յելլադա.

Ը.

Ը. Յաղագս տրովացի զենմանն Նաւթառօրական աղջկանն Պաւղիքսենեայ: Պաւղիքսենէսս այս էր դուստր Պրիամոսի, զոր Աքիղլէս կամեցեալ կին առնուլ՝ եմուտ ի Տրովադա, և ըստ նենգութեան իմն նետիւ հարեալ առ ի Պարիսէ մեռանի առ տաճարաւն Ապողոնի: Արդ՝ յետ ժամանակի արիացեալ Պիւռոս որդի նորա՝ եռեւ յանուրջս զհայրն իւր, զի խնդրէր զոհել նմա զՊաւղիքսենէս, վասն որոյ կորուսեալն եղև: Եւ Պիւռոս գոլով ի Տրովադա և յետ յաղթութեանն առեալ զնա՝ զենու ի վերայ շիրմի Աքիղլեայ՝ հաւր իւրոյ:

Թ.

Թ. Յաղագս Մենիկեայ: Մենիւկեւս որդի էր Կրէոնեայ թագաւորի Թեբէացւոց: Արդ՝ մարտնչելով վասն հայրենի գաւառին իւրոյ Թեբէացւոցն ընդ եւթն զաւրավարսն՝ հրամանաարեաց Տերեսիաս, գիւթ ոմն գոլով, վաղվաղակի դադարել մարտին, և լինել նոցա յաղթութիւն, եթէ ի թագաւորական զարմէն բնակելոցն անդ, որք բուսեալ էին յատամանց վիշապին՝ տացէ ոք զանձն իւր ի սպանդ: Արդ՝ զայս իմացեալ Մենիւկեայ և կամեցեալ ազատել զքաղաքն ի պաշարմանէ անտի՝ աւանդեաց զանձն իւր ի սպանումն առանց հաւր իւրոյ Կրէոնեայ:

Ժ.

Ժ. Յաղագս Աքեղաւոսի գետերացն: Պակեդեմոնացիք ի պեղղովպոնիսեան պատերազմին, յետ ամենևին յաղթութեան աթենացւոցն, խորհեցան և ընդ մարտակիցսն իւրեանց մարտնչել, և դիմեալք ընդդէմ թեբացւոցն, նախ քան զհպիլն ի քաղաքն հասեալք ի Պիւքորոս, որ է քաղաք

---

2) B. Թ. 2) B. զեմանն. 2) A. պաւղիքսենիայ. B. պաւղիքսենա. A. լուս. «սենիսի». 2—3) B. Պաւղիքսեննես. 3) B. դուստ էր. 3) A. լուս. «ու» = պրիամու. 3) B. աքիլլես. 3) B. կամեցաւ. 4) B. (առ) ի պարսպէ. A. լուս. «պարիդիս». 6) B. խնդէր. 6) A. լուս. «ինքեան». 6—7) B. զպելիքսինէ. 8) B. ի վերա. 8) A. աքիղղեա. B. աքիւլլա. 10) B. Ժ. 10) A. մենիւկեա. 10) B. Մենեւկիս. 10) A. կրէոնեա. B. կրէովոննեա. A. լուս. «կրէաւնդոսի». 11) B. թեբացւոց. 11—12) B. թեբացւոց. 12) B. տերիսիաս. 13) B. նոցա լինել. 13—14) B. (եթէ ի թագաւորական զարմէն) բնակեցելոցն. 15) B թէ տացէ. 15) A. մենիւկեա. B. մենիւկիեայ. 16) A. ազատեալ. 16) B. անդի. 17) A. լուս. «զինքն». 17) A. կրեոնեա. B. կրէովեայ. A. լուս. «կրեաւնդոսէ». 19) B. Ժա. 19) B. կեդասոսի. 19) B. ղակեդոմնացիքն. 19) B. ի պելլովպիսեան. 20) B. (յետ ամենևին)չիք. 20) A. լուս. «ելոյն» = «յաղթելոյն». 20) A. խոհացան. 21) B. (և) ընդ մարտակիցս. 21) B. թերացոցն. 22) A. հասեալ. 22) B. ի ղուքորիոսս.

թեբէացւոց, ճակատամարտեալք վերջանահանջ եղեն, Եպամինոնդայ յաջողելով զաւրավարին թեբէացւոց։ Այլ պատահումն եղև ղակեդեմոնիացւոց ի Ղիւքտրոսս վասն այսպիսի պատճառանաց. Սկեդասոս ղիւքտրացի գոլով՝ ունէր դստերս երիս. և ոմանք ի ղակեդեմոնացւոցն առ նոսա իջեւանէին. և երկուցեալ ղակեդեմոնացիքն, թէ գուցէ հրապարակիցեն հաւրն իւրեանց զպակշոտութիւնն սպանանեն զնոսա։ Արդ եկեալ յիւր քաղաքն Սկեդասոս ի Ղիւքտրոսս և իմացեալ զոր ինչ եղեն անեծ զամենայն ղակեդեմոնացիսն, զի առ շիրիմս դստերացն իւրոց վատաբախտեցին. վասն որոյ և եհաս վատաբախտութիւն ղակեդեմոնիացւոցն ի Ղիւքտրոսս։

ԺԱ.

ժա. Յաղագս ղակոնական համբակացն։ Ղակեդեմոնիացիքն ախորժելով ժուժկալս և արիս գոլ զիւրեանցն քաղաքացիս և զմանկունս իւրեանց կրթէին զնոսա, տանջեալ փոկովք, և քանցէին գանիւք առ բագինսն. և ոչ նուաղելոյն, այլ առաւելապէս ժուժկալին, պարգևս հատուցանէին։

ԺԲ.

ժբ. Յաղագս արեանասուր ընծելոյն առ բագնաւն Արտեմիդեայ։ Կոյս գոլով և ողջախոհ աստուածուհին ուրախանայր արեամբ հիւրասպանութեան և պատուեալ լինէր։

ԺԳ.

ժգ. Յաղագս մոլեխնդէն Սոկրատայ։ Սոկրատէս այս էր ազգաւ աթենացի իմաստասէր հրահանգաւ։ Զսա, իբր դև ինչ մուծանող ի քաղաքավարութիւնս Անիտոս և Մեղիտոս հայցեցին ի սպանդ. և դատապարտեալ եղև վասն ապականելոյ զհամբակսն մեռանիլ, ըմպելով կոնիոն, և արբեալ մահացաւ։

---

1) B. թեբացոց. 1) B. ճակատամարտեալ վերջահանջ. 1) A. եպատինոնդա. B. իպատինոնդա. 2) B. թեբացոցն. 2—3) B. ղակեդոնիացոցն. 3) B. ի ղիւքտրոս. 3) B. այսպիս. 3) B. սեկեդասոս. 4) A. զիւքտրացի. 4) B. ի լակեդոնիացոցն. 5) B. ղակեդոնիացիքն. 7) B. քաղաքսն կեդասոս. 8) B. ղակեդոնիացիսն. 8) B. դստերաց. 11) B. ժբ. A. լուս «բ» = տես I, բ. 11) B. Ղակեգոնիացիքն. 12) A. գոլով. 12) B. զիւրեանց քաղաքացիսն. 13) A. լուս. «առ բագնաւքն». 16) B. ժգ. A. լուս. բ = տես I, բ. 16) B. լինելով. 16) B. բագնովն։ ժգ. Արտեմիդեա կոյս... A. արտեմիդեա. 17) B. հիւրոցն սպանութե. 20) B. ժդ. 20) A. սովկրատա. B. սոկրատա. 20) A. լուս. «կոնիոնին». 20—21) B. Սոկրատա ազգաւ աթենացի էր ազգաւ. 21) B. իբրև (դև). 21) A. լուս. «ել» = մուծանել (?) 22) B. քաղաքավարութին. 23) B. մեռանի ըմբելով.

ԺԴ.

ժդ. Յաղագս որոմնին Եպիկտետեայ: Եպիկտիտոս այս իմաստասէր էր, և կապեցաւ զսրուանցն ի բռնաւորէն մակեդոնացւոց: Եւ յետոյ կամեցեալ բռնաւորն լուծանել զիմաստասէրն՝ հարցանէր զնա այսպէս. «Կամիս ով Եպիկտիտոս զի լուծից զքեզ»: Եւ նա տայր պատասխանի. «Եւ զի՞րդ կապեալ իցեմ ես», իբր հոգւոյ նորա ոչ գոլով կապեալ. արդ ասի մարմինն ոչ գոլ մարդ այլ հոգին. և ապա խորտակեցին զսրունս նորա:

ԺԵ.

ժե. Յաղագս Անաքսարքեայ: Անաքսարքոս իմաստասէր էր. սա ըմբռնեալ յԱրքեղաոսէ բռնաւորէ և արկեալ ի սանդ՝ հարեալ լինէր նգով փայտեղինաւ, և ի սանդահարիլն մանրիլ ի նմանութիւն հնդոյ ինչ: Այլ սանդահարելով սորա՝ աղաղակէր և ասէր. «Սանդահարեա՛, սանդահարեա՛ զպարկդ Անաքսարքայ. քանզի ոչ կարես զԱնաքսարքոս սանդահարել»: Զայս ասէր, նշանակելով թէ իմաստասէր գոլով՝ մարմնոյն փոյթ և ոչ մի ինչ առնէր:

ԺԶ.

ժզ. Յաղագս Կղէոմբրոտեայ: Կղէոմբրատոս ամբրակացի էր ազգաւ, որ է քաղաք հին ցամաքին: Արդ հանդիպեալ սորա փեդրոնի յաղագս անձին տրամաբանութեանն Պղատոնի և կարծեցեալ, թէ բարի է հոգւոյ բաժանիլն ի մարմնոյ՝ ընկեց զինքն ի պարսպէն, որպէս զի հոգին ելեալ՝ բաժանեսցի ի մարմնոյն:

ԺԷ.

ժէ. Յաղագս պիւթագորական ոլոռանցն: Պիւթագորականքն իմաստասէրք դիմեալք ի Պւթագորէ սամէացւոյ՝ սոքա ի ձեռն նշանաց զիմաստասիրութեանն զաւանդութիւնս ուսանէին: Արդ՝ աւանդեալ լինէր նոցա ընդ այլսն և այս նշան. այսինքն՝ ոլոռունս ոչ ուտել, որ է ոչ մտանել

2) B. ժե. 3) B. զսրունանց. A. լուս. «երուանցն» (?) 3) B. անլուծանելի ի մակեդոնացոցն. 5) B. եպիքտիտէ. 6) B. հոգոյ. 7) B. (այլ հոգին)չիք. 9) B ժզ. 9) B. անաքսարքա. 9) B. ըմպռնեալ. 10) B. (բռնաւորէ)չիք. 10) A. հանեալ. 11) B. (ի)նմանութիւն. 11) B. (ինչ)չիք. 12) B. սանդահարեայ. 12) A. զպարկտ. 12—13) AB. անաքսարքա. 16) B. ժէ. 16) A. կլեոմբրատա. B. կլոսբրոտայ. 16) B. կղէոմբռոտոս. 17) A. լուս. «առդեգերին». 18) B. տրամաբանութե. 19) B. հոգոյ. 22) B. ժը. 22) B Պիւթագորականք. 23) A. լուս. «յառաջ եկեալք». 23) B. ի պիւթագորէ. 23) B. սամէացոյ. 23 – 24) B. իմաստասիրութեն. 24) B. ունէին.

զերաւունս կաշառաւք ընչից. քանզի աթենացի դատաւորքն կանխաւ, փոխանակ դատակնիք տալոյ, ոլոռամբք վարէին առ ի դատապարտութիւն այնոցիկ, որ ի դատարանին հանդիպէին: Արդ աւէին եթէ յոլոռանց դատարանին ոչ է պարտ ուտել:

ԺԸ.

ժը. Յաղագս Թէանոյ պիւթագորական կնոջ: Սինս այս Թէանով ի բանաւորէ ըմբռնեալ՝ հարկաւորի ասել զանձառելիսն հայրենիս. իսկ նա զլեզուն ծամեալ՝ ի բաց եթուք, ոչ կամելով ի հարկէ ինչ ասել բանաւորին, ի բաց խլելով գործարանին ձայնականի:

ԺԹ.

ժթ. Յաղագս Եպամինոնդայ և Սկիպիոնի: Էպամինոնդաս Թեբայեցի էր ազգաւ զաւրավար մեծագոյն, զաւրավարեալ ի մարտին ղւքտրացւոց, աշակերտեալ Փիղղաոսի պւթագորականի: Սա ի մարտի գոլով՝ ամենեւին ժուժկալէր և ի կերակրոց, և յափրոդիտականաց, և յամենայն հեշտախտութեանց. վասն որոյ և մեծագոյնս ընդդէմ ղակեդեմոնացւոցն կանգնեաց յաղթութիւնս: Իսկ և Սկեպիոն զաւրավար էր հռովմայեցւոց, նմանապէս ըստ սովորութեան և կենցաղոյն Էպամինոնդայ. յաղթեաց և սա կարքեդոնական մարտին, որ և ի յաղթութենէն զազգին ընկալաւ մականունութիւն, վասն զի կոչեցաւ Սկեպիոն ափրիկեցի. և ափրիկեցիք կարքեդոնացիք են:

Ի.

ի. Յաղագս անոտնալուացից և գետնախշտեայցն: Ի Հոմերոս քերդող սեղք ազգ են դովդոնացւոց: Ի սոցանէ քահանայք կաղնոյն նախակարգեալք լինէին: Առ այնմ կաղնոյ դիւթարան էր Արամազդայ, որ կոչէր դովդո-

---

2) B ոլոռամբ. 3) B. ի դատաստանին. 3) B. թէ. 6) B. ժթ. 6) B. պիւթագորականի (կնոջ). 6) B այս Թէովլի. 7) B. զանձառ հայրենիսն. 9) B. ձայնականին. 11) B. ի. 11) A. եպամինոնդա. 11) B. սկեպոնին. 11) A. եպամինոնդ այս. B. էապամինոնդաս. 11) B. թեբացի. 12) B. լիքտրացոց. 13) B. պիւթագորականի. 13) A. լուս. «ի մարտ եղանելով». 15) B. մեծագոյն ընդէմ. A. լուս. «մեծամեծս». 15) B. ղակեդոմնացւոցն. 15) A. լուս. «յարոյց». 16) B. զյաղթութիւն. 16) A. հռովմայեցւոց. B. հռոմացեցոցն. 17) B. (և) կենցաղոյն. 17) AB. եպամինոնդա. 18) B. (ի) յաղթեննեն. A. լուս. «ի յաղթութենէ ազգին». 22) B. իա. 22) B. անոտնալուաիցն. 22) A. գիտնախշտեայցն. B. գետնխշտացն. 22) B. քերդողք. 23) B. (ազգ են) դովդոնացւոցն. A. լուս. «դովդոնացիք». 23) B. կարգեալք. 24) B. արամազդա.

Digitized by Google

նական կաղնի։ Արդ՝ այսպիսի քահանայք, իբր աստուածոցն գոլով հաճեցուցիչք, մաքրելով ոչ լուացեալք լինէին և ոչ ի մահիճս ննջէին, այլ ի վերայ գետնոյ, որպէս ասէ քերդողն յայսմ տաղի. «Այլ շուրջ զնովաւ սեղք բնակեալք էին ենթասացողք, անոտնալուայք և գետնախշտիք»։

ԻԱ.

իա. Յաղագս Սողոնի անյագութեանն։ Սողոնն աւրէնսդիր էր աթենացւոց. սա խնդրելով գտնել զաւրէնսն՝ պահանջեաց ի քաղաքացեացն երդումն, զի մինչև ցտասնամեայ ժամանակս տևեսցեն առ նոսա աւրէնքն ի նմանէ եդեալքն. և այնուհետև, թէ ոչ թուեսցի հաճոյ նոցա՝ լուծցեն զաւրէնսն։ Եւ զայս արար, զի ընդելուսցէ զնոսա կալ մնալ առ սակաւ ժամանակս յաւանդութիւնս նորա, քանզի գիտէր, թէ իբրև ճաշակեսցեն զաւրէնսն՝ այնուհետև դժուարափոխք լինիցին ի նոցանէ։ Առեալ արդ Սողոն զերդումն յաթենացւոցն և աւրէնադրեալ նոցա՝ ել յԱթենայ, պարտ ունելով զտասնամեայն արտաքոյ առնել դեգերանս։ Արդ ի Լիւդիա եկն առ Կրիւսոս թագաւոր. զոր Կրիւսոս ի զարմացումն կամելով շարժել՝ արձակեաց զնա ի շտեմարանս իւր, ցուցանելով թէ բազում ոսկի է Կրիւսոսի։ Եւ դառնալով ի շտեմարանացն Սողոնի հարցանէր Կրիւսոս թէ ո՛ ոք թուի քեզ բարեբախտագոյն ամենայն մարդկան, կարծիս ունելով թէ զնա արդեւք նախ ամենեցուն ասիցէ։ Այլ Սողոն տայր պատասխանի. «Տեղղոս աթենացի». քանզի սահմանէր Սողոն՝ ո՛չ զճոխութիւնն և զերևելին լինել բարեբաստութիւն, այլ զանախտաբար կենցաղավարեալն և զարիութեամբ վախճանեալն։ Արդ՝ այժմիկ անյագ կոչէ զՍողոն, իբր յոլովագոյն հարստութեանն անհաւան, քան թէ զգանձսն լիւդացւոց յաւժարեալ տեսանել. զի և հարստութիւնն բարեբաստութիւն ինչ է առ արտաքինսն, այլ երիս բարեբաստութիւնս գիտէ բանն՝ զըստ հոգւոյ

24—1) A. դովղոննական. B. դողոնական. 1) B. ածոց. 2) A. լուս. «ոչ լուանային». 3) B. ի վերա. 3) B. քերդողն. 4) A. բնակեալ. 4) A. լուս. «լինեալք». 6) B. իբ. 6) B. (Սողոնի) չիք. 6) B. Սողոն. 6) B. գոլով. 7) B. աթենացոցն. 8) B. ի տասնամեա. A. ցտասնամեա. 8) B. տևեսցէ. 8—9) A. (առ նոսա) առ ի նմանն եդեալ աւրենքն. 10) B. արարեալ. 10) A. լուս. «զի միւս անգամ յաւելուցու ինչ». 10) B. ընդելուցե. 11) A. լուս. «զաւրինադրութիւնն». 12) B. առ. 12) B. արդօ. 13) B. զերդումն. 13) B. աւրէնսդրեալ սոցա. 13) B. յաթենա. 14) B. զտասնամեայն. 14) A. ի զիւգիա. 14) A. լուս. «ելով» = առնելով (?). 15) B. կամեցաւ. 16) B. ցուցանել. 17) A. լուս. «անդրէն». 17) B. (կրիւսոս) չիք. 19) B. (արդեւք) նախամենիցուն ցուցանէ. 21) A. լուս. «եաց» = զերևելեաց. 21) B. կենցաղավարելն. 22) A. զսաւղոն. 23) A. հարըստութեանն. 23) B. (անհաւան) չիք. 23) B. լիւիացոց. 24) B. հարստութի.

Digitized by Google

անախտութիւն, ըստ մարմնոյ առողջութիւն և ըստ արտաքնոցն պատուականութիւն։ Որդ՝ պարտ էր Սողոնի յաւելուլ ի պատասխանին, թէ հոգւով առաքինի ես՝ բաւական է քեզ․ հարստութիւնդ՝ առ ի յարտաքնոցն բարեբաստութիւն։

ԻԲ․

իբ․ **Յաղագս Սոկրատայ ճեպճեպախօսութեանն։** *Սոկրատէս իմաստասէր գոլով շրջէր ի մէջ ամբոխին և զհամբական յորդորէր յիմաստութիւն, և մանաւանդ թէ թուէին նմա առ յիմաստասիրութիւնն ճահաւոր գեղեցկագոյնքն ի համբակացն․ քանզի զքաջակերպն ասեն և քաջաբնակս գոլ։ Որդ՝ էր կարծիս առ աթենացիսն, եթէ մանկամոլ էր Սոկրատէս վասն ընտրելոյ զգեղեցկակերպսն։ Այլ գտանի ի Պղատոնին և ի Թիետիտոսի տրամաբանութեանն, և յամենայնի այսպէս ասելով ի դէմս Սոկրատայ, թէ գեղեցիկ է Թէէտիտոս և գեղեցիկ է Քարմիդէս․ արդ շրջափոխի բանս, և երևումն տայ մեզ Պղատոն, թէ գեղեցիկ զհոգին ասէ և ոչ զդէմս։ Այլ կասկած եղև թէ և ընդ Ալկիպիադեայ շաղաշարի ըստ գարշելի ռւփութեանն․ բայց սոկրատեանքն ասելով ասեն, թէ շաղաշարեցաւ ընդ ամենայն ոչ ախտաւորութեամբ, այլ աստուածայնովն։*

ԻԳ․

իգ․ **Յաղագս Պղատոնի ագահութեանն։** *Պղատոնի իմաստասիրի լուեալ, թէ մեծահոգի է Դիոնիսոս սիկիղացւոց բռնաւորն՝ նաւարկեաց առ նա։ Իսկ արդ մեկնիչքն Պղատոնի այսպէս ասեն, եթէ նաւեաց առ նա վասն երկուց պատճառաց․ մի՝ զի պատմագրեսցէ զհուրն որ յԵտնեայ ելանէ, և միւս՝ զի հաւանեցուսցէ զԴիոնիսոս իմաստասիրել։ Այլ ասէ ստու-*

---

1) B. *զանախտութիւն ըստ հոգւոյ*․ 1) B. *ըստ*․ 1) A. *լուս․ «բնու»*, *«փարթամութիւն»*․ 1) B. *ըստ*․ 2) B. *Սաւղոնի*․ 3) B. *հոգւով առաքին*․ 6) B. *իգ*․ 6) B. *Սոկրատա գեղեցկասիրութե*․ 7) B. *յիմաստասիրութիւն*․ 8) B. *եթէ*․ 8) B. *առ ի յիմաստութիւնն*․ 9) B. *քաջաբնակ*․ A. *լուս․ «բանս» = քաջաբանս*․ 10) B. *սոկրատես*․ 12) B. *ի պղատոնի և ի թիետետեսի տրամաբանութեն*․ 12) B. *սոկրատա*․ 13) B. *թետիտիս*․ 14) AB. *տա*․ 14) B. *(մեզ)չէք*․ 14) A. *լուս․ «ցուցանէ»*․ 14) B. *ասաց*․ 14) A. *լուս․ «զերեսս»*․ B. *զդեմսն*․ 15) A. *ալկիպիադեա*․ B. *կիպադա*․ 16) A. *լուս․ «այլ»*․ 16) B. *սոկրատեանքն*․ 17) A. *լուս․ «այնի» «եսեան» = ամենայնի, ամենեսեան*․ B. *ամենիսեան*․ 17) A. *լուս․ «մամբ» = ախտաւորմամբ*․ B. *ախտաւոր ռւփութբ*․ 17) A. *այդ ածայնւով*․ 19) B. *իգ*․ 19) B. *Պղատոն*․ 20) A. *լուս․ «բնութիւն կամ միտ»*․ 20) B. *դիոնոսիոս սիկիլացոցն*․ 21) B. *պղատոն*․ 22) A. *յետնեա*․ B. *յետնա*․ A. *լուս․ «ի յետնէ»*․ 23) B. *հաւնեցուցէ զդիոնոսիոս*․ 23) A. *այդ*․

Digitized by Google

ածայինն Գրիգորիոս, թէ վասն այսորիկ չոգաւ Պղատոն ի Սիկիլիայ, զի վայելեսցէ պատուականութեամբ ճաշոցն Դիոնիսիոսայ: Եւ ստուգէ զասացեալսդ վաճառիլն նորա. քանզի ճշմարտապէս վաճառեցաւ ի ձեռն Դիոնիսիոսայ Պաւղոսի նաւապետի ղակեդեմոնացւոյ, դեգերելով նորա յայնժամ անդ: Նոյա Պաւղիս եկեալ յԵգինա վաճառէ զնա Անիկերիսի ի միասս յիսուն:

ԻԴ.

իդ. Յաղագս Քսենոկրատեայ Խոշոկակերութեանն: Քսենովկրատէս և Արիստոտելէս Պղատոնի էին աշակերտք, որք և յետ նորա փոխանորդք եղեն համալսարանին նորա: Իսկ արդ Քսենովկրատէս արար զստոյիկեան հերձուածն, իսկ Արիստոտելէս զճեմականն: Արդ ասէ թէ այնպէս ողջախոհ էր Քսենովկրատէս, մինչ զի խրախանալով յափրոդիտականսն ոչ շարժէր, զի հնազանդեցուցեալ էր զախտսն անսալ բանին: Արդ երանելին Գրիգորիոս չարախաւսէ զնմանէ, իբր զորկորամոլէ, և ասէ թոշակեր, և ոչ մի ինչ ի կերակրոց հրաժարեալ, որպէս աւրէն է իմաստասիրի:

ԻԵ.

իե. Յաղագս Դիոգինեայ խառնախառնութեանն: Դիոգինէս շնական էր իմաստասէր. և ասի շնական ի փոխաբերութենէ շանց ցամաքայնւոց. զի որպէս շունք ունին զպահպանականն և զընտրողականն իւրեանց յաւտարաց, և պահեն զընտանիսն՝ այսպէս և սա՛ յընտրողականն և ի պահպանականն նոցունց, և պահէր զիմաստասիրութեանն զաւանդութիւնս և ընտրէր զճահաւորսն և զանյաջողակսն առ ի յիմաստասիրութիւն: Արդ Դիոգենէսն այն այնպիսի գոլով վայելչապէս քաջահամարձակ էր. յանդիմանէր

---

1) B. ածային. 1) B. պղատոն. 1) B. ի սիկիլա. 2) A. (զի) չիք. 2) B. վաելեսցէ. 2) A. լուս. ‹պատուասիրութե›. 2) A. դիոնիսիսեա. B դիոնոսեա. 2) B. (և) ստուգէ. 3) B. վաճառիլ. 3) B. ստուգապէս. A. լուս. ‹ճշմարիտ›. 4) A. դիոնիւսեա. B. դիոնոսեայ. 4) B. ղակեդոմնացոց. 4) B. նորա դեգերելով. 5) A. լուս. ‹յայնմ ժամանակի›. 5) B. յեգինեա. 5) B. անեկերիսի. 8) B. իե. 8) A. սքենոկրատեա. B. քսենոկրատայ. 9) B. և որք. 10) B. համալսարանի. 10) B. (արդ) չիք. 10) A. զըստոյիկեան. B. զստիիկեան. 11) A. զճեմարանն. A. լուս. ‹արան› = զճեմարան. 12) B. քսովկրատէս. 12) A. լուս. ‹որպէս իբր›. 13) B. իսկ երանելին. 14) A. լուս. ‹զորովայնամոլէ և ոչ ի մի ինչ›. 15) A. թոշակեր. 15) B. յոչ մի ինչ կերակրոց հրաժեալ. 17) B. իգ. 17) A. դիոգինեա. 17) B. խառնախաւսութե. 18) B. ցամաքայնոց. A. լուս. ‹շան ցամաքաւնւոյ›. 19) A. զնտրողականն. 20) B. զընտանիս. 20) B. նա. 21) B. աւանդութիս. 22) B. զճահաւորն. 22) B. զանյաջողականսն. 22) B. (ի) չիք. 23) B. դիոգինէսն. 23) B. վաելչապէս.

և զզաւրաւորս, և զխորհրդականս, և զամենայն մարդ սակս բարւոյ Թերևս. այլ քաղաքականագոյն և ծաղրականապէս յանդիմանէր։ Առ այս հայելով արդ աստուածայինն Գրիգորիոս ասէ, թէ Դիոգենէս ծաղրածու մանաւանդ էր և պատրող, քան եթէ իմաստասէր. այլ խառնախաւսութիւն է ըստ քաղաքականութեան և պատրանաց յառաջաբերել զբանն։

ԻԶ.

իզ. Յաւելուն բնականն է կարօտ զոր և բազմապատիկ հնար է մինեւ, զի և այս յաւելու Դիոգենեայ է։ Արդ ասի թէ սա յաւուրս ձմերայնւոյ յերեկորեայ ի կարաս իջանէր վասն ցրտոյն և ի տուընջեան արտաքս ելանէր վասն արևուն. յաղագս որոյ և երբեմն ջեռնլով նորա, ի վերայ հասեալ Աղեքսանդրոս մակեդոնացի՝ ստուեր առնէր ի վերայ նորա, զի մի ջեռցի, միանգամայն ասելով ցնա. «Ասա Դիոգենէս, զի՞նչ կամիս, զի շնորհեցից քեզ»։ Եւ նա ասէ. «Զայս ինչ շնորհեա ինձ. փոքր ինչ ի բաց կացցես յինէն, զի ջեռայց»։ Նոյն և առ Պտողոմէոսիւ եղև, և է այսպէս. Ստրատոնէս ոմն աղեքսանդրացի կացեալ ի տեղւոջ ուրեմն յարևու, քաղելով ի ձորձոց իւրոց զքրտնածին բծիծսն, զսա ի վերուստ ի բարձաւանդակէ ուստեմն տեսեալ Պտողոմէոս՝ էջ զի առցէ զնա ի թագաւորական ապարանսն։ Եւ Ստրատոնէս տեսեալ զնա՝ եմուտ ի բեկոր ինչ կարասի, և թաքեաւ ի Պտողովմեայ։ Եւ յետոյ իբրև վտարախտ զսա ոմանք դաւաճանէին, և այլք ասէին, եթէ ինքն էր Պտողոմէոս, որ և զմեծավերջ տաղս զայս բարբառեցաւ. «Պիտանացու է ինձ կաթիլ բախտի, քան եթէ խելք կարասով»։ Զայս ասելով՝ նշանակէր թէ կարասն այն լի էր խելաւք վասն Ստրատոնեայ, այլ վասն վտարաբախտութեան նորա ոչինչ աւգուտ եղև նմա բազմութիւն խելացն։ Իսկ արդ պատմութիւնս այսպիսի է. այլ շարադասութիւնն այսպէս պիտի և Դիոգենեայ խառնախաւսութեանն, որով զաւտարսն ափշեցուցանէր, կամ եթէ Դիոգենէս խաւսել տայր

1) B. զաւրաւորս. 1) A. լուս. «խոհեմականս». 1) B. բարոյ. 2) A. այղ. 3) B. ածաինն. 3) B. (թէ) դիոգինէս. 3) A. լուս. «ծաղրականս». 4) A լուս. «ականս». = պատրողական (?). 4) A. այղ. 5) B. քաղաքականութեն. 5) B. յառաջ բերել. 5) A. լուս. «յառաջաբերեալ բանն». 7) B. իէ. 8) B. դիոգնեայ. A. դիոգեննեա. 8) B. յաւուր ձմերայնոյ. 9) A. յերեկորեա. 10) B ի վերա. 11) A. լուս. «անդ». 11) B. ի վերա. 12) B. դիոգինէս. 13) B. կայցես. 14) B. պտղոմիոսիւ. 15) A. լուս. «սոկրատէս». 15) B. ի տեղոջ. 16) B. զքրտածին. 17) B. ուստի. A. լուս. «իմեմնէ». 17) B. պտղոմէոսի. 17) B. (զնա) չիք. 19) A. ի պտողովմեա. B. ի պտղոմիեա. 19) A. լուս. «ոյ». 20) A. լուս. «պարսաւէին». 20) B. թէ ինքն իսկ (էր). 21) B. պատառ. 23) A. շաւղատեա. 23) B. այլ սակայն. 23) B. աւգտեալ. 24) B. (եղև) նմա և. 25) A. դիոգեննեա. B. դիոգնեա. 26) B. աշփեցուցանէր. 26) B. դիոգնէս.

այնոցիկ, որ ստուերն առնէին նմա բռնաւորացն. այլ զայս ասէ թերևս, քանզի բռնաւոր բանիւք տեղի տայր տալ հանդիպեցելոցն: Արդ կամ միով գոլով պատմութեանն խառնախառնութեանն և կարասին շարադասութիւնն լծակցեալ լինի, և կամ երկու գոլով պատմութեանց շարադասիլ պարտ է զԴիոգեննեայ խառնախառնութիւնն ընդ ոճոյն: Այլ եթէ բռնաւորք կոչեցեալ լինին խստագոյն բանս, և նոյն ինքն աստուածայինն Գրիգորիոս ասաց իբրու յողբերգութենէն. քանզի մանաւանդ ողբերգակքն այդպիսի յեղանակաւ վարեալ լինին. «Այլ զնուաստագոյն զնկանակսն հիւրոցն պատրաստեսցուք»: Եւ այսպիսի ինչ աւանդութիւն առ յողբերգակացն և մանաւանդ առ ի կատակերգակացն ասացեալ, եթէ ի ձեռն անոյշ նկանակացն արհամարհելով զնկանակսն իբրև զնուաստս: Արդ խաղ առնէ աստուածայինն Գրիգորիոս, աւանդութեամբն վարելով ասէ. զի ի ձեռն խառնախառնութեանն, որ բարբառելովն հեշտացուցանէր, արհամարհեալ զհանդիպեալսն յանդիմանէր զնոսա: Այլ ըստ իմում դատողութեան մի վարկանիմ զխառնախառնութեանն և զկարասին պատմութիւն:

ԻԱ.

իէ. Յաղագս Եպիկուրեայ: Եպիկուրոս իմաստասէր էր և այսպէս կարծէր, թէ ստանաւր իրողութեանցս Աստուած նախախնամութիւն ոչ առնէ: Սա և կատարած ամենայն բարութեան զհեշտութիւնն դնէր: Իսկ արդ այժմիկ մեկնողք իմաստասիրացն ասեն կատարած եդեալ նորա զհեշտութիւնն ոչ զանմաքուրն, այլ զբնականագոյն հաստատութիւն: Սակայն իմաստասէրքն անարգեն զնա, և վասն զի կատարած բարութեան զհեշտութիւնն դնէ, և ոչ զառաջին բարին միայն, որ է Աստուած, և վասն զի նախախնամութիւն ոչ ասէ:

ԻԲ.

իը. Յաղագս Կրատեսի: Կրատէս թեբայեցի էր բիովտացի ազգաւ: Սա կամեցեալ իմաստասիրել ըստ շնական իմաստութեանն, առեալ զգոյս

---

1) B. ասէր. 3) B. գոլ պատմութին. 3—4) B. և կարասի և շարադասութի կապակցեալ լինի. 4) B. գոլ. 4) B. շարադասել. 5) A. զդիոգեննեա. B. զդիոգնեա. 5) B. խառնախառնութինն. 6) B. լինի. 6) B. ածային. 8) B. այսպիսի. 9) A. լուս. «[illegible]եռի ես ի խաւսել ի բնաբանէն այր դու». 9) A. և այսպիսի. 9) B. (առ) այլ յողբերգականացն. 11) B. նշանակացն. 12) B. ածայինն. 14) B. դատողութես. 15) B. զխառնախառնութին (և զկարասին պատմութիւն). 17) B. իը. 17) A. եպիկուրեա. 17) A. եպիկուրիոս. 21) A. այղ. 21) B. հաստատութին. 22) B. բարութեն. 26) B. իթ. 26) B. թեբացի. 26) B. բւովտացի. 27) B. կամեցաւ. 27) B. ըստ նշանակի իմաստասիրութեն.

իւր՝ ընկեց ի հանդէսն, բողոքելով այսպէս. «Կրատէս արձակեմ, զոր ինչ Կրատեսին են, զի մի յաղթեսցեն գոյքս Կրատեսի»: Եւ թողացոյց զվայրս իւր, զի լինիցին մելաբաւտք: Եւ «մելաբատս» է վայրն, ուր արձակեալ լինին ոչխարք ի ճարակս. քանզի «մելաւ» զոչխարէ ասացեալ Հոմերոս, տատուատ և մելաճարակք են հովիւք, և «մելովտէ» մորթ ոչխարի:

ԻԹ.

իթ. ՅԱՂԱԳՍ ԱՂԱԲՈՂՈՄՆԷՆ: Շնական իմաստասէր ոմն — ոմանք զԱնտիսթենէս ասեն և ոմանք զԶենոն գոլ զնա — երկբայաբար նաւելով նորա ի ձմերանի, և նաւակոծութեան եղելոյ՝ գոհութեամբ հանդուրժէր հասելոյ նմա տնանկութեանն և բարբառէր բախտին. «Ով բախտ, շնորհ քաջ խոստովանիմ քեզ ունել, զի զգոյս իմ կացուցեր մինչև յաղաբողոնս». յայտ է, եթէ զգոյս իւր ի նաւն բարձեալ ունէր, և կորոյս:

Լ.

լ. ՅԱՂԱԳՍ ԱՆՏԻՍԹԵՆԷ: Անտիսթենէս ՝շնական իմաստասէր հարեալ և գան առեալ ի դէմսն, առեալ քարտ՝ գրեաց ի նմա զհարկանողն, և կառուցեալ ի ճակատն զքարտն՝ այնպէս շրջէր:

ԼԱ.

լա. ՅԱՂԱԳՍ ԻՄԱՍՏԱՍԻՐԻՆ ԿՈՉԵԼՈՅ ՅՈՐԵԱԼ ԶԱՒՐՆ ԱՄԵՆԱՅՆ: Մարտուցեալ լինելով Հռոմայ ի բարբարոսաց, կացեալ իմաստասիրին զաւրն ամենայն յարեւու՝ ըղձայր, և անկեալ հուր յերկնից՝ եկէզ զբարբարոսն և զնոյն ինքն զիմաստասէրն:

ԼԲ.

լբ. ՅԱՂԱԳՍ ՊՈԼՏԻԴԵԱՅ: Պոլտիդէ քաղաք է շինեալ ի Թրակ. յայս մ քաղաքի իմաստասէր ոմն կացեալ ի ժամանակս ձմերանի ապշութեամբ

---

2) B. կրատեսին են. 2) B. կրատեսի գոյքս կրատեսի. 2) A. թուղացոյց զզարս. B. թողացոյց զվայրս. 3) B մելաբաւտք. 5) B. մելճարակք. 7) B. լ. 7) A. աղաբաղոմնին. 8) B. զենոն. 8) B. երկբաաբար. 9) B. նմա. 9) A. լուս. «բեկ» = նաւաբեկութեան. 10) B. վտանկութեն. 11) B. քաջ քեզ. 11—12) A. յաղաբաղոնս. 12) B. թէ. 12) B. կոյրս. 14) B. լա. 14) B. Անտեսթոնայ. 14) B. Անտոսթենէս. 16) B. այսպէս. 18) B. լբ. 18) A. կեցելոյ. B. կացելոյ. 18) B. (ամենայն)չիք. 19) AB. Հռոմա. 19) B. ի բարբարոսացն. 20) B. ընձանայր. 20) B. զբարբարոսն. 21) B. (զնոյն) զինքն. 23) B. լգ. 23) A. պովտիդեա. B. բովտիդեայ. 23) B. Պովպիդեա. 24) B. ձմանի. 24) A. լուս. «Հիացմամբ».

ըղձացեալ — ապշութիւն ասացեալ է զվերանալն հոգւով իմաստասիրին և զլինելն երկնագնաց — և ըղձացեալ՝ ելոյծ զմարտն ներազգի եղեալ ի քաղաքին։

ԼԳ.

լգ. **Յաղագս արկադական խնդրոյն**։ Հոմերոս քերդող շրջեալ ի գաւառն արկադացւոց, որ է Պելոպոնեսոս, հանդիպեցաւ ձկնորսաց ոմանց, որ քաղէին զորջիլսն յինքեանց։ Եհարց զնոսա այսպէս. «Արք յԱրկադիոյ ձկնախոյզք, արդեւք հուպ եմք յինչ»։ Եւ է միտք հարցուածոյս այսպէս. «Ով արք արկադացիք ձկնորսք արուեստիւ, արդեւաւք որսացեալ եմք ինչ»։ Եւ ձկնորսքն պատասխանի ետուն այսպիսի տաղիւ. «Զորս ինչ ըմբռնեցաք, յայնս ոչ եմք հուպ, այլ զորս ոչ ըմբռնեցաք՝ մերձ ունիմք»։ Եւ է տաղիս միտք այսպէս. եթէ յաղագս որոյ մաքրիմք յորջլոցս, զորս կալաք՝ ատանաւր սպանաք, և զորս ոչ կարացաք ըմբռնել՝ ունիմք ի ձորձս մեր։ Եւ ոչ իմացաւ Հոմերոս, թէ որպէս ասացաւ տաղս այս, և փոքր ինչ դադարեալ անդանաւր մահացաւ ի տրտմութենէ անտի։ Այլ և ասեն թէ հրամանատրութիւն եղեալ էր առ Հոմերոս, թէ յորժամ խնդիր ինչ լինիցի առաջի նորա եդեալ, զոր ոչ կարասցէ լուծանել՝ յայնժամ մահասցի։

ԼԴ.

լդ. **Յաղագս Արիստոտելի և Եւրիպոսի**։ Արիստոտելէս իմաստասէր էր, աշակերտ լեալ Պղատոնի. թէպէտ և մանաւանդ յաղագս բնաբանական մասինն իմաստութեանն յոլովացեալ՝ փութացաւ զամենեցուն, որ յետ երկնայնոցն մարմինք՝ զպատճառս նոցա ասել և զբնութիւն. իբր՝ զերկրի, զծովու, զաւդոյ, զեթերին, զկենդանեաց, զտնկոց, զշարժմանց և զորոտմանց և պարզաբար զամենեցուն զայդպիսեաց։ Յետ քննելոյն զամենեցունց զբնութիւնս կամեցաւ և զԵւրիպոսի բնութիւնն բնաբանել, և ոչ կարացեալ հասանել՝ ընկեց զինքն յայն տեղի ծովուն, բարբառելով այսպէս. «Քանզի Արիստոտելէս զԵւրիպոս ոչ ըմբռնեաց՝ ըմբռնեալ լիցի Արիստոտելէս առ յԵւրիպոսէ»։ Եւ մեռաւ Արիստոտելէս այսպէս։

24—1) B. ափշութի ընձացեալ. 1) A. լուս. «հիացումն». B. ափշութի. 1) B. հոգով. 2) B. ներազգին. 2) A. լուս. «զլեալն». 5) B. լդ. 6) B. արկադացոց. 6) B. որք. 7) B. յինքնեանց. 7) B. ցնոսա. 7) B. արկադիա. 8) B. ձկնխոյզք. 8) A. «արդեւք» ուղղուած և «և»-ի վերևը գրուած է «ա». 9) B. արդեւք. 9) B. որսացեալք. 10) B. այսպիս. 10) B. զոր. 19) B. լե. 20) B. եղեալ. 20) A. պղատոնի. 20) B. բնա բնականական. 21) B. յոլովացեալ իմաստութբ. 21) B զամենիցուն. 22) B. երկնայնոց. 24) B. զամենիցուն. զայդպիսեացդ. 24) B. զամենիցունց. 25) B. բնութին. 25) AB. զևրոպոսի. 25) A. զբնութիւնն. 27) A. զևրոպոս. 28) A. յևրոպոսէ. 28) B. արիստոտէս.

Այլ Եւրիպոս տեղի է ի ծովուն ի մէջ բիովտացւոց կղզոյն և Ատտիկէոյ, որ և եւթնեկի յաւուր դարձեալ լինի, և փոփոխեալ լինի ջուրն, որ ի յայսմ կողմանս ճաղոպրել թուեցեալ (?) և ընկղեալ (?), և դարձեալ բղխեալ և լցեալ, որպէս և էր յառաջնումն. և այս լինի, որպէս ասացի յաւուրն եւթն անգամ։ Այլ մահացան պարտ է ասել հասարակաբար փոխանակ եթէ Հոմերոս և Արիստոտել. քանզի Հոմերոս վասն արկածական խնդրոյն մահացաւ, և Արիստոտելէս վասն Եւրիպեայ։

ԼԵ.

լե. Յաղագս Ջրհորոյն Կղէանթեայ։ Կղէանթէս մի էր ի շնական իմաստասիրացն. սա ի միում ջրհորի հաստատեալ զանձն իւր հանէր ջուր ուղևորացն, և ի նոցանէ հաց առնոյր և ուտէր։ Այլ սքանչացեալ լինի առ յիմաստասիրացն և սա իբր ժուժկալ։

ԼԶ.

լզ. Յաղագս Հերակղիտեայ Թշուառութեանն։ Հերակղիտոս և Դիմոկրատէս ոչ ի միում ժամանակի լեալք, այլ բնաբանականք գոլով՝ նմանապէս զաշխարհիս զայսորիկ զհետևմունս խաղ առնէին, մին ծիծաղելով, և միւսն լալով. զի Դիմոկրատէս ստէպ զիրողութեամբք սորա ծիծաղեալ և Հերակղիտոս լացեալ։ Այլ էր Դիմոկրեւտոս աբդերացի և Հերակղիտոս եփեսացի։

ԼԷ.

լէ. Յաղագս յատակացն և անյատակացն։ Եւ են սոքա զանազանք ի միմեանց. իսկ անյատակացն է այսպէս. Պերինթոս իջեալ ի դժոխս, զի յափշտակեսցէ զՊերսեփոնէ զդուստրն Պղուտոնի, և կապեալ եղև առ վէմս ոմանս։ Արդ իջեալ Հերակղէս, զի առցէ զՊերինթոս զնա առ ինքն ձգեաց. այլ յատակք նորա առ քարինսն մնացին, և կոչեցաւ Պերինթոս անյատակ։

---

1) B. Այլ և. 1) AB. եւրոպոս. 1) B. բւովտանացոց. 3) A. յայսմ ի կողմանս. 3) B. ճողոպրեալ թռուցեալ և ընկլեալ. 4) B. բխեալ. 4) B. (և էր)չէք. 7) A. եւրիպեա. B. եւրոպիեայ. 9) B. լզ. 9) A. կղեանթեա. 10) A. լուս. «սա ի ջրհորի միում կացեալ». 10) B. հանել. 12) B. լինի սա (առ). 12) B. (և սա) իբրև զժուժկալ. 14) B. լէ. 14) A. հերակղիտեա. 14) B. հերակլիտեա թշուառութե. 14) B. Հերակլիտոս և դիմոկրատէս. 15) B. լիեալք. 17) B. միւս. 17) B դիմոկրատէս. 17) B. զիրողութեամբ. 17) B. ծիծաղէր. 18) B. հերակլիտոս. 18 – 19) B. հիպոկրատոս. B. հերակլիտոս. 21) B. լը. 22) A. անեայտակացն. B. անյատակացն. 23) B. զդուստր. 23) A. պղատոնի. A. լուս. «պղուտ» = պղուտոնի. 24) B. հերակլէս.

Digitized by Google

Իսկ յաղագս սեւայատակացն է այսպէս. երկուք ումանք եղբարք ընդ ամենայն երկիր ցուցանելով ապիրատութիւնս անուանէին Կեկրոպեանք, ի զկծեցուցանելոյ գործոցն ընկալեալք զմականունութիւնն: Եւ մին ի սոցանէ անուանէր Պասաղոս և միւսն Աղկեմոն որպէս ասէ Եսիովդոս յիշատակագիր: Այլ զսոսա մայրն իւրեանց, որ անուանէր Մեմնոնիս տեսանելով բազում չարիս գործեալ՝ ասէր եթէ դեռ ոչ էք հանդիպեալ սեւայատակին: Եւ երբեմն Հերակղեայ ընդ ծառով ննջելով և նորուն զինուցն ղտնկոյն կախելով՝ խորհեցան նոքա ի զէնսն ձեռն արկանել. և վաղվաղակի իմացեալ Հերակղեայ ըմբռնեաց զնոսա և գլխիվայր կապեալ ի փայտի բառնայր: Եւ յայնժամ նոքա զպատուիրան մաւրն իւրեանց յիշէին. քանզի տեսանէին ի կախ գոլով զյատակսն Հերակղեայ սեւացեալ ի թաւութենէ մազիցն և առ միմեանս զնոյնս տրամաբանելով՝ առնէին յոյժ ծիծաղել Հերակղեայ, և վաղվաղակի ի կապանացն եղոյծ զնոսա:

ԼԸ.

լը. Յաղագս պարկեշտին Պանայ: Պենեղոպէ կին էր Ոդիւսեայ. սորա յածելով ի մոլութեանն ուր յածեալն եղև՝ բազումք ումանք եկին կին խաւսել զՊենեղոպէ: Եւ նա ուր յաւրէ պղերգացեալ լինէր, ոչ և միում ումեք կամեցեալ ամուսնանալ, վասն զի Ոդիւսեայ սպասէր: Արդ ամենեքին պաշարելով զնա՝ շաղաշարեցան ընդ նմա, և յղացեալ՝ ծնաւ զՊան. վասն որոյ և Պան կոչեցաւ լինի, քանզի ի բազմաց եղև սերմանեալ: Զսա արդ աստուած անուանեցին, կոչելով նոխազոտն Պան:

ԼԹ.

լթ. Յաղագս Բիւթենեայ և Հերակղեայ, որ կոչեցաւ այսպէս Բիւթենիա:

---

2) B. ապիրատութի. 3) B. (ի)չիք. 3) A. ընկալեալ. 3) B. զմականութին. 4) B. պաստողոս. 5) B. եսւովդէս յիշատագիր. 5) B. մեմնոնիս. 6) A. գործել. 6) B. (եթէ)չիք. 7) B. «սեւայատակին» բառից յետոյ մի նոր գրիչ աւելացրել է «և թաւայատակին». 7) A. Հերակղեա. B. Հերակլէս. 7) B. նորին. 8) B. ձեռնարկել. 9) A. Հերակղեա. B. Հերակլեա. 10) A. լուս. «կրէր». B. մի նոր գրիչ. «երկրէր» (?) 11) B. յիշեցին. 11) B. զատակսն. 11) A. Հերակղեա. B. Հերակլեայ. 13) A. Հերակղեա. B. Հերակլեայ. 15) B. լթ. 15) B. մի նոր գրիչ «պարկեշտին» ուղղել է «անպարկեշտին». 15) AB. պանա. 15) B. Պենեղլոպէ. 15) A. է. 15) A. ոդիւսեա. B. ուդիւսեա. 16) B. և բազումք. 18) A. ոդիւսեա. B. ովդիւսեա. 19) B. ամենիքեն. 19) B. յղացաւ և. 20) B. (ի)չիք. 20) B. եղեալ. 21) B. (զսա)չիք. 21) «արդ»-ից յետոյ մի նոր գրիչ աւելացրել է «զսայ». 23) B. խ. 23) A. բիւթեննեա և Հերակղեա. B. բիւթինեայ և Հերակլեայ. 23) A. բիւթինա. B. «այս բիւթինա». մի նոր գրիչ աւելացրել է. «որ թարգմանի եղնաճաշակ».

Digitized by Google

Եւ կոչեցաւ այսպէս պատճառաւ այսպիսեաւ. անցանէր ընդ երկիրն Դրովպիդեան Հերակղէս, բերէր և զորդի իւր Հիղղոս։ Ապա քաղցեալ Հիղղոսի և կերակուր խնդրելով յարտավարէ ումեմնէ, որ Թէովդամաս անուանէր, Հայցեաց Հերակղէս Հաց. և իբրև ոչ ետ, այլ և անարգեաց զնա, առեալ Հերակղեայ զմի յամոլոց եզանցն եզեն և ճաշակեաց և ինքն և որդին իւր, և կոչեցաւ վասն այսր պատճառի — Բուփթենաս, որ թարգմանի եզնաճաշակ. քանզի բոլոր եզամբն ճաշեաց։ Աստուստ եղև Հերակղի մարտն ընդ Դրիովպացիսն, զի Թէովդամանտոսի ելանելով ի քաղաքն և ասելով, իբր թէ թշնամի եկն ի գաւառն՝ ելին ի վերայ նորա. և նա յաղթեաց ամենեցունց։

Խ.

խ. Յաղագս Եռերեկէին։ Ասի Հերակղէս յերիս երեկունս յղացեալ լինել և ծնեալ. և այսպիսի իրս առասպելաբանեն յաղագս նորա։ Նմանապէս ասի, թէ դոյն ինքն Հերակղէս ընդ ամենայն դստերսն Թեստիոսի խառնակեցաւ, և յամենեցունց մանկունս ծնեալ իբր թէ վասն այսորիկ աստուածարեցին զնա, և զայս երեքտասաներորդ նաՀատակութիւն նմա անուանեցին։

ԽԱ.

խա. Յաղագս Իդովղիանոս և Կովփիտաւրոս կոչելոյն զՅուղիանոս։ Քանզի Յուղիանոս զանուն քրիստոնէից ի գալիլէացիս փոխադրեաց, արդ կամեցեալ աստուածայինն Գրիգորիոս խաղ առնել և ասել, թէ պարտ է և մեզ զՅուղիանոս կոչել յանուանցն, որ ըստ նմայն և ասէ թէ կոչեսցուք զնա Իդովղիանոս, իբր թէ կռապարիշտ, և Պիսէոս, իբր թէ պատուող այնմ, որ ի Պիսիա պատուէր։ Եւ պատուեալ լինէր ի Պիսա Զևս. այլ Պիսա քաղաք էր յԵղղադա. և ասէ պարտ է կոչել զՅուղիանոս — Պիսէոս,

folgend, mit Gouschtasfi (s. Belādh. 202, Anm. c.). Diese Annahme ist schon deshalb unwahrscheinlich, weil letzteres eine Ortschaft in Muġan war (Brosset, Hist. I, 512), während Habībs Eroberungen über die Grenzen Georgiens nicht weit hinaus gingen, und die Ortschaft in der Reihe der georgischen Gegenden erwähnt wird (كُشْتَسْفي, جردمان). In der Geographie von Mos. v. Khor. (bei St.-Mart. Mem. II, 359) wird neben Gardman noch Khusti als ein Distrikt Albaniens erwähnt. Nach Barchudarian wurde mit diesem Namen ein Distrikt der Provinz Arzakh in Nordarmenien benannt; derselbe umfasst heutzutage den östlichen Teil des Distriktes Kazach und den westlichen Teil von Šamšadil, im Gouvernement Elisavetpol, und liegt zwischen den Nebenflüssen des Kur, Aghstev und Tavusch (Barchud. Arzach, 327). In der That lag dieser Distrikt im Eroberungsgebiete von Habīb, obgleich die Namen sich nicht völlig identifizieren lassen.

---

30. شَوْشيت (Belādh. 202, Ibn Faqīh, 292), arm. Šavšet (Mos. Khor. Geogr. 28) ein Distrikt der Provinz Taiq, im Tjorochthale. Vgl. Wakh-Brosset, Descr. géogr. 75, 115, 119 und Karte Nr. 1.

---

31. بازليت, ein Nachbardistrikt von Kakhet, östlich vom Flusse Aragwi und nördlich vom Kur, im östlichen Georgien. Brosset, Hist. I, 45.

---

32. قَلَرْجيت. — Belādh. 203; Ibn Faqīh, 292; georgisch Clardjeth (Brosset, Descr. géogr. 109), ein Distrikt im Tjorochthale, südwestlich von Šavšet, mit dem Zentralort Ardanutsch. Südwestlich von letzterem liegt ein Dorf mit dem Namen Klardjeti (s. Karte: Provinces asiat. de l'empire ottom. v. Kiepert); armen. Kłardjq (Mos. Khor. 28).

---

33. ترياليت. — Belādh. 203; georgisch Thrialeti, Wakh-Bros. Des. géogr. 157 ff.; ein Distrikt in Georgien, nordöstlich von Djavakheti, im Oberthale des Flusses Ktzia oder Khrami. Der armenische Name des Distriktes ist Thręłq (Mos. Khor. Geogr. 28, Alischan, Topogr. 62).

Digitized by Google

34. خاخيط, Belādh. 203; georgisch Cakheth, (Bros. Descr. géogr. 283ff.) Provinz in Ostgeorgien, das Thal des Flusses Alazan (Bros. Hist. I, 41).

---

35. خوخيط, Belādh. 203; georg. Coukheth, eine Nachbarprovinz von Cakheth, zwischen Kur und dessen Nebenfluss Jor (Bros Des. géogr. 283 und Karte Nr. 6).

---

36. أُرْطَهَال. -- Belādh. 203, Cod. B. أُرتهان; letztere Form entspricht dem armenischen Artahan (Mos. Khor. Geogr. 34). Aller Wahrscheinlichkeit nach hat Belādhorī ursprünglich ارطهان gehabt; über ähnliche Verwechselung s. oben, Anm. 6. Artahan war ein Distrikt der Provinz Gugarq in Nordarmenien (Alischan, Topogr. 39).

---

37. الصَّنارِيَّة. — Nach Belādhorī (210), Ja'qūbī (II, 598), Mas'ūdī (I, 99) war es ein Gebiet im Kaukasus, nicht weit von Tiflis und Bāb al-Lān. Nach Mas'ūdī's Berichten war die Bevölkerung dieses Landes christlicher Konfession und hatte unabhängige Fürsten, welche كرسكس (fr. übers. Koriskos, St.-Mart. Mém. I, 234 Khoropisgobos = chorévêqe) hiessen. Zur Zeit von Ibn Hauqal war der Fürst des Landes سنحاريب (bei St-Martin, I, 234, Sendjarib) ein Christ. Armenisch heisst das Land Tsanarq. Ptolom. 5. 8, 13: *ὑπερ δὲ τὴν Ἀλβανίαν Σαναραῖοι.* Über die geographische Lage und die Abstammung der Bevölkerung s. St.-Martin, Mém. I, 233—35.

---

38. أُون. — Nach Belādh. (203) und Ibn Faqīh (293) eine Gegend im Lande Arrān. Arm. Uti, Provinz Grossarmeniens zwischen Arzakh und dem Flusse Kur, den Aghwanen unterworfen (Mos. Khor. 33). Ein Distrikt der genannten Provinz mit der Hauptstadt Partav wurde Uti Aṛandsnak genannt (ebenda). Bei Mos. Khor. (Geogr. bei St.-Mart. 359) kommt auch ein Distrikt mit dem Namen Utṛustak vor, welcher wahrscheinlich mit Uti Aṛandsnak zu identifizieren ist. Es ist besonders zu beachten das (arabisch)-persische Wort رُستاق im Namen Utṛustak. Ob es sich bei den erwähnten arabischen Historikern um die Provinz, oder den Distrikt Uti handelt, lässt sich nicht entscheiden.

Digitized by Google

39. مَسْقَوان. — Ein Distrikt in Arrān; bei Belādhorī, 203, مسفوان; Ibn Faqīh, 293, hat d. richtigere Variante مَسْقَوان, welche dem armenischen Metskuanq (Mos. Khor. 33, fr. Übers. p. 44, Mez-gouanq) entspricht. Letzterer war ein Distrikt der Provinz Arzakh, den Aghwanen unterworfen. Die Lage wird von Barchudarian, Arz. 24, zwischen den Nebenflüssen von Kur, Tartar und Kürak-tschai angezeigt.

---

40. مصريان. — Belādh. 203, مصربان, ohne Punktation; Ibn Faqīh, 293, مصريان, ein Distrikt in Arrān, entspricht dem armenischen Namen Metsiranq (Mos. Chor. 33. fr. Übers. 44 Mezirank.), welcher ein den Aghwanen unterworfener armenischer Distrikt in der Provinz Arzakh war.

---

41. هَرجليان. — Bel. 203. Ibn Faqīh, 293, hat مهرجليان. Die Variante bei Belādhorī ist richtiger und entspricht dem armenischen Hartjlanq (Mos. Chor. bei St.-Mart. II, 364), einem Distrikt der Provinz Arzakh, den Aghwanen unterworfen, südlich von Metsiranq. Nach den arab. Angaben eine Gegend im Lande Arrān.

---

42. شَمْكُور. — War eine alte Stadt in Arrān; unter der muslimischen Herrschaft war die Stadt bewohnt, bis die Savardier (السَاوَرْدِيّة, s. unten [1]), nachdem Jezīd Ibn Usaid Armenien verlassen hatte, dieselbe überfielen und in Trümmer legten. Unter Mutawakkil erneuerte Bughā die Stadt und nannte sie المُتَوَكِّلِيّة (Belādh. 203. Ibn Faqīh, 293. Jāqūt, III, 322). Über die Lage s. Jāqūt: شَمْكُور قلعة بنواحي أرّان بينها وبين كَنْجَة يوم واحد عشر فرسخا. Die Ruinen der Stadt liegen am Nebenflusse des Kur, Šamkor-tschai, nordwestlich von Elisavetpol (Barchudar. Arzakh. 55. 56.)

---

[1]) السَاوَرْدِيّة. — Belādh. 203, Ibn Faqīh 293, Jāqūt hat (III, 322) السَناوردية, Mas'ūdī, ed. Barb. de Megn. II, 75, السياوردية, Bul. Ausg. بلاد السلاوردية. Klaproth hat nach einer Anmerkung bei Barb. de Megn. II, 444, Solaverdiah gelesen und mit dem Namen Schoulaverdi (?) in Georgien identifiziert. Abgesehen davon, dass die südwestlich von Tiflis liegende Ortschaft nicht Schoulaverdi, sondern Schulaver

Digitized by Google

43. قَبَلة. — Die erste Stadt, welche Salmān Ibn Rabī'a, den Kur am Zusammenflusse mit dem Araxes überschreitend, einnahm (Belādh. 203. Ibn al-Athīr, III, 66). Ibn Faqīh erwähnt Qabala neben Bailaḳān und Širwān (287). — Sonach ist diese Stadt nördlich vom Kur, in oder in der Nähe von Širwān zu suchen. Moses Kałankatwazi, Mosk. 244, Կապաղակ (Kapałak). Mos. Chor. Geogr. ed. Soukry, 29, Քաւաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կովկաս; ist dieses K'awałak bei Mos. Chor. mit Kabałak zu identifizieren? Plinius 6, 10. 11, Cabalaca; gr. *Χαβάλα* in Albanien; Ptolem. Geogr. 5, 11, 5 (ed. C. Müller p. 930). Ob ܩܒܠܐ bei Barhebr. Chr. eccl. I, 125, mit diesem zu identifizieren ist (Ritter, Erdkunde, West-Asien, VII, th. X, 1084), bezweifle ich, da die Lage nicht entspricht.

---

44. شَكّى. — Nach der Eroberung von قبلة unterwarf sich dem Salmān صاحب شَكّن (Belādhorī, 203); dieselbe Lesart des Namens hat Ibn Faqīh (293); Ibn al-Athīr (III, 66) hat صاحب سكر. Die Stadt ist, dem Zusammenhange nach, in der Nähe von Širwān und Qabala zu suchen. In dieser Gegend ist aber irgend eine Ortschaft mit dem genannten Namen nicht bekannt. Jāqūt kennt شَكّى على نهر الكُرّ قرب تفليس. Dieselbe Form شَكّى haben Ibn Chordādbeh (123) und Istakhrī (187). Nach Belādhorī selbst (206) heisst die erste Stadt, wo Djarrāh Ibn Abdullah bei seiner Rückkehr von Ghūmīk im Kaukasus eintraf, شَكّى. Sonach ist die letztere Lesart zweifellos die richtigere und entspricht dem armenischen Šak'e (Շաքէ, Mos. Chor. Geogr. 29) Distrikt in Albanien. Mas'ūdī, Bul. Ausg. 99, سكين, fr. Ausg. شكين, grenzend dem Tsanarenlande. Vgl Alischan, Topogr. Gr. Arm. 91.

---

45. التَّمِيبَران, zu korrigieren: القميبران; eine Ortschaft, welche mit

heisst, geben die angeführten Varianten keine Berechtigung, Schulaverdi zu lesen. Es ist die bei Mas'ūdī erhaltene Lesart السياوردية für richtig zu halten und der Name mit dem armenischen Սևորդիք (Asołik 107; auch Սեաւ որդիք. 181) zu identifizieren. Nach Mas'ūdī fliesst der Fluss Kur, von Tiflis ausgehend, durch das Land السياوردية und die Bevölkerung des Landes war من نوع مر الأمن. Geogr. von Vardan bei St.-Mart. Սաւորդաց ձոր; vgl. St.-Mart. 464. Anm. 73.

Digitized by Google

Šak'ē zusammen unter einem Fürsten stand (Belādh. 203) und in der Nähe vom ersteren lag (Ibn Faqīh, 293). Arm. K'ambečan, Gau von Albanien, am Flusse *Καμβύσης*, d. i. dem Kl. Alazani od. Jori, zw. Kur und Alazan; Strabo, 11, 14, 4, p. 528 (ed. Mül. et Dübn. 452) *Καμβυσηνή*; auch 11, 4, 1 (ed. Mül. u. Dübn. p. 430). S. Marq. Ērānšahr, 116, 118.

---

46. خَيْزان. — Wird neben den obengenannten Gegenden und Širwān erwähnt (Belādh. 204, Ibn Faqīh, 293). De Goeje will (bei Bel. 204, Anm. a.), auf St.-Martins Angabe (Mém. I, 175) verweisend, diese Ortschaft mit Ḫizan in Südarmenien, am östlichen Tigris indentifizieren. Dass es sich aber um eine Nachbargegend von Širwān, an den Kaukasusgebirgen, handelt, liegt auf der Hand. Beiläufig bemerkt, St.-Martin (I, 175) verwechselt Hᵉzu mit Ḫizan; letzteres ist ein Distrikt östlich von Bitlis-tschai, während ersteres eine kleine Stadt östlich von Majāfāriqīn und südlich von Sassun ist.

---

47. مَسْقَط. — Nachbargebiet von Ḫaizān und Širwān [1]) (Bel. 204). Nach Jāqūt (IV, 527) war Masḳaṭ رستاق بساحل بحر الخزر دون باب الابواب.

---

48. شابران. — Gegend in den Kaukasusgebirgen, nicht weit von Derbend (Belādh. 204, Ibn al-Athīr, III, 66, Ibn Faqīh, 293). Bei Jāqūt ist شَابَران vokalisiert. Brosset, Hist. de la Géorgie I, 368, Anm. 3. Chabouran oder Chabran, eine Stadt in Daghestan, in der Nähe von Derbend.

---

49. Wardanakert und ورثان. — Die Stadt Wardanakert, wo eine blutige Schlacht zwischen den aufständischen armenischen Fürsten und den Arabern geliefert wurde, lag am Araxes, nicht weit von Akoṛi, in der Nähe des Masis (Ghevond 24, Alischan, Airarat 486). Nach Sebeos (94) überschritt Heraklius, vom Norden nach dem Süden marschierend, den Fluss Araxes bei der Stadt Wardanakert und zog in den Distrikt Kogovit (heutzutage Baiazid und ein Teil von Maku). Nach diesen Angaben steht es ganz fest, dass die in Betracht kommende Stadt nördlich von Kogovit, am Araxes, östlich vom Berge Masis zu suchen ist. Die von den arabischen Geographen erwähnte Stadt وَرْثان lag ebenso am Araxes, aber weit entfernt vom Masis, in Arrān, in der Nähe

[1]) Bei den arabischen Schriftstellern شَرْوان punktiert. — S. Belādh. 210, 212, Ibn Chord. 122, Istakhrī 192, Ja'qūbī, I, 381, Ibn Faq., 287, Jāqūt, III, 282.

Digitized by Google

von Bailakān und dem Zusammenflusse des Araxes und des Kur (Ibn Chord. 174, Qodāma, 287, Ibn Hauqal, 251, Jāqût, IV, 919). Letztere Stadt wird in der armenischen Literatur gleichfalls Wardanakert genannt, hat aber mit der gleichnamigen Stadt am Masis nichts zu thun; sie war eine Stadt im Distrikte Wardanakert, in der Provinz P'aitakaran (Mos. Chor. Geogr. 33. fr. Übers 44; Alischan. Topogr. 24) St.-Martin (I, 155) verwechselt Wardanakert in Zentralarmenien mit ورثان, indem er meint, die Schlacht zwischen den Armeniern und den Arabern hätte bei der letzteren Stadt in P'aitakaran stattgefunden Die deutlichen Angaben bei den armenischen Schriftstellern sind dem französischen Armenisten entgangen.

---

50. الخويثية. — So werden bei Belādhorī (211) die Einwohner der Gebirge bezeichnet, welche den Statthalter Jūsuf in Taron angriffen; die Gebirge werden جبل الخويثية genannt (Tabarī III, 1409). Nach Belādhorī sind die Khuithie علوج يعرفون بالأرطان. De Goeje hat (Belādh. 211. Anm. c) das Wort أرطان, auf Brosset verweisend, als Ortsnamen aufgefasst; bei Brosset (Hist. I, 39) handelt es sich um die Gegend Artan oder Artaban in Nordarmenien, während bei Belādhorī von einem Stamm, der die Taurusgebirge, südlich von Taron, bewohnte, die Rede ist. Vgl. Nöldeke's Artikel über die Ortäer (syr. ܐܘܪܛܝܐ) in ZDMG. 33, p. 163ff. Nach Jāqūt (II, 501) ist خويث eine Gegend in Diarbekr. Thoma Artsr. (119) Խոյթ լեառն zwischen Taron und Aghdsniq. Nach Moses Chor. Geogr. 31. ein Distrikt der Provinz Turuberan.

---

51. سغدبيل (صغدبيل). Nach Belādhorī (195) eine von Chosrow Anūšarwān gegründete Militärstation (مسلحة) in Georgien; lag am linken Ufer des Kur, östlich von Tiflis (Tabarī, III, 1416, Jāqūt III, 296.) Belādh. hat سغدبيل, während Ibn Chord. (122), Ibn Faqīh (288) und Jāqūt صغدبيل haben. Ist der Name mit Tsurtav (Brosset. Hist. I, I, 109) zu identifizieren? Letztere Stadt, später Gadchenk' genannt, lag ebenfalls in der Nähe von Tiflis, nicht aber am Kur, sondern an einem anderen Flusse, der Gadchinaget genannt wurde; dies macht die Identifizierung mit Sughdabil unwahrscheinlich.

Digitized by Google

52. كثيش. Nach Tabarī (III, 1416) ein Berg in Arrān, zehn Pharsang entfernt von Bailaḳān und fünfzehn phrs. von Barda'a. (Ibn al-Athīr hat كبيش, Ibn Chaldūn (III, 276) قلعة كيش, Ibn Maskoweih (Frgm. 548) كبيش), Thoma Artsr. (177) Կթիշ (K'thiš), der Berg, wo der Fürst von Albanien gegen Bughā feste Stellung eingenommen hatte. Die Lesart bei Tabarī entspricht der armenischen Form bei Thoma Artsruni und ist vorzuziehen. Vgl. Alischan, Topogr. 90.

---

53. خاشن (خاجين). — Ein Distrikt der Provinz Arzakh, im Thale des gleichnamigen Flusses. Armenisch Chatschen; s. Vardan, Hist. Arm. Ven. p. 81. Barchudar. Arzakh, 151. Tabarī hat خاشن (III, 1416), Ibn Hauqal die dem armenischen besser entsprechende Lesart خاجين (255).

Digitized by Google

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ղ. Փարպեցու Պատմութեան և Թղթի.

Ստ. Մալխասեանց.

Ղ. Փարպեցու Պատմութիւնը և Թուղթը տպագրուած են միայն մի, այն էլ նոր ժամանակի սխալաշատ օրինակից[1]), առանց բաղդատելու հնագոյն օրինակի հետ։ Այս պատճառով նրանք պարունակում են բազմաթիւ աղաւաղութիւններ։ Տպագրողները, Վենետկի Մխիթարեանները, մասամբ իրանց աշխատանքով, մասամբ էլ օգտուելով ուրիշ բանասէրների, յատկապէս Նորայր Բիւզանդացու ցուցմունքներից, ուղղել են արդէն բաւական թւով աղաւաղութիւններ. բայց կասկածելի ընթերցուածներ և յայտնի աղաւաղութիւններ դեռ շատ կան Պատմութեան և Թղթի մէջ։ — Ներկայ յօդուածով մենք առաջարկում ենք մի շարք ուղղագրութիւններ Պատմութեան և Թղթի այն հատուածներին, որոնք մեզ աղաւաղուած են թւացել։

Այս ուղղագրութիւնների մէջ չեն մտել այնպիսինները, որոնք վերաբերում են քերականական ձևերի կանոնաւորութեան, կամ առաջ են եկել պատուագրութեան աւել—պակաս գործածելուց։ Այստեղ զետեղուած են միայն այն ուղղագրութիւնները, որոնք ազդում են իմաստի վրայ— ուղղում կամ պարզ, հասկանալի են դարձնում բնագիրը։ Սրանց մէջ չեն մտել և այն ուղղագրութիւնները, որոնք արդէն առաջարկուած են եղել ուրիշ բանասէրներից, բայց չեն մտցրուել տպագրութիւնների մէջ։

Աւելորդ է ասել, որ արդէն եղած և ներկայ ուղղագրութիւններով դեռ չեն սպառւում աղաւաղութիւնները Ղ. Փարպեցու գործերի մէջ. դեռ շատ աշխատանք և հետամտութիւն է հարկաւոր բոլոր նկատուած աղաւաղութիւններն ուղղելու համար։

Մեր գործածած բնագիրն է Փարպեցու երրորդ տպագրութիւնը (Վենետիկ, 1891). նրանով էլ նշանակում ենք երեսները։ Համեմատութեան հեշտութեան համար փակագծերի մէջ դնում ենք Բ. և Ա. տպագրութիւնների (1873 և 1753) համապատասխան երեսները։

---

[1]) Տես Գ. Տէր-Մկրտչեանի «Ղ. Փարպեցու ձեռագիրը», «Արարատ» 1901, Նոյեմբեր-Դեկտեմբեր, եր. 542—549.

Digitized by Google

Տպուած է .	Ուղղելու է .
Եր . 7 (6, 10). Ցուցումն դալարութեան գօսացելոց տեղւոյ մարդկան.	Ցուցումն դալարութեան գօսացելոց ոտեւոյ մարդկան .
Եր . 40 (36, 26). Արով հնար է ինքեան՝ ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով՝ շահել զոգիս ։ (Ա. տպ.՝ «հնար է ինքեան ձայնիւ, և ոչ....» Բ. տպ. «հնար է ինքեան ձայնիւ և ոչ....»)	Արով հնար է՝ ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս ։ (‹ինքեան ձայնիւ› = իւր սեփական լեզուով)։
Եր . 65 (58, 38). Իսկ դուք աշակերտեալք Նորին Հոգևոր վարդապետին ։	Իսկ դուք աշակերտեալք Նորին Հոգևոր վարդապետութեան ։
Եր . 94 (85, 54). Իսկ ահա յանկարծակի կերպարան մարդոյ երևէր ինձ յերկնից այր լուսեղէն ։	Իսկ ահա յանկարծակի ի կերպարան մարդոյ երևէր ինձ յերկնից այր լուսեղէն ։
Եր . 120 (108, 65). Խնարէր սպանմամբ խնդրել զվրէժս ի Նիկոմիդեայ դստերն իւրոյ ։	Խնարէր սպանմամբ խնդրել զվրէժս Նիկոմիդեաց դստերն իւրոյ ։
Եր . 120 (108, 65). Գիտացեալ զանհնարին ուրախութեանն Աստակայ ։	Գիտացեալ զանհնարին ուխութեանն Աստակայ ։
Եր . 130 (117, 70). Նոյնպէս և աստուածք .... ջերմագոյն ևս գրքէն և կամին տեսանել, և աստուածոցն արժանի առնել. չկարէ ոք ասել զպարգևս և զպատիւս, որ ...	Նոյնպէս և աստուածք . . . ջերմագոյն ևս խնդրէն և կամին տեսանել ։ Իսկ աստուածոցն արժանի առնել՝ չկարէ ոք ասել զպարգևս և զպատիւս որ . . .

Իմաստն է — Իսկ ոչ ոք չէ կարող ասել, թէ աստուածներին արժանաւոր չափով է մատուցանում այն պարգևներն ու պատիւները ։

Տպուած է .	Ուղղելու է .
Եր . 131 (118, 71). Իսկ զոր սպանանել կամիք ջնջել ։	Իսկ զոր սպանանել կամիք իշխել ։

«Իշխել» փարպեցու սիրած և յաճախ գործածած բառն է ։ Համեմատել և եր . 606.

Տպուած է .	Ուղղելու է .
Եր . 145 (131, 78). Զեզ զիա՞րդ թուի ի ծառայից այդպիսի աներկիւղ համարձակութեամբ գրել առ իւրեանց տէրն ։	Զեզ զիա՞րդ թուի՝ ծառայից այդպիսի աներկիւղ համարձակութեամբ գրել առ իւրեանց տէրն ։

Digitized by Google

Եր. 145 (131, 78). Զնոցա կորուստն անձանց իւրեանց և աշխարհի գրեալ է առ ձեզ։

Նոցա զկորուստն անձանց իւրեանց և (զ)աշխարհի գրեալ է առ ձեզ։

Եր. 179 (161, 95). Զորոց քաղցր և ախորժակ բարբառ փրկչին Քրիստոսի, որ ասէր . . . և կատարէր զասացեալսն. յանկարծակի ոտցոփեալ թշնամւոյն . . .

Զորոց քաղցր և ախորժակ բարբառ փրկչին Քրիստոսի ասէր . . . և կատարէր զասացեալսն՝ յանկարծակի աւցտեալ թշնամւոյն . . .

Եր. 192 (171, 101). Հոգւոյ և եթ հոգալ զնորին փրկութեան։

Հոգւոյ և եթ հոգալ զնորին փրկութեան։

Եր. 225 (202, 118). Հասանել է միջոյ կողման աշխարհիս։

Հասանել է միջոց կողմ(ա)ն աշխարհիս։

Եր. 225 (202, 118). Եւ ոչ ոք լինէր արգել զօրսն պարսից։

Եւ ոչոք լինէր արգել զօրուն պարսից։

Եր. 266 (202, 138). Եւ դարձեալ յորմէ ծնանին զնոյն ոտքէն և անխնայ։

Եւ դարձեալ յորմէ ծնանին՝ զնոյն ոտքէ նա անխնայ։

Եր. 309 (276, 159). Բայց էբրև այլոց կայ։

Բայց իբր(և) Ն՛ այլոց (կամ՝ այլոյ) կայ։

Եր. 396 (350, 200). Զէ հնար եթէ ոչ կատարին կամք խնդրոյ նորա։

Զէ հնար. եթէ ոչ կատարին կամք խնդրոյ նորա։

Իմաստն է — Զէ կարելի (խիստ հրաման, մահուան պատիժ տալ). ապա թէ ոչ կկատարուի նրա ցանկութիւնը, (որ էր՝ նահատակուել)։

Եր. 396 (350, 200). Բայց տոտց նա, թէ այդմ պատուոյ չտամ քեզ պատահել։

Բայց տու՛ ցնա, թէ այդմ պատուոյ չտամ քեզ պատահել։

Եր. 443 (391, 223). Գումարեալ զզօրսն Հայոց ճեպէր հարկանել է դէմ. և անդէն զայն փեղջօտ Ներբեա ոչ, ասէր, լիցի անցանել բազմութեանն պարսից ի միջոց կողմն աշխարհիս Հայոց։

Գումարեալ զզօրսն Հայոց՝ ճեպէր հարկանել է դէմ անդէն զայն փեղջօտ. Ներբեա ոչ, ասէր, լիցի անցանել բազմութեանն պարսից ի միջոց կողմն աշխարհիս Հայոց։

Եր. 448 (396, 226). Եւ ոչինչ բնաւ փոխեալ կալ առաջի։

Եւ ոչինչ բնաւ փոխեալ կալ առաջի։

Եր. 464 (409, 234). Հայիլ յերեան փայլակնացայտ . . . ոչ հանդարտեցն։

Հայիլ յերեան փայլակնացայտ . . . ոչ հանդարտեցն։

Digitized by Google

Էջ. 475 (419, 239). Բայց եթէ լաւագոյնք ես և քաջք ընտրեքին. այլ ի խոնարհ . . .	Բայց եթէ լաւագոյնք ես և քաջք չընտրեքին՝ այլ ի խոնարհ . . .
Էջ. 482 (425, 242). Ի սուրբ տեղի տան Նահատակին Գրիգորի:	Ի սուրբ տեղի մատրան Նահատակին Գրիգորի: (Համեմատել էր. 487, 488 — «ի սուրբ տեղի մատրանն»):
Էջ. 520 (458, 262). Եւ հաւանեցուցեալ զարսն ի փեղձ Երիզայ:	Եւ հաւանեցուցեալ զարսն ի փեղձէ Երիզայ:
Էջ. 525 (462, 264). Բազում հարիւր առաւել թէ և յոլովք և կամ նուազք. և եթէ խռովմանս . . .	Երեք հարիւր առաւել. թէև յոլովք և կամ նուազք. և եթէ չխռովմանս . . .

Թէ ինչպէս «երեք»-ը դարձել է «բազում»՝ դժուար է բացատրել: Գուցէ ԲԳՃ՛ (երկու — երեք հարիւր) աղաւաղուելով դարձել է բզմ: — Իմաստն է. — Մենք թուով առ առաւելն 300 մարդ ենք, գուցէ քիչ աւելի կամ պակաս. և եթէ Աստուած իւր խոստումը կատարէ՝ ապա նոցա շատ մարդ է պակասում՝ 300,000 լինելուց, (մեզանից մէկը նրանց հազարին կոտորելու համար):

Էջ. 537 (473, 270). Օ՛ր անցին ընդ տէրն Երեւաց:	Օ՛ր անցանէին ընդ տէրն Երեւաց:
Էջ. 548 (483, 276). Որպէս կարաց այսքան ամս զդէմ ունել Երեւացս Աստուծոյ զօրութեամբն: (Բ. և Գ. տպ. ուղղել են «աստուծոյ»):	Որպէս կարաց այսքան ամս զդէմ ունել Երեւացս: («Աստուծոյ զօրութեամբն» ընդմիջարկութիւն է, լուսանցքից մտցրած):
Էջ. 563 (496, 283). Եւ ընդ առաւօտն ժողովեցան . . . և աստուածուրաց մարդիկն որ անդ էին եկեալ, և պատգամաւորքն որ ի Նիխորոյ որ առ Մամիկոնեանն Վահան երթեալ էին:	Եւ ընդ առաւօտն ժողովեցան . . . և աստուածուրաց մարդիկն որ անդ էին. եկեալ և պատգամաւորքն, որ ի Նիխորոյ առ Մամիկոնեանն Վահան երթեալ էին:
Էջ. 566 (499, 284). Եւ տեսեալ զայն աստուածուրաց խաբեբայիցն, որ(ք) ի միաբանութեան պարսկացն էին՝ յաղտամբքացն եկեալ հայք, թէ որպէս ի Նիխորոյ պատուեալք . . .	Եւ տեսեալ զայն աստուածուրաց խաբեբայիցն, որք ի միաբանութեան պարսկացն էին, թէ որպէս յաղտամբքացն եկեալ հայք ի Նիխորոյ պատուեալք . . .

Digitized by Google

Եր. 576 (508, 289). Զամենայն օր խորհէր առնել, և չկարացեալ՝ [illegible] կամէր։	Զամենայն օր խորհէր առնել, և չկարացեալ [illegible] կամէր։

Համեմատել եր. 600, որտեղ նոյն միտքն է յայտնուած։

Եր. 581 (512, 292). Զի ամենայն [illegible] (Ր. և Գ. տպ. «արուեստաւոր ոք») զիւր արուեստն ինքն գիտէ և օգտեալ է յարուեստէն . . .	Զի ամենայն [illegible], որ զիւր արուեստն ինքն գիտէ և օգտեալ է յարուեստէն . . .
Եր. 603 (532, 303). Զոր չունիմք առ արդարս և [illegible] իբրև Աստուած։	Զոր չունիմք առ արդարս և [illegible] իբրև Աստուած։
Եր. 604 (532, 303). Յորժամ ի յետս տանել կամ կորուսանել, և զձեր . . .	Յորժամ ի յետս տանել [illegible](ցէ) կամ կորուսանել, և զձեր . . .
Եր. 622 (549, 312). Արմաւենեաց ծառոցն, [illegible], ասէ, [illegible] և [illegible], [illegible] և [illegible] ի [illegible] [illegible]. որոց թէպէտ և պտղոց . . .	Արմաւենեաց ծառոցն, որոց թէպէտ և պտղոց . . . (Նոտրագրուածը ընդմիջարկութիւն է լուսանցքից)։
Եր. 619ա[1]) (549, 312). Զբազումն [illegible] անդաստանս . . .	Զբազումն [illegible] անդաստանս . . .
Եր. 622ա (552, 314). [illegible], ասէ, և [illegible]. [illegible] և [illegible]։	(Ընդմիջարկութիւն)։
Եր. 623 (552, 314). [illegible], ասէ, [illegible] և [illegible]։	(Ընդմիջարկութիւն)։
Եր. 624 (553, 314). [illegible]։	(Ընդմիջարկութիւն)։
Եր. 624 (554, 315). Զեղջերաց սեղանոյն բուռն հարկանել, որ է [illegible], և [illegible], [illegible]։ Դնել կաթն . . .	Զեղջերաց սեղանոյն բուռն հարկանել. դնել կաթն . . . (Նոտրագրուածը ընդմիջարկութիւն է, բացատրութիւն «եղջիւր» բառին)։

[1]) Գ. տպագրութեան մէջ 622 երեսից յետոյ սխալմամբ գալիս է 619 և այսպէս սխալ շարունակւում։

Digitized by Google

Եր. 627 (556, 316). Եւ բժշկին ամենեքեան բերելով ընդ ինքեան. զխոստովանութիւն և զարտասուս պահանջէ:	Եւ բժշկին ամենեքեան բերելով ընդ ինքեան զխոստովանութիւն և զարտասուս:
Եր. 655 (582). Թեբէ վարդապետութիւն (տպ. զվարդապետութիւն) շնորհին որ էր ի յիս, հայեցուցանէին:	Թեբ է վարդապետութիւն շնորհին, որ էր (ի) յիս, հայեցուցանէին:
Եր. 660 (586). Իսկ ես ոչ հրեշտակս և վարդապետ, և ոչ երբէք իսկ չեմ եղեալ. բանիս այս ըստ երբէք ի հարցողաց ուրուք կամաց գործոյ իշխանութեան . . .	Իսկ ես, ոչ հրեշտակս և վարդապետ և ոչ երբէք իսկ չեմ եղեալ բանիս այս: Ըստ երբէք ի հարցողաց ուրուք կամաց գործոյ իշխանութեան . . .

Իմաստն է — Իսկ ես, որ հրեշտակ չեմ՝ վարդապետող էլ երբէք չեմ եղել այս բանիս: Եթէ երբեմն եղել են հարցնողներ, թէ կամք ունի՞մ իշխանութեան գործի՝ երբէք յանձն չեմ առել:

Եր. 669 (594). Արժէ էր զգուշանալ և յանձն առնոյր լինել ինձ երկրորդ մարդ, զոր և առնէի: — Ընդէն և անդ հասեալ մօտ անկանէին . . .	Արժէ էր զգուշանալ և յանձն առնոյր լինել ինձ երկրորդ: Մարդ, զոր և առնէի՝ անդէն և անդ հասեալ մօտ անկանէին . . .

Իմաստն է — Հրեշտակն յանձն առնէր լինել իմ երկրորդը (ինձ փոխարինէր): Ինչ մարդ որ գտնում էի (վանքին միաբան լինելու՝) իսկոյն վրայ էին հասնում (թշնամիներս)էն:

Եր. 669 (594). Զի՞մ լոյս ի զուր ի խորշակահար տեղւոջդ:	Զի՞ն կոյս ի զուր ի խորշակահար տեղւոջդ:
Եր. 676 (600). Յիշեալ, ասէ, ուրումն երբեմն տն աւագի (Ա. տպ. Աւագի) զանուն իմ առաջի ոմանց . . .	Յիշեալ, ասէ, ուրումն երբեմն տն աւագի զանուն իմ առաջի ոմանց . . .
Եր. 677 (601). Ո՞չ ապաքէն վասն ունկնդրացն տխրժա լռութեան և խնդրուածոյ:	Ո՞չ ապաքէն վասն ունկնդրացն տխրժալռութեան և խնդրուածոյ:
Եր. 679 (603). Նստին գլխարկեալք, պճոճեալ երեսօք:	Նստին գլխարկեալք, պճոճեալ երեսօք:
Եր. 682 (605). Նշր գիր ոչ կարդայ:	Նշր գիր ոչ կարդայ:

Digitized by Google

Եր. 683 (606). Զորոյ եթէ գամ ճաշակել ուրուք առցէ զհամ անուշութեան, — կամիմ փտանել (Եղմինի տպ.՝ մեռանել) քան թէ յայսմանէ վրիպել։

Զորոյ եթէ գամ ճաշակեալ ուրուք առցէ զհամ անուշութեան՝ կամիմ մեռանել քան թէ յայսմանէ վրիպել։

Եր. 687 (610). Եւ ծածուցին առ ժամայն. նա աղաչելով զերանելի մայրն։

Եւ ցածուցին առ ժամայն, աղաչելով զերանելի մայրն։

Եր. 690 (613). Յորմանէ ամենայն մարդ ի Հայս՝ յաւագ և ի կրտսեր՝ հասեալ է։

Յորմանէ յամենայն մարդ ի Հայս, յաւագ և ի կրտսեր՝ հասեալ է։

Մի քանի աղաւաղութիւններ էլ, ստուգելով փարպեցու Ա. և Բ. տպագրութիւնների հետ, նկատեցինք որ տպագրական վրիպակներ են, որոնք մասամբ Բ. տպագրութեան մէջ են մտել և շարունակուել Գ-ում, մասամբ էլ միայն Գ-ի մէջ են պատահում։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ և այս տեսակի աղաւաղութիւնները, որչափ մենք ենք նկատել։

Եր. 26. Զանթիւ բազմութիւն ընդդանէ իշանց։ (Ուղղելի ըստ Ա. և Բ. տպ. ընդդանէ)։

Եր. 78. Իբրև ետես սուրբն Ներսէս և զմահն անարդար։ (Անյաջող ուղղագրութիւն տպագրողների։ Ուղղելի ըստ Ա.՝ արդար)։

Եր. 163. Ճանաչիք երևելի ի մէջ ազայից։ (Ուղղելի ըստ Ա. և Բ.՝ սպայիս)։

Եր. 210. Քանզի ոչինչ է ի նուազս և ի բազումս յաղթութիւն և պարզումն, յԱստուծոյ ակնարկութեանն հրամանի։ Ուղղելի ըստ Ա. և Բ.՝ այլ յԱստուծոյ . . .)։

Եր. 245. Անդ զկատարելութեան պսակն ընդունէր զոր երանելի սեպուհն Համայեակ փափագանօք . . . խնդրէր։ (Ուղղելի ըստ Ա. . . . ընդունէր երանելի սեպուհն Համայեակ, զոր փափագանօք . . . խնդրէր)։

Եր. 312. Առաքեալ էր պցուցակ և գլխաւորի աշխարհի։ (Ուղղելի ըստ Ա.՝ գլխաւորին)։

Եր. 629. Եւ ամբ այսպիսի ուրախարար պսակի։ (Ուղղելի ըստ Ա.՝ ընդ)։

Եր. 664. Որք արդարև օտ Տեառն կամացդ։ (Ուղղելի ըստ Բ.՝ ըստ Տեառն)։

Տպագրական վրիպակներ են և այն աղաւաղութիւնները, որոնք առաջ են եկել բնագրից աւելի կամ պակաս ընդարձակ հատուածներ դուրս թողնելով։ Այստեղ դնում ենք միայն մեր նկատածները։

Եր. 66—67. պէտք է լինէր. «Զի եթէ էր հաւատացեալ թագաւորի

առաջի տանել զայսպիսի յանդիմանութեան, Ներսէս համարձակէր յառաջ գնալ կորուսելոյն. այլ կարեմ թէ զհաւատացեալս յաղագս մեղաց առաջի անհաւատից ոչ հաւանիմ»։ («Նօտրագրուածը պակասում է Բ-ի և Գ-ի մէջ)։

Եր. 647. պէտք է լինէր ըստ Էմինի տպ. «Ապա արդ զի՞նչ ևս ասեմ զերաւորացս այս մեղանս, որ և զամենեցուն զարարիչն . . .» («Նօտրագրուածը պակասում է Բ-ի և Գ-ի մէջ)։

Եր. 647. պէտք է լինէր. «Ո՞չ, ասեն, ստոյգ ասեմք թէ սամարացի ես»։ («Ստոյգ» պակասում է Գ-ի մէջ)։

Եր. 689. պէտք է լինէր ըստ Էմինի տպ. «Ընկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար»։ («Ի վերայ ձեր» պակասում է Բ-ի և Գ-ի մէջ)։

Digitized by Google

Ein Brief des Gregor Magistros an den Emir Ibrahim.

Herausgegeben

von

Esnik Gjandschezian.

Vorbemerkung.

Der Text beruht auf zwei Handschriften, von denen die eine, mit A bezeichnete, sich in der Mechitharisten-Bibliothek zu Wien befindet (No. 27, Bl. 17b—37a: «Նամականի Գր. Մագիստրոսի»), die andre, mit B bezeichnete, in der Königl. Hof- und Staatsbibliothek zu München (cod. arm. 4, fol. 20a—38b: Գրիգորի Մագիստրոսի քաջ պուետիկոսի ներհուն սոփեստոսի բանաստորր և սքանչելահիւս թղթոց օրինակ). Eine ausführliche Beschreibung der Handschriften bieten Հ. Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա 1895, էջ 147 և այլն und Հ. Գ. Գալեմքեարեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանի ի Միւնխէն, Վիեննա 1892, էջ 11.

Eine Berichtigung des überlieferten Textes ist nur in den vereinzelten Fällen versucht worden, wo eine sinnstörende Entstellung offen zu Tage liegt. Sonst ist alles unverändert übernommen worden.

Zu Gregors Leben und Schriften vergleiche V. Langlois, Mémoire sur la vie et les écrits du prince Gregoire Magistros, duc de la Mésopotamie, auteur arménien du XIe siècle in Journal Asiatique, série VI, t. 14, p. 5—64 und Հ. Գար. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Գ. տպ., Վենետիկ 1897, էջ 572—586.

Առ Աբրեհիմ[1]) ամիրայ[2]) վասն հաւատոց Գրիգորայ[3]) որդւոյ Վասակայ ասացեալ։

Զընձաւէտ[4]) զտենչումն և զանձկալի փափագումն[5]) յօժարութեան[6]) ի բարի խոհականութիւն ի վեհագոյն քո[7]) խնդրոյս յուզման ծանեայ, ով մականունդ ամիրայականդ[8]) սերի Աբրահամ, յազգէ Աբրահամու

---

1) B. Աբրահամ. 2) B. ամիրայն. 3) B. Գրիգորւոյ. 4) A. Զղձաւէտ. 5) A. փափաքումն. 6) A. յօժարութիւն. 7) A. քոյ. 8) B. ամիրայական.

Digitized by Google

իսմայէլական[1]) ծննդոց, ի թագաւորելոցն[2]) ազգաց, և օրհնութեան ժառանգորդ, ըստ մօր՝ ի մերոյն Հայկեան՝ ի սիսականացն[3]) Հայկազն[4]), ի նախնեացն շառաւիղէ երկոքումբք: Թուի ինձ, եթէ յաստուածուստ երևեալ քեզ խնդիրս այս, որպէս նախ Աբրահամու: Վասն զի Աբրահամու, ասի, նախ ի խնդիր ելանել աքանչելագործութեանցն Աստուծոյ, որ յերկիր ի մարդիկ հրաշագործեալ[5]) արարչագործէ և ի զարդու երկնից, և ի հաստատութեանն[6]), որ կամարն է կապուտակեալ՝ կառուցեալ բանիւն Աստուծոյ: Յայսոսիկ հայելով ի խուզել[7]), խորհեցաւ խելամուտ լինել խորոցն Աստուծոյ, ի բաց ընկեցեալ զամենայն մարմնական հնարից զբաղումն, քանզի և հնար գոյր[8]) նմա՝ արհեստ աստղաբաշխութեան[9]), վասն զի քաղդեայ[10]) էր, և որ, այնմ՝ հետևաբար, մարմնական հանճար ի բոլորն պարառաջ ճանաչիւր: Սակայն մինչև ոչ[11]) ի բացեայ եղև յայսցանէ ամենից, ոչ արժանացաւ ճանաչել զԱստուած. և ապա փոխանակեալ զհնարս ընդ հաւատոց, և՛ հաւատովք արդարացաւ և՛ հաւատովք ճանաչեաց զԱստուած: Վասն այսորիկ[12]) երևեցաւ նմա Աստուած[13]) և[14]) ծանոյց զիւր զծայրագոյն[15]) գիտութիւնն. և որպէս փոխանակ Իսահակայ ընկալաւ զխոյն և զաւետիսն, և փոխանակ եօթն աստեղաց[16]) մոլորականցն և մոլորեցուցչացն ի բաց կալոյն[17]) զեօթն ազգն տալ ժառանգել որդւոց[18]) նորա, և ոչ զեօթն միայն, այլ և զամենայն ազգս յասելն անդ աստուածեղէն[19]) պատգամացն՝ թէ «Թագաւորք ազգաց ի քէն ելցեն[20])», «և զաւակք[21]) քո որպէս զաստեղս երկնից և զաւազ ծովու բազմացին ի վերայ երկրի»[22]): Եւ այսորիկ յայտնի են քեզ, քանզի ծանօթ[23]) իսկ ես: Քանզի ամենայն[24]) միջերկրեայքս[25]) ծանուցեալ զԱստուած, իշխանք և թագաւորք յերից յայսցանէ ասեմք գոլ՝ ի Սառայէ, յորմէ Իսահակ, ի Ագարայ[26]), յորմէ Իսմայէլ, և ի Քետուրայ, յորոյ[27]) Ամրան և այլքն, յորոց[28]) ծննդոց մինչև ինձ գոլ ըստ հայրենական սերի, որպէս ի Մովսիսէ[29]) գտեալ ուսցիս, ի Հայկեան մատենին, յերկրորդումն[30]) ծննդաբանութեանց: Բայց մեր ոչ այսորիկ է փոյթ զանձին[31]) ինչ[32]) շուք խնդրել, այլ յաղագս[33]) որոց խնդիրս է՛ պատմել: Եւ ոչ կամիմք[34]) տակաւին յառասացութենէս[35]), որ առաջի կայ, արտաքոյ մղել[36]), վասն զի սիրելի է ինձ

---

1) A. իսմայելական. 2) B. ի թագաւորեցելոցն. 3) B. ի սիսականայ. 4) A. Հակազն. 5) A. հրաշագլործեալ. 6) A.B. ի հաստատութեանցն. 7) A.B. ի խուզեալ. 8) A. գոր, B. գոլ. 9) A. աստղաբաշտութեան. 10) A. քաղթեայ. 11) A.B. որ. 12) B վասն որոյ. 13) A. զԱստուած. 14) A. և fehlt 15) B. իւր ծայրագոյն. 16) A.B. աստեղն. 17) A. կալայն. 18) A. որդոց. 19) A. աստուածեղեն. 20) Ծնն. ժէ, 6. 16. 21) A.B. զաւակ. 22) Ծնն. իզ, 4. իը, 14. 23) A. ծանօթք. 24) A ամենայն fehlt. 25) B. միջերկրայքս. 26) A. ի Ագարեայ. 27) A. յորոց. 28) B. յորոյ. 29) vgl. Մ. Խոր. Պատմ. Բ, 68. 30) A. յերկրորդում. 31) A. զանձէն. 32) B. ինձ. 33) A. յաղաքս. 34) A. կամիմ. 35) A. յառասացութեանս. 36) A. մղել.

Digitized by Google

Աբրահամու[1]) հանդէս, քանզի հիմն հաւատոց զսա իմանամք յԱստուծոյ[2]) խարսխեալ։ Ընկեսցուք դարձեալ ի մեծ և ի[3]) հզօր արուեստն աստղաբաշխութեան[4])։ Ի բացէ եղև թուոցն և[5]) համարողութենէ[6]) անհաս, վասն որոյ[7]) և փոխանակ յոգունցն թուոց զբազմորդութիւնն[8]) ընկալաւ հաւատոց, յուսալով յերկարաձիգ ժամանակաւ աներևութիցն[9])։ Վասն այնորիկ[10]) յերևելիսս ածեալ՝ յերկարագոյն ժամանակաւք ժառանգեցոյց որդւոց նորա զամենայն ազգս և երևելի արարեալ յայտ[11]) յայտնի կացոյց արքայութեամբ և իշխանութեամբ, և զի եթող նա զտախտակն[12]) պղնձի, այսինքն՝ զաստօնոմին[13]), որ ընդունէր զչափաբերութիւն ժամուց տունջեանն[14]) և զուղէգնացութիւնսն[15]) արեգականն ի կենդանակերպսն և յաստեղատունսն՝[16]) բաղախոհութիւնս առնել նոքօք ի դուզնաքեայ կենցաղումս․ յորոյ[17]) վերայ տախտակի[18]) գծագրեալ էին կենդանագրութիւնք[19]) երկոտասան աստեղացն․ և յորմէ արտաքոյ եղև գրել, փոխանակ այնմ գրեաց արեգականն Արարիչ ի տախտակ[20]) իմանալի՝ ի սիրտն Աբրահամու զիւրն անստուեր[21]) ծագեալ լոյս և փոխանակ երկոտասան կենդանակերպիցն՝[22]) դրոշմելոցն[23]) ի վերայ տախտակի[24]) զերկոտասան որդիսն Յակոբայ յԱբրահամէ ծնեալս, յորոց[25]) արմատոց և դու, Իբրահիմ[26]), ի Հագարայ և յԻսմայէլէ[27]), յառաջ խաղացեալ, այսպիսի գեղեցիկ գիտից և խնդրոց[28]), թևակոխելով թափ առեալ[29]) և հանդիսացեալ ջանիւ խոկաս հասանել։ Այս ոչ ինչ[30]) զարմանալի է․ քանզի Աբրահամն առաջին, զորմէ վեհագոյնդ գրեցաք, ոչ եթէ խնդրէր[31]) զաստուած որ ոչ էր, այլ զայն՝ որ էրն և էն[32]) և եղիցին, քանզի գիտէր[33]) հայրապետն այն՝ թէ գոյ Աստուած․ սակայն ուղղապէս ճշմարտախոհ լինէր[34]) ստուգութեամբ տեղեկանալ զերբեմն ի մոռացումն անկեալն[35]) ի մոլորութենէ հարցն՝ ոչ հետևաբար լինելոյն յարդարութեանն, այլ զկնի կռամոլութեանն մոլորեալք։ Եւ դու այսպէս ճշմարտութեան հետև ելով, զարդարն և զուղիղն[36]) ճանապարհ հայցես ի մէնջ ճանաչել[37])։

Այժմ կամէի կարճառօտ հատանել․ սակայն հարկաւորեցայ ի դիմի[38]) խնդրոյս քո երկարագոյնս գրել, քանզի գրեցեր առ իս՝ երկարագոյն գրել

---

1) B. Աբրահամուս. 2) A. յայ. 3) A. ի fehlt. 4) B. աստեղաբաշխութեան. 5) A. և fehlt. 6) B. համարողուէն. 7) A. վասն այնորիկ. 8) A. զբազմորդութիւնս. 9) A. աներևութեանցն. 10) B. վասն որոյ. 11) A. Von յերևելիսս bis յայտ fehlt. 12) A. զտաղտակն. 13) B. զաստրանոմին. 14) A. տունջեան. 15) A. զուղղէգնացութիւնսն. 16) B. յաստեղատունս. 17) A. յորոց. 18) A.B. տաղտակի. 19) A.B. կենդանագրութիւն. 20) A. ի տաղտակի. 21) B. անստուէր. 22) B. կենդանակերպացն. 23) A. դրոշմելով. 24) A. տաղտակի. 25) A. որոց. 26) A. Իբրայիմ. 27) A. յԻսմայելէ. 28) B. խնդրոյ. 29) A. թառափեալ. 30) B. ոչ ինձ. 31) A. խնդրեր. 32) B. են. 33) A. գիտեր. 34) A B. լինել. 35) A. անկելն. 36) A. զուղղիղն. 37) A. ճանաչել fehlt. 38) B. ի դիմին.

առ քեզ և պղատոնականս[1]), և այն անյամր և փութանակի և առանց հակառակութեան, եւ նախ՝ զի գրեցից քեզ թուղթ յարտաքին[2]) իմաստասիրացն ատտիկեցի հոմերական ստորասացութիւնս հելլենական[3]) հանճարով, ոչ պարզաբար, այլ պուետիկոսաբար, որպէս Պամպելասն[4]) այն և Փերեքդէսն[5]) և Արիստոտէլ և Ամովն, յորոց և Պղատոն և Սոկրատէս և Պիւթագորաս[6]) և Պոիմիդէս[7]) և Ջռուփոս[8]) և Պիպալեաս[9]) և այլքն յոգնախումբ ի ճեմարանսն Աթենայ գտեալ և յՀելլադայ պատուեալ: Այս և ոչ քեզ օտար և ոչ պարսաս, այլ պարծանք և[10]) պատիւ պերճ և պայծառ քան զայլոց արքայիցն գտեալ: Բանզի Փտղոմէոսն այն այսպիսի վարէր խորհրդով՝ փիլիսոփոս[11]) գոլ[12]) նմա, որ և զերկնի գտեալ զիմաստս և զամենայն մատեանս[13]) պուետիկոսեանց[14]) յիւր պալատանն[15]) պարբերեալ պահպանութեամբ: Իսկ Դաւիթ զպատուիրանս Աստուծոյ և զգիտութիւնն[16]) լոյս աչաց հաւանեցաւ գոլ և քաղցր քան զմեղր բերանոյ: Յայտնի է[17]) այս՝[18]) թէ որք ուսանին զպատուիրանս Տեառն և զգիտութիւնս՝ լոյս է աչաց, ապա որք ոչն գիտեն՝ խաւարեալք են, և թէ՝ քաղցր է[19]) բերանոյ քան զմեղր. որ ճաշակենն՝ լեզուոյ ցանկան ճաշակել, այսինքն՝ անգիտութեան: Իսկ իմաստնագոյնն այն որդի մարգարէի և թագաւորի Սողոմոն[20]) զիմաստութիւն խնդրէ յԱստուծոյ և ոչ[21]) այլ ինչ. վասն որոյ զբոլորն առնու պարառաբար զբարիս, և զկնի այսորիկ արժանի զսա գովասանական առնէ ներբողեան բանի, որ և գերագոյն[22]) քան զգանձս[23]) ոսկւոյ և արծաթոյ պատուական է. և յայսոսիկ[24]) յարմարելով ոչ շատացաւ[25]) այնու. այլ թէ ամենայն, որ ինչ պատուականագոյն է, շարժէ զնա: Եւ դու այսմ ցանկացար տոգեալ, մանաւանդ մեծագունին կարօտեալ հանճարոյ. այլ ես զխնդրելին քո փիլիսոփայական թուղթս ուրոյն ոչ կամեցայ գրել, այլ յայսմ մատենիս, զկնի խնդրոյ մարգարէականին հատուցից քեզ. հռետորական, հոյակապ և համառօտ բան: Արծեցեա՞լքն այն իմաստակք՝ եթէ ի հագարացւոցն[26]) և եթէ ի սխաականացն: Եւ եթէ ձկնորսացն եմ աշակերտ, սակայն ոչ եմ[27]) անտեղեակ աթենացւոցն[28]) ստորոգութեանց և հելլենական հանճարոյ[29]): Սակայն հաւատք մեր ծածկեցին զիմաստութիւն, վասն զի հոգեղէնք[30])

---

1) A. զպղատոնականս. 2) A. արտաքին. 3) A. ելլենական. 4) A. Պապլիասն. — Pamphilus. Vgl. Cic. Deor. Nat. I, 72. 5) A. Փերիդեսն. — Pherekydes. — Langlois Փերէքդես. Vgl. Jour. As. 1869, VI série, tome 13, p. 34. 6) A. Պեթագորաս. 7) Parmenides? — Langlois Պիրիմիդէս. 8) Langlois Ջռուփոս. 9) A. Պիպալեաս. — ? 10) A. և fehlt. 11) B. փիլիսոփու. 12) A. գոլ մ. 13) B. մատեանսն. 14) B. պուէտիկոսեանցն. 15) A. իւր պալատն. 16) A. զգիտութեամբն. 17) A. Յայտնի է fehlt. 18) A. յայս. 19) A. քաղքր է. 20) A.B. Սողօմօն. 21) A. ոչ fehlt. 22) A. գերագոյն fehlt. 23) A. զգանձ. 24) A. ցայսուիկ. 25) B. շատացեալ. 26) B. ի հագարացոցն. 27) B. ոչ եմք. 28) A. աթէնացւոցն. 29) A. հանճառոյ. 30) A. հողեղենք.

Digitized by Google

եմք և ոչ մարմին[1]) և ոչ անմարմին, այլ երբեմն միայն մարմին[2]) և այժմ հոգի պարածածկեալ[3]) զմարմին[4]) երկրորդ ծննդեամբն մեր, որ ի Հոգւոյն[5]) ծնեալք եղեաք։ Այս այսօրիկ հաւատք մեր աներևութից[6]) հաւատան. իմանալիս[7]) մեր մարդ, որ ներքինն էր, այժմ տրամակայեալ[8]) յեղափոխեցաւ վերին. վասն որոյ զիմանալիսն իմանամք և զանհասութիւն նորա հաւատովք[9]) ճանաչեմք։ Իսկ զխնդրելիս քո ոչ եթէ միով գովեստիւ կամ երկիցս կամ երիցս, այլ եթէ բիւր անգամ ոչ շատացայց։

Կամեցար ի մէնջ զՅիսուսին[10]) աստուածպետականութեան հանդէսս[11]), որ ի կենցաղումս, և զտնօրէնութեան[12]) մատակարարութիւն[13]) մատենագրել քեզ և այն եթէ զիա՞րդ տկարագոյնս և աղերսականս բարբառէր առ Հայր եթէ Աստուած գոլ, եթէ «Տէր անցցէ զբաժակս»[14]), և եթէ «Որ մատնեացն զիս, նմա մեծ մեղք են»[15]), և եթէ «Նստուցանելն ընդ աջմէ և ընդ ահեկէ ոչ է իմ, այլ Հօրն, որ առաքեացն զիս»[16]), և եթէ «Հայր իմ մեծ է քան զիս»[17]) և որ այն կիրք մարմնոյ քաղցնուլն և ննջելն և[18]) վաստակելն և կերակրելն և Հօր առնուլ[19]) զհոգի, և է՞ր. և[20]) յայսոսիկ[21]) յարամանեալ քո[22]) նախ զՄովսէսին, եթէ որ խօսեցաւ առ նա ո՞ ոք էր, ի՞նքն Աստուած եթէ ի ձեռն հրեշտակի միջնորդի. և զհրեշտակացն երկուց, որ առ Աբրահամ եկեալ և ի տուն Ղովտայ չոգան[23]) հրասուզել զսոդոմայեցւոց և զգոմորացւոց[24]) քաղաքս, եթէ ո՞ ոք էին. և զկնի այսմ, եթէ պտուղն Ադամայ, զոր եկեր[25]), առանց հրամանի Աստուծոյ ճաշակեա՞ց եթէ յԱստուծոյ այնպէս պատշաճեցաւ. և եթէ զչար և զբարի յԱստուծո՞յ[26]) ասէք լեալ եթէ զչարն ի սատանայէ և զբարին յԱստուծոյ[27]). և եթէ զԱստուած պատկե՞ր կամ ձև՞ ասէք գոլ եթէ ոչ. և եթէ արտաքին իմաստասէրքն մի՞ Աստուած ասացին գոլ[28]) եթէ Երրորդութիւն. և եթէ Քրիստոս Աստուած է, Պօղոս ընդէ՞ր ասէ Բարեխօսն մեր[29]). և եթէ ի քսան և չորս[30]) մարգարէսն այնպէ՞ս են գրեալ որպէս Մահմադայ[31])։

Այսոքիկ ամենեքեան թուով երկոտասան բան ասացեալք ի քէն, ով հզօրդ[32]) իսմայէլացի[33]), զոր յինէն խնդրես, զոր հատուցից քեզ վստահացեալ ի Հոգին սուրբ, այն որ զորնողն իշոյ արքայ կացուցանէր և զհովիւն[34]) թագաւոր և մարգարէ և զձկնորսն առաքեալս և յայլ լեզուս

---

1) B. մարմիր. 2) B. մարմիր. 3) B պարածածեալ. 4) B. զմարմիր. 5) A. ի հոգոյն. 6) A. աներևութեանցն. 7) A.B. զիմանալիս. 8) A տրամայկայեալ. 9) A. հաւատով. 10) A. զյիսուսեան. 11) B. հանդէսք. 12) A. զտնօրէնութեան. 13) A. մատակարարութեան. 14) B. Բաժակս. — Ղուկ. իբ, 42. 15) Յովհ. ժթ, 11. 16) Մատ. ի, 23. Մար. ժ, 40. 17) Յովհ. ժդ, 28. 18) B. և fehlt. 19) A.B. առնել. 20) A. է՞ր և fehlt. 21) յայսորիկ. 22) B քոյ. 23) B. չոքան. 24) A. զգմորացւոց. 25) A. եկեր. 26) A B. Աստուծոյ. 27) A. յայ. 28) Von եթէ ոչ bis ասէքգոլ fehlt. 29) Հռովմ. ը. 34. 30) B. ի չորս. 31) A. մահ Ադամայ. 32) A. հայրդ. 33) A. իսմայելացի. 34) A. Von այն որ bis զհովիւն fehlt.

Digitized by Google

տալ բարբառել, և ի Թիկունս հասանել սովորեալ է միեղինոյ մերոյս Նուիրելոց[1] և[2] յառաջագոյն ընտրելոց, ըստ որում ընկալաք զփչումն մեր[3]: Յորժամ հարցանել զմեզ ձեռնարկեն հզօրագոյնքն, ոչ յառաջագոյն խոկամք տալ պատասխանի. վասն այնորիկ և մարգարէն Դաւիթ զլեզու իւր միայն գրիչ գովեստի[4] վարկանի՝ յօդք մակերևացեալք, այլ առասացութիւն նուագերգութեան սաղմոսելոյ ի Հոգւոյն տուչութենէ[5]. այսպէս[6] և մեր ոչ հոգացեալ, այլ միով յեղանակաւ[7] գրեցից քեզ. նախ՝ թէ «զԱստուած ո՞րպէս ճանաչէք» երկրորդ՝ եթէ «որ[8] ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուա՞ծ էր եթէ[9] ի ձեռն հրեշտակի միջնորդի». երրորդ եթէ «երկուս հրեշտակս, որ առ Աբրահամ եկին, ո՞յք էին, յաղագս[10] Սոդոմայ». չորրորդ՝ եթէ «Ադամ զպտուղն կամա՞ւ եկեր եթէ յԱստուծոյ այնպէս[11] պատշաճեցաւ». հինգերորդ՝[12] եթէ «չարն և բարին յԱստուծո՞յ է[13] եթէ չարն ի սատանայէ[14] և բարին յԱստուծոյ». վեցերորդ՝[15] եթէ «արտաքին իմաստասէրքն[16] մի՞ Աստուած ասացին եթէ Երրորդութիւն», և որ[17] զկնի այսր[18] Յիսուսի տնօրինական հանդէսք, և եթէ՛ «քան և չորք մարգարէքն[19] զոր Մահմադ[20] ասաց զի՞նչ ասացին»:

Արդ՝ եթէ կամիս կարօտել և ողջախոհ մտածութեամբ զլուսափայլ աստուածաւանդն[21] ասացեալս ուսանել, աղէ՛ առ ընթերցի՛ր զաստուածեղէն տառս կտակարանաց, քանզի հզօր ես գրչութեամբ և ընթերցողութեամբ արամեան հրահանգիս[22] և գտցես յաւետարանսն աստուածպետականին Յիսուսի այսպէս գրեալ առ եբրայեցիսն ասելով. «Բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զերեսս իմ և ոչ տեսին և լսել զոր լսէքդ և ոչ լուան»[23] և «Աբրահամ հայր մեր[24] կամեցաւ տեսանել զօրն իմ, ետես և ուրախ եղև[25]»: Իսկ այժմ՝ եթէ յաղագս Աբրահամու ասէ տեսանել զօր իւր և ուրախ լինել, տե՛ս, երկրորդ Աբրահամ[26], և ուրախ լե՛ր: Իսկ ի նոյն աստուածեղէն տառս պատգամացն[27] գտցես և զայսոսիկ. «Որ ոչ հաւատայ յիս՝ բարկութիւն կայ և մնայ ի վերայ նորա»[28]: Արդ՝ եթէ ո՞րպէս պարտ է հաւատալ ի վախճան թղթիս գրեցից քեզ, «քանզի և ի[29] վախճան ժամանակիս երևեալ նմա և խօսեալ ընդ[30] մեզ նովաւ» ասէ ուրեմն[31] որ ասացն:

Բայց ես սկսանիմ քեզ զնախաասացեալս, եթէ Աստուած պատկե՞ր է եթէ[32] ոչ կամ ձև՞: ԶԱստուած նախ իմանալ իմանամք յամենայն

1) A. Նւիրելոյ. B. Նուիրելոյ. 2) A. և fehlt. 3) B. մեք. 4) A. գովեսցի. 5) A. տուչութեան. 6) B. սապէս. 7) A. եղանակաւ. 8) B. զոր. 9) A. եթէ fehlt. 10) A. յաղաքս. 11) A. այսպէս. 12) A. հինգերրորդ. 13) A. Von եթէ չարն bis յԱստուծո՞յ է fehlt. 14) A. սատանայէ է. 15) A.B. վեցերրորդ. 16) A. իմաստնասէրքն. 17) A. որ fehlt. 18) A.B. այս. 19) A. մարգարէք. 20) A. Մահմէտ. 21) A. աստուածաւանդ. 22) A. B. նահանգիս. 23) Մատ. ԺԳ, 17. 24) B. ձեր. 25) Յովհ. Ը, 56. 26) A. Աբրահամու. 27) A. պատկամացն. 28) Յովհ. Գ. 36. 29) A. ի fehlt. 30) A. ընդ fehlt. 31) A. ուրեմն fehlt. 32) A. թէ.

Digitized by Google

մարգարէական հանճարոյ և գիտութեանց մեկնեալ և զատեալ. Նորա ոչ պատկեր և ոչ ձև և ոչ քանակութիւն և ոչ չափաբերութիւն, ոչ Նիւթ. ոչ տեսակ, ոչ մարմին[1]), ոչ գոյութիւն[2]) կամ անգոյութիւն, ոչ սկիզբն, ոչ միջութիւն, ոչ կատարումն, ոչ ժամանակ. Նա ոչ լոյս, թէպէտ և ասի, և ոչ խաւար, քանզի հալածիչ խաւարի է, ոչ զօրութիւն, թէպէտ և տուօղ զօրութեանց, և ոչ տեղի, քանզի ոչ տեղեաւ պարփակի, և ոչ այլ ինչ յայսցանէ, որ ի մերս իմացութիւն[3]) և գիտութիւն։ Զնա ոչ ոք իմացաւ՝ որպէս էն. և եթէ իմացի, ուրեմն ոչ է Աստուած, քանզի թէպէտ և մարգարէիցն յիւրաքանչիւր դարսն ըստ կարգի և ըստ պիտոյից ժամանակաց ծանուցեալ մասն ինչ և Նշոյլս, այլ ոչ զբոլորն[4]), քանզի անպարագրելի[5]) և անհասանելի է։ Իսկ զայսոսիկ եթէ ոք ի վերայ Աստուծոյ իմասցի՝ պատկեր կամ ձև կամ ժամանակ կամ որպիսութիւն, ամպարիշտ մտածութեամբ հայհոյէ. ապա եթէ ի մարգարէիցն ոք յանդգնեսցի[6]) բերել վկայութիւնս, եթէ ոմն այսպէս տեսս և ոմն այնպէս, այնոքիկ ոչ ճշմարտութիւն այլ օրինակ ճշմարտութեանն. որպէս Յակոբ[7]) Նահապետն[8]) «առիւծ» ասելով յաղագս հզօրութեան և անյաղթութեան, և «կորիւն առիւծու», զոր յայլում վայրի ասացից, և որպէս «հեծեալն յաշխէտ ձի» տեսս Զաքարիայ ի մէջ երկուց լերանց պղնձի զբարկութիւն Նշանակելով ի վերայ բաբելոնացւոցն. և այլուր «հուր» անուանի, որ ոչն է հուր, և այլուր «յովազ», որ[9]) Նստելով ի ճանապարհի, և «արջ յանտառէ[10]) ելեալ», և «արծուի և բազէ ընդ հարաւ տարածեալ զթևսն», և «լեառն», և «արեգակն»։ Իսկ դարձեալ Ննջեալ ասի. վասն որոյ Դաւիթ ասէ. «Զարթիր որպէս ի քնոյ, Տէր»[11]). և արբեալ, քանզի ասէ. «Որպէս այր հզօր, զի թափէ զգինի»[12])։ Այսոքիկ բազում են պատկերք մարգարէական տեսից տարացոյցք, որպէս «Նստեալն ի վերայ թեթև[13]) ամպոյ», և ըստ Ամբակումայ «ելանելն ի կառս և լարել[14]) զաղեղունս և արբուցանել զնետս ի կապարճաց իւրոց», և ըստ Եզեկիէլի՝ «կառք», «անիւք», «մարդապատկեր», «առիւծանման», «արծուի» և «զուարակ»[15])։ Իսկ այս քառիցն քառամասնեայ, և հոլովումն[16]) և ընթացք։ Սակայն և ոչ մի ես յայսցանէ։

---

[1]) B. մարմիր. [2]) A. գոյացութիւն. [3]) A. իմաստութիւն. [4]) A. բոլորն. [5]) B. անպարագրելին. [6]) B. յանդգնիցի. [7]) A.B. Յակօբ. [8]) B. հայրապետն. [9]) B. որ fehlt. [10]) A. անտառէ. [11]) Սղմ. Սաղ. Հէ, 65. [12]) Սաղմ. Հէ, 65. [13]) A. թէթև. [14]) B. ի լարել. [15]) A. զուարակք. [16]) B. յոլովումն.

(Fortsetzung folgt.)

Ein Brief des Gregor Magistros an den Emir Ibrahim.

Herausgegeben
von
Esnik Gjandschezian.

(Fortsetzung.)

Այլ իւրն միայն գիտելի է աստուածութեանն[1]), և ո՛չ հրեշտակաց և ո՛չ մարդկան. քանզի տկար են արարածական բնութիւնքս, ոչ կարեմք տանել զանտանելին, և ոչ է հնար, և ոչ պիտանացու, այլ ողջախոհ մտածութեամբ և հաւատոց[2]) քաջութեամբ հաւատալ՝ եթէ արարիչ է[3]) երկնի և երկրի, որ երևին և որ ոչն երևին, և եթէ ի նմանէ են յառաջացեալք ամենայն ածանցականքս[4]) և[5]) միեղինացն դասք: Այսոքիկ յաղագս Աստուծոյ[6]) իմաստասիրեցան կարճառօտ:

Իսկ յաղագս Մովսէսի թէ որ երևեցաւ նմա Աստուա՛ծ էր թէ ի ձեռն հրեշտակի խօսեցաւ: Ոչ ի ձեռն հրեշտակի, այլ ինքն Աստուած, վասն զի վկայէ մեզ այսոցիկ ինքն իսկ աստուածեղէն բարբառովն, եթէ «Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, Աստուած Յակոբայ»[7]). և այլուր եթէ «Ընդ[8]) մարգարէիցն ոմանց երազովք և ոմանց տեսլեամբ և ոմանց ի ձեռն հրեշտակի երևեցայց, իսկ ընդ Մովսէսի ծառայի իմոյ դէմ յանդիմանն»: Բայց Մովսէսի երևեալ ի սինէական լերինն ի միջոյ մորենւոյն հրով և միգով, եթէ զիա՛րդ զկնի այսոցիկ պատմեցից քեզ:

Իսկ երկուս արս եկեալ առ Աբրահամ, եթէ հրեշտա՛կք էին: Հրեշտակք ճշմարտապէս, բայց եկեալք[9]) յԱբրահամ. եթէ է՞ր աղագաւ. Նախ՝ վասն այնորիկ, զի ցուցցէ հրեշտակաց իւրոց Տէրն և՛ երկրի ունել[10]) բարեկամ և սպասաւոր որպէս զԱբրահամ և զի ծանիցէ Աբրահամ զչարիսն սոդոմայեցւոց[11]) և գոմորացւոց[12]), թէ այնքա՛ն մինչ ոչ գտաւ ի նոսա արդարս, զի փրկեսցէ եղբօրորդին իւր զՂովտ, և զի յայտնի

---

1) A. B. աստուածութիւնն. 2) B. հաւատոյ. 3) A. արարիչն. 4) A. աստուածականքս. 5) B. և fehlt. 6) A. Աստուծոյ և. 7) A. Յակօբայ. Ելք. գ, 6. 15. 16. դ, 5. 8) A. ըստ. 9) A. եկեալ. 10) B. ունել ինձ. 11) A. սոդոմայեցւոյ. 12) A. գոմորացւոյ.

կացուսցէ մեզ ամենեցուն եթէ ոք զսոդոմայականն[1]) յանդգնիցին[2]) գործել գործս, եթէ բարեխօս մեր լինի Աբրահամ և ամենայն ծնեալքն ի նմանէ դասք[3]) առաքելոց և մարգարէից, քանզի և նոքա յերանսն Աբրահամու էին, և ոչ ուղղեցին[4]) և արեան չափ և մարտիրոսութեան ապաշխարեսցէ ոչ թողացուցանել կամի մեզ նոյն Տէրն և խստագոյն հրով յաւիտենական[5]) կորուսանէ, քանզի որ ոչ լսէ պատուիրանացն Աստուծոյ, ասէ ուրեմն աստուածաւանդն ասացեալ՝ «Ախուրագոյն լիցի երկրին սոդոմացւոց[6]) և գոմորացւոց քան քաղաքին[7]) այնմիկ»[8]): Եւ այսորիկ այսքան բաւական լիցի առ այս վայր. քանզի եթէ զաղէտ տարակուսանացն, որ ի չարեացն յայնցանէ, զոր եհաս[9]) մարդկային բնութեան, մի ըստ միոջէ պատմեցից, ոչ բաւական գտայց, նաև ոչ լսել բաւականասցիս դու, զի վավաշ[10]) ցանկութեանն[11]) բորբոքումն շամբուշ ամենեաց առնամոլութեանցն, զոր անհեդեդ[12]) հսկայածնութիւնսն հնարս հապտանաց առ վշտին վարանեալ գտին բոցքն այն բորբորիտոն կաթոտքն և օձերագործքն[13]) խստամբակութեան բնութեան[14]), և զբնակագոյն զպետսն[15]) յանբնակագոյնսն յեղափոխեալք, զմանկարարութեանն ծննդականութիւն ապաքինեալ, ի տղմատիպ տաղտկալին[16]) մեղկեալք, ըմբռնեալք ի կարիսն անարգութեան. վասն որոյ[17]) ջրասուզեալ սատակին: Այսորիկ այսքան կարճառօտ:

Իսկ յաղագս Ադամայ[18]) մերոյն նախահօր՝ զհա՞րդ ճաշակելն զպտուղ, կամաւ Աստուծոյ[19]) և հրամանաւ եթէ ակամայ: Մեք զամենայն մատեանս, որ միանգամ յաշխարհի[20]), ընթերցեալ, ոչ անտեղեակ եմք, եթէ[21]) քաղդէացւոցն[22]) անվաւերական պատմութեանն և եթէ հելլենացւոցն եթէ կապադովկացւոցն եթէ եթովպացւոցն[23]) եթէ պարսից և այլոց բազմաց, զորս ոչ եմք բաւական զբոլորն յայտնի կացուցանել: Արդ՝ քանզի բազումք ի սոցանէ ոչ հանգունակ միմեանց ասացեալ[24]) յաղագս առաջին մարդոյն, ոչ զանուն և ոչ ժամանակ. այսպէս Ապիւդինոս[25]) քաղդեայ[26]) և Պիւռռոս[27]) այլանդակ պատմեն զլինելութիւն երկնի և երկրի. օտարոտի և ասեն անուն Ադամայ Աղղովրոս[28]) և կացեալ նորա շարս տասն. և ամս յանգեն երեսուն հազար, թէպէտ և լուսնականօքն թուեն. իսկ ելլադացւոցն իմաստունք ոչ այսպէս, վասն զի եպիկուրեանքն[29]) ոչ կամեցան

---

1) A. սոդոմայականն. 2) A. յանդգնիցի. 3) A. դուք. 4) A. յուղղեցին. 5) A յաւիտենական fehlt. 6) A. սոդոմայեցւոց. 7) A B. քաղաքն. 8) Մատ. Ժ. 15. 9) B. զոր էհաս. 10) A. վաշվաշ. 11) A. ցանկութիւնն. 12) A. անհեդեթ. 13) A. օձարագործքն. 14) A. բնութենէ. 15) A. պետսն. 16) B. տաղտալի. 17) A. վասն այնորիկ. 18) A. Ադամայ fehlt. 19) A. այ. 20) A. աշխարհի. 21) A. թէ. 22) A. քաղթէացւոցն. 23) B. եթէովպացւոցն. 24) B. ասացեալք. 25) A. Ապիդիանոս. Առ Langlois Ապիւդիւնոս. Vgl. Մով. Խոր. Պատմ. Ա, 4, 5, Ի, 8. 26) B. քաղդեա. 27) A. Պիւռոս. Langlois Բիւռոս. Vgl. Մով. Խոր.. Պատմ. Ա, 2, 4. 28) A. Ազղովրոս, vgl. Մով. Խոր. Պատմ. Ա. 4. Journal Asiatique 1869 VI Série, tome 13 p. 35. 29) B. եպիկուրեայքն.

Digitized by Google

զԱդամ մարդ առաջին ասել և ոչ ստեղծեալ յաստուածուստ[1]), այլ եթէ ի պատճառէ ումեմնէ ապականեալ երկիր և միայն մնայ Ադամ որպէս և Նոյ: Բայց Պղատոն ոչ համգոյն սոցա[2]), այլ ի Տիմէոսի[3]) տրամաբանութեանն այսպէս և ըստ այսմ օրինակի ասէ[4]). Յետ առնելոյ արարչին զերկին և զերկիր, Հրատարակէր[5]) առ իմանալի զօրութիւնս, եթէ երկին անկատար — երկին կոչէ զաշխարհ ի պարունակողէն — և եթէ[6]) այլ ևս երեք[7]) սեռք մեզ աննեղանելիք, յորոց յոչ եղելոց[8]) երկին անկատար, յորոց և մարդս: Եւ այլ բազում վիպագրեն յիւրաքանչիւր մատեանս, որպէս Զրադաշտ մոգ պարսից, զոր Զրադահեշտն[9]) կոչեն, որ յաստեղաց[10]) մոլորակացն ասէ լինել երկրի և վարել նոքօք մինչև յեօթն[11]) դարս[12]) և ապա ապականիլ: Սա առաջին զԱդամ[13]) ասէ լեալ, բայց զկնի ոչ ասէ կատարած լինել երկրի, քանզի ի նոյնն ասէ դարձեալ յեղափոխեալ շրջեսցի և նորոգեսցի: Եւ այս երկարագոյնք են և նրբագոյնք՝ իմաստասիրաբար ասացեալ[14]) իւրաքանչիւր ումեք[15]), քանզի ոմն ի մատեանս իւր[16]) ի ձկանէ ասէ ուսեալ զինքն, ի մարդակերպէ[17]) ի[18]) ծովէ արտաքս ելեալ և ոմն ի սանդարամետականէն[19]) և ոմն յաստեղաբաշխութենէ[20]): Այլ մեզ այսոքիկ ոչ հաւատացեալ եղիցի, այլ ընթերցեալք, զի մի պարսաւեսցեն զմեզ հեթանոսացն իմաստունք՝[21]) եթէ ոչ եմք տեղեակ[22]) անվաւերական նոցայն մատենագրութեանն: Սակայն մեզ հաւատացեալ լիցի միայն Մովսէսին աստուածեղէն պատգամս, զոր ի սինէականն ընկալաւ լերինն Աստուծոյ դէմ յանդիման, ոչ աղճատեալս[23]) և ցնդեալս[24]), այլ պարզ, մաքուր և լուսաւոր օրէնսդրութիւնս, գրեալ[25]) բանիւն[26]) Աստուծոյ և ոչ յովանայն ձկան որպէս Պիւռոսին[27]) կամ սանդարամետականին Եպիկուրեանց անաստուածիցն կամ արեգական Զրադաշտին կամ Պիւթագորականացն[28]), որք ի քառից զըոլոր[29]) բաղկացութիւնս ասեն լինել, կամ Սիմոնեանց[30]), որ երկուս արարիչս հաւանին՝[31]) զմինն[32]) բարւոյ և զմիւսն[33]) չարի: Այլ այս Մովսէս, որ յայտնի եդև յամենայն[34]) երկիր նշանօք և արուեստիւ, քաջութեամբք[35]) և արդեամբք, սա մեզ գրեաց[36]), յաստուածուստ ընկալեալ, զԱդամ առաջին մարդ ի հողոյ[37]) ստեղծեալ, և զկնի զկինն իւր[38]) ի կողէն իւր կամացն յօժարու-

[1]) A. աստուածուստ. [2]) A. ա̃յ. [3]) B. Տիմիոսի — Timeus. [4]) A. Von այսպէս bis ասէ fehlt. [5]) A. Հպատակէր. [6]) A. եթէ, B. և թէ. [7]) A. երեք fehlt. [8]) A. որոց ոչ եղելոյ. B. որոյ ոչ եղելոյ. [9]) B. Զարդահեշտն. [10]) A. յաստեղացն. [11]) A. եօթն. [12]) B. դար. [13]) A. Ադամ. [14]) B. ասացեալք. [15]) A. ումէք. [16]) B իւր fehlt. [17]) A. ի մարդակերպէ. [18]) A. ի fehlt. [19]) A. ի սանդարամետականէ. [20]) A. յաստեղաբաշխութեան. [21]) B. իմաստունքն. [22]) A. տեղեակք. [23]) B. աղճատանս. [24]) B. ցնդեալն. [25]) A. գրեալ fehlt. [26]) B. բանիւ. A. և բանիւն. [27]) A. B. Բիւռոսին. [28]) A. կամ պիւթագորականացն fehlt. [29]) A. զըոլոր fehlt. [30]) B. ի սիմոնեանցն. [31]) B. հաւանին արարիչս. [32]) A. B. զմիւսն. [33]) A. միւսն. [34]) A.B. ամենայն. [35]) A բաջութեամբ. [36]) A. գրեալ. [37]) A. ի հողւոյ. [38]) A. իւր fehlt.

Digitized by Google

թեան և կենացն հաղորդ ի դրախտի[1] անդր յարևելս[2], իսկ զդրախտն ամենապատիկ ծառօք ծաղկաւէտեալ[3], դալարավայր գեղեցկութեամբ զարդարեալ, ծառոյն հովանաւորութեամբ և սաղարթացեալ վարսիւք և պտղովք պայծառացեալ՝ անապականագոյնք[4] և լուսատեսակք, և երկուց ծառոցն ի նմա լինել երիցագոյնք և վեհագոյնք[5], յորոց հրաժարեցոյց[6] Արարիչն, այլ ոչ եթէ չարաչար տնկեալ ի սկզբանն և ոչ հրաժարեցուցեալ մախանօք, քանզի ստեղծ Աստուած[7] զամենայն ի կերակուր Ադամայ. սակայն ի տնկոցն յայնցանէ վայր մի հրաժարեցուցանէ չուտել, զի ի դէպ ժամու կերիցէ և յեղափոխեալ ի բարիսն կոյս, եղիցի յԱստուած մերձեցեալ. զոր ոչ լուաւ և եկեր և կորոյս զկեանս իւր անտրտում. և[8] մահու հասանէ, պատուհաս ընկալեալ, զոր ի մեզ պտղաբերեաց՝ ցաւս և տրտմութիւն, ապականութիւն և մահ: Այլ ոչ ասեմք մեք անգէտ գոլ զԱստուած՝[9] եթէ ոչ էր յառաջագէտ[10] զոր ինչ յանցեաւն Ադամ, քանզի նախագիտական է ամենայնի, եւ ոչ ասեմք, եթէ յԱստուծոյ յանցանսն պատշաճեալ, քանզի Աստուած ի չարեաց[11] անփորձ իմանամք. սակայն և[12] այժմ մեք ամենեքեան ի նոյն յօրէնսն[13] Ադամայ փակեալ կամք, քանզի հրաժարեցուցեալ եմք ի բազում հեշտութեանց օրինօք, և որ ժամանակաւ պահեացն[14], որպէս երբեմն Ադամ. և է ինչ, որ բնաւին յոչ հպելիսն և յոչ[15] մերձենալիսն. իսկ յորժամ անցանեմք զօրինօքն հակամիտելով ի մեղսն, ոչ եթէ անգէտ է Աստուած նախագիտական, այլ ոչ կամի զմեղանչելն[16]: Արդ ոչ կամել իմասցիս Աստուծոյ զյանցանսն Ադամայ և ոչ անգէտ յանցանաց նորա: Զայսոսիկ սակաւուք հատանել քեզ պարտ վարկանիմ, քանզի ի բազմաց այսոքիկ[17] նախ քան զմեզ իմաստասիրեցան[18]. և սիրելի է ինձ նորագոյնս ասել բանաստեղծութիւնս և ոչ յայլմէ[19] առասացութեանց[20] պատմել:

Իսկ յաղագս բարւոյն և չարին, եթէ յԱստուծո՞յ են երկոքեան եթէ բարին յԱստուծոյ է և չարն ի սատանայէ: Աստուած միշտ բարի է, բոլոր բարեաց բաղկացուցիչ, քանզի և յաշխարհարարողութեանն իմանամք զամենայն[21] բարի ստեղծեալ, և յանգումն բերեալ՝ տեսանէ զամենայն ի բարիս աւարտեալ. և զի չար ոչ գոյ է[22] և ոչ գոյացեալ և ոչ ի գոյէ, և զիա՞րդ ի սատանայէ ասեմք եղեալ, որ երբեմն արուսեակն էր. և նա ոչ ունի իշխանութիւն գոյացուցանել զոչգոյս: Դու այսոքիկ պարզաբար քեզ, վասն զի զչարն[23] այսպէս իմասցիս. ոչ է է և ոչ ամենայն ինչ չար,

---

1) B. և ի դրախտի. 2) B. արևելս. 3) B. ծաղկաւետեալ. 4) A. անապականագոյն. 5) A. վէհագոյնք. 6) A. հրաժարեցայց. 7) A. Աստուած զԱդամ. 8) B. և fehlt. 9) A. Աստուած. 10) A. յառաջանձգէ. 11) B. ի չարեացն. 12) A. և fehlt. 13) B. օրէնսն. 14) B. պահոցն. 15) A. ոչ. 16) A. ի մեղանչելն. 17) A. այսոքիկ fehlt. 18) A. իմաստներեցան. 19) A. յայմէ. 20) A. առասացութեանցն. 21) B. զամենայնն. 22) A. և զի չար ոչ գոյ է fehlt. 23) B. զչար.

քանզի որ ոչն է, ոչ եղիցի ամենևին ոչ էն, վասն զի[1]) ոչ է, քանզի բարին յէէ անտի է և է և էասցի[2]), իսկ չար ոչ յէէ և ոչ յէսս և ոչ էասցի[3]), բայց որոց հետևինն որպէս և վէմ բարձրաբերձ լեալ դղեակ յաղագս ամրապահեստ ի թշնամեացն մնալոյ. իսկ եթէ ոք զկամուրջ[4]) ոչ որոնէ, զանձն[5]) հեղձուցանէ[6]). այսպէս և սուսեր յաղագս խահարարաց կամ փայտահատաց կամ ի մորթս ձողաձևութեան յօգտակարութիւն[7]) պատշաճեալ է ի կենցաղումս, ապա եթէ ոք փոխանակ այսոցիկ ի կողս ընկերի իւրոյ կամ ինքեան իսկ ի մահ յեղափոխեսցի՝ զիմրդ. այսոքիկ են չարութեանցն բաղկացումն: Եւ այսոքիկ յաղագս բարւոյ և չարի ասացաւ:

Իսկ յաղագս արտաքին իմաստասիրացն եթէ[8]) զիմ՞ Աստուած խոստովանեցան եթէ վերրորդութիւն: Այնոցիկ ասացեալքն յոգնաբար սորասացեալք եղեն, քանզի ոչ միակրօնք և ոչ հանդիտապատումն միմեանց երբեք գտանին որպէս մարգարէականացն միեղինութիւնքն[9]): Եւ պիւթագորականքն[10]) աշակերտք Պիւթագորայ[11]), որ և Պիւթագորոս[12]) ուսեալ ի Փերեքդեայ[13]), այսպէս[14]) հաւանեցան ձօնել[15]). զքառեակն պատուեցին՝ ի քառեացս բնութեանց մեզ բաղկանալ, իսկ զքառեակն չորից տարերց գոյանալ[16]). իսկ զտարերսն[17]) պատուեցին ինքնեղ: Արդ այսոքիկ պիւթագորականքն[18]): Իսկ Հոմերոս[19]), յԵլլադայ և յԵգիպտոս պատուեալ, յԱրամազդայ ակնարկութենէն[20]) ասէ զՈլոմպոս[21]) տատանեալ, և զնա երկնի որդի որպէս զԿռոնոս[22]) հայր իւր. և[23]) պատուէ սա զեօթնեակն կոյս՝ զնա իբրև[24]) զԱթենայ: Եւ Արիստոտելէս[25]) պղատոնական[26]) ստագիրացին ճշմարտախոհ[27]) քան զայլսն եղեալ, ծանեաւ սուղ ինն՝ ոչ զտարերս պատուեալ, թէպէտ և ոչ բնաւին, քանզի և սա մեհենական պատիւս արարեալ, եւ որ ի սմանէ[28]) Աղէքսանդրոս որդի Նեքտանեբեայ[29]): Բայց Պղատոն[30]) փոքր ինչ իմաստասիրելով գերակատար գոյիցս ասել կամեցաւ զարարչականն էութիւն յասելն իւրում այսպէս թէ՞ Որ զամենայնս[31]) ածեալ անեղական և մակաւասար[32]) բնութիւն ի վերայ կալով ամենայնի, նախախնամէ զամենայնս տեսանելով և ինքն ոչ յումեքէ տեսանի, այլ անցեալ[33]) կայ սարաւանդեալ[34]) յիւրումն[35]) առանձին բարձրութեան և Հերմեաս[36]) մեծ շարժօղ զնա և տածօղ զիմանալի[37])

---

1) B. քանզի. 2) A. էսսցի. 3) A. յէասցի. 4) A. և զկարմունձ. 5) A. զանցն. 6) B. հեղցուցանէ. 7) A. յօգնութիւն. 8) A. ե, B. թէ. 9) A. եղենութիւնքն. 10) A. պիթագորականքն. 11) A. Պիթագորայ. 12) Պիթագորոս. 13) A. ի Փերէքդիայ. 14) A. որպէս. 15) A.B. ձունել. 16) A. մեզ գոյանալ. 17) B. զտարերս. 18) A. պիթագորականքն. 19) A.B. Յովմերոս. 20) A. ակնարկութիւնն. 21) B. զՈլոմպօս. 22) B. զԿռօնոս. 23) A. և fehlt. 24) B. իբրու. 25) B. զԱրիստոտելէս. 26) A. զպղատոնական. 27) A. ճշմարտախօս, B. ճշմարտախօհ. 28) B. ի սմանէն. 29) B. ՙՆեքտանեբեայ. Vgl. Մով. Խոր. Պատմ. Բ, 13 30) B. Պղատօն. 31) A. զամենայն. 32) A. մակաւոր. 33) A. անսացեալ. 34) A. պարաւանդեալ. 35) A. իւրեմն. 36) Hermes. 37) A. B. և իմանալի.

աշխարհ: Անտիսթենէս[1] զԱստուած ոչ ումեք[2] նմանել ասէ, վասն որոյ զնա ոչ ոք կարէ ուսանել ի պատկերէ կերպարանաց: Իսկ Աղէանթէս[3] պեգեսացի[4] արդար, իրաւակ, արժանաւոր և սուրբ իշխան անձին ունի զինքն, պիտանացու, գեղեցիկ, Հզօր, աներկիւղ, պատուական, անՀպարտ, խնամածու, Հեզ, ի յամենայնէ ամբիծ, միշտ նոյնպէս կայ մնայ: Եւ այսոքիկ Աղէանթեայ յաղագս[5] Աստուծոյ: Իսկ պիւթագորականքն[6] այսպէս ասեն. Աստուած մի է. և զսա[7] ոչ, որպէս ոմանք, կարծեն արտաքոյ[8] յարդարման զարդուս է. ի սմա բոլորի բոլորում շրջանակի, ակն ածէ, դէտ[9] ամենայն սերման ծննդեան, խառնումն բոլորից ունելով, գործօղ իւրոյ զօրութեանն և գործոց սկիզբն[10], շնչացութիւն բոլոր շրջանակիս և ամենեցուն շարժումն: Սիրովգոս[11] ասկրացի ասէ զԱստուած Թագաւոր և իշխան գոլ[12], վասն անմաՀիցն և քան զնա ոչ ոք է, այլ զօրութիւն Հաստատեալ և յարմարեալ: Իսկ Սոփոկլէս ասէ. Մի է Աստուած, որ զերկին կազմեաց և զերկիր արար[13] և զծովու զաՀագին ալի և զՀողմոց[14] բնութիւնս: Որփիս այսպէս ասէ. Մի է ինքնեղ, միոյ[15] ծնունդք ամենայնքս և եղեալք և կազմեալք, և ինքն շուրջ գնայ Թափանցանց[16]. ոչ ոք զնա տեսանէ ի մաՀկանացուացս[17], բայց ինքն զամենեսին տեսանէ: Սիբիլլայ[18] մարգարէուՀի այսպէս ասէ յաղագս Աստուծոյ. Սա ամենեցուն յայտնի է. մի է Աստուած, քանզի ածէ անձրևս, Հողմս շարժունս, ի վերայ առաքելով կայծակունս, երկնի իշխէ[19] և զերկիր ունի, ինքն է Աստուած յոյժ սքանչելի: Եւ Զոուփոս[20] բարեբար և անկարօտ: Եւ այսոքիկ բիւրք, սակայն ոչ Համաբարբառք. բայց սոքա ոչ միութիւն Աստուծոյ ծանեան և ոչ երրորդութիւն, սակայն զերրորդն թիւ պատուեցին[21], պատարուն զնա գտեալ, և ունելով սկիզբն, միջութիւն և կատարած, և առաջին թիւ, քանզի զմիակն պատուեցին[22] գիծ զնա անորակ և անմակերևութիւն ասացեալ, և զեռամասնեայ միեղինաբար յանգեալ միակ և երրեակ[23], եռանկիւն, ի բոլոր անկեանցն առաջին և բաղկացուցիչ, որպէս ի նմանէ յառաջ խաղացեալք բոլոր անկիւնաւորաց մեծ[24] արուեստին երկրաչափութեան: Եւ պատուեցին Պոիմիդէս[25] և այլքն յԱթենայ[26] երրեակ, նովաւ եղեալ և կեալ և լինել իբրու անցեալքն և յորում եմքս և Հանդերձեալքն:

---

1) B. Անդիսթենէս. 2) A. ումէք. 3) Langlois p. 35 Աղէանդէս. 4) B. պէգեսացի. 5) A. յաղաքս. 6) A. պիթագորականքն. 7) A. զայս. 8) A. յարտաքոյ. 9) A. դետ. 10) A. սկիսբն. 11) A. Սիովդոս (?). 12) A. գոլ ասէ. 13) A. B. երկար. 14) B. զՀողմոցն. 15) A. մի. 16) B. Թափանցաց. 17) A. ի մաՀկանացուածս. 18) Verbessert nach Langlois. — A.B. Սիբեւայ. 19) B. իշխան է. 20) B. Զոոփուս. Langlois p. 34 Զոոփոս. 21) B. պատմեցին. 22) A. պատուեցին durchstrichen. 23) A. երրակ. 24) A. մէծ. 25) A. B. Պոիմիթէս = Parmenides? 26) A. յԱղթէնայ.

Բայց զի՞նչ մեզ ի հեթանոսացն բերել վկայութիւնս[1]), քանզի կաթիլ ինձ[2]) աստուածային կաթեալ էր առ նոսա, այլ ոչ որք մարգարէական[3]) կամ[4]) առաքելական[5]). այլ որպէս կամիցիս դու վկայս կացուցանել արաբացւոցն[6]) ի հելլենացւոցն կամ ի մակեդոնացւոցն[7]) և յելլադացւոց[8]), պարսից և խուժադատանեաց[9]), զոր ոչ պարտ է, քանզի ոչ ի հեթանոսութեանն և ոչ ի լուսաւորութեանն գտան այսորիկ միաբանեալք։ Սակայն յայսմ վայրի կամեցայ արտայայտել ինչ, և եթէ բացցես[10]) զաչս սրտի քո և զառագաստ մտածութեան, քաջ գիտեմ, եթէ ամենայն ծածկեալք խորութեանց և գիտութեանց Աստուծոյ[11]) յայտնի քեզ լինին և մերկ և[12]) առանց սքօղելոյ երևեսցի քեզ, այլ ոչ մարմնական աչաց երևեսցի և ոչ ըմբռնեսցի անըմբռնելի[13]) և անմարմին մեր իմանալին[14]) յայտ, այլ հաւատով իմացեալ ճանաչի։

Բայց աղէ՛ տես զգուշութեամբ և մի՛ իբրու զայսոսիկ, որ անխորհրդազգեացք են, այլ զգուշութեամբ զիմանալիսն տրամադրեա՛[15]) տեսողական զետեղութեամբ, որպէս կարծեն կարծեցեալքն զմէնջ կամ զինչ ձեռնարկեն հարցանել յաղագս Երրորդութեան միեղութեան ամբոխեալ ի բազումս հեթանոսաբար և ցնդեալ կամ ընկեր առ ընկեր, զայս ոչ ի մէնջ լուան, կամ ծնունդ մարմնական Աստուծոյ կամ հատուցումն կամ անջատումն կամ զատումն կամ միջոց կամ նախադասութիւն կամ յղացումն կամ կերպարան կամ ձև կամ որակութիւն կամ երիցութիւն[16]) կամ որդիութիւն որպէս զմերս, թէպէտ և ասի, կամ հոգի ըստ մերում եղանակի, թէպէտ և[17]) անուանի, կամ հայրութիւն, որպէս ասի. և ոչ մի ինչ յայսցանէ զգայականօքս չափաբերութեամբ թեակոխելով իմացեալ, քանզի արտաքոյ այսմ ամենայնի իմանամք զաստուածայինն բնութիւն և գերագոյն քան զամենայն գոյացութիւնս գտեալ, անբաւ և անհասանելի, անժամանակ և անիմանալի, և ըստ մերում իմանալեացս ոչ իմացի, այլ հաւատովք ծանուցեալ ճանաչի մի աստուածութիւն և մի տէրութիւն և մի արքայութիւն և մի զօրութիւն և մի իշխանութիւն և մի բնութիւն և մի կամք և մի ներգործութիւն[18]), միեղինաբար յանդումն կենդանւոյն[19]) Աստուծոյ և Բանի[20]) նորա և Հոգւոյ իմացեալ ճանաչի, քանզի կենդանի է Տէր, կենդանի է[21]) և Բան նորա, կենդանի է և Հոգի նորա, էութիւն կատարեալ, Աստուած, այլ ո՛չ աստուածք, և ո՛չ տեարք, և ո՛չ հատեալք կամ որոշեալք կամ չափեալք ի վերայ Աստուծոյ իմացեալ տեսանի։

---

1) B. զվկայութիւնս. 2) A. ինձ և. 3) A. B. ի մարգարէական. 4) A. և. 5) A. յառաքելական. 6) A. յարաբացւոյն. 7) A. ի մակեդոնացւոց. 8) B. հելլադացւոց. 9) A. խուժադատանաց. 10) A. բացցէս. 11) A. յԱստուծոյ. 12) A. և fehlt. 13) A. անըմբռնելի fehlt, B. անմբռնելի. 14) A. իմանալի. 15) A. տրամադրեայ. 16) A. կամ երիցութիւն fehlt. 17) A. և fehlt. 18) A. ներգլործութիւն. 19) A. կենդանոյն. 20) B. Բանին. 21) A. կենդանի fehlt.

Օ՛ ի՞նչ որք ասիցէ շամբուշ մտածութեամբ յայսցանէ պաղքատութիւն աստուածութեանն տալով. մինչ անբա՛ն իցէ Աստուած. ապա եթէ անբան է որ խօսեցաւ ընդ Մովսէսի, զի՞արդ բարբառի անյայտնի։ Ահա Բան նորա առ Աստուած, քանզի Բանն Աստուծոյ Աստուած է. և եթէ առ Հրեշտակս բարբառի, ո՞չ ապաքէն Բանն Աստուծոյ. և արդ յայտնի եղեալ Բանն Աստուծոյ, զի Բան է, և Բանն՝ զի Աստուած է, և զի ի սկզբանէ էր, քանզի ոչ երբեմն էր. ապա եթէ [1] էր երբեմն որ ոչ ունէր Բան և ոչ էր Բանն, նա ուրեմն [2] յայնժամ անբան էր։ Ոչ [3] այսոքիկ ոչ Աստուծոյ վայելչաբար ասի՛ անբան [4] գոլ, մանաւանդ ընդ ժամանակաւ։ Այսոքիկ յաղագս Բանին Աստուծոյ։ Իսկ կենդանի զԱստուած իմացեալ ճանաչեմք և եթէ ո՛չ Հոգի՛ ո՛չ կենդանի, թէպէտ և [5] ոչ ըստ մերում հոգւոյս [6]։ Արդ Մովսէս զՀոգի Աստուծոյ ի վերայ ջուրցն գոլով ոչ անտեղի վարկաւ ասել. և Հոգւով Աստուծոյ Բեսելիէլ զխորանն կազմէր. Հոգի Աստուծոյ ի Սաւուղայ վերացաւ ասի և ի վերայ Դաւթի խաղացեալ Հոգւոյն Աստուծոյ. Հոգւովն Աստուծոյ Դաւիթ զամենայն զօրութիւնսն Աստուծոյ։ Նորա [7] աստանօր և զբանն Աստուծոյ միեղինաբար պատկանեալ շարամանեալ, յարմարական նուագեալ յասելն իւրում. «Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր» [8] և «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա» [9]։ Բայց ես ոչ այժմ յաճախեցից ի մարգարէիցն կացուցանել քեզ վկայս մինչև առասացութեան, որ գրեցեր ասել համակրօն զմարգարէից դասս Մահմետի [10]։ Բայց յայսմ վայրի սակաւուք ճառեցի զանճառելի նորա աստուածպետականութեան իմացուածս [11], եթէ ստուգապէս միութիւն եռանձնեան միեղինութեան անբաժին և անքակական, անանջատական։ Ոչ եթէ սքանչասցիս, յզգայականաց և յերևելեաց ցուցից քեզ, թէպէտ և ոչ ըստ իսկութեան. տեսանես զակն տունջեան, ունել նմա ջերմութիւն, ճառագայթ և լոյս. կարե՞ս բաժանել կամ ոչ խոստովանել զայսոսիկ ի նմա գոլ։ Կամ զխոնաւութիւն և զորակութիւն և զցրտութիւն ի ջուրս. բե՛ր և յայսոսիկ յարմարեալ ցուցից քեզ, ի բոլորս յայսցանէ յիմանալիս և ի զգալիս ոչ գոլ կենդանութիւն՝ եթէ ոչ յերիսս [12] յանգեալ յարդարիցի [13]. քանզի յիմանալիս երկնային զօրութիւնքն երիս երախանս և քահանայապետութիւնս առաջինս, միջինս և վերջինս, երիւք յերիսս, ինն դասուց երեքկին [14] սրբասացութիւն և մի տէրութիւն, անանջատ, անորիշ բնութիւնն եղանակելով աննղապէս վերաձայնեն։ [15] Բայց այժմ բաւական են այսոքիկ։

---

[1] B. ապ՚եթէ. [2] A. ունէր. [3] A. Ոչ ոչ. [4] A. անբան fehlt. [5] A. և fehlt. [6] A. հոգւոյս մերում. [7] A. Նորա. [8] Սաղ. ճժը. 64. [9] A. նորա. — Սաղ. լբ, 6. [10] A. Մահմէտի. [11] A. իմածուածս. [12] B. յերիցս. [13] B. յարդարեցի. [14] A. երեքին. [15] B. վերաձայնին.

Digitized by Google

Իսկ յաղագս որոց գրեալ էր քո[1]), եթէ քան[2]) և[3]) չորս մարգարէքն համաբարբառ են Մահմետայ[4]), այժմ սկիզբն արարից քեզ ի մարգարէից, եթէ ծանիցես. քանզի Իսրայէլ[5]) ոչ երբէք[6]) ծանեան զասացեալսն, որ յօրէնսն և ի մարգարէսն, վասն զի զոր օրինակ զքող[7]) արկեալ Մովսէս[8]) ծածկէր[9]) զերեսս իւր, որպէս ծածկեալ էր[10]) ի հրէիցն ամենայն խորհուրդ գիտութեանն Աստուծոյ յաղագս խստասրտութեան նոցա, որպէս գրէ Հոգին սուրբ «Գնացայ ընդ ազգին ընդ այնմիկ»[11]) և այլն որպէս[12]) զկնի սոցա[13]) հետևեին երգ: Արդ և դու մտադիւրութեամբ ընկալցիս, զի և ոչ ծածկեսցին[14]) ի քէն պատգամք[15]) կտակարանացն Աստուծոյ: Պարտ և պատշաճ է մեզ նախ ի Մովսիսէ սկսանել, յիսկզբանէ անտի արարչագործութեանն: Եւ զայն յաստուածուստ առ ո՞ ոք ասաց «Եկայք արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան»[16]): Գուցէ՞ առ հրեշտակս ասէ զայս, զոր և Մովսէս իսկ ոչ ճառէ վասն հրեշտակաց, և ոչ ունել նմանութիւնս և ոչ պատկեր նոցա և ոչ տեսանել իսկ բնաւ զԱստուած նոցա ապա եթէ[17]) առ մարդիկ զոր և ոչ[18]) երբէք էր ստեղծեալ և նախ քան զայս «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»: Եւ յայսմ գրի օրինաց գտցես և զայլս[19]) բազումս, և զի ասէ. «Որ[20]) հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն[21]) նորա, զի ի պատկերի Աստուծոյ[22]) արարի ես զմարդն»[23]). տե՛ս և զայս. զի՞մարդ ոչ ասէ ի պատկեր իմ արարի, այլ թէ ի պատկերի Աստուծոյ արարի. զայս ի Փիլոնէ[24]) ուսցիս, քանզի հրեայ էր և ոչ քրիստոնեայ, եթէ ո՞րպէս ասէ յաղագս Բանին Աստուծոյ: Եւ նախ քան զայս՝ ի սկզբանն իսկ ի լերինն ընդ Մովսէսի զի՞մարդ ասէ. «Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, Աստուած Յակոբայ»[25]) ի մորենւոյ[26]) անտի հրով և միգով, քանզի զեռաբարբառ[27]) Բանն և զՀոգին յայտնեալ. այլ միգով ծածկեաց ի նոցանէ, զոր մեզ հանդերձեալ էր յայտնել[28]) Քրիստոսիւ: Այս ծայրագոյն է Աստուծոյ. երբեմն զոր ծածկեաց Նոյի[29]), յայտնեաց Աբրահամու, և զոր յԱբրահամէ[30]), զի ոչ գոյր օրէնս, յայտնեաց Մովսէսի, և զոր ծածկեաց ի Մովսիսէ, յայտնեաց այլոց մարգարէիցն, և զոր ի մարգարէիցն՝ յայտնեաց Բանիւն Աստուծոյ Յիսուսիւ Քրիստոսիւ ամենեցուն: Քանզի և Մովսէս զհրեշտակաց ոչ ճառեաց, այլ Դաւիթ կարի յայտնապէս «Հոգիս և պաշտօնեայս»[31]): Արդ տեսցես զայս սակաւ սակաւ

---

1) B. քոյ. 2) A. B. ի քան. 3) B. ու. 4) B. Մահմէդայ. 5) A. Իսրայէլ fehlt. 6) A. երբէք fehlt. 7) A. զքօղ. 8) A. Մօսէս. 9) A. ծածկեր. 10) A. էր fehlt. 11) Սաղմ. ՂԴ, 10. 12) B. որպէս fehlt. 13) A. նոցա. 14) A. B. ծածկեսցի. 15) A. պատկամս. 16) Ծնն. Ա, 26. 17) B. ապ'եթէ. 18) A. ոչ fehlt. 19) B. զայլ. 20) A. ոչ. 21) A. զարիւն. 22) A. Աստուծոյ fehlt. 23) Ծնն. Թ, 6. 24) B. ի Փիլոնէ. 25) Ելք, Գ, 6. 15. 16. Դ, 5. 26) A. ի մորենոյ. 27) A. զերաբարբառ. 28) A. յայտնել fehlt. 29) B. Նոյիւ. 30) A. Աբրահամէ. 31) Սաղմ. ՃԴ, 4.

Digitized by Google

յիւրաքանչիւր մարգարէից բերեալ վկայութիւնս ըստ խոստման իմում և ըստ[1]) խնդրոյ քո[2]): Այլ նոյն իսկ Մովսէս պատուէր տայր ժողովրդեանն, լսել ճշմարիտ մարգարէին Բանին Աստուծոյ. և Յեսու զնոյն նմանութիւն բերելով փրկչին մերոյ՝ վկայեաց և տեսեալ զնա և հարցեալ զ՛ի մէնջն[3]) թէ ի թշնամեաց մերոց[4]): Իսկ Դաւիթ յառաջագոյն ծանեաւ զայսպիսի սքանչելագործութիւն տնօրէնութեանն Աստուծոյ՝ թէ իշխանութիւն հեթանոսաց խռովեսցին զարմացեալ և ժողովուրդք հրէից սքանչացեալ զնոտիս խորհեցան. սակս որոյ բարբառեցաւ. «Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան ի սնոտիս. յանդիման եղեն թագաւորք երկրի և իշխանք ժողովրդոց ժողովեցան ի միասին վասն Տեառն և վասն օծելոյ նորա»[5]): — Այլ Քրիստոս անուն օծեալ է: — «Այլ ես այսօր ծնեայ զքեզ»[6]): Այլ եթէ[7]) «Տաց քեզ իշխանութիւն ընդ ամենայն ծագս երկրի»[8]): Մի՞ արդեօ՞ք և Սողոմոնի[9]) ժառանգեաց զհեթանոսս[10]) և զաւազանաւ երկաթեաւ[11]) խորտակեաց զնոսա, զոր և ոչ երբէք թագաւորն հռոմոց ծառայեաց նմա: Որպէս[12]) և դարձեալ ասէ. «Երկիրպագցեն նմա ամենայն[13]) թագաւորք երկրի և ամենայն ազգ ծառայեսցեն նմա»[14]): Արդ ո՞ ոք ծառայեաց նմա ի հեթանոսաց թագաւորաց. հրէի՞ց թագաւորն, հռոմո՞ց եթէ փռանկա՞ց եթէ հայո՞ց եթէ գամրա՞ց կամ վրացւո՞ց. ահա ոչ ոք, այլ Յիսուսի երկրպագեցին[15]): Իսկ զնշանէ նորա ասէ. «Նշանեցաւ[16]) առ մեզ լոյս երեսաց քոց[17]) և ետուր ուրախութիւն սրտից մերոց»[18]): Իսկ զկնի այսորիկ. «Յառաջագոյն տեսանէի զՏէրն[19]) առաջի իմ յամենայն ժամ»[20]). և եթէ «Ոչ թողցէ զանձն իմ ի դժոխս»[21]). իսկ վասն այսորիկ[22]) «Ի ժողովուրդս[23]) խոստովան եղէց քեզ և անուան քում սաղմոս ասացից»[24]). և վասն նորա առաքելոցն, եթէ «Ընդ ամենայն երկիր[25]) ել բարբառ նոցա»[26]). և եթէ «Ուր ոչ են խօսեալ, անդ ոչ բան քո և ոչ խօսք»[27]). իսկ զչարչարանացն ի նոյնս յարեալ. «Բաժանեցին զհանդերձս իմ[28]) յիւրեանս և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին»[29]) և եթէ «Ետուն կերակուր ինձ լեղի[30]) և[31]) ի ծարաւ իմ արբուցին քացախ»[32]): Անէծ զհրէայսն յայսմ վայրի: Դարձեալ եթէ «Բղխեսցէ սիրտ իմ զբան բարի»[33]), այսինքն զԲան Աստուծոյ, որ ի Դաւթայ ծնանելոցն[34]) էր յազգէ Յուդայ, և՛ «Աթոռ քո, Աստուած,

---

1) B. ըստ fehlt. 2) B. զխնդրոյ քոյ. 3) A. զի մէնջ. 4) Vgl. Յեսու. ե, 13. 5) Սաղ. բ, 1. 6) A. զքեզ fehlt. 7) A. թէ. 8) Սաղմ. բ, 8. 9) A. Սօղոմոնի, B. Սողովմօն. 10) A. զհեթանոս. 11) A. և երկաթեաւ. 12) A. Որպէս fehlt. 13) A. ամենայն fehlt. 14) Սաղ. հա, 11. 15) A. երկրպագեցեն. 16) A. Նշանեաւ. 17) A. քոց fehlt. 18) Սաղ. դ, 7. 19) B. Տէրն. 20) Սաղ. ժե, 8. 21) Սաղ. ժե, 10. 22) B. այնորիկ. 23) A. ի ժողովուրդ. 24) Սաղ. ծզ, 10. 25) B. աշխարհ. 26) Սաղ. ժը, 5. 27) Vgl. Սաղ. ժը, 4. 28) A. իմ fehlt. 29) B. արկանէին վիճակս. — Սաղ. իա, 19. 30) A. զլեղի. 31) A. զի. 32) Սաղ. կը, 22. 33) Սաղ. խդ, 2. 34) B. ծնանելոց.

Digitized by Google

յաւիտեանս յաւիտենից, գաւազան զօրութեան, գաւազան[1] ուղղութեան»[2] և՝ «Ած[3] զսուր ընդ մէջ քո և[4] լարեա և[5] ուղղեա»[6], քանզի ոչ ոք ուղղաձիգ կարաց ի մարգարէիցն լինել[7]. և «Վասն այսորիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան[8] առաւել քան զըն-կերս[9] քո»[10]. տեսցես թէ ահա ոչ գոյր նորա ընկեր. և եթէ «Յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ»[11]. և «Ասաց Տէր ցՏէր իմ՝ նիստ ընդ աջմէ իմմէ»[12]. զոր և ինքն իսկ Տէր ասէ առ Հրէայսն, եթէ «Դաւիթ զիս Տէր կոչէ», «Դուք ասէք թէ հայր քո է»[13]: Արդ այսքիկ Դաւթայ[14] ասացեալք, և այլք բազումք յաղագս Բանին Աստուծոյ: Բայց աղէ՞, ե՛կ և[15] դու ընկալ ի լսելիս քո յուսով և հաւատոց քաջութեամբ յաղագս մարմնաւորութեան նորա զասացեալսն ի մարգարէիցն ըստ իւ-րաքանչիւր աւետարանութեան: Եւ արդ նախ սկսայց քեզ. Եսայիաս ասէ. «Ահա կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ»[16] այսինքն՝ ընդ մեզ Աստուած: Եւ այլք[17] բազումք[18] յԵսայեայ[19]: Իսկ Միքիաս ասէ. «Եւ դու Բեթղեհէմ[20] տունդ Եփրաթայ սակաւաւո՞ր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, իբէն ելցէ ինձ լինել իշխան[21] Իս-րայէլի. և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի»[22]: Եւ դարձեալ Եսայիայ[23] «Այլ նոքա կամէին, եթէ հրձիգ լեալ էին, զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն նորա ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի[24] խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած հզօր, իշխան, հայր հանդերձելոյ աշխարհին»[25]: Արդ ծանիր զասացեալսդ Եսայեայ որդւոյ Ամովսայ: Ո՞[26] որ է խորհրդակից Աստուծոյ կամ ո՞[27] որ է Աստուած կամ ո՞[28] որ է հզօր, եթէ ոչ յաղագս Էմմա-նուէլին ասացեալքդ[29]: Դարձեալ Եսայիայ[30]. «Բղխեսցէ[31] գաւազան յարմատոյն[32] Յեսսեայ[33] և ելցէ ծաղիկ յարմատոյ[34] անտի և հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ»[35], այսինքն մարմնաւորութեան նորա ի կուսէ: Եւ դարձեալ Եսայիաս[36] ասէ. «Զօրացարուք ձեռք[37] լքեալք և ծունկք[38] կթուցեալք, մխիթարեցարուք կարճամիտք սրտիւք, զօրա-ցարուք[39] և մի՛ երկնչիք. ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ դատաստան և հատուսցէ, ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ. յայնժամ աչք կուրաց

---

1) A. գաւազան քոյ. 2) Սաղ. խդ, 7. 3) A. Աստուած. 4) A. և fehlt. 5) B. և fehlt. 6) Սաղ. խդ, 4. 7) A. լինե. 8) B. ուրախութեամբ. 9) A.B. զնկերս. 10) Սաղ. խդ, 8. 11) Սաղ. ճթ, 3. 12) Սաղ. ճթ, 1. 13) Ղուկ. ի, 41—44. 14) B. Դաւթեայ. 15) B. և fehlt. 16) Ես. է, 14. 17) B. այլ. 18) A.B. բազում. 19) A. յԵսայիայ. 20) A. Բեդղէհէմ. 21) B. իշխան լինել. 22) Միքիա, ե, 1. 23) B. Եսայեայ. 24) A. մեզի. 25) Ես. թ, 5—6. 26) A. ո՞վ. 27) A. ո՞վ. 28) A. ո՞վ. 29) A. ասացեալսդ. 30) B. Եսայեայ. 31) A. Բխեսցէ. 32) A. արմատոյն. 33) A. Յեսեայ. 34) A. արմատոյ. 35) Ես. ժա, 1. 36) A. Եսայեայ. 37) A. ձերք. 38) A. ծունկ. 39) A. զօրացարուք fehlt.

Digitized by Google

բացցին և ականջք խլից լուիցեն․ յայնժամ վազեսցէ կաղն իբրև զեղջերու և պարզ լիցի լեզու ծանրախօսացն»[1])։ Նա ինքն եկն Աստուած և փրկեաց զմեզ։ Ահա ճշմարիտ է բանս[2]) մարգարէին, քանզի վազեաց կաղն իբրև զեղջերու[3]), անդամալոյծն, որ երեսուն և ութամեայ անկեալ դնէր[4]), կամ որ զցաւոցն[5]) կախեալ էր․ և ահա բացան աչք, ականջք[6]) խլից․ որ էարկ զմատունս յականջս և աղաղակեաց եփփաթայ․ և աչք կուրին բացան[7]), որոյ զկաւն արար և եդ ի վերայ[8]) և որդւոյ[9]) Բարտեմեայ։ Նա դարձեալ Եսայիայ[10])․ «Ահաւասիկ Աստուած մեր, ահաւասիկ Տէր, Տէր գայ զօրութեամբ և բազուկն տէրութեամբ․ ահաւասիկ վարձք իւր ընդ իւր և գործք առաջի նորա․ իբրև հովիւ մի իշխեսցէ զիշխանս իւր և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս և ի ծոց իւր կրեսցէ զնոսա և մխիթար լիցի յղեացն»[11])։ Արդ որ զայսոսիկ զամենայն արար, Աստուած զնա անուանէ Եսայի մարգարէ։ Իսկ Դանիէլի մարգարէի «Տեսանէի զվէմն առանց ձեռին հատեալ»[12])․ և դարձեալ հին աւուրց՝ «Որ գայր իբրև զորդի մարդոյ»[13])․ և զնի այսորիկ ասէ «Նմա[14]) նստել[15]) յաթոռ դատաւորութեան և նմա երկրպագել ամենայն երկնաւորաց և երկրաւորաց», որպէս[16]) Դաւիթ իսկ ասէ, եթէ «Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի և ամենայն ազինք ծառայեսցեն նմա»[17])։ Ո՞մ ոք ասէ մարգարէն երկիրպագանել եթէ ոչ Աստուծոյ, որպէս և գրէ յօրէնս, թէ «Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտեսցես»[18])։ Իսկ վասն աստուածութեան նորա դարձեալ վկայութիւնս և մարմնաւոր ծննդեան նորա ի Գաբրիէլէ հրեշտակապետէ ասացեալ առ Մարիամ․ «Ուրախ լեր բերկրեալ[19]), Տէր ընդ քեզ»[20]) և դարձեալ՝ «Որ ծնանելոցն է ի քէն սուրբ է և որդի բարձրելոյն[21]) կոչեսցի»[22])․ և դարձեալ առ Յովսէփ նոյն հրեշտակապետն․ «Մի՛ երկնչիր, քանզի որ ի նմա ծնանելոց է ի Հոգւոյն սրբոյ է»[23])։ Արդ՝ եթէ[24]) ոչ պատկառի հրեշտակապետն որդի Աստուծոյ անուանել[25]), զիա՞րդ պատկառեսցուք մեք ասել, որ և ինքն իսկ վկայէ ասելով․ «Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ, դարձեալ թողում[26]) զաշխարհ և երթամ[27]) առ Հայր»[28]) և եթէ «Ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել»[29]) և «Հայր, ի ձեռս քո[30]) յանձն առնեմ զհոգի»[31]) և եթէ «Հայր, պահեա[32]) զսոսա»[33]) և եթէ «Հայր, գիտեմ, զի յամենայն ժամ լսես ինձ»[34]) և եթէ «Որ ետես զիս,

1) Ես. լե, 3–6. 2) A. բանս մանս. 3) A. եղջերու. 4) A. դնել. 5) B. զցուոցն. 6) A. ականջք fehlt. 7) A. բաբացան. 8) A. եդեր, B. եդիր. 9) A. որդւոց. 10) B. Եսայեայ. 11) Ես. խ, 10—11. 12) Դան. բ, 34. 13) Դան. է. 13 14) A. նմա fehlt. 15) B. նստիլ. 16) A. որ. 17) Սաղ. հա. 11. 18) Մատթ. դ. 10. Ղուկ. դ. 8. Vgl. Երկ. օր. զ, 13. 19) A. բերկրեալ fehlt, B. բերկեալ. 20) Ղուկ. ա, 28. 21) B. բարձրելոյ. 22) Ղուկ. ա, 32. 23) Մատթ. ա, 20. 24) A. եթէ fehlt. 25) A. անուանեալ. 26) B. դողում. 27) A. երդամ. 28) Յովհ. ժզ, 28. 29) Ղուկ. բ. 49. 30) B. քոյ. 31) Ղուկ. իգ. 46. 32) A. պայեա. 33) Յովհ. ժէ, 11. 34) Յովհ. ժա, 41—42.

Digitized by Google

ետես զՀայր[1] իմ»[2] եւ եթէ «Որ ոչ հաւատայ յՈրդի, բարկութիւնն[3] Աստուծոյ կայ եւ մնայ ի վերայ նորա»[4] եւ եթէ «Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց»[5], յիմաստնոց այսինքն յիմաստասիրաց[6], ի գիտնոց այսինքն ի մարգարէից, «յայտնեցեր տղայոց» այսինքն առաքելոցն. եւ եթէ «Այո, Հայր, այսպէս հաճոյ եղեւ առաջի քո»[7] եւ եթէ «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ[8]» եւ եթէ «Ոչ ոք ճանաչէ Հայր, եթէ ոչ Որդի եւ ում Որդին[9] կամիցի յայտնել»[10]. եւ այս բարբառի երանաւէտական բանիւն ասելով. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ եւ ուսարուք, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց[11], զի լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ փոքրոգի[12]»: Արդ եթէ պարտ է լսել աւետարանական ձայնին, եկ ընկալ զքաղցր լուծն եւ հրաժարեաց ի յաղբից[13] հրապուրեցուցիչ եւ մի[14] հնազանդիր օրինացդ մոլորեցուցիչ, քանզի ասէ Բանն Աստուծոյ, եթէ «Հայր ոչ զոք դատի[15], այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ»[16]: Այսօրիկ հայրութիւնք բազումք ասացեալք ի Յիսուսէ եւ բազում, զոր ոչ եմք գրեալ: Ապա եթէ ասիցէ ոք ի ձէնջ, եթէ սուտ են գրեալքն աւետարանին եւ ոչ են Յիսուսի, ամբարիշտ բարբառի բերանն այն, քանզի զի՞նչ օգուտ էր մեզ այսքան ազանց իմաստնոց եւ գիտնոց հռովմայեցւոց[17], յունաց եւ վերիացւոց եւ աղուանից եւ այլ բազում ազգաց թիւրել զաւետարանն Աստուծոյ եւ երկիրպագել[18] մարդոյ իբր Աստուծոյ, մանաւանդ առաքելոցն[19] զի՞նչ օգուտ է քարոզել ճշմարտութիւն ստուգութեամբ[20] եւ ինքեանք մերկ եւ բոկք, քաղցեալ եւ ծարաւի շրջել. եւ[21] ի վախճանին խաչի գլխիվայր սուրբն[22] Պետրոս եւ համբուրէ զխաչն եւ ի խաչին զնոյն քարոզէ, այն[23] որ վէմն է[24] հաւատոյ հիման առաքելոց եւ մարգարէից: Եւ Անդրէաս խաչի, գիրկս արկեալ[25] զխաչիւն, համբուրէ եւ ասէ. Վաշ[26] քեզ, խաչ: Եւ Պօղոս գլխատի եւ զնոյն քարոզէ. «Ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[27]. եւ քարոզէ յայտնապէս թէ «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց. եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր»[28]:

---

1) A. Հայր. 2) Յովհ. ժդ, 9. 3) A. բարկութիւն. 4) Յովհ. գ, 36. 5) Մատթ. ժա, 25. Ղուկ. ժ, 21. 6) A. յիմաստնասիրաց. 7) B. քոյ Մատթ. ժա, 26. 8) Մատթ. ժա, 27. 9) B. որդին fehlt. 10) Մատթ. ժա. 27. 11) B. ձերոց fehlt. 12) Մատթ. ժա. 28—30. 13) B. ի հաղբից. 14) A. B. մի fehlt. 15) B. դատէ. 16) Յովհ. ե. 22. 17) A. հռոմէացւոց. 18) B. երկրպագել. 19) A. առաքելոյն. 20) B. ստուգութեան. 21) A. եւ fehlt. 22) B. որպէս սուրբն fehlt. 23) B. զայն. 24) A. է fehlt. 25) A. առեալ. 26) A. վաշ fehlt. 27) Գաղ. զ. 14. 28) Փիլիպ. բ. 10—11.

Digitized by Google

Իսկ Մարկոս յԵգիպտոս գլխատեալ լինի և ի մեռանելն իւրում քարոզէ զՈրդի բանն Աստուած։ Իսկ Յովհաննէս[1] ի բանտի ի Պատմոս կղզւոջ աւետարանէ. «Ի սկզբանէ[2] էր բանն և բանն էր առ Աստուած և Աստուած էր բանն»[3]։ Իսկ Թադէոս[4] զԱբգար բժշկէ և ինքն ի Սանատրկոյ մեռանի և ի մեռանելն իւրում քարոզէ զՔրիստոս Աստուած բանն։ Նոյնպէս և ամենայն առաքեալքն[5] երկոտասանքն[6] և եօթանասունքն և հինգ հարիւրքն[7], ոմանք գլխատեալք և ոմանք խաչեալք, և ոմանք չարչարեալք քարոզեցին զբանն Աստուած և ոչ ուրացան։ Իսկ Ստեփաննոս առաջին մարտիրոս քարկոծեալ աղաղակեաց ասելով. «Ահա տեսանեմ զերկինս բացեալ և զՈրդի նստեալ ընդ աջմէ Աստուծոյ»[8]։ Իսկ Յակոբ[9] արդարն կոչեցեալ, այն որ վկայեալն էր յամենայն Իսրայէլէ, այն որ ծունկք իւր իբրև զուղտու կաշեալք[10] էին և հերք խոռուացեալք և երես իւր այլագունեալ, սա[11] ի քարոզել զբանն Աստուած անկեալ յաշտարակէն ի վայր, կոփչօք զարկուցեալ մեռանի և զնոյն բարբառի։ Իսկ մերն Գրիգոր[12], զկնի այսմ բազում ամաց չարչարեալ անտանելի չարչարանօք, որպէս տեղեակ ես, և երեքտասանամեայ ի խորագոյն վիրապին կեցեալ, ոչ ուրացաւ, այլ զնոյն քարոզեաց զԲանն Աստուած, և զՀոգին սուրբ բղխումն[13] և լցուցիչ։ Իսկ նախ քան զայսոսիկ ամենայնքն Յովհաննէս[14] որդի Զաքարիայ քահանայապետի և մկրտիչ, այն որ ի վերն է[15] քան զամենայն ծնունդս կանանց, քանզի եօթնամեայ յանապատ[16] վարեցաւ ի հրեշտակէն և երեսուն ամ պահօք և կուսութեամբ ընկալեալ զՀոգին Աստուծոյ, զայս Յիսուս ասէ գառն Աստուծոյ ըստ մարմնոյ, իսկ ըստ աստուածութեան Որդի Աստուծոյ, բարձող մեղաց աշխարհի։ Արդ՝ այսոքիկ առաքեալքս[17] և աշակերտքս[18] թէ սուտ զաւետարանն Աստուծոյ գրեցին և փոխեցին զճշմարտութիւնն ընդ ստութեան, ընդէ՞ր մեռեալս[19] յարուցանէին, զիա՞րդ կուրաց տային տեսանել, զիա՞րդ զբորոտս սրբէին, զիա՞րդ[20] զթագաւորս խռովէին և զբիւրս զօրացն մոլեալս և դարձեալ բժշկէին, զիա՞րդ նշանքն լինէին, զիա՞րդ երկոտասան այր եբրայեցի ախմար ձկնորսք յունաց իմաստնոցն յաղթեցին և աթենացւոց հռետորացն և թագաւորացն առանց զինու և նետի. նոցա ոչ սուսեր, այլ բան Աստուծոյ և որ ի վեր է քան զամենայն սուր երկսայրի. նոքա բոկք, նոքա աղքատք[21], սակայն այսպէս բարբառին, որպէս Պօղոս, եթէ «Քակտեմք զամենայն միտս ի հնազանդութիւն հաւատոցն Քրիստոսի»[22]։ Արդ այն Յիսուս, զոր դուք մարգարէ ասէք և հոգւով

---

1) A. Յօհաննէս. 2) B. ի սկսբանէ. 3) Յովհ. ա, 1. 4) A. Թաթէոս. 5) A. առաքեալն. 6) A. երկոտասանք. 7) A. հարիւքն. 8) Գործք. է. 55. 9) A. Յակօբ. 10) A. կոշեալք. 11) A առ. 12) A. Գրիգորիոս. 13) A. բղումն. 14) A. Յօհաննէս. 15) A. էր. 16) A. ցանապատ. 17) B. առաքեալս. 18) B. աշակերտս. 19) A. մերեալս. 20) A. զի՛. 21) A. ախքատք. 22) Բ. Կորնթ. ժ, 5.

Digitized by Google

Աստուծոյ ծնեալ, ապա եթէ[1] փոխեցին առաքեալքն զաւետարանն[2] նորա և սուտ գրեցին, ուրեմն չէր մարգարէ, որ աշակերտօքն[3], որ սուտք[4] էին և ստութիւն քարոզէին և մարդապաշտութիւն[5] ուսուցին, այն ոչ մարգարէ է և ոչ տեսանող, քանզի ոչ ծանեաւ զճշմարտութիւն։ Քանզի թէպէտ և Հրէայքն[6] խոտորեցան յօրինացն Մովսէսի և ի պատուիրանացն Աստուծոյ, այլ զօրէնսն ոչ փոխեցին, այնպէս և զամենայն մարգարէից գիրս։ Թէպէտ և զիւրեանսն[7] սպանանէին, այլ զգրեալսն ճշմարտութեամբ պահէին Հրէայքն[8]։ Եւ այս ոչ ուրուք ի գրի կայ՝ փոխեալ զգիրս մարգարէիցն կամ զՄովսէսի։ Արդ՝ եթէ փոփոխեալ եմք, զի՞նչ դիւրութիւն ի կենցաղումս օրինադրեցին մեզ ի կերակուրս կամ յըմպելիս[9] թէ յամուսնութիւնս թէ յարիւնհեղութիւնս եթէ յագահութիւնս. կամ զի՞նչ[10] ինքեանք, որք[11] ուսուցին զմեզ, փառս ընկալան կամ հեշտութիւն. գուցէ ասիցեն՝ տխմարք կամ տգէտք լեալք[12]։ Եւ զիա՞րդ Ելլադայ և Աթէն[13] անգէտ և Արաբիա[14] ապառաժ ծանօթ։ Ադէ՞, ո՛ սիրելի։ Արդ յաղագս ծննդեան նորա, որ ըստ մարմնոյ, ասացաք. ասասցուք[15] յաղագս տնօրինական մատնութեան և չարչարանացն[16] ի մարգարէիցն նշանակեալ. Զաքարիայ՝ «Եւ ծանիցեն քանանացիքն[17] զխաշինս պահեստի իմոյ, զի բան Տեառն է. և ասացից ցնոսա, թէ բարւոք[18] թուի, տուք[19] զվարձս իմ, ապա թէ ոչ, զլոյց արարէք»[20] այսինքն մատնութիւնն Յուդայի, որ էառ երեսուն արծաթ։ Եւ դարձեալ Եսայիա[21] «Վա՜յ անձանց նոցա, զի խորհեցան խորհուրդ չար առանձին և ասեն՝ կապեսցուք զարդարն, զի դժպհի եղև մեզ. այսուհետև զարդիւնս ձեռաց իւրեանց կերիցեն»[22]։ Դարձեալ Եսայիաս՝[23] «Ես ոչ խստանամ և ոչ ընդդէմ դառնամ. զթիկունս իմ[24] ետու ի հարուածս և զծնօտս իմ յապտակս և զերեսս իմ ոչ դարձուցից յամօթոյ ընդ երեսս ի[25] թքանելոյ»[26]. Իսկ Դաւթայ՝[27] «Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան»[28]. և թէ՝ «Մատնեցին զնա ի տարապարտուց»[29]. և թէ՝ «Բան անօրէնութեան եդին ի վերայ իմ»[30]. և թէ՝ «Որ ուտէր[31] ընդ իս հաց, արար ինձ խաբէութիւն»[32]. և թէ՝ «Կակուղ էին բանք նոցա քան զձէթ և ինքեանք[33] որպէս սլաք»[34].

---

1) B. Ապ՚եթէ. 2) A. զաւետարան. 3) A. աշակերտեօքն, B. աշակերտիւքն. 4) A. սուտ. 5) B. մարդապաշութիւն. 6) A. Հրեայքն. 7) A. զիւրեանք. 8) A. Հրեայքն. 9) A. B. յմպելիս. 10) A. զզի՞նչ. 11) A. որ. 12) A. լեալ. 13) A. յԱթէնս. 14) A. Արաբիայ. 15) A. ասասցուք fehlt. 16) B. չարչարանաց. 17) A. քանանացիք. 18) B. բարիոք. 19) A. տուր. 20) Զաք. ժա, 11—12. 21) A. Եսայիայ. 22) Եսայ. գ, 9—10. A. B. զարիւնս. 23) A. Եսայեայ. 24) A. իմ fehlt. 25) A. ի fehlt. 26) Ես. ծ, 5—6. 27) B. Դաւթեայ. 28) A. տկարացան fehlt. — Սաղ. ձէ, 10. 29) Սաղ. ճը, 4 (?) 30) Սաղ. խ, 9. 31) A. ուտեր. 32) A. Խաբէութիւն. — Սաղ. խ, 10. 33) B. ինքեանք էին. 34) Սաղ. ծդ, 22.

Digitized by Google

և այլ ի բազմաց մարգարէից։ Իսկ վասն խաչելութեան Նորա յԱմբակումայ մարգարէէ. «Տէ՛ր, լուր քո լուայ և երկեայ. Տէ՛ր, Նայեցայ ի գործս քո[1] և զարհուրեցայ»[2]։ «Ի մէջ երկուց կենդանեաց ելեր ի կառս քո և հեծելութիւնդ քո ի փրկութիւն եղև»[3] և աղաչեաց թէ «Ի բարկութեան զողորմութիւն յիշեա»[4]. վասն որոյ[5] աղաղակեաց Յիսուս. «Հայր, թող սոցա»[6]։ Իսկ ի Միքիայ մարգարէէ[7] «Արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս»[8]։ Իսկ Զաքարիայ «Եկեսցէ տէր Աստուած մեր յաւուր[9] յայնմիկ և ամենայն սուրբք ընդ[10] Նմա»[11]։ Ի Մովսէսէ «Տեսանիցէք[12] զկեանս ձեր կախեալ զփայտէ»[13]։ Ի Զաքարիայ «Եղիցի օրն այն ցուրտ և պարզ. և օրն այն յայտնի Տեառն. ոչ տիւ և ոչ գիշեր եղիցի. և ընդ երեկս եղիցի լոյս, և յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յԵրուսաղէմ»[14] այսինքն աւազան, որ կանգնեցին առաքեալքն։ յԵրեմեայ «Լոյս[15] երեսաց մերոց տէր Քրիստոս»[16]. և եթէ «Ես որպէս գառն անմեղ վարեցայ ի սպանդ»[17] և եթէ «Եկայք արկցուք փայտ ի հաց Նորա»[18]։ Եւ ի Սողոմոնէ[19] «փայտ ամենեցուն ի Նա, և որ պատսպարին[20] իբրու ի տէր հաստատութեան»[21]. Իսկ ինքն իսկ Յիսուս «Որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, այնպէս բարձրանալ[22] պարտ է Որդւոյ»[23] և եթէ «Խաչիլ պարտ է Որդւոյ մարդոյ»[24], քանզի եղեալն երկրորդ Ադամ, յորմէ անկաւ ի ծառէն ստորանկեալ, եւ սա և արբեալ զդառնութեան ճաշակ, զգեցեալ զադամային մարմին[25] և եբարձ զանէծս և ինքեան միայնոյ է գիտել զտնօրինելն, այլ ոչ մեզ. միայն հաւատալ զոր ինչ ասացն և ակն ունել աւետեացն յուսով, որպէս Աբրահամ հաւատովք։ Բայց զոր գրէ Մահմէտն ձեր ի կուրանն բազում ինչ օտարոտի[26] զմարգարէիցն առասացութիւնս, զոր ոչ եմք գտեալ ի մարգարէսն[27] երբէք, Նաև ոչ ասացեալ իսկ Նոցա բնաւին. և եթէ ոչ հաւատաս մեզ, առեալ ի[28] հրէիցն, ընթերցցիս[29] և ոչ երբէք գտցես այնպէս, որպէս ասաց Մահմէտ, և ահա վկայութիւն թշնամեաց հաւատալի է, և ոչ զոր ի Մովսիսէ[30] և ի Դաւթայ և ի Սողոմոնէ ասացեալն եղև, և ո՛չ յայնցանէ, զոր առեալ է բան, ուղղախօսութեան գտցես և ոչ բան։ Եւ զկնի այնորիկ գրեաց բանիւ Յիսուսի, իբրու թէ

---

1) B. Նայեցայ ի գործս քո fehlt. 2) B. զարմացայ. — Ամբ. գ, 2. 3) Ամբ. գ, 8. 4) Ամբ. գ, 2. 5) A. վասն որոյ fehlt. 6) Ղուկ. իգ, 34. 7) A. Միքիայ մարգարէ. 8) A. լոյս. — Vgl. Մատ. իդ, 29. Մար. ժգ, 24. Ես. ժգ, 10. Յովէլ Բ, 10. 9) A. յաւոր. 10) A. ընդ fehlt. 11) A. ինձ Զաք. ժդ, 5. 12) A. տեսանէք. 13) Ելք. խա, 13. 14) Զաք. ժդ. 7—8. 15) A. von և յաւուր bis լոյս fehlt. 16) Ողբ. դ, 20. 17) Եր. ժա, 19. 18) Եր. ժա, 19. 19) A. և ի fehlt. Սաղոմոնէ. 20) A. պարսպարին. 21) Առակք. գ, 18. 22) A. բարձրացեալ. 23) Յովհ. գ, 14. 24) Ղուկ. իդ, 7. 25) B. մարմիր. 26) B. օտարօտի. 27) B. զմարգարէսն. 28) A. ի fehlt. 29) A. ընդերցցիս. 30) B. ի Մովսէսէ.

Digitized by Google

յաւետարանէ նորա է, և յերկիւղի եղեալ զգուշանայր, եթէ գուցէ, որ զկնի իմ գալոց են առեալ ընթերցցին[1]) զգիրս հրէից և քրիստոնէից, և ոչ գտեալ համեմատ բանից իմոց, ոչ ընկալցին զօրինադրութիւնս իմ և գտայց սուտ առաջի աչաց նոցա, գրէ այսպէս, եթէ Զգիրս Մովսէսի առեալ հրէիցն յեղափոխեցին. և որ այժմս է օր[2]) ոչ վարին[3]) հրէայքն, ոչ Մովսէսին և ոչ մարգարէիցն: Նոյնպէս և զքրիստոնէիցս գրէ այսպէս եթէ Զաւետարանն Քրիստոսի, զոր հրամայեաց ինքն, փոխեալ զկնի համբառնալոյն[4]) Քրիստոսի աշակերտացն և գրեցին այլ օտարոտի[5]), զորս ոչ երբէք է ասացեալ Քրիստոսի. և զոր այժմ ունին, այս ոչ է բան նորա: Եւ առ այս, եթէ կամիս, առակեալն ի[6]) գռեհիկս ի ճահ մեզ եղիցի բան. Տեառն ինքնին իսկ եկելոյ ոչ հաւատացին, ուրուք շարաբարձեալ ի վերայ կիսիշոյ: Բայց սքանչանամ ընդ այսոսիկ, եթէ ասիցեն ձեզ հրէայքն կամ քրիստոնեայքն՝ եթէ հարքն մեր փոփոխեալ են զգիրս Մովսէսի և մարգարէիցն և[7]) Քրիստոսի, մի՞թէ և ձերն զՄահմետին, և ասեն՝ թէ Մահմետ ոչ է գրեալ զայդ այդպէս[8]) որպէս այժմ դուք ունիք, զի՞նչ առ այնոսիկ պատասխանել կարող էք, քանզի ոչ էիք մօտ յայնմ[9]) ժամու և ոչ այժմ վկայս երկարակեացս ունել հնար էր և ոչ յերկնուստ երևումն լինել ումեք կարողութիւն է: Ապա եթէ խոստովանիք, եթէ այն իսկ է և յուրաստ[10]) կայք, եթէ ոչ եմք փոփոխեալք, զայս և նոքա այսպէս խոստովանին, եթէ այն իսկ է և հրաժարին[11]), եթէ ոչ եմք փոխեալ: Եւ համեմատ ի դատաստանին գտեալք[12]), երկոցունցդ կողմանց ճշմարիտ պէտս ունել: Եւ ահա վկայք ի դատաստանի հրէայք են քրիստոնէից, ոչ ինքեանք, այլ գիրս ովսէսի և[13]) բոլոր մարգարէիցն, որ թշնամիք իսկ էին յայտնապէս: Նաև վկայէ Մահմետն ձեր. բան և հոգի Աստուծոյ կոչէ զՅիսուս[14]), որում հետևիմք և լսեմք կենդանարար և լուսաւոր բանին Աստուծոյ, այն՝ «որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ», որք հաւատան ի նա այնմ Բանին, որ ընդ Հօր ծածկեալ էր, այնմ Բանի, որ ոչ իբրև զմերս հատանի կամ յօդ մակագրի լեզուաւ, Բանն Աստուծոյ, Աստուած, էութիւն և կարողութիւն, աջ և բազուկ և զօրութիւն, ըստ[15]) որում և ասէ. «Ես և Հայր իմ մի եմք»[16]): Եւ այժմ եկից յայս վայր, որ ի վեր է քան զամենայն զարմանս[17]). ասէք ի կուրանն ձեր, եթէ ասէ Մահմետ, եթէ յաւուր գալստեանն Աստուծոյ Հօր ասէ ցՅիսուս, եթէ դու ասացեր[18]) եթէ որդի եմ ես Աստուծոյ և Աստուած և հաւասար նորա. յայնժամ

---

1) A. ընթերցիր. 2) A. որպէս և այժմս է օր. 3) A. վայրին. 4) A. բամբառնալոյն. 5) B. օտարօտի. 6) A. ի fehlt. 7) A. և fehlt. 8) A. այսպէս. 9) A. այնմ. 10) A. ուրաստ. 11) B. հրաժարեն. 12) A. գտեալ. 13) A. և fehlt. 14) B. զՅիսուս կոչէ. 15) A. ընդ. 16) Յովհ. ժ, 30. 17) A. զարման. 18) B. ասացիր.

Digitized by Google

Հրաժարէ Յիսուս, եթէ մի՛, Տէր, քա՛ւ լիցի այդ և ո՞րք տացես զու ինձ, զի այդպէս քարոզէի ես; և ամենեքին յուրասա[1]) լինի ի քրիստոնէից: Եւ այս են բանք[2]) ձեր, զոր հանդերձեալ է[3]) Հայր տալ զՄիածին որդին իւր Յիսուս Քրիստոս: Եւ զիա՞րդ այս կամ որպէս: Ո՜հ մեծի ապշութեան և յամառութեան մանաւանդ եթէ անգիտութեան: Եթէ այդ այդպէս է, որ տայ Հայր զՅիսուս և Յիսուս զքրիստոնեայս[4]) պատասխանի տալով, քրիստոնէիցս[5]) թուի, թէ իրաւացի գոլով ի դատաստանին, անպարտականք գտանիցին և գերակատարք յանցն մեր. Տէր, ընթերցաք զգիրս Մովսէսի և բոլոր մարգարէիցն, գտաք զքեզ Մեսիայն, յառաջ քան զարուսեակ ծնեալ ընդ Հօր. Բանդ Աստուած, ի վերջին աւուրսն մարմնանալ յանձն առեր ի սրբոյ կուսէն աւետօք[6]) Հրեշտակապետին Գաբրիէլի, գտաք զՀրեշտակս սպասաւորս, զմոգսն ընծայաբերս առաջնորդութեամբ Հրեշտակապետին, որ զօրէն աստեղ նմանութեան ընթանայր առաջի նոցա, մինչ յԵգիպտոս շարժեցեր[7]) զձեռագործս և տապալեալ կործանեցեր. փակեալն[8]) քեզ բանայր դուռն տաճարին. ի գիրկս ընկալեալ ծերունւոյն[9]), խնդրէր ի կապողէդ զարձակումն ի կենացս և երթալ ի խաղաղութիւն. քեզ վկայէ ձայն բարբառոյն յանապատին Յովհաննէս և[10]) Հօր առաքման Հոգին սուրբ. զքեզ Հայր սիրելի որդի իւր անուանէ և հրամայէ քեզ լսել հաճութեամբ Հօր. բարձող բոլորից մեղաց զքեզ նշանակէ Յովհաննէս[11]): Դու Տէր՝ որ[12]) զդևս յետս զարկուցեր մինչև[13]) յանապատին, զքեզ, Տէր, Հրեշտակք[14]) մատեան և պաշտէին. Դու, Տէր, խաւարելոց լոյս շնորհեցեր և կաղաց գնացք, խլից լսել, անդամալուծաց առողջութիւն, հիւանդաց բժշկութիւն, գօսացելոց առողջութիւն[15]), դիւահարաց զգաստութիւն, մեռելոց յարութիւն. և զորս ոչ կարէ տանել աշխարհ, զանբաւելի բարերարութիւնն զիա՞րդ համառօտաբար կարասցուք սակաւուք յայտնել. քեզ դարձեալ ի լերինն Թաբօր[16]) Մովսէս[17]) և Եղիա վկայք ճշմարտութեանդ երևեալ, և Հայր յամպոյն վկայեալ՝ Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք: Տեսաք, Տէր, զբազում նշանս և զարուեստս աստուածապէս ի մեզ[18]) սքանչելագործեալ, մինչև Հրեշտակք սարսեալք, ծովու պակուցեալ, դևք կապեալք ի խոզս առաքեալք և խոստովանեալ լեգէոնի[19]) զքեզ որդի Աստուծոյ: Ի բանից քոց[20]), Տէր, դժոխք սարսեալք[21]), մեռեալք արտաքս ելեալք, հաց բազմացեալ, քաղցեալք յագեալ, ծառ

[1]) A. ուրասա. [2]) A. բանքն. [3]) A. B. են. [4]) A. զքրիստոնեայքս. [5]) A. զքրիստոնէիցս. [6]) A. աւէտեօք. [7]) A. շարժէր. [8]) A. փակեալ. B. բակեալն. [9]) A. ծերունոյն. [10]) A. դու և. [11]) A. Յօհաննէս. [12]) A. որ fehlt. [13]) B. մինչ. [14]) A. Հրեշտակ. [15]) A. von հիւանդաց bis դիւահարաց fehlt. [16]) A. Թափօր. [17]) A. Մօսէս. [18]) A. ի քեզ. [19]) A. լէգէոնի. [20]) A. B. քո. [21]) A. սարսեալ.

դստացեալ, կաւ ակն եղեալ տեսանէր. դու Տէր, որ մարմին զգեցար և ի չարչարանս եկեալ, առաջի ծառայի տեսաք զքեզ և ի խաչին բևեռեալ, ի ձայնէ գոչման քո զերկինս տեսաք ցնցեալ, զարեգակն և զլուսին[1]) խաւարեալ, զվարագոյր տաճարին հերձեալ, զվէմս պատառեալ. զմեռեալս յարուցեալ ի մէնջ, Տէր, հարիւրապետն տեսեալ վկայեաց: Յովսէփ յարեմաթացի[2]) պատեաց, ի գերեզմանի եդեալ զկենդանիդ Աստուած Բանդ. քահանայից մատնեաւ կնքեցար ի[3]) վիմի և զօրութեամբ աստուածութեանդ քո յարեար: Հրեշտակք ի վերայ վիմին[4]) նստելով[5]), ի ձայն փողոյ զյարութիւն քո աւետարանեցին մեզ: Յարուցեալ լոյս ծագեցեր[6]) աշխարհի, կատարելով զբոլոր ասացեալն ի մարգարէիցն վասն քո[7]): Աւթօրեայ[8]) գրոքն փակելովք մտեր առ աշակերտսն: Ձեռօքն Թովմայի[9]) շօշափեցար, ցուցեր և զնշան բևեռացն[10]). ընդ մեզ, Աստուած, շրջեցար, քառասնօրեայ ճաշակեալ ընդ մեզ, երևեցար յայտնապէս, հրամայեցեր[11]) մկրտել «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»[12]) ուսուցանել որ ինչ պատուիրեցեր մեզ. հարցաք ընդ քեզ «Տէր, ցոյց մեզ զՀայր»[13]), ստատեցեր այսպէս եթէ «Անմիտք էք»[14]) «Ես և Հայր իմ[15]) մի եմք»[16]) և «Որ տեսս զիս, տեսս զՀայր»[17]): Եւ զայն ցՓիլիպպոս[18]) ասացեր, Տէր. «Հայր ոչ զոք դատի, այլ զամենայն[19]) դատաստանս ետ Որդւոյ իւրոյ»[20]) և «Որ հաւատայն յՈրդի, հաւատայ ի Հայր»[21]) և «Որ ոչ հաւատայ յՈրդի բարկութիւնն Աստուծոյ կայ և մնայ ի վերայ նորա. և որ ոչ հաւատայ յՈրդի ոչ[22]) հաւատայ ի Հայր առաքիչն[23]) նորա»[24]) և «Ես ի Հայր և Հայր յիս»[25]) և «Ամենայն ինչ, որ Հօր է, այն իմ է և որ ինչ իմ է, այն Հօր է»[26]) և «Եթէ ոչ[27]) ընդունիք զբանն, զոր լսէք, Որդի մարդոյ յամօթ արասցէ զնա առաջի հրեշտակաց Աստուծոյ»[28]): Դու, Տէր, յաղօթելն քո[29]) առ Հայր քո ասէիր, եթէ «Չեմ յաշխարհէ աստի»[30]) և եթէ «Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ և դարձեալ թողում զաշխարհ և երթամ[31]) առ Հայր»[32]): Հրամայեցեր մեզ, եթէ «Որ ոչ ուտէ զմարմին իմ և[33]) ըմպէ զարիւն իմ, ոչ ունի կեանս յանձին իւրում»[34]) և եթէ «Որ յամօթ համարի զիս և զբանն իմ, յամօթ արարից զնա առաջի հրեշտակաց Աստուծոյ»[35]): Յորժամ հարցեր, Տէր, եթէ «Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն եթէ իցեմ»[36])

---

1) A. լուսին. 2) B. արմաթացի. 3) A.B. ի fehlt. 4) A. վիմի. 5) B. նստէին. 6) A. ծագեցար. 7) B. քոյ. 8) B. ութօրեա. 9) A. Թօմայի. 10) A. բևերացն. 11) A. հրամայերեր. 12) Մատ. իը, 19. 13) Յովհ. ժդ, 8. 14) Մատ. ժե, 16. 15) A. իմ fehlt. 16) Յովհ. ժ, 30. 17) Յովհ. ժդ, 9. 18) A. ցՓիլիպոս, B. ցՓիլիպպոս. 19) A. ամենայն. 20) Յովհ. ե, 22. 21) Յովհ. ե, 22. 22) A. Von բարկութիւնն bis ոչ fehlt. 23) B. առաքիչ. 24) Յովհ. գ, 36. 25) Յովհ. ժ, 38. 26) Յովհ. ժզ, 15. ժէ, 10. 27) A. ոչ fehlt. 28) Մար. ը, 38. 29) B. քոյ. 30) Յովհ. ը, 23. 31) A. երդամ. 32) Յովհ. ժզ, 28. 33) A. և fehlt. 34) Յովհ. զ, 53. 35) Մար. ը, 38. 36) Մատ. ժզ, 13.

Digitized by Google

և ասացին, եթէ «Ոմն[1]) զՅեղիայ կամ զԵրեմիայ կամ զմի ոք ի մարգարէիցն»[2]), ոչ ընկալար. իսկ յորժամ ասաց Պետրոս, եթէ[3]) «Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ»[4]), երանելի զնա կոչեցեր և ասացեր. «Մարմին և արիւն[5]) ոչ[6]) յայտնեաց քեզ, այլ Հայրն[7]) իմ որ յերկինս է»[8]): Եւ յորժամ յայտնեաց Հայրն իմ զայդոսիկ, ճշմարտութիւն խոստովանեալ[9]), ետուր նմա[10]) զփականս արքայութեան երկնից և իշխանութիւն կապել և արձակել յերկինս և յերկրի: Տէր, ասացեր[11]) «Ոչ ոք ել յերկինս, եթէ[12]) ոչ[13]), որ էջն յերկնից Որդին մարդոյ, որ էն յերկինս»[14]) և եթէ «Յառաջ էի քան զլինելն աշխարհի»[15]): Ասացեր, Տէր, ի ժամանակի մատնութեան քո[16]) «Մի՞ թէ ոչ եմ կարող հասուցանել ինձ այսր ի Հօրէ իմմէ աւելի քան զերկոտասան[17]) բիւրս հրեշտակաց»[18]): Դու, Տէր, ասացեր մեզ, թէ «Որ[19]) ուրանայ զիս առաջի մարդկան, ուրանամ զնա առաջի Հօր իմոյ, որ յերկինս է»[20]): Դու, Տէր, խաչեցար ըստ գրոց մարգարէիցն, զոր վասն գալստեան քո[21]) յայտնեցին մեզ և դու իսկ ասացեր, թէ «Պարտ է Որդւոյ մարդոյ ի խաչ ելանել»[22]), սակայն Մահմետ ասէ, եթէ ոչ[23]) էր[24]) ի խաչին, այլ զայլ ոմն ետ խաչել: Դու, Տէր, առեալ զբաժակն օրհնեցեր և արիւն քո անուանեցեր և և զհացն մարմին, իսկ Մահմետ ամենեւին ոչ տայ հպել կամ ըմպել, բայց և զկաթուածս ի վերայ զգեստոյն այնու ոչ տայ թոյլ աղօթել: Դու, Տէր, որ հրամայեցեր մեզ[25]) քարոզել «յանուն[26]) Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»[27]) և զայս ամենայն պատուիրեցեր, զոր վերագոյնդ ասացաք, այժմ հրաժարեմ, յուրմաստ լինիս ի բանէն[28]) քո, ճշմարիտ[29]) Աստուած, խուսափեմ ի Մահմետէ[30]):

Քաջ գիտեմ, ով ամիրայ, եթէ ոչ գտանես յայնժամ[31]), զոր յուսացեալն ես, եթէ[32]) ո՛չ յայսոսիկ լսես դու և ո՛չ բոլոր յուսացեալքն ի նա, քանզի դարձցին[33]) հեթանոսք անդրէն ի դժոխս, որք մոռացան զԱստուած: Բայց պարտ է առաքելոցն սրբոց դարձեալ ասել[34]) ցՅիսուս այսպէս[35]). Տէր, քոյին աստուածեղէն բարբառովդ լոյս աշխարհի զմեզ[36]) անուանեցեր և աղ անհամութեան[37]) մարդկան և ասացեր այսպէս, եթէ

---

1) A. զոմն. 2) A. զմարգարէիցն. — Մատ. ժզ, 14. 3) A. թէ. 4) Մատ. ժզ, 16. 5) A. արիւն քո. 6) A. ոչ fehlt. 7) B. Հայր. 8) Մատ. ժզ. 18. 9) B. խոստովանել. 10) A. նմա և. 11) A. ասացեր fehlt. 12) A.B. և. 13) A. ոչ fehlt. 14) Յովհ. գ, 13. 15) Յովհ. ժէ, 5. 16) B. քոյ. 17) B. երկոտասան. 18) Մատ. իզ, 53. 19) B. որ fehlt. 20) Մատ. ժ, 33. Ղուկ. ժբ, 9. 21) B. քոյ. 22) Ղուկ. իդ, 7. 23) A. ոչ fehlt. 24) A. որ. 25) A. մեզ fehlt. 26) A. յանու. 27) Մատ. իը, 19. 28) A. ի բաժակէն. 29) A. Ճշմարիտ. 30) B. ի մահմետէ. 31) A. եթէ յայժամ. B. եթէ յայնժամ. 32) A.B. և. 33) B. դարձցեն. 34) A. ասել fehlt. 35) A. այսպէս fehlt. 36) A. զմեզ fehlt. 37) A. անմահութեան.

Digitized by Google

«Որք ոչ ընդունին զքեզ և զբանն քո, դիւրագոյն լիցի[1]) երկրին Սոդոմացւոց[2]) և Գոմորացւոյ, քան քաղաքին այնմիկ»[3]). Հրամայեցեր մեզ նստել յերկոտասան աթոռսն դատել զերկոտասան[4]) ազգն Իսրայէլի, և այժմ Մահմէտ զմեզ գողս անուանէ[5]) և այլ չար ևս, եթէ զաւետարանն Քրիստոսի փոփոխեցին և տարատիս[6]) գրեցին. Դու, Տէր, Հրամայեցեր «Օրէնք և մարգարէք մինչև ցՅովհաննէս[7]) և յայնմհետէ[8]) արքայութիւնն Աստուծոյ քարոզի»[9]), և մեք քարոզեցաք[10]) զարքայդ ճշմարիտ եկեալ յաշխարհ և ծանեաք զճշմարիտ աստուածութիւն քո[11]) և կատարեցաւ առ[12]) մեզ ասացեալքն ի քէն, Տէր, առաքեալ իբրև զոչխարս ի մէջ գայլոց, սպանանել զմեզ և համարել պաշտօն մատուցանել Աստուծոյ. գայլս գտաք, այլ մարգարէ ոչ երբէք, գողս տեսաք, այլ ճշմարտութիւն ոչ ամենևին: Եւ այսոքիկ առաքելոցն առասութիւնք: Իսկ քրիստոնէից բոլոր արտօսր, հալածանս, յափշտակութիւն, տնանկութիւն, գերութիւն, աւերումն, անխնայ խողխողումն[13]): Այսոքիկ առ Տէր: Իսկ մարգարէիցն աղաղակ հանդերձ քննութեամբ այսպէս. ընդէ՞ր ի մէնջ անուանեցեր զքեզ, զո՞ր հոգի արդեօ՞ք ընկալար, զի՞արդ ճշմարիտ բանս մեր[14]) առեցեր, յորմէ՞ ընկալեալ. ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտնեցար զգալուստ Որդւոյն Աստուծոյ և զամենայն տնօրէնութիւն նորա ճշմարտութեամբ. զի՞արդ խափանեցեր և քակտիչ եղեր ճշմարիտ օրինացն և լուսաւորութեան բանին Աստուծոյ, զյիշատակ մեր խափանեցեր ի վերայ շիրմանց[15]) մերոց, զեկեղեցիս հրձիգ արարեր, զտաւս[16]) մեր առեցեր, մարգարէութիւն մեր այլանդակ ուսուցեր, հակառակ Մովսէսի և Քրիստոսի գտար, զշաբաթս խափանեցեր և զկիւրակէս[17]) ոչ պատուեցեր[18]), զքահանայութիւն[19]) բարձեր և ամենևին անպտղոյն եղեր. զի՞նչ նշանս արդեօք արարեր կամ զո՞ր նախասացութիւն ցուցեր. եթէ ի սուսեր պարծիս[20]), ոչ հանգոյնս[21]) Աղեքսանդրի գտցես կամ Արտաշէսի, և եթէ ի հաւանելոցդ[22]) քեզ բազմութեանց ոչ առաւել քան Զրադաշտին մոգի, որ առաւել քան զերկուհազար ամ բոլորեալ[23]), Մարաց և Պարթևաց և ամենայն Պարսից օրինադրեաց պաշտել զհուր, որ հզօրագոյնքն այն թագաւորքն պարսից հաւանեցան, հնազանդեալք օրինացն, և մինչև ցայսօր հասին վկայք ստութեան իւրեանց: Եւ այս մարգարէիցն բանք առ Մահմէտ: Իսկ իմաստասիրացն հոյլք եթէ պարտ է ասել հարցանել[24]) յաղագս[25]) գերութեանն,

---

[1]) B. լիցին. [2]) A. սոդոմայեցւոց. [3]) Մատ. Ժ, 15. [4]) A. զերկոտանասան. [5]) A. ասէ. [6]) B. տարօտիս. [7]) A. ցՅովհաննէս. [8]) A. այնմհետէ. [9]) Ղուկ. ԺԶ, 16. [10]) A. քարոզեցայք. [11]) B. քոյ. [12]) A. առ fehlt. [13]) A. խոխողումն. [14]) A. մեր fehlt. [15]) A. շիրմաց. [16]) A. զտարս. [17]) A. զկիրակէս, B. կիւրակէս. [18]) A. պատուիրեցեր. [19]) A. քահանայութիւն. [20]) A.B. պարզիս. [21]) A. հայնգոյնս. [22]) A. ի հաւանելոյդ. [23]) A. բոլորեալ fehlt. [24]) A. անցանել. [25]) A. յաղաքս.

Digitized by Google

սպանման, յափշտակութեան, հրասուզման, և զայն բանիւն Աստուծոյ և երախտիս նմա և պատարագ, և քաջ գիտեմ, եթէ[1]) այսմ հոպտանաց[2]) ոչ հաւանին նոքա. որք ի նոցունց ուսանիք ոչ միսս երբէք ուտէին յասելն իւրեանց, եթէ մեք զորովայնս մեր գերեզմանս ոսկերաց ոչ պարտ վարկանիմք առնել և զիւրեանս ի մահ մատնեալ, ոչ խուսափէին[3]) զանգիտեալ[4]), որպէս Սոկրատէս և ի նոցունց իսկ ճեմարանականացն[5]) աղօթէին փորձութիւնս կրել և զբարկացեալն կամ զպատմեալն ոչ ընդունէին ի[6]) ժողովս իւրեանց, ոչ եթէ զարիւնահեղսն կամ զմարդասպանսն և զյափշտակօղսն: Այլ այսոքիկ հեթանոսացն ժողովք: Այլ ի գալստեանն այսոքիկ հրէայք և հեթանոսք, քրիստոնեայք և տաճիկք: Բայց ի խոստմանն իւրում Մահմետ թուի թէ սուտ և յուսացեալքն ակնունելով յայնմանէ:

Այժմ աճապարեցէք, մինչդեռ այսօր առաջի կայ. քանզի զկինն բազմամօթեայ թուի թէ ոչ գտանէք, քանզի անդ ոչ արք ոչ կանայս առնեն և ոչ կանայք արանց լինին, և գետն գինւոյ յոեալ դադարեալ լինի. և զոր սաստէն[7]) անպատուեաց[8]) և խոտեաց, անդ ընդէ՞ր պատուեաց: Այլ գետս հրեղէն, զոր ձիով ի ներքս վազեալ արտաքս՛ բերէ զձեզ, աղաչեմ, զի մի՛ մտցես ի գետ անդր[9]), զոր յաւհեկումն լինին եթէ ոչ մի՛ հաւանիր, հանեալ[10]) զքեզ ձիովն իւրով[11]) ի ձորն[12]) հաւանին հաստել: Այդ, որպէս յառաջագոյն ասացաք, մի՛ խստացուցանէր[13]) զսիրտ քո, որպէս հարքն քո յանապատին, և բացցես զաչս սրտի մտաց քոց[14]), և հաւանեա հնազանդել բանին Աստուծոյ, որ է լոյս փառաց Հօր և նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ զօրութեամբ իւրով, սրբութիւն մեղաց մերոց արարեալ նստաւ ընդ աջմէ մեծութեան Աստուծոյ. և որ իւրով իսկ արեամբն եմուտ ի սրբութիւն սրբութեանցն առ ի քաւելոյ զմեղս այնմ, որ ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զինքն լինել հաւասար Աստուծոյ, և զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի առեալ, հնազանդ եղև մահու չափ և մահու խաչի, այն որ լոյսն է աշխարհի, ըստ որում ասէ ինքն «լոյս եկի յաշխարհ, զի որք ոչն տեսանեն տեսցեն և որք տեսանենն[15]) կուրասցին»[16]). Այլ դարձեալ եթէ[17]) «Գոհանամ զքէն, Հայր, զի լուար ինձ»[18]), և զայս յաղագս[19]) մեր աղօթականս, զոր պտղաբերեաց ի մեզ և որք ի խաւարի նստէաք լոյս ծագեաց, և քեզ, եթէ[20]) կամեսցիս[21]), ծագեսցէ[22]) զլոյս ողորմութեան իւրոյ, այն որ առատն է և զուարթ առ ամենեսեան[23]) և

[1]) A. եթէ fehlt. [2]) A. հպարտանաց. [3]) A. խուսափին. [4]) A. զանգիտանալ. [5]) A. ճեմականացն. [6]) A. և. [7]) A. սաստ. [8]) A. անպատուութեաց. [9]) A. անդր fehlt. [10]) A. B. հանել. [11]) B. իւրովք. [12]) A. B. ի ձարն. [13]) խստացուցանէր. [14]) A. մտաց սրտի քոց. [15]) A. տեսանեն. [16]) Յովհ. թ, 39. [17]) A. եթէ fehlt. [18]) Յովհ. ժա, 41. [19]) A. յաղագս. [20]) A. եթէ fehlt. [21]) B. կամիցիս. [22]) A. ծագեսէ. [23]) A. մամենեսեան.

Digitized by Google

կոչէ ի ծագաց երկնից յիւր արքայութիւնն և ծագեսցէ զարեգակն իւր բոլորից: Արդ այնմ բարի բախտին արժանացեալ եմ և վիճակեալ ընդ Յովաննաւ թևուց նորա և ամրացեալ ընդ ամրածածուկ աջով նորա և արժանացեալ երից[1] *երանեան կոչմանն և*[2] *եռանձնեան*[3] *աստուածպետականին քրիստոնեայ անուան: Ըղձամ և փափագեմ*[4] *այսմ երանութեան և բախտի քեզ հասանել և ընդ մեզ*[5] *փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնն և զմի աստուածութիւն յաւիտեանս. ամէն:*

---

[1] A. *երից*. [2] A. *և* fehlt. [3] A. *եռանձնեանն*. [4] A. *փափաքեմ*. [5] A. *մեզ* fehlt.

München.

Digitized by Google

Armen. գուշակ *gušak*.

Von

H. Hübschmann.

In dem aramäisch geschriebenen Bericht eines persischen Unterbeamten aus der Zeit Darius II. (423—404 v. Chr.) finden sich einige persische Wörter und Namen, die Euting in seiner Abhandlung über diesen Bericht[1]) bereits richtig erkannt und erklärt hat. Da dieselben auch für den Armenisten von Interesse sind, so sei es gestattet, sie hier in Kürze zu besprechen. Es sind folgende:

1) Der Name Darius in den Worten aram. *bšnt* XIV *dryuhuš mlka* ‚im Jahre 14 des Königs Darius'. Es kann hier ebensogut *Dārayavahauš* = *Dārayavahōš* wie *Dārayavahuš* gelesen werden, da die volle Schreibung *hu* für *hŭ* (statt *hō*, *hū*) auch in *duškrtā* (s. unten) wiederkehrt. Im ersteren Falle läge der altpers. Gen. *Dārayavahauš* vor, und es erklärte sich, warum der Name ohne das aramäische Genitivzeichen (*zī* oder *l*) steht, das Euting p. 7 hier vermisst; im andern Falle ist *Dārayavahuš* der altpers. Nominativ, der zwar in der Keilschrift *Dārayavauš* geschrieben, aber doch wohl *Dārayavahuš* (mit *h*) gesprochen wurde, s. Bartholomae Vorgeschichte p. 160. Da schon der unmittelbare Nachfolger Darius II, Artaxerxes Mnemon (404—358) in seiner Inschrift den alten Genitiv *Dārayavahauš* durch die Analogiebildung *Dārayavaušahyā* ersetzt hat und diese auch statt des Nominativs *Dārayavauš* und neben demselben gebraucht, so ist anzunehmen, dass unter Darius II. der alte Genitiv bereits ausser Gebrauch war, und dass demnach in unserm Berichte *Dārayavahuš* zu lesen ist. Es ist zu beachten, dass das *h* der altpers. Form, von den Keilinschriften abgesehen, nur hier und in arm. *Dareh* (s. meine Armen. Gram. p. 36) erhalten ist.

---

[1]) Notice sur un papyrus égypto-araméen de la bibliothèque impériale de Strasbourg par M. J. Euting. Extrait des mémoires présentés par divers savants à l'académie des inscriptions et belles-lettres Ire série, Tome XI, IIe partie. Paris 1903.

Digitized by Google

Letzteres scheint für phl. **Dārēh* zu stehen und über **Dārēvah* auf *Dārayavah-uš* zurückzugehen.

2) Der Name Aršam in den Worten aram. *mran aršm* ‚unser Herr Aršam‘ = altpers. *Aršāma*. Über arm. *Aršam* bei Moses Chor. p. 97 flg. = Sebeos 10, das aus syr. *Ukkāmā* entstellt ist, s. Justi Namenbuch p. 29, meine Armen. Gram. p. 288. Im Armenischen findet sich Aršam wieder im Namen der Stadt *Arsamosata* ‚Aršams-Freude‘ (Armen. Gram. p. 211) und des Kantones *Aršamunik‘* der Provinz Turuberan.

3) *duškert* in *mlka znh duškrta* ‚regem hunc maleficum‘, vgl. skr. *duškrt* ‘Übelthäter‘, *duškrtam* ‚Übelthat‘, awest. *duškərəta* vd. 21, 6? Ein armen. **džkert* ist nicht erhalten.

4) *prtdk* in A 4 ist *prvrdk* (ר statt ת) zu lesen und nach Nöldekes und meinen Bemerkungen ZDMG 46, 139 und 326, Armen. Gram. p. 184 = phl. *fravartak* ‚Brief, Schreiben‘, arm. *hrovartak* ‚königliches Schreiben, Brief, Erlass, Besitztitel‘, georg. (aus dem Armen. entlehnt) *roartagi* ‚königliches Handschreiben‘ Tchoubinof p. 413. Die altpersische Grundform war **fravartaka-* und gehört zu skr. *vart* ‚sich drehen, rollen, verlaufen‘, *vrttá-* ‚gedreht, rund‘, phl. *vartišn* ‚Drehung‘, np. *gardam* ‚drehe mich‘, *navardam* (*nivardam*) ‚rolle zusammen‘ sc. den Brief, den Teppich etc. (v. Stackelberg WZKM XVII, 55) u. s. w., bedeutet also ursprünglich wohl ‚die Rolle‘. Vgl. skr. *pravarta-* ‚ein runder Schmuckgegenstand, Ohrring‘, *pravartaka-* ‚verfahrend, bewirkend‘ mit anders entwickelter Bedeutung.

5) *azd yt‘bd* ‚certius factum est‘ B 3—4 = phl. *azd mat* ‚er wurde benachrichtigt‘, arm. *azd elev* ‚es ward gemeldet‘, *azd arnem* ‚melde‘, denom. *azd-em* ‚benachrichtige‘ Armen. Gram. p. 92.

6) *hndiz* ‚circumdati‘? B 2 = altpers. **handaiza-*?

7) *guškia* in: *dinia* = *dayyānayyē* ‚Richter‘, *tiftia* = *tiftāyē* Daniel 2, 3? und *guškia* = *gōšakāyē*, plur. eines altpers. **gaušaka-*, das Euting zu altpers. *gauša-* ‚Ohr‘ stellt und richtig durch ‚écouteur‘ = ὠτακουστής ‚Horcher, Lauscher, Späher, geheimer Polizist‘ übersetzt. Das hier für das Ende des 5. Jhd. v. Chr. bezeugte altpersische *gōšak*(*a*)- ging als *gōšak* ins Pehlevi über und wurde von den Armeniern als **gōšak* entlehnt, das im Altarmenischen lautgesetzlich zu *gušak* werden musste. Dies ist vorhanden und bedeutet ‚einer, der etwas anzeigt‘ 1. Korinther 10, 28 u. s. w. Das davon abgeleitete *gušakem* (1 sg. pr.) bedeutet ‚anzeigen, Anzeige erstatten, kund thun, verkünden, vorher verkünden, voraussagen‘ Lucas 20, 37, Joh. 11, 56 u. s. w. Es gehört zu aw. *gūš* ‚hören auf-, vernehmen‘, ipt. *gūšahvā* ‚vernimm‘, bal. *gōšaγ* ‚hören‘, *niγōšaγ* ‚hören, horchen, lauschen‘, arm. *zgoiš linim* ‚gebe acht auf, bin vor-

Digitized by Google

sichtig' u. s. w. Von dieser Verbalwurzel idg. **gheus* war das altpers. **gaušaka-* mittelst des Suffixes *a-ka* abgeleitet und bedeutet ursprünglich: ‚Horcher'.

Nach der Form *azd*, die auf den Inschriften des Königs Darius I. bekanntlich *azdā* ‚Kunde, Nachricht' lautet, zu urteilen, war um das Jahr 400 v. Chr. das auslautende *ā* und natürlich auch *ă* des Altpersischen bereits abgefallen, während auslautendes *-uš* (*Dārayavahuš*) und danach auch *-iš* noch erhalten war. Armenische Lehnworte der Art wie *gušak* brauchen daher aus grammatischen Gründen nicht erst der arsacidischen Zeit zugeschrieben zu werden, sondern können noch bis in die letzte Achämenidenzeit zurückgehen.

Strassburg.

Digitized by Google

ՓԱՒՍՏՈՍԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ.

Գալուստ Տէր-Մկրտչեան.

I.

I, 1730 Թուին: Փաւստոսի առաջին հրատարակութիւնը կատարուել է Հայոց ՌՃՀԹ թուին, դեկտեմբերի 1-ին = 1730 փրկչ.: Տպագրութեան տեղը չէ նշանակուած այս հրատարակութեան մէջ, բայց տպարանի կամ «գործարանի» աշխատողների, հրատարակութեան ծախսը տանողների անուններից և այլ նման հանգամանքներից հետևում է, որ այս հրատարակութիւնն եղել է Կ. Պոլսում: Միայն մի ձեռագրի վրայից է եղել այս հրատարակութիւնը, ինչպէս որ կարելի է եզրակացնել յիշատակարանի հետևեալ տողերից. «. . . եւ վերջապէս յիշեցէք և զտպագրողս սորա Մարտիրոս զանիմաստ ծառայս ձեր. և զօրինակն իմ զՍերովբէն, զի միով և եթ օրինակաւ հազիւ գաղափարեցի տառապանօք (էջ 396): Այս ձեռագրի մասին ուրիշ տեղեկութիւն չունինք: Այս առաջին հրատարակութեան մասին սխալ տեղեկութիւններ ունին Տաշեան Ցուցակ էջ 1160, որ դնում է 1830, հարկաւ յոկ տպագրական վրիպակ, որ պիտի լինի 1730, և Զարբհանալեան Հին Դպր. (1886, էջ 236) որ դնում է Փաւստոսի երեք հրատարակութեանց թուականները այսպէս «1721-ին (ի Կոստանդնուպոլիս), ի Վենետիկ 1831-ին . . ի Ս. Պետերբուրգ 1883-ին»: Առաջին երկու թուականները պիտի լինին 1730 (փոխանակ 1721-ի) և 1832 (փոխանակ 1831-ի): Տարօրինակ է, որ նոյն այդ սխալ թուականները կրկնւում են Զարբ-ի Հին Դպր. երրորդ հրատարակութեան մէջ (1897-ին, էջ 255), մինչդեռ նոյն հեղինակը իւր Հայկ. Մատենագիտութեան մէջ (էջ 117 և 557) ունի ուղիղ թուականները: Այս վրիպակ թուականների վրայ կանգ առնելս միայն այն նպատակով է, որ հաւաստանանք թէ 1721-ին, 1831-ին և 1830-ին Փաւստոսի հրատարակութիւններ չեն եղած:

II, 1832 թուին: Փաւստոսի երկրորդ հրատարակութիւնը կատարուել է Վենետիկում 1832 թուին: Այս հրատարակութեանը ծառայել են հինգ ձեռագիր, որոնց մասին հետևեալ անբաւարար տեղեկութիւնն է տալիս յառաջաբանը. «Ընդեւակ օրինակաց բաղդատութեամբ առաջիկայ տպագիրս արարաւ. յորոց մին հնագոյն և անթուական ի ներհուն գրչէ գրեալ, որում մանաւանդ զհետ չոքաք, զկարեւոր զանազանութիւնս այլոց

Digitized by Google

օրինակացն առ ի ստորեւ իջից նշանակեալ՝ ըստ մերումս առ ի բազմաց վկայեալ հաւատարմութեան: Բայց խոստովանիմք զի առ ձեռին գտեալ օրինակքս չեղեն բաւական յանխալ տպագրութիւն. քանզի բազում ուրեք և ի յայտնի վրիպակս ամենեքին համաձայնէին, մինչեւ անդստին ի միոջէ օրինակէ գաղափարեալք»:

III, 1883 թուին: Փաւստոսի երրորդ հրատարակութիւնը կատարեց Ք. Պատկանեան, 1883-ին Ս. Պետերբուրգում, Մենետեան հրատարակութիւնից մի ձեռագրի բաղդատութեամբ. «Երրորդս այս — ասում է Պատկանեան իւր հրատարակութեան համար — արարաւ բաղդատութեամբ անթուական գրչագիր օրինակի ընդ տպագրելոյն ի Մենետիկ: Ինչ ինչ տարբերութիւնք ընթերցման և ուղղութիւնք նշանակեցան ի մէնջ ի լուսանցս, զբազմօք այլովք աննշանօք զանց արարեալ: Մանաւանդ զի ի ձեռագիրն որ եհաս ի ձեռն մեր ոչ կարի զանազանէր յայլոց, զորս ճառէ յառաջաբանն 1832 և ընդ նոսա ի միոջէ ի հնագոյն օրինակաց գաղափարեալ տեսանի»:

IV, 1889 թուին: Փաւստոսի չորրորդ հրատարակութիւնը կատարուեց Մենետիկում 1889-ին (= Մենետեան երկրորդ տպագրութիւն): Այս հրատարակութիւնը 1832-ի հրատարակութեան կրկնութիւնն է; բայց օգտուում է նաև Պատկանեանի հրատարակութիւնից և մի՝ մինչև այժմս չգործածուած, անթուական գրչագրից. «Յետ առաջնոյ տպագրիս» (= 1832-ի) — ասուած է չորրորդ հրատարակութեան առաջաբանում — հանդիպեալ մեր և այլոյ անթուական գրչագրի, թէպէտ և ոչ հին և ոչ զերծ ի վրիպանաց, յաւելաք ի սմանէ ի ստորեւ իջիցն տարբերութիւնս սակաւս ընթերցուածոց, որպէս և ինչ ինչ ի Պատկանեան տպագրէն»:

Այսպէս ուրեմն Փաւստոսի չորս հրատարակութիւն ունինք, որ կատարուել են 1730-ին Կ. Պոլսում, 1832-ին Մենետիկում, 1883-ին Ս. Պետերբուրգում և 1889-ին Մենետիկում: Այս բոլոր հրատարակութիւններն ունեցել են ընդ ամէնը ութ ձեռագիր, որոնցից վեցը Մենետիկում, մէկը Ս. Պետերբուրգում, մէկը Կ. Պոլսում: Այս ութ ձեռագրերի մասին ունեցած տեղեկութիւններս շատ անբաւարար են: Բայց ամենայն հաւանականութեամբ բոլորն էլ գրուած են թղթի վրայ, եթէ դրանցից որ և է մէկը լինէր մագաղաթ՝ այդ անպատճառ կյիշէին Մենետիկցիք կամ Պատկանեանը. եթէ ոչ բոլորը, գոնէ մեծագոյն մասը աննշան նոր գրչութեամբ են. բոլորն էլ համարւում են անթուական, թէ և մի ուրիշ աղբիւրից ինձ յայտնի է, որ Մենետիկի Ձ-երից մէկը կրում է Հայոց ՌՃԽԹ = 1700 փրկ. թուականը (Համառօտ ձեռագիր ցուցակ Մենետիկի Ձ-երի, կազմուած 1888 թուին):

Ամենակարեւորը մեզ համար այն է, որ այս ութ Ձ-երը, ինչպէս այդ երեւում է տպագրերի համեմատութիւնից, ինչպէս և այդ մասին վկայում

Digitized by Google

են Ք. Պատկանեան և Մ. Էմինի հրատարակութիւնները, բոլորն էլ միևնոյն խմբի Ձ-եր են, մի և նոյն պակասներով, մի և նոյն սխալ ընթերցուածներով: Այսու ամենայնիւ Փաւստոսի ապագայ հրատարակիչը պարտաւոր է այդ ութ Ձ-երի բոլոր ընթերցուածներն աչքի առաջ ունենալ, քանի որ հրատարակիչները նշանակել են միմիայն իրենց «կարևոր» թուածները:

* * *

Այժմ անցնինք Փաւստոսի այն Ձ-երին, որոնք յայտնի են ինձ այս կամ այն աղբիւրից և որոնք չեն գործածուել տպագրերում: Այս Ձ-երը կնշանակեմ եւրոպական տառերով:

1. K = No. 270 (1700 թուին) Գէորգեան Ցուցակի, թուղթ, շատ վատ նոտր գիր, շատ նման շղագրի. մեծ. 21 × 15 հարիւրամետր, երկու սիւնեակ, Փաւստոսը Ձ-րի վերջում է՝ 259ա—378ա: Էջ 378ա կայ հետևեալ յիշատակարանը. «Ով սբ ընթերցողք յեշեցէք ի մաքուր աղօթս ձեր զգծագրող սորին զմիւռնացի մարգար էրէց ի վայելումն անձին իւրոյ: Թվին ՌՃԽԹ (= 1700) յուլիսի ԺԵ. ի կոստանդնուպօլիս»: Մարգար երէցը շատ տգէտ, կիսագրագէտ գրիչ է, ամեն տողում ունի վրիպակներ. բայց այսու ամենայնիւ Փաւստոսի քննադատական հրատարակութեան ժամանակ անտես չէ կարելի անել: Իմ բաղդատութիւններից հետևում է, որ այս Ձ-ն էլ տպագրերի խմբիցն է, թէ և ունի տեղ տեղ մանր տեղեկութիւններ: Ճիշտ նոյն տարումն է գրուած, ինչ որ Մ. Էմինի թուական ունեցող Ձ-րը:

2. Ar. (1688 թուին) = Թաւրիզի Արամեան Գրադարան ընթերցարանի Ձ-երից, իմ ձեռքս եղած գրչագիր ցուցակում No. 16 (= նոյնը Խաչիկ վարդապետի հաւաքած Ձ-երի ցուցակում No 63. տպագրուած է այս ցուցակը, բայց դեռ չէ հրատարակուած): Թուղթ, նոտր գիր, ժողովածու պատմագրաց՝ Խորենացի, Եղիշէ, Փաւստոս և Մարդան: Գրուած է ՌՃԼԷ = 1688 թուին, Նորոգուած Աղուանից Եսայի կաթողիկոսի ձեռքով ՌՃԿԷ թուին «յասպահան ի Ջուղայ»: Անձամբ Ձ-երը տեսած չեմ:

3. M (1676-1678 թուին) = No. 1661,1 Էջմիածնի մատենադարանի (հիմնական բաժին). Մինաս վարդապետի Ձ-իրը, նոտր, մեծ. 31 × 23 հարիւրամետր, երկու սիւնակով, ընդամենը 554 թերթ: Ձեռագրիս ստացողն է Մինաս վարդապետ (էջ 517բ), գրիչներն Թումա (էջ 441բ) և Գրիգոր քարտուղար: Յիշատակարաններ. «Գրեցաւ թվին ՌՃԻԵ ի գիւղն Աշխուղար ձեռամբ Գրիգոր քարտուղարի» (էջ 365ա): Էջ 111ա «Ով հայր սուրբք, Սարին վարդապետն զբահանայքն որ մատնեաց ի ձեռն Պ. աւլան փաշայինն ես փախստական և անճարակ տեղի նստեալ գրեցի զայս տետրս. թ" ՌՃԻԵ էր փետրվարի ամսոյն ԺԴ, օրն ուրբաթ»:

Շատ տեղեր կայ կնիք «Նահապետ վարդապետ» ընթերցուածով։ Ուրիշ մանրամասնութիւններ թողնում ենք։ Ուրեմն ձեռագիրս գրուած է ՌՃԻԵ—ՌՃԻԷ = 1676—1678 փրկչ. թուին։ Այս ստուար և մեծադիր Զ-ը պատմիչների ժողովածու է և պարունակում է իւր մէջ՝ Խորենացի, Ասողիկ, Լաստիվերտցի, Եւսեբ. Եկեղեց. Պատմութիւն. Ագաթանգեղոս, Դաշանց, Մեսրովպ երէց, Զենոբ, Յովհ. Մամիկոնեան. փաւստոս, Եղիշէ, Օրբելեան Ստ., Միխայէլ Ասորի, Վարդան, Կիրակոս, Սոկրատ Եկ. Պատմ.։

4. T (1668 թուին) = Տիգրանակերտում գրուած Զ-ր, այժմ պր. Կ. Եզեանի մօտ, որի մասին մանրամասն տես Ասողկան Պատմութիւն, ՍՊ. 1885, յառաջաբան Ստ. Մալխասեանի։ Այս Զ-ը պատմիչների մի ժողովածու է, տիպի կայմութեամբ շատ նման M-ին։ Թուղթ, նոտր, մեծ. 27½—20 հմետր, երկսիւն։ Զ-ում մեզ համար կարևոր յիշատակարանն է՝ «Գրեցաւ ձեռամբ Աբրահամ անարժանի ի Տիգրան[ակերտ] քաղաքի ի մատրանին սուրբ Սարգսի ՌՃԺԷ [= 1668] թվականին։ Աղաչեմ յիշել զիս և զծնօղքն իմ զտէր Յովհաննէսն և զԽամամն . . . (էջ լր, յառաջ. Ասողկան)։ Այս Զ-ից է, Մալխասեանի վկայութեամբ, Պատկանեանի փաւստոսի հրատարակութիւնը «Համեմատութեամբ այլոց օրինակի Պատմութեանն փաւստոսի Բիւզանդացւոյ արար ուսուցչապետն Ք. Պատկանեանց զՏպագիրն իւր» (Յառաջաբան Ասողկան էջ լզ, ծան. 1.)։ Բայց մենք վերևում տեսանք, որ Պատկանեանն իւր 1883-ի հրատարակութեան համար օգտուել է մի անթուական գրչագիր օրինակից։ Մալխասեանի և Պատկանեանի ասածները հաշտեցնելու համար մեզ մնում է միայն ենթադրել, որ Պատկանեանը ունեցել է T Զ-րի մի որևէ ընդօրինակութիւն և բուն T-ն չի ունեցել իւր ձեռքում, ուստի և չէ տեսել T-ի յիշատակարանը։ Մալխասեանի հաղորդած տեղեկութիւնը պէտք է համարել իբրև շատ լաւ աղբիւր, որովհետև այդ բանասէրը Պատկանեանի աշակերտն է եղել և T-ն անձամբ լաւ ուսումնասիրել է։ Այսպիսով ուրեմն՝ T-ի ընթերցուածները մասամբ մտել են փաւստոսի III տպագրի մէջ։

5. Z (1657 թուին) = Զաքարիա սարկաւագի ինքնաձեռագիրը. այժմս Էջմիածնում, Գէորգ. Յուց. No. 244, թուղթ, նոտր, մեծ. 20 × 15 հմտր.։ Այս Զ-րը մի ժողովածու է պատմիչների և զանազան հատուածների։ Բովանդակութեան մէջ գլխաւոր տեղը բռնում են Կիրակոս, Զենոբ, Ուռհայեցի, Մեծոփեցի, փաւստոս, Մխի. Ասորւոց հատուածներ, Յակոբ Ղրիմեցի և այլ մանր գրութիւններ։ Գրչութիւնը մի քանի ձեռքից։ Մեզ հետաքրքրող մասը — փաւստոս էջ 467 ա — 568 ա, Զաքարիայի ձեռքով ընդօրինակուած։ Ունի բազմաթիւ յիշատակարաններ, որոնցից մէկից քաղում ենք՝ «Փառք . . . եղև աւարտ և ի կատար պատմութեանս, որ կոչի Բիւզանդ որ է փօստոս, ի թուաբերութեանս հայկազնեա Ռերորդի Ճերորդի և Զեակ թուոյ [= ՌՃԶ =

1657 փրկչ.], ի յերկրին Արարատեան, ի նահանգին Կարբոյ և ի սուրբ ուխտս որ կոչի Յօհաննավանք . . . եւ գիտեա զի կատարումն սորա եղև ի վանս Յուշոյ ի դրունս սուրբ Սարգսի զօրավարին . . . և Առաջնորդ սրբոյս մեծ հռետորն և քաջ փիլիսոփոսն Ոսկան վարդապետն, որ և շինեաց պարիսպ ապառաժ վիմէ մեծածախս և գեղեցիկ շինուածովք . . . Կատարեցաւ և աւարտեցաւ յաւուրս ամսոյն արեգի ի քսան և չորս, յաւուրս ուրբաթու (էջ 571բ—572ա):

6. Am (1656 թուից առաջ) = Յամիթում — այն է Ամիդ կամ Դիարբեքիր, որ Հայերից անուանւում է նաև Տիգրանակերտ — գրուած մի ձեռագիր, որի մասին տեղեկութիւն ենք գտնում Տաշեան ցուցակում No. 236 Ձ-րի նկարագրութեան մէջ: Այստեղից իմանում ենք, որ Հայոց ՌՃԷ = 1656 թուից կամ 1658-ից (Տաշ. Ցուց. էջ 617—618) առաջ գրուած մի ձեռագրում՝ Միքայէլ Ասորուց յետոյ կայ եղել Փաւստոս այսպիսի յիշատակարանով. «Գրեցաւ Միխայէլս և Բուզանդարանն ի տպարանն նուաստ Մինաս գրչի ձեռամբ աշակերտացն իմոց, ի դուռն սուրբ Կիրակոսին և մօրն նորա Յուղիտայի ի մայրաքաղաքս Յամիթ, յառաջնորդութեան տէր Խաչիկ աստուածաբան վարդապետին: Յորժամ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով յիշեսջիք զմեղուցեալ նուաստ Մինաս գրիչս և զծնօղսն իմ և զամենայն աշխատաւորքս»: Այս Ձ-րն էլ թուղթ է և նոր գրչութիւն. 1852 թուին եղել է Կ. Պօլսում: Աւելի մանրամասն տես Տաշ. Ցուց.:

7. R (1641 թուին) = Ռոմանոս գրչինը, այժմ No. 1667.7 Էջմիածնի մատենադարանի (Հիմնական բաժին), բովանդակութիւնն է Խորենացի, Եղիշէ, 20 գլուխ Փաւստոսից, Արոտնեցու քարոզները: Թուղթ, նոր, մեծ. 20 × 14 հմտր.: Յիշատակարան էջ 66ա. «Ստացօղ պատմագրիս զքաջ և իմաստուն Սահակ վրդ. Ջուղայեցին յիշեցէք որ փափագանօք ետ գրել. եւ ես նուաստ և անպիտան սուտանուն Ռոմանոս գրիչս յիշեցէք ի թվականիս ՌՂ ամին գրեցաւ»: Այսինքն 1641 փրկչ. թուին: Գրչութիւնը թէև նոր, բայց գեղեցիկ և դիւրընթեռնլի: Մեզ հետաքրքրող մասը, էջ 164ա—184բ, չունի ընկած թուղթ կամ պակասներ և է 20 գլուխ Փաւստոսից հետևեալ վերնագրով՝ «ի Բուզանդրեան Պատմութենէ»: Գլխակարգութիւնները կարմրադեղով. չէ նշանակուած ոչ Դպրութիւն և ոչ Գլխի թուահամար, ուստի և բաղդատելով տպագիր Փաւստոսի հետ նշանակում ենք թէ ինչ Դպրութիւնից ինչ գլուխներ կան այս Ձ-րում և ինչ կարգով: 1. Փաւստոսի երր. դպր. գլ. ԺԴ: 2. Սեց. դպ. գլ. ԺԸ: 3. Չորր. դպր. գլ. Ե: 4. Չորր. դպ. գլ. Է: 5. Չորր. դպ. գլ. Թ: 6. Չորր. դպ. գլ. Ժ: 7. Հինգ. դպ. գլ. Ե: 8. Հինգ. դպ. գլ. ԻԵ: 9. Հինգ. դպ. գլ. ԻԸ: 10. Հինգ. դպ. գլ. ԻԵ: 11. Հինգ. դպ. գլ. ԻԷ: 12. Հինգ. դպ. գլ. ԼԵ: 13. Հինգ. դպ. գլ. ԼԷ: 14. Հինգ. դպ. գլ. ԼԺ: 15. Հինգ.

Digitized by Google

դպ. գլ. Խ: 16. Հինգ. դպ. գլ. ԽԱ: 17. Հինգ. դպ. գլ. ԽԲ: 18. Հինգ. դպ. գլ. ԽԳ: 19. Հինգ. դպ. գլ. ԽԴ: 20. Վեց դպ. գլ. Ա: Վերջանում է այս գլուխը էջ 184 բ «Նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամենկն և յապայ», որն և իսկապէս Փաւստոսի բուն պատմութեան վերջն է: Սամանոս Գրիչն աւելացնում է «Իւ աստի ի վայր զՄովսիսի պատմագրէն յերրորդ հատորէն գի՛տ, ի քառասներորդէն յերկրորդէն կարգաւ: Ահնեալ է ած յամ ժամ»: Այսինքն գրիչը մատնացոյց է լինում Փաւստոսի Պատմութեան շարունակութիւնը գտնելու համար Խորենացու երրորդ գիրք 42-դ գլուխը:

8. N (1624 թուին) = No. 30 Ներսիսեան Դպրանոցի Ձ-երի մատենադարանի Թիֆլիսում: Թուղթ, նոտր: Բովանդակութիւնն է Միքայէլ Նորի և Փաւստոս: Վերջինս Ձ-ում էջ 23—122: Այս Ձ-ում Փաւստոսի Պատմութիւնը հասնում է մինչև Չորրորդ դպրութեան ԾԱ. գլուխը, որից ունի միայն 13 տող, մնացած մասը Ձ-ում այժմ չկայ: Յիշատակարանն է. «ի թուին ՌՀԳ [= 1624 փրկչ.] յուլիս ամսոյ ի ԻԵ սկսան ի Բիւզանդայ գրել. օգնեայ ինձ հոգիդ սուրբ աստուած»: Այս Ձ-ը ՌՃՀԱ = 1722 թուին եղել է Մաղարդի Նախավկայի վանքում, Երասխի ափին: Այս Ձ-րն ունի «Բիւզանդարան պատմութիւնք» ընթերցուածը: Աւելի մանրամասն տես Ներս. Դպր. Ձ-երի Ցուցակը, Ս. Կանայեանցի, Թիֆլիս 1893, էջ 54—56.

9. E (1622 թուին) = No. 1677,8 Էջմիածնի հիմնական մատենադարանի: Ինձ յայտնի Փաւստոսներից հնագոյնը: Թուղթ, նոտր, մեծ. 21 × 15 հմտր.: Բովանդակութիւնն է Միխայէլ Նորի և Փաւստոս (էջ 189ա—327ա): Ընդարձակ յիշատակարանից քաղում ենք (էջ 327բ). «Փառք . . . գրեցաւ այս Միխայիլս ձեռամբ սարկաւագացն Ամիրշին և Յովանիսին, որ սկիզբն առնէին գրչութեան և ուսանէին առ ոտս տէր Մինաս գրչի. Աստուած իւրեանց շնորհք և իմաստութիւն տա որ զայս հոգևոր արուեստս կատարեալ ուսանին: Թվին ՌՀԱ» [= 1622 փրկչ.]: Աւելի մանր գրչութեամբ շարունակում է յիշատակարանը. «յունիսի ի Ի աւրն ուրբաթ եկին խափուճիկ ի Կոստանդնուպոլսա բերին Ամթայ փաշին Բ կապա, ու ասցեն թէ ծառայքն խիստ աղմուկ խռովութիւն արարին զՍուլթան Մուստոֆան. և այլ շատ մեծամեծք վազիրներ սպանին. պչարն ու ըլարին Ած գիտէ զվերջքն. ած ի բարին առաջնորդէ, ի ձեռս էրկու կապէք այս խապարս երեկ»: Մի երրորդ գրիչ — Յակոբ երէց — շարունակում է յիշատակարանը, յայտնելով որ Ձ-րս «վաղեմ» է տրուած «ի դուռն սբ Յակոբ հայրապետին», Շոռոթի սուրբ Յակոբ եկեղեցին է, տես Սիւնիք էջ 353 ևայլն: Յիշում են Շոռոթի [= Հին Նախիճաւանի գաւառում] քահանաները թվ. ՌՁԵ = 1637-ին, յիշում է նաև որ «ի յայսմ ամի եղև Նորոգումն սուրբ աթոռոյս որ կոչի սուրբ Կարապետ»,

Digitized by Google

որ ամենայն հաւանականութեամբ Երնջակի վանքն է։ Այս թուականում եղած նորոգութեան մասին տեղեկութիւն չունի Ալիշանը։ Հմմտ. Սիւնիք, 378 եւն։ Ուրեմն գրուելուց 15 տարի անցած, ձեռագիրս արդէն Ամիթից տեղափոխուել է Արեւելեան Հայաստան. — Շուռութ։

10. S = Սանասարեան վարժարանի ձեռագիրը Կարինում, որի մասին միայն այսչափ տեղեկութիւն ունիմ. «Առանձնական նամակներէ իմացած եմ թէ վերջերս ձեռք անցուած է Փաւստոսի ըստ երեւոյթին ընտիր ձեռագիր օրինակ մը». 6 դեկտ. 1898, Հր. Աճառեան. տես Ցուցակ Հայեր. Ձ-րաց Սանասարեան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1900, էջ ժդ։

Ընդամենը տասը ձեռագիր, որոնք բոլորն էլ որչափ որ այդ յայտնի է մեզ — նոտր գրչութեամբ են և թուղթ։ Բոլորն էլ գրուած տասնեօթերորդ դարում 1622-ից մինչև 1700, բացի S-ից, որի մասին բաւարար տեղեկութիւն չունինք։ Աւելի ուշադրութեան արժանի է այն, որ Ամիթը (= Յամիթ, Տիգրանակերտ) 17-րդ դարում ունեցել է ձեռագրեր ընդօրինակող գրիչներ պատրաստող դպրոց — Տէր Մինաս Պըրչի դպրոցը — որին և պարտական ենք հաւանականաբար մեր ունեցած Փաւստոսներից շատերը։ Ամիթի այդ դպրանոցի արդիւնք են մեր E և Am ձեռագրերը. նոյն Ամիթ-Տիգրանակերտումն է գրուած T-ն, որից և Պատկանեանի օրինակը. նոյն այդ Ամիթ-Արեւմտեան խմբիցն են M, Ալիփուղար (= «Ալիի աղբիւր») գիւղում գրուած, որի մէջ յիշւում է Պափլան փաշա, ուրեմն օսմանցիների պետութեան սահմաններում, և K Կ. Պոլսի Ձ-րը։ Այդ խմբիցն են և Փաւստոսի չորս հրատարակութեան ծառայած ութ Ձ-րերը։ Արեւելեան Հայաստանում գրուած միմիայն Z-ն է (Յովհաննավանք Յուշի, Արագածի վրայ)։ Արեւելքումն են եղել և այժմ էլ գտնւում են Ar, այժմս Թաւրիզում, 1713-ին Ասպահան-Ջուղայում. R, այժմս Էջմիածնում, ստացող Սահակ վարդապետ Ջուղայեցի. N, այժմս Թիֆլիս, 1722-ին Մաղարդ-Նախավկայ, Երասխի ափին։ Բայց N-ն իւր տիպի կազմութեամբ (Միխայէլ Ասորի, Փաւստոս) բոլորովին նոյնանում է E-ի հետ, որ Ամիթից շատ կանուխ արդէն 1637-ին տեղափոխուել է Արեւելք՝ Շուռութ, և այժմս Էջմիածնումն է։

Այս բոլոր 18 ձեռագրերից անձամբ տեսած եմ և այժմս ունիմ ձեռքի տակ միմիայն հինգը՝ E, R, Z, M և K։ Ուշադիր բաղդատութիւնը համոզեց ինձ, որ այս ձեռագրերը կտան որոշ մանր մունր սրբագրութիւններ, բայց ընդհանրապէս բոլորն էլ պատկանում են տպագրերին ծառայած Ձ-րերի խմբին, լինելով հանդերձ նրանցից հնագոյն և ընտիր։ Բոլորն էլ միատեսակ ունին, օրինակ, Գ. դպրութեան Ժ. գլխում մի քանի տող պակաս, Գ. դպր. ԺԲ գլուխ «և զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց» սխալ ընթերցուածը եւն, եւն։

Digitized by Google

Լրութեան համար այս 18 Ձ-րերին պէտք է աւելացնել նորից երկու ձեռագիր. 1) No. 79 Տաշեան Ցուցակի, ԺԹ. դարի նորագոյն գրչութիւն (էջ 337), որ ունի Փաւստոսից հատուած «Ռուփիթայ մասը» և 2) Խաչիկ վարդապետի ժողովածուից No. 78, Թուղթ, նոտր, գրիչ Ներսէս դպրապետ, գրուած Կամենից ՌՀԳ (= 1624 Թուին), էջ 112բ «Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարուց նորա» Փաւստոսի վեցերորդ դպրութիւնից:

Այս բոլոր ձեռագրերը, թուով քսան, կազմում են Փաւստոսի նորագոյն օրինակների ինձ ծանօթ խումբը, որի և ոչ մի օրինակի հնութիւնը չէ անցնում 17-րդ դարից այն կողմը: Այս խմբից կլինին անշուշտ և այնպիսի օրինակներ, որոնք յայտնի են այս կամ այն Ցուցակից և սակայն խուսափել են իմ ուշադրութիւնից, քանի որ խցում փակուած մարդ եմ և ձեռքի տակ չունիմ քիչ թէ շատ կարգաւորուած մատենադարան: Յոյս կայ նաև որ թէ մեր Էջմիածնի և թէ ուրիշ մատենադարաններում (Երուսաղէմ, Տիֆլիս, Պոլիս) լինին կամ գտնուին նոր օրինակներ: Ասած եմ, որ Տիֆլիս պ. Էնֆիաճեանցների մատենադարանում կայ մի ձեռագիր Փաւստոս, սակայն այս լուրը ստուգութեան կարօտ է:

Անցնենք այժմ Փաւստոսի հնագոյն խմբի երկու ձեռագրերի: Այդ՝ երկու, անցման երկաթագրով մեծադիր Ճառընտիրներ են, գրուած 12-րդ դարի վերջում թղթի վրայ, երկու սիւնակով: Գրութեան տեղը Արագածն է Սաղմոսավանք: Մանրամասն նկարագրել եմ այդ Ճառընտիրները «Յիշատակ դատակնքաց Գորիա և Սմոնի վկայից» հրատարակութեանս յառաջաբանում (Վաղարշապատ 1896): Այդ Ճառընտիրներում, որ անուանում ենք A և B (Գորիայի յառաջաբանում հայերէն տառերով են նշանակուած՝ Ա և Բ) պահուած են Փաւստոսից, առանց հեղինակի անուան 10 հատուած (B-ում ութ հատուած), որ համապատասխանում է Փաւստոսի 11 գլուխներին: Երրորդ դպրութիւնից պահուած են Բ, Գ, Է, Զ, ԺԱ, ԺԲ, ԺԳ գլուխները, ընդամենը 7 գլուխ: Չորրորդ դպրութիւնից պահուած են ԾԶ և ԾԷ, ընդամենը 2 գլուխ: Հինգերորդ դպրութիւնից պահուած են ԻԶ և ԻԷ, ընդամենը 2 գլուխ: Համագումար 11 գլուխ: Աւելորդ չեմ համարում դնել այստեղ AB-ի հատուածների գլխակարգութիւնները A-ի ուղղագրութեամբ և մի երկու նկատողութիւններով:

1) A. էջ 270բ, B. էջ 364բ. «Վասն մեծի քահանայապետին Գրիգորի Հայոց Լուսաւորչի, եւ սրբոյն Արիստակիսի որդւոյ նորին, և նոցին շիրմացն: — Արդ ի թագաւորութեանն Տրդատայ, որդւոյ Խոսրովա . . .» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. Բ:

2) A. էջ 270բ, B. էջ 364բ. «Յաղագս Վրթանայ մեծի քահանայապետի որդւոյ Գրիգորի: — Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով

Կոտակ, Թոռն Խոսրովայ, որդի քաջի և առաքինոյն Տրդատա արքայի . . .» = փաւստ. Երր. Դպր. Գլ. Գ.:

3) A. էջ 271բ, B. էջ 365բ. «Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս. եւ անկանելոյ ի պատերազմին զաւրավարին Վաչեի. և մահուն Խոսրովա արքայի. և փոխելոյ յաշխարհէս մեծ հայրապետն Վրթանես: — Եւ յետ այսորիկ յաւել եւս լինել մարտ խստութե պատերազմի ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս . . .» = փաւստ. Երր. Դպր. Գլ. ԺԲ.:

4) A. էջ 273ա, B. էջ 367ա. «Վասն որդւոցն Վրթանա, որոց անուանք առաջնոյն Գրիգորիս եւ երկրորդին Յուսիկ: — Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք մեծ քահանայապետին Գրիգորի . . .» = փաւստ. Երր. Դպր. Գլ. Ե:

5) A. էջ 274ա, B. էջ 368ա. «Յաղագս սրբոյ հայրապետին Գրիգորիսի վախճանին: — Այլ վասն Գրիգորիս եպիսկոպոսի որդւոյ Վրթանիսի, եղբաւր Յուսկանն, որ կաթողիկոս էր Վրաց եւ Աղուանից . . .» = փաւստ. Երր. Դպր. Գլ. Զ.:

Այս գլխում ուշադրութեան արժանի է հետևեալ հատուածը. «Իբրև ուղղեաց և նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, [illegible]. և եհաս մինչև ի ճամբար բանակին Արշակունեաց արքայի Մազքթաց, որոյ անուն Սանեսեան կոչիւր. քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն եր տոհմին բնութեն (B. բնութբ). և երթեալ յանդիման լինեը թագաւորին :: ազքթաց և իշխանացն և բազմութե զաւրացն»: Բոլոր տպագիրները, ուստի և այն ձեռագրերը, որոնցից կատարուել են փաւստոսի չորս հրատարակութիւնները, նոյնպէս և ինձ յայտնի՝ բոլոր Ձ-երը չունին ստորագծուած տողերը, մինչդեռ աւելի ունին «Հոնաց» յիշատակութիւնը այսպէս. «Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց, իշխան բազմութեան զօրացն Հոնաց»:

6) A. էջ 275ա, B. էջ 368բ. «Յաղագս թագաւորելոյ Տիրանայ յետ հաւր իւրոյ, և թե որպէս Յուսիկն յետ հաւր իւրոյ Վրթանա կալաւ զաթոռ հայրապետութե. և թե որպես սպանաւ ի Տիրանա՝ յարքաե յաղագս յանդիմանութեան: — Եւ յանցանելն յաշխարհե թագաւորին Խոսրովու[1]) Տիրան որդի Խոսրովա առ զթագաւորութիւն և զիշխանութիւն աշխարհացն[2]) Հաոց մեծաց, և ընդ նմին սուրբն երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց պտեղի[3]) հայրապետացն: Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախար[ար]սն[4]) ըստ սովորութե ուրինին. ըզմեծ հազարապետն ի. հազարապետութեննեն(.) Այստեղ տպագրերումն էլ դրւում է վերջակէտ:

---

1) B. խոստրովու. 2) B. «աշխարհացն» չիք. 3) B. զաթոռ. 4) B. նախարարսն.

Digitized by Google

Պէտք է ջնջել թէ միջակէտը և թէ վերջակէտը։ Նոյն ինքն Վաղարշն է մեծ հազարապետը։ Իսկ ի տոհմէն ամենայն Հայոց մեծաց զՎաղարշ որ էր իշխան Անձտայ[1]. և ընդ նմայ զԶարեհ[2]) զիշխանն, զնահապետն մեծի Ծոփաց. և զՍարա զՇահունի [= զՎարազ Շահունի] զիշխանն Ծոփաց աշխարհին[3])։ ԶԳնիթ իշխան Հաշտենից գաւառին ի Կասինական[4]) [= Կամսարական] տոհմէն։ ԶՎրութ իշխան Վանանդայ գաւառին. զՇահեն իշխան Անձևացեաց տոհմին։ ԶԱտոմ իշխան Գողթան։ ԶՄանուազ իշխան Կողբացւոց։ ԶԴուրութ իշխան Ձորոց աշխարհին. եւ զՄանաս Խորխո(ւ)ռունեաց[5]), զիշխանն մախազութե տանն. զՏիրոց իշխան Սահառունեաց. միւս բոլոր Ձ-երը և տպագրերը ունին «եւ. զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց»։ «ԶՏիրոց» ուղիղ ընթերցուածն ունին միայն A և B։ ԶԱրաս իշխան Գնունեաց. սոցա ամենեցուն հրամայեաց գնալ ընդ մեծի հազարապետին Վաղարշու...» = փաւստ. Երր. Դպր. Գլ. ԺԲ։

7) A. էջ 276ա, B. էջ 370ա. «Յաղագս վարուց և գործոց մեծին Դանիէլի քահանայի առն այ. և թէ որպէս յանդիմանեաց զթագաւորն Տիրան, և կամ որպէս պատուհասեալ մեռաւ ի նմանէ։ — Բայց յայնժամ դեռեւս կենդանի էր ծերունին սուրբ՝ մեծ քորեպիսկոպոսն Դանիէլ այրն սքանչելի...» = փաւստ. Երր. Դպր. Գլ. ԺԴ։

8) A. էջ 278 bis ա, B. չունի այս գլուխը. «Յաղագս Շաղիտայի աշակերտի նորին։ — Շաղիտայս այս սբ էր լեալ աշակերտ սրբոյն Դանիէլի...» = փաւստ. Հինգ. Դպր. ԻԶ.

9) A. էջ 278 bis ա, B. չունի այս գլուխը. «Յաղագս Եպիփանու։ — Երանելի սբն Եպիփան ընկեր էր սրբոյն Շաղիտայի, աշակերտ եղեալ մեծին Դանիէլի...» = փաւստ. Հինգ. Դպր. Գլ. ԻԵ։

10) A. էջ 279ա, B. էջ 372բ. «Վկայութի Զուիթա երիցու յերկրէն Պարսից, որ էր յԱրտաշատ քաղաքէ։ — Ապա իբրև չոգան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութի Հայոց...» = փաւստ. Չորր. Դպր. ԾԶ և ԾԵ։

Այսպիսով ուրեմն ունինք փաւստոսից, բացի արդէն 4 հրատարակութեանց մէջ մասամբ գործածուած ձեռագրերից, չգործածուած 10 նոր ձեռագիր և AB Ճառընտիրների թանկագին հատուածները, որով և անհրաժեշտ է դառնում նոր քննադատական բնագրի հրատարակութիւնը։ Այս նոր հրատարակութիւնը, որի համար կարևոր նիւթը պատրաստել էր մեր այս ուսումնասիրութեան նպատակը, չի տայ մեզ հարկաւ մեծ նորութիւն, նոր հատուածներ, բայց կտայ կարելի եղածին չափ ճշտուած

---

1) B. Անձտա. 2) B. զարեհ. 3) B. «և զՎարազ Շահունի զիշխանն Ծոփաց աշխարհին» չիք. 4) B. «ի Կամսարական», միւս բոլոր Ձ-երը և տպագրերը ունին Կամինական. 5) B. Խորխոռունեաց.

Digitized by Google

բնագիր, կդասաւորէ Ձ-երը իրանց միմեանցից ունեցած կախման համաձայն, մատնանիշ կանէ կարևոր և անկարևոր ընթերցուածները ևն ևն։ Միւս կողմից յոյս ունիմ, որ այս ուսումնասիրութիւնս առիթ պիտի լինի նոր Ձ-երի երևան գալուն։

* * *

II.

1. Այժմ մի քանի խօսք ընդհանրապէս Փ-ի խնդրի վերաբերութեամբ։

Փաւստոս Սահառունի չէ։ Տիրոց Սահառունի։ A և B միմեանցից բոլորովին անկախ Ձ-երը, ինչպէս տեսանք, ունին «զՏիրոց իշխան Սահառունեաց» ընթերցուածը, որ բոլոր մեզ յայտնի Ձ-երում աղճատուել և դարձել է «զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց»։ Երկաթագրի մէջ եղած շփոթութիւն են «զՏիրոց» և «զմերոյ» ընթերցուածները, տիւն և մենի, յի և ցոյի նմանութիւնից ծագած։ «ԶՏիրոց» (Համմտ. «Տիրոց Բագրատունի» Եղիշէի և Փարպեցու մէջ) ընթերցուածի «զմերոյ» կարդացուելուց յետոյ անհրաժեշտ է դարձել «տոհմի ազգի» բացատրական յաւելուածը։ Այսպիսով լուծւում է վերջնականապէս Փաւստոսի Սահառունեաց տոհմի հետ որևէ կապ ունենալու կամ չունենալու խնդիրը։ Փաւստոսը Սահառունի չէ։ Ձեռագրական իմ այս գիւտի մասին դեռ 1893 թուին Եղիշէ ատաթեանը հրատարակեց «Մշակ» լրագրում (1893, No. 19), բայց բանասէրների մեծամասնութեան աչքից վրիպեց այդ լրագրական յօդուածը և Փ-ով զբաղուողները, թէ հայ և թէ եւրոպացի, մինչև օրս էլ ստիպուած են եղել անդադար յեղյեղել այդ խնդիրը։

2) **Բիւզանդական պատմութիւնք։** Տպագրերի մէջ Փ-ի երկը կոչւում է «Բուզանդարան պատմութիւնք»։ Ինձ ծանօթ Ձ-երը միևնոյն ընթերցուածն ունին համաձայն տպագրերին բացի հետևեալներից. N ունի «Բիւզանդարան պատմութիւնք», R, որ մի քաղուածք է Փ-ից՝ ունի «ի Բուզանդրեան պատմութենէ», իսկ Z միակ Ձ-իրն է որ ունի՝ խոշոր, կարմրով նկարուած տառերով՝ «Բիւզանդական պատմութիւնք»։ Բուզանդարան կամ Բիւզանդարան անմիտ բառերի փոխանակ ունիմք այժմ «Բիւզանդական Պատմութիւնք»։ Թէ ինչու էր այդպէս կոչւում Փ-ի երկը, այս հարցին մեր գիտութեան այժմեան վիճակում հազիւ թէ հնարաւոր լինի բաւարար պատասխան տալ։ Փ-ի բնագիրը յունարէն համարողները մի նոր կռուան կունենան Փ-ի երկասիրութեան այս նոր անուանակոչութեան մէջ։ Յամենայն դէպս այս խնդիրը կարօտ է առանձին ուսումնասիրութեան։

3) **Փաւստեայ Բիւզանդեայ։** Յայտնի է տպագրերի «փախստեայք Բիւզանդեայ» ընթերցուածը երրորդ դպրութեան վերջում, յիշատակարանի մէջ։ Իմ ձեռքի տակ եղած բոլոր Ձ-երն էլ ունին նոյնպէս «փախս-

Digitized by Google

տեայ.ք. Բիւզանդեայ» կամ «Բուզանդեայ»: Յայտնի է նաև, որ բանասէրների մեծագոյն մասը այս «փախստեայ.ք» բառը կարդում են մտքի համաձայն «փաւստեայ»: Հիւն և խէ (ւ և խ) տառերը կարող են շփոթուիլ միայն երկաթագրի մէջ = Ւ = Խ: Բանասէրների առաջարկած սրբագրութեան մի նոր ապացոյց գտնում եմ ես Եւսեբիոսի Քրոնիկոնի Հայ հնագոյն Ձ-րում, որի մէջ նոյնպէս Ւ և Խ գրերի շփոթութիւն կայ, ծագած անշուշտ երկաթագիր բնագրից: Այստեղ «ի փախստէն» դարձել է «Ւ փաւստէն»: Տես Թ. Մոմսէնի «Die Armen. Handschriften der Chronik des Eusebius» յօդուածի մէջ E Ձ-րի իմ բաղդատութիւնը, Hermes թերթից արտատպութիւն, Berlin 1895, էջ 334, տող ներքևից 11:

4. Մի նոր կրկնագիր: Էջմիածնի Գրադարանում տարիներ առաջ յաջողուեց ինձ նկատել, որ մի ձեռագրում (No. 2239) մագաղաթեայ առաջին ամբողջ մասը, ընդամենը 104 թերթ, կրկնագիր է: Վրայի գրութիւնը Վանականի «Յաղագս տարեմտի» երկն է և ուրիշ գրութիւններ հին բոլոր գրով: Ձ-րի աւելի նորագոյն մասը, թղթի վրայ, նոյնպէս հին բոլոր գրով հայոց Չղե (= 1346) թուին է (էջ 162 բ): Տակի բնագիրը փոքր մեսրովբեան երկաթագրով է և կարող է շատ հին լինել: Ինչպէս յայտնի է մեզ ծանօթ ամենահին գրութեան տեսակն են այդ տառերը: Միակ բառը, որ պարզ կարդացւում է այս կրկնագրում (էջ 42 ա) պատառուած թերթի ծայրին «փախստե» մնացորդն է: Ոչ մի միջոց դեռ չէ փորձուել այս կրկնագիրը վերծանելու համար: Անշուշտ մի դուրեկան ցնորք է, որ այս կրկնագիրը Փաւստոս լինէր, բայց ոչ մի ապահովութիւն չունիմ դեռ:

5. Ստորոտ ամենայն պատմութեանց: Փաւստոսի վերջին դպրութեան ցանկին կամ «կանոններին» անմիջապէս կից Ձ-երը դնում են «Ստորոտ ամենայն պատմութեանց» երևի կամենալով ասել «վերջ ամենայն պատմութեանց», կապելով այս նախադասութիւնը «Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ . . .» Ի.Ը.-երորդ գլխի վերտառութեան հետ: Միայն K-ն ունի տպագրի նման կից հետևեալ «Յաղագս իմ տեղեկութեան» ասացուածի հետ: Իսկ Z-ն բոլորովին չունի այս «Ստորոտ ամենայն պատմութեանց» նախադասութիւնը:

6. Յաղագս իմ[ո] տեղեկութեան: Փ-ի անձնաւորութեան համար ամենից աւելի հետաքրքրականն է «Յաղագս իմ տեղեկութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնոյ.ք» ասացուածը: Իմ ձեռ.քս եղած բոլոր Ձ-երը ինչպէս նաև I տպագիրը «ընթեռնոյք»-ից յետոյ դնում են վերջակէտ: Այս վերջակէտը միւս բոլոր տպագրերը բոլորովին անհիմն կերպով դուրս են ձգել: «Տեղեկութե» բառի փոխանակ, որ միշտ պատուով է գրւում, K-ն ունի «տեղակութե», իսկ M-ն ունի «տեղեկացութե», ուստի և իմ կարծիքով, այս աղճատուած բառի նախկին լրիւ ձևը վերականգնելու համար պիտի կարդանք «տեղակացութե» = «Յաղագս իմ[ո]

Digitized by Google

տեղակացութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնոյք»: Տեղակացութիւն ոսկեդարեան բառ է և շատ լաւ կարող է նշանակել Թելակալութիւն: Ինչպէս յայտնի է Փաւստոս եպիսկոպոսի Թելակալութեան կամ «տեղակացութեան» մասին խօսւում է Զ-երորդ դպրութեան Ը-երորդ գլխում[1]: Այսպիսով աւելի ևս շեշտւում է այն կարծիքը, որ հեղինակ Փաւստոսը նոյն անձն է «Թելակալ Փաւստոս» եպիսկոպոսի հետ: «Տեղակացութեան» ամբողջ նախադասութիւնը ցանկի մէջ Ը-երորդ գլխի վերտառութեան մի մասն է, կամ այդ վերտառութեան վերաբերեալ մի ծանօթութիւն, որ իւր աստղանիշը կամ տեղը կորցրել է և ընկել ցանկի վերջը կամ ստորին լուսանցքը, ինչպէս ունի Z ձեռագիրը: Այդպիսի ծանօթութիւններ, մանաւորապէս իրենց աստղանիշը կամ տեղը կորցրած ծանօթութիւններ, այն էլ մի քանի հատ, ունինք Խորենացու և Եղիշէի մէջ[2]: Մեզ հետաքրքրող նախադասութեան վերջին մասը — «որք միանգամ զմատեանս ընթեռնոյք» — համեմատել առաջին «խոստաբանութեան» ասութեան հետ — «որք միանգամ կամին սրտի մտօք հասու լինել սմին զոր ասելոցս եմ»:

7. Տասն ԺԶ համարական Բանաւք: Վերջ: Ցանկի կամ կանոնների վերջում այս ասացուածը մի միտք կարող է ունենալ, այն է՝ որ վեցերորդ դպրութիւնը «համարական Թուով» 16 տուն կամ գլուխ ունի: Եւ իսկապէս էլ ունի 16 գլուխ, մեծաւ մասամբ մի մի փոքրիկ պարբերութիւնից կազմուած: Զ տառի անկումը [Ժ = ԺԶ], ինչպէս և E Ձ-րի մէջ «Ն» տառի անկումը [E' տուք = տունք] սովորական երևոյթ է: Խորենացու Ձ-երում ունինք «տասն» փոխանակ «ութ և տասն»-ի, «յիսուն» = «յիսուն և վեց» [Ծ = ԾԶ]., ևն ևն: Այսպիսի պակասաւոր Թուերի օրինակներ կարող եմ բերել նոյն իսկ ամենալաւ Ձ-երից տասնեակներով: Աւելի հետաքրքրականն, որ Ա. խոստաբանութեան մէջ Փաւստոսն ասում է. «մի ըստ միոջէ կարգաւք Բանաւք և համարաւք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխով: Եւ չորս խոստմունս չորեցունց[3] դպրու-

---

[1] Թելակալ բառի նշանակութեան մասին հմմտ. «Հերովդէս Թելակալ պահապան էր փեղկոյն» Եփր. Ծն. Հայկ. Բառ.:

[2] Հմմտ. իմ «Խորեն. Պատմ. Ուսումն.» Վաղարշապատ 1896, էջ 79, ծանօթ.:

[3] Բոլորն ունին «չորից չորեցունց» աւելորդ կրկնութիւնը, ինչպէս և նոյն խոստաբանութեան մէջ ունին «և առ նմին դպրութիւնք երեք [= գ]» որ պիտի ուղղել «և առ նմին դպրութիւնք դ [= չորս]»: Ամիտում, ուր Մինաս գրչի դպրանոցում, Թերավարժ աշակերտների ձեռքով արտագրուած նոտրագիր, սղումներով և պատիւներով լի Փաւստոսները հարկաւ հարիւրաւոր այսպիսի վրիպակներ պիտի ունենան, որոնք մեծ մասամբ կանհետանան, երբ Ձ-րերի բաղդատութեամբ կունենանք քննադատական բնագիր:

Digitized by Google

Թեանցս յիւրաքանչիւր[1]) ելանէ պատուաստեցի մինչև ի կատարած սորին»: Ութեմն պարզ և հասկանալի է, թէ ինչ է կամենում ասել Փաւստոսը «համար և թիւ» կամ «համարական թիւ» ասելով, մինչդեռ Փաւստոսի մեկնիչները և թարգմանիչները այս համարական թուով տները կամենում են անպատճառ կապել Փաւստոսի անձի մասին խոստացուած տեղեկութեան հետ և սպասում են գտնել Պատմութեան վերջում մի տուն տեղեկութիւն, այն էլ ոտանաւորով (!) Փաւստոսի անձի մասին: Ութեմն ‹համարական թուերը› ցոյց են տալիս միմիայն իւրաքանչիւր Դպրութեան Դլխում (= սկզբում) դրուած տների (կամ այժմեան մեր սովորական գործածութեամբ՝ գլուխների) թիւը: Նա յիրաւի պահուած է այժմեան Փաւստոսում բացի վեցերորդից նաև երրորդ դպրութեան ‹համարական թիւը› — «կանոնք պատմութեանց մատենից մինչև ցքսան և մի (տես երրորդ դպրութեան սկիզբը)[2]): Նոյնպիսով ուրեմն իւր իսկ բնական և պատշաճ տեղումն է վեցերորդ դպրութեան սկզբին, ցանկի վերջում, «Տունք Ժ.Զ. համարական թուաք: Վերջ» ասացուածը և այս նախադասութիւնը ոչ մի առնչութիւն չունի հեղինակ Փաւստոսի անձի հետ:

8. **Առաջարկութեան վճարումն. Մնացորդք բանից ի ծայրէ. Վեցերորդ դպրութիւն**: Այս բառերն էլ բաւական աղճատուած են ձեռագրերում, և տարբեր ընթերցուածներով: Կապելով նախընթացի հետ ձեռագրերը գրում են ‹վերջ առջինուե վճարումն› են: «Ան» կարդալով «րկ» [= Նոտրագրի մէջ] մենք լաւագոյն ենք համարում ընթեռնուլ ‹Առաջարկութեան վճարումն. Մնացուածք [կամ՝ ‹Մնացորդք›, ինչպէս որ ունի Z] բանից ի ծայրէ: Վեցերորդ դպրութիւն›[3]):

9. **Փաւստոս Բիւզանդ եպիսկոպոս**: Փոքր ինչ երկար կանգ առայ այս մանրամասնութեանց վրայ, ուղիղ գնահատելու համար այս տեղեկութիւնները, որ տալիս է Փաւստոսն իւր մասին: Իրողութիւնը մնում է այն, որ վեցերորդ դպրութեան ցանկում խոստացւում է հեղինակի տեղակացութեան մասին տեղեկութիւն և նոյն դպրութեան Ժ-Զ. գլուխներում խօսւում է Թելական Փաւստոս եպիսկոպոսի և նրա եղբօր Առոստոմի մասին: Նրանք **ծագմամբ** յոյներ էին ‹Նա էին լեալ սորա ազգաւ

---

[1]) Վերջին տպագրերը ունին այստեղ նորից մի աւելորդ բառ ‹յիւրաքանչիւր իւր›, բայց բոլոր ձեռագրերը և I տպագիրն ունին ուղիղը — ‹յիւրաքանչիւր»:

[2]) M ‹մինչև .ի. և մէկն› — E ‹մինչև ի .իա.› — Z ‹մինչև ի .իա.› — K ‹մինչև ի իա› — I ‹մինչև ի .իա. գլուխս› են: Տես և նորագոյն տպագրերը:

[3]) ‹Վեցերորդ դպրութի› բառերի փոխանակ K-ն ունի ‹վարդրց: գրգռութե ա› մթին ասացուածը: K-ն, ինչպէս վերևում ասել ենք, չափազանց խեղճ և անգրագէտ ձեռագիր է:

Digitized by Google

Հոռոմ», բայց արդէն գլխովին հայացած։ Ռոստոմ — Ռոստոմ անունն էլ հայ — պարսկական է։ Չէ ասում «էին ազգաւ Հոռոմ», այլ «լեալ էին ազգաւ Հոռոմ»։ Ազգատոհմ Հոռոմ ծագումից լինելն անշուշտ արգելք չէր Փաւստոսին բոլորովին հայացած լինել իւր զգացմունքներով, իւր աշխարհայեցութեամբ, իւր ճաշակով և իւր անթարգմանելի կորովի հայաբանութեամբ։ Այս նոյն Փաւստոսն է ամենայն հաւանականութեամբ Ներսէս Մեծի թաղմանը ներկայ գտնուող Փաւստոս եպիսկոպոսը (Բուզ. Ե. 24)։ Ներսէսի մահը Պապ թագաւորի մահից (+ 374) քիչ առաջ է, երևի նոյն այդ 374 կամ 373-ին[1])։ Ուրեմն Փաւստոս ականատես է Պապի և Ներսէսի վերջին օրերին։

10. Փաւստոս Սատաղցի։ Յիշւում է մի ուրիշ Փաւստոս եպիսկոպոս Նարսեհ Մեծի թղթերում։ Այս Փաւստոսը Պապի միջնորդութեամբ Տիանայի Անթիմոս եպիսկոպոսից ձեռնադրւում է եպիսկոպոս 373-ին և ձգտում է եղել լինել Սատաղ[2]) քաղաքի եպիսկոպոս, բայց յայտնի չէ թէ նա արդեօք հասել է իւր փափագին։ Սկսած Չամչեանից այս երկու Փաւստոսները միևնոյն անձն են համարուել[3]) և այդ անհնարին բան չէ. գոնէ ժամանակագրական ոչ մի անպատեհութիւն չկայ։

11. Ծերունի Փաւստոս եպիսկոպոս։ Բայց կայ մի երրորդ Փաւստոս եպիսկոպոս, Արշակ Բ. թագաւորի ժամանակ Ներսէս Մեծին ձեռնադրող «ծերունի Փաւստոսը» (Դ, 3)։ Այս «ծերունի» Փաւստոսին էլ, բոլորովին անտեղի կերպով, բանասէրներից շատերը նոյնացրել են վերոյիշեալ Փաւստոսների հետ։ Անուանակցութիւնը բաւական հիմք չէ անձեր նոյնացնելու համար։ «Ծերունի» Փաւստոսը, Արշակ Բ. թագաւորի ժամանակ արդէն եպիսկոպոս, չէ կարող Պապի ժամանակ ձեռնադրուած [373-ին] և Նարսեհի թղթերում յիշուած Փաւստոսը լինել։ Այդ «ծերունին» չէ կարող նաև նոյն անձը լինել Ներսէս Մեծին թաղող թելակալ Փաւստոս եպիսկոպոսի հետ, որ աղքատանոցների վերատեսչութիւնը շարունակում էր, իւր իսկ ասելով, մինչև «յամն Խոսրովու և Արշակայ երկուց թագաւորացն բաժանաւորացն, մինչդեռ ևս կային նոքա [= Խոսրով և Արշակ] կենդանիք» (Զ, 5)։ Ուրեմն թելակալ Փաւստոսը գիտէ Խոսրովի և Վերջին Արշակի մահը։ Խոսրովը դեռ կենդանի էր Վռամշապուհի ժամանակ և Վռամշապուհից յետոյ էլ ութ ամիս (Վաղ. Փարպ.)

[1]) Մի բարձրաստիճան հայ հոգևորական կաթողիկոսական ցանկերի վրայ արած իւր գիտական աշխատութեան մէջ (անանուն), որոշ հաշիւների վրայ հիմնուած՝ դնում է Ներսէսի մահը 373-ին յուլիս 25 (Տես «Լումայ» և Օրաց. Ազգ. Հիւանդ. Կ. Պոլիս, 1901)։

[2]) Սատաղ քաղաքն յիշւում է Փաւստոսի պատմութեան մէջ երկու անգամ. «փոքրիկ քաղաքիկն Սատաղու». Գ, 7, 21։

[3]) Չամչ. Պատմ. Հայոց I, 11, 447–8, 745–748. Patrol. I. P. Migue, Series Graeca, XXXII. Այս բոլորը միասին «Փաւստոս Բուզանդ» Ե[ղիշէ] Մ[ատթէանի], Վիեննա 1890, էջ 7–12։

Digitized by Google

կամ մի տարի (Խորեն. Գ., 55). կրկին անգամ Թագաւորեց և մեռաւ 416 Թուից ոչ առաջ[1])։ Ժամանակով Վռամշապուհին ամենից մօտ և ականատես պատմիչն է Կորիւն. որ Մաշտոցի Վարքում գրերի գիւտը (404 Թուին) դնում է Վռամշապուհի հինգերորդ տարում (Վենետ. 1833, էջ 9)։ Այդ Թուականից երկու տարի յետոյ, Վռամշապուհի եօթներորդ տարում[2]) [406 Թուին] Մաշտոցը աշակերտներով գնում է Ամիդ և Եդեսիա հայ գրերը կատարելագործելու։ Վռամշապուհի տասն և վեցերորդ տարում, այն է 415 Թուին[3]), Մաշտոցը իւրայիններով. կատարելագործուած հայ գրերով և Ս. Գրքի Թարգմանութեամբ վերադառնում է Վաղարշապատ։ Ուրեմն 415-ին Վռամշապուհը դեռ կենդանի էր, ուրեմն և Խոսրովի 8-ամսեայ Թագաւորութիւնը կարող չենք դնել՝ ամենականուխը՝ 416 Թուից առաջ։ Խոսրովի մահը գիտցող Փաւստոսը միայն այս Թուականից յետոյ կարող էր գրել իւր Պատմութիւնը։ Ներսէս Մեծի Թաղման ներկայ եղող Փաւստոս եպիսկոպոսը՝ 373—374-ին, եթէ լինէր երիտասարդ եպիսկոպոս 25—30 տարեկան հասակում — իսկ այդ դարում Հայաստանում ոչ Թէ երիտասարդ, այլ պատանի եպիսկոպոսներ ունինք, ունինք այդպիսինները և յետոյ, օրինակ Սահակ կաթողիկոսը 10-րդ դարում — հազիւ 50—55 տարեկան կլինէր հինգերորդ դարի սկզբում և կարող էր դեռ մի քանի տասնեակ տարի էլ ապրել հինգերորդ դարում։ Պապի մահը 374-ին է։ Այդ ժամանակ Պապը չափահաս և կատարելահասակ մարդ էր և ոչ անչափահաս պատանի, ուրեմն առ նուազն 25—30 տարեկան։ Պապի ծնունդը և Արշակի ամուսնութիւնը Փառանձեմի հետ՝ այս հաշուով՝ պէտք է 350 Թուից առաջ դնել։ Իսկ Փառանձեմի առաջին մարդու — Գնելի — սպանման ժամանակ Ներսէս Մեծը արդէն կաթողիկոս էր. ուստի և նրան ձեռնադրող Օւերունի Փաւստոս եպիսկոպոսը ոչ մի դէպքում չէ կարող դեռ կենդանի համարուել առ նուազն 65—70 տարի յետոյ 416—420 Թուերին։ Ուստի և ակներև է, որ բոլորովին տարբեր անձնաւորութիւններ են Օւերունի Փաւստոսը և Խոսրովի մահը գիտցող Թելակալ Փաւստոս եպիսկոպոսը։

12. **Գրութեան ժամանակը 416—425 Թ.**։ Փաւստոսի Պատմութեան գրութեան ժամանակը որոշելու համար պէտք է կարելի եղածին չափ ճշտել Վռամշապուհի, Խոսրովի, Շապուհ Սասանեանի և վերջին Արշակունի Թագաւոր Արտաշէս-Արտաշիրի տարիները։ Այս նպատակի համար

[1]) Հմմտ. Գարագաշ. Քննակ. Պատմ. Հայոց, հատ. Գ. էջ 213, որ Խոսրովի մահը դնում է 415-ին։

[2]) Տպագրին ունի վրիպակ ընթերցուածով «հինգերորդ», որ մօտի համաձայն պէտք է ուղղել «եօթներորդ», և = է ձեռագրական շփոթութիւն։

[3]) Կորիւն, էջ 11, ունի վրիպակով «ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց մեծաց», որ մի պակասաւոր Թիւ է և պէտք է ուղղել «ի տասն և վեցերորդ — ի վեշտասաներորդ = ի ԺԶ»։

բոլորովին անյարմար է Խորենացին, իբրև նորագոյն գրող[1]), և նախապատւութիւնը պէտք է տալ Ղազար Փարպեցուն և Կորիւնին։ Կորիւնը յիշում է Վռամշապուհի 16-րդ տարին։ Խորենացին տալիս է Վռամշապուհին ընդամենը 21 տարի թագաւորութիւն։ Ղազարն ասում է Վռամշապուհի համար՝ «եկաց յետ այսորիկ [= գրի գիւտից յետոյ] թագաւորն Վռամշապուհ ամս քսան և մի» (Տպ. 1891, էջ 54)։ Այս տեղեկութիւնը, որով Վռամշապուհի թագաւորութեան տարիները հասնում են 26-ի [5 տարի մինչև գրի գիւտը + 21 = 26] բոլորովին նոր կեղծիք է՝ կատարուած Խորենացու ազդեցութեամբ։ Ղազարի մեր ձեռքին հասած միակ ձեռագիրը B[2]) [Նաղէշի ձեռագիր, 17-երորդ դարի], էջ 10 ա, նախապէս ունեցել է «եկաց յետ այսորիկ թագաւորն Վռամշապուհ ամս բազումս»։ B. ձեռագրում քերուած է վերջին բառը և տեղը գրուած «քսան և մի», բայց տակի գրութիւնը պարզ կարդացւում է։ Սոյնպիսի կեղծման է ենթարկուել Ղազարում [B էջ 14 բ] նաև վերջին Արտաշէսի տարեթիւը. «Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց չոկ, յերրորդ ամի Արտաշեսի»։ Երկու գծուած բառերը քերուած են ձեռագրում, թէև այժմ ընթեռնլի, և գրուած է Խորենացու թուականը «ի զ. երորդ [= ի վեցերորդ] ամի Արտաշեսի» (Տե՛ս տպ. 1891, էջ 76)։ Շապուհ Սասանեանը Խորենացու ասելով թագաւորեց Հայաստանում 4 տարի[3]) Խոսրովից անմիջապէս յետոյ։ Յամենայն դէպս այս Շապուհի մահը Վռամ Ե-երորդ արքայից արքայի առաջին տարին տեղի ունեցաւ [420 - 421 թուին]։ Շապուհի Հայաստանից հեռանալուց յետոյ տեղի է ունենում ապստամբութիւն հայ նախարարների Ներսէս Ճիճրակեցու առաջնորդութեամբ, վերջապէս թագաւորում է Վերջին Արտաշէսը ընդամենը 3 տարի։ Տարեթուերի այս նոր սրբագրութիւններով Արշակունեաց մինչև այժմ ընդունուած բարձման թուականը — 428 — պէտք է պակասեցնել առնուազն 3 տարով և դնել ամենաուշը 425 թուին։

Փաւստոսը չգիտէ ամենայն հաւանականութեամբ Հայոց թագաւորութեան իսպառ կործանումը, երբ իւր Պատմութեան վերջում ասում է. «Նուազեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ» (Զ, 1)։ Ուրեմն իւր գրուածքը 425 թուից առաջ է։ Բայց գիտէ, ինչպէս տեսանք, վերջին

[1]) Ինչպէս արդէն ցոյց եմ տուել 676 թուից յետոյ է Խորենացու Պատմութիւնը. Արարատ 1897, էջ 422—4։ Նորագոյն հետազօտողները՝ թէ հայ և թէ եւրոպացի՝ ոչ մի հաստատուն փաստ չբերին իմ այս կարծիքը խախտելու համար։

[2]) Տե՛ս իմ յօդուածը «Ղազար Փարպեցու ձեռագրերը». Արարատ 1901, նոյեմբ. դեկտ., ուր ցոյց եմ տուել թէ ինչպէս է ընդմիջարկուել Ղազարում և հայ գրերի գիւտի պատմութիւնը տպագիր Խորենացուց։

[3]) Հայաստանում թագաւորող այս Շապուհի մասին տե՛ս և Ղազար 1891, էջ 55—57։

Digitized by Google

Խոսրովի մահը — ամենականուխը 416-ին: Ներսէսի բերանով մարգարէանում՝ է Արշակունեաց ցեղից թագաւորութեան բարձումը (Դ, 15), ուրեմն գիտէ Շապուհ Սասանեանի Հայաստանում թագաւորելը, որով իրապէս վերջանում՝ էր Արշակունեաց ցեղից թագաւորութիւնը և առաջին անգամ՝ մի սասանեան բարձրանում՝ էր Հայոց գահը: Գիտէ Ասպուրակէսի մահը (Զ, 15), ուրեմն գրել է Սահակի կաթողիկոսութեան օրով: Բայց գիտէ իբրև մարգարէութիւն Լուսաւորչի ցեղից կաթողիկոսութեան բարձումը: Բայց այդ գիտէին ամենքը դեռ ևս չորրորդ դարի վերջերում, երբ Սահակը հայրապետական գահը բարձրացաւ և [illegible]: Ամենքին յայտնի էր, որ Սահակով վերջանալու է Լուսաւորչի ցեղը[1]: Այս բանն իմանալու համար հարկ չկար, որ Փաւստոսը տեսած լինէր Սահակի անկումը կաթողիկոսութիւնից Վռամի օրով, կամ Սահակի մահը: Այս բոլորից եզրակացնում եմ, որ Փաւստոսի Պատմութիւնը գրուել է Շապուհ սասանեան Հայոց թագաւորի կամ Ներսէս Ճիճակացու պատրիարքութեան օրերը, հինգերորդ դարի առաջին քառորդի վերջին տարիները:

13. Գրուած է հայերէն և [illegible] չէ: Ինքն ըստ ինքեան հետևում է այս ասածներիցս, որ Փաւստոսը գրելով հայերի համար հայ գրի գիւտից յետոյ, երբ արդէն հայ լեզուով կար Ս. Գիրք, եկեղեցական ժամակարգութիւն, Պատարագամատոյց, բաւական հարուստ թարգմանական գրականութիւն, պիտի գրած լինէր հայ լեզուով, որին իշխում է տիրապէս, և պիտի ունենար այդ նորածիլ մատենագրութիւնից փոխառութիւններ, ինչպէս որ և ունի՝ Նարսեհի Պատարագամատոյցից, Ս. Գրքից, աղօթքներից ևն: Բանասէրներից մատնանիշ արուած և հաւաքուած[2] բազմաթիւ փաստերը Փաւստոսի վաւերականութեան դէմ իմ այս տեսութեամբ նոր լուսաբանութիւն են ստանում և աւելի ևս հաստատում Փաւստոսի վաւերականութիւնը: Կորիւնն արդէն՝ մօտաւորապէս 440—450 թուերի ժամանակամիջոցում՝ [= Մաշտոցի մահից յետոյ, Վարդանանց պատերազմից առաջ] ամբողջ հատուածներ է ընդօրինակում Փաւստոսից: Ղազարը հինգերորդ դարի վերջում՝ ծանօթ է մեր այժմեան Փաւստոսին, այն աննշան և փոքրիկ տարբերութեամբ, որ Փաւստոսի չորրորդ դպրութիւնը, որ ըստ կարգին՝ երկրորդ մասն է Փաւստոսի Հայոց Պատմութեան, ոչ բառացի, այլ ըստ իմաստին անուանում՝ է «երկրորդ պատմութիւն»: Ուրեմն այս Հ. Պատմութեան Գ—Զ դպրութիւնները ըստ բովանդակու-

[1] Թերևս շարունակուեց այդ ցեղը մի ապօրինի զաւակով, որ ծնուել էր Մաշտոցի համագիւղացի մի հարճից. «Բայց Պապայ [= որդի Յուսկան. հօրեղբայր Ներսէս մեծի] ի բուն ի կնոջէն ոչ մնաց [որդի], այլ էր նորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ ի Խացեաց գեղջէ կարճազատացն, և մնաց որ ի հարճէ անտի ի Խացեկացւոյն, որում անուն իւր՝ որդւոյ հարճին Սրիկ կոչէր» (Փաւստ. Դ, 19):

[2] Տե՛ս մանաւորապէս «Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի Պատմութեան» Ստ. Մալխասեանի, Վիեննա, 1896:

Digitized by Google

թեան կարող էին կոչուիլ Պազարից, ինչպէս և ամեն մէկից, Ս.-Պ. պատմութիւնք: Յամենայն դէպս Պազարից երբեք չէ կարելի հեռացնել, որ իբր թէ հինգերորդ դարից յետոյ Փաւստոսը ենթարկուել է նոր խմբագրութեան և թէ այժմեան գլխակարգութիւնները, ցանկերը [= «կանոնները»], «խոստաբանութիւնները» այդ նոր խմբագրութեան արդիւնք են[1]: Դժբախտաբար այսպիսի ենթադրութեան դէմ կարելի է վճռական ապացոյց բերել նոյն իսկ Պազարից, որ օգտուել է Փաւստոսի մէջ առաջին խոստաբանութիւնից, երբ քաղելով ասում է Փաւստոսի բովանդակութեան մասին. «զիրս բազմափոփոխս աշխարհիս Հայոց, զբարեաց և զչարեաց, զվարս և զգործս զարանց սրբոց և զպղծոց, զժամանակի պատերազմաց և զխաղաղութեան և այլն» (էջ 2) = Փաւստ. խոստաբանութիւն նախագիտելի . . . անցելոց իրաց գործք և վարք . . . սրբոց արանց . . . և խաղաղութեան և պատերազմի և շինութեան և աւերածոյ, և արդարութեան և անօրէնութեան, և աստուածպաշտութեան և ամբարշտութեան ժամանակագիր արարեալ . .»:

Փաւստոսի վաւերականութիւնը հերքողները գլխաւորապէս հիմնուում են Պարսիկ և մանաւորապէս Յոյն թագաւորների անունների հակաժամանակ և անտեղի գործածութեան վրայ: Փաւստոսը ժամանակագրութիւն չունի ժամանակագրութիւն, որ պիտի առաջնորդուէր յոյն կամ պարսիկ թագաւորների տարեթուերով: Բայց ի նկատի է առնելու, որ Փաւստոսն իւր ամբողջ պատմութեան մէջ միայն երկու պարսիկ թագաւորի անուն գիտէ՝ Ներսէհ և Շապուհ: Ներսէհին էլ յիշում է միայն Սատաղ քաղաքի (Գ., 21) և Սիւնեաց տոհմի (Գ., 58) աւանդութիւններից առած: Գիտէ միայն Կոստանդիանոսին, որին յիշում է պատահաբար Նիկիական ժողովի (Գ., 10) և Տրդատի հետ դաշնադրութեան (Գ., 2) առթիւ, և Վաղէսին: Այսպիսի ագիտութիւնը յունական թագաւորների մի կողմից ապացոյց է, որ Փաւստոսը ոչ յոյն է և ոչ բիւզանդացի, և միւս կողմից՝ որ Փաւստոսին չէ կարելի դատել յոյն կամ պարսիկ թագաւորների ժամանակագրութեամբ: Ժողովրդական և նախարարական ցեղերի աւանդութիւնները, իւր անձնական յիշողութիւնները, կրօնական հրաշապատում գրքեր — ահա Փաւստոսի աղբիւրները: Հիմնական սխալ է նաև հայ թագաւորների թուերով — առնուած Խորենացուց սուտ հանել Փաւստոսին: Մենք չգիտենք ոչ Տրդատի մահուան թուականը, ոչ նրա յաջորդների տարեթուերը, այլ միայն Պապ թագաւորի մահուան թուականը [† 374], երբ Պապը ոչ թէ պատանի, այլ կատարեալ չափահաս մարդ էր, ուրեմն և ծնուած մօտաւորապէս 30 տարի առաջ, իսկ նրա հայր Արշակը, նոյն իսկ Փաւստոսի պատմութեամբ՝ արդէն թագաւոր էր Պարսկաստանում քրիստոնէից դէմ յարուցուած ընդհանուր հալածանքից [= Շմաւոն եպիսկոպոս

[1] Հմմտ. Ստ. Մալխասեանի «Մի նկատողութիւն ևն», ZAPh., 1901, էջ 64–6:

ևն, հայ թարգմանութեամբ Աբրահամ Խոստովանողի] առաջ, ուրեմն և չորրորդ դարի քառասնական թուերի սկզբին: Չէ՛ հակապատմական տալ Արշակին 34 կամ աւելի տարիներ թագաւորել, բայց մեր այս յօդուածի ծրագրից դուրս լինելով այսպիսի մանրամասնութեանց խնդիրը, բաւականանանք մեր այս ընդհանուր ցուցումներով:

Փաւստոսի «Բիւզանդ» կամ «Բիւզանդացի» մակդիրը, որին ծանօթ է Ղազար Փարպեցին, թւում է, մեզ լոկ մակաբերութեամբ հետևցրած գրքի «Բիւզանդական Պատմութիւնք» անունից: Փաւստոսն այնչափ տգէտ է բիւզանդական թագաւորների ժամանակագրութեանը և գործերին, որ ոչ մի դէպքում չէ կարող Բիւզանդացի կամ Բիւզանդիայում սովորած լինել:

Ամփոփենք ուրեմն մեր այս նոր տեսութիւնը, ամբողջովին հիմնուած ձեռագրական ուսումնասիրութեանց և Փաւստոսի բնագրի վրայ:

Փաւստոսը Սահառունի չէ: Գրել է «Բիւզանդական Պատմութիւնք», որի Գ-Զ դպրութիւնները հասել են մեր ձեռքը: Վերնագրին համապատասխանում էին իրենց բովանդակութեամբ երևի Ա-Բ դպրութիւնները, որոնց մասին որևէ դատողութիւն տալու համար դեռ բաւարար նիւթ չունինք: Փաւստոսն իւր իսկ վկայութեամբ Եւսեբէս Մեծի թելակալ եպիսկոպոսներից մէկն է, ներկայ է եղել Եւսեբէսի թաղմանը, թերևս նոյն անձն է Ներսեսի նամակներում յիշուած Փաւստոսի հետ, ուրեմն այս դէպքում՝ եպիսկոպոս ձեռնադրուած 373-ին: Գրել է պատմութիւնը Ասպուրակէս կաթողիկոսի և Խոսրով թագաւորի մահից յետոյ, 416—425 թուերին: Բոլորովին տարբեր անձն է Եւսեբէսին ձեռնադրող Ծերունի Փաւստոս եպիսկոպոսը: Փաւստոսն օգտուել է Հայ Պատարագամատոյցից, իսկ իրանից օգտուել են Կորիւն և ուրիշներ: Գրել է հայերէն, շատ լաւ ծանօթ է Հայաստանի աշխարհագրութեանը և տեղական աւանդութիւններին: Ծագումով միայն Հոռոմ է, իսկ մտածողութեամբ, զգացումներով և լեզուով՝ զուտ հայ: Փաւստոսի երկը մեր ձեռքն է հասել, հաշուի չառնելով Ա-Բ դպրութեանց խնդիրը, նախկին ծաւալով, անպակաս և առանց որ և է նոր խմբագրութեան[1]:

---

[1]) Հարկաւ չենք հաշւում նաև այն փոքրիկ պակասները, որ կան Գ, 6 [որ արդէն լրացրին A և B] Գ, 16 և Զ, 16 ուր Գինդ միայնակեացի պատմութիւնը մնում է թերի: Այստեղ ձեռագրերը վերջանում են այսպէս. EZ «չինեաւ զիւր:», RI «չինեաւ զիւր եղբ:», K «չինեաւ զիւր եսր: — Բուզանդ պատմագր[ին] օրինակն մինչ աստ էր անմեղադիր լերուք:», M «չինեաւ զիւր եղբայր . . . [դատարկ տեղ է թողնում տողեր և ամբողջ սիւնակներ, զգալով որ պակաս կայ, նաև հաւանօրէն յիշատակարան գրելու համար]: P (= Պատկան.) «չինեաւ զիւր եղբայրանոցս:», W [= Վենետ.] «չինեաւ զիւր եղբարց»:

Էջմիածին.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Ստ. Կանայեանի.

I.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ և ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ

Թ. 1655/1613 [1]). — Չխբ = 1293.

Թուղթ *այժմ* 377 + *թղ.* 342 *երկրորդ*: — **Մեծութիւն** 33 × 21—25,5 *սմ.*: — **Գրութիւն** *երկսիւն*, *իւրաքանչիւրը* 23,5 × 7,5 *սմ.*: — **Տող** 25—26, *տեղ տեղ գծուած ճնշմամբ*: — **Թերթ** 33. Ա—Ժ. *կարմիր* Ա—Ժ, *ապա թերթաթուեր նոր ձեռքով գրած* ԺԱ—ԻԳ: Ա *ունի* 8 *թուղթ*, Բ *և* Գ *տասնական*, Դ՝ 14, Ե՝ 12, Զ—Ժ՝ *տասներկական. կարմիր թերթաթուերով* Ա *ունի* 11, Բ—Զ՝ *տասներկական*, Է՝ 11, Ը, Թ *և* Ժ՝ *տասներկական*: ԺԱ՝ 4, ԺԲ՝ 11, ԺԳ՝ 14, ԺԹ(*ա ա*)—ԻԲ(*դ դ*) *տասներկու տասներկու և* ԻԳ՝ 10: — **Նիւթ** *անհարթ և դեղնաւուն մագաղաթ*: — **Գիր** *բոլորագիր սիրուն, վերջերն աւելի մանր, տգեղ և դժգոյն. թղ.* 235 *նոտրագիր մատենիս նորոգողի*: — **Խորագիր** *և* **Վերնագիր** *սև մանր բոլորագրով*: **Սկզբնագրեր** *սև երկաթագիր, բայց թղ.* 234*ա*^{2} *յիշատակարանի վերնագիրն ու սկզբնատողը կարմիր*: — **Զարդագիր** *չկայ*: — **Բառանջատում** *շատ անգամ չունի*: — **Զարդ** *լուսանցազարդ, խորան, կիսախորան և նկար չկան*: — **Կազմ** *փայտեայ կաշեպատ, շատ փչացած, տակի կողքի վերևից մի կտոր տախտակ պոկուած*: — **Թուական** *թղ.* 234*բ*^{2} Չխբ (= 1293). *Նորոգման թղ.* 235*ա*^{1} Ռ, *և* Ճ. Ի (= 1671): — **Տեղ** *Կարբի, Յոհաննու վանք*: — **Գրիչն** *անյայտ*: — **Կազմող** *Զաքարիա արքիսարկաւագ քանաքեռցի*: — **Ծաղկող** *չ'ունեցել*: — **Տէր** *տր Համազասպ, ընծայուած Կարբու Յոհաննու վանքին. ապա ստացողը Յակոբը*: — **Յիշատակագրութիւն** *թղ* 1*ա*, 115*ա*^{2}, 123*բ*, 139*ա*, 221*ա ջնջուած*, 234*ա*^{1}, 259*բ*, 261*բ և* 283*բ*: — **Յիշատակարան** *գրչի թղ.* 234, *նորոգող Զաքարիա արքիսարկաւագի* 235, *այլև*

---

[1]) *Ծանօթութիւն. Առաջին թիւը* 1655 *է ձեռագրինը, որ և համապատասխանում է Սահակ Ս. Ամատունու ձեռագիր համառօտ ցուցակին, իսկ երկրորդը* 1613 *Կարենեան կոչուած ցուցակին. տպագրուած* 1863, *Թիֆլիս*:

Digitized by Google

տառացողինը տակի կողքի ներսի կողմից պատառուած թղթի մնացորդը։ — Տեղեկութիւն ձախ կամ վերին կողքի ներսի կողմից կպցուած նորագոյն П. В. Сергѣевъ No. 7 թղթի կէս թերթի վրայ թիւ 1 (այսինքն Ագաթանգեղոսի առաջին օրինակ) տակը գրուած է ձեռագրիս բովանդակութիւնը և Ագաթանգեղոսինից յետոյ ասուած է «Բովանդակին ի սմա 1. Դաշանց թուղթն, 2. Յաճախապատում» և այլն. բայց դաշանց թուղթ չկայ և հաւանական է թէ եղած չէ. հաւանօրէն ցուցակագրողի անուշադրութեան սխալն է այդ։ — Վիճակ շատ վատ, խոնաւութիւնից և գործածութիւնից փչացած. մէջը, մանաւանդ վերջերում սևացած, դժգոյն, թղթերի ծայրերը մաշուած, լուսանցքները ծակոտուած թղ. 4—6, 44—47, 243—256, 302—312, միջից 42—47, 353—377, ներքևից 243—256. լուսանցքները և ներքևները բարակ թղթիկներով նորոգուած են թղ. 114, 122—137, 152, 157, 160—171, 173—179, 227—234, 238-270 և ստուածաշնչի մարգարէութեանց տպագրուած թղթիկներով 154, 155, 158, 174 և 175 և այլն. տեղ տեղ թղթերի վարի ծայրերը մանր բոլորագիր թղթիկներով նորոգուած 1—4, 29, 67 և այլն և այլն։ Վերի կողքի ներսի կողմում շատ կտորներից կցուած երկու թուղթ կազմի պահպանակի մնացորդ. պատառուած են թղ. 1 և 7։ Բնագիրը նորագոյն գրչով սրբագրուած է թղ. 239բ, 240բ և 243ա։ — Թղթեր են դուրս ընկած (որ նշանակում ենք * նշանով) թղ. *1-ից առաջ և 9*, 17* և 116*-ից յետոյ մի մի հատ, թղ. 7*-ից յետոյ 2, թղ. 153*-ից յետոյ 5 և թղ. 377 յետոյ մօտ 15 հատ։ Թղթերը սխալմամբ շատ տեղափոխուած են. այսպէս պէտք է կարգաւորել Ագաթանգեղոս թղ. *1—7, 8—9*, 10—17*, 18—23, 35—36, 24-34, 37—79*, 86—87, *80—81, 84—85, 88—89, 82—83, 90—116*, 117—127, 130, 128—129, 132—133, 131, 134—136, 247—270, 160—163, 165, 164, 167, 166, 168—176, 178, 177, 179—194*, 195—233, 234 և 235։ — Յաճախապատում թղ. 236ա—246բ, 137ա—153բ, 156ա—158բ, 154ա—155բ, 159աբ, 271ա—311բ, 315աբ, 313ա—314բ, 312աբ, 316ա—334բ, առաջին 342աբ, 336ա-341բ, 335աբ, երկրորդ 342ա—356բ, 366աբ, 358ա—365բ, 357աբ, 367ա—377բ։

Մատեան Է

Ա. Պատմութիւն Ագաթանգեղոսի. Բնագիրը («Ագաթանգեղայ Պատմութիւն» տպ. Տփղիս 1882) պակաս է մի թուղթ դուրս ընկած լինելով (որ ցոյց ենք տալիս * նշանով), հետևաբար և

1. Յառաջաբանը չունի տպագրութեան վերնագիրը («Յառաջաբան և Ագաթանգեղայ Պատմութիւն»). սկիզբը պակաս է (տպագր. էջ 5, տող 1 «Խնձք ըղձացեալ» և այլն — էջ 7, տող 5 «առ իւրաքանչիւր ընտանիս, և գպարծանս»)։ Սկսում է թղ. 1ա[1] «վաստակոյն (տպ. «վաստակոցն») իւրեանց գրացեացն» և այլն — վերջի թղ. 7բ[2*] «արշաւասոյր, աւդավար,

յուզակ աւեացն» (տպ. էջ 7—21)։ Դուրս են ընկած երկու թուղթ, ուստի յառաջաբանի վերջն էլ պակաս է (տպ. էջ 21, տող 16 «սրավարացն մոլեգնելոց» և այլն — էջ 22, տող 5 «ծովավաստակ նաւաստեացս»)։ Ըստ այսմ

2. Պատմութեան առաջին մասը նոյնպէս թերի լինելով չունի վերնագիրը («Ագաթանգեղայ Պատմութիւն» տպ.) և պակաս է սկիզբը (տպ. էջ 23, տող 1 «Ընդ նուաղել ժամանակի» և այլն — էջ 25, տող 1 «մեծաւ քինու և նախանձաբեկ լինելով, մեծամեծս»)։ Սկսւում է թղ. 8ա^1 «փքայր ի բազմութիւն զաւրացն» և այլն — 9բ^2* «եւ երկրորդ ինձ կոչեսցիս» («կոչեցից» տպ. 29, տող 9.). ապա ընկած է մի թուղթ (տպ. էջ 29, տող 10 «Պատասխանի ետ Պարթևն» և այլն — 31, տող 17 «Նախարարք Հայապունդ զօրացն գունդ գունդ»)։ Յետոյ գալիս է թղ. 10ա^1 «հատանէին, զկնի լինէին» և այլն — 17բ^2* «ոչ առցես դու յանձն պաշտաւն» (տպ. էջ 31, տ. 17—49, տ. 9). այստեղ էլ դուրս է ընկած մի թուղթ (տպ. էջ 49, տող 9 «տանել դիցն, և» և այլն — 51, տ. 11 «Արդ մինչդեռ կայր նա»)։ Այնուհետև յաջորդաբար թղ. 18ա^1—23բ^2, 35ա^1—36բ^2, 24ա^1—34բ^2, 37ա^1—64ա^1 (տպ. էջ 51—151)։

3. Թղ. 64բ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»։ «Ան Աստուծոյ» տպ.) «Տէր Ած որ նա միայն ինքնութեամբ» և այլն մինչև 116բ^2* «առեալ յիմմէ առաքչէն զգիտութիւն» (տպ. էջ 153—259, տ. 11)։ Այս տեղից մի թուղթ է դուրս ընկած (տպ. էջ 259, տ. 11 «և յայտ արարեալ» և այլն — 261, տ. 15 «ուստի գայ կամ»)։ Մնացեալը դասաւորել ըստ տպագրին այսպէս 117ա^1—127բ^2, 130ա^{1}բ^2, 128ա^1—129բ^2, 132ա^1—133բ^2, 131ա^{1}բ^2, 134ա^1—136բ^2, 247ա^1—270բ^2, 160ա^1—188ա^2 (տպ. էջ 261—417)։

Ծանօթութիւն. Ձեռագիրս չունի տպագրութեան «Կատարեցաւ վարդապետութիւն» և այլն 7 տողը։

4. Պատմութեան վերջին մասը չունի տպագրութեան վերնագիրը («Ագաթանգեղոս դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան ընդ ձեռն առն սրբոյ նահատակի») և առանց բաժանման իբրև վարդապետութեան շարունակութիւն սկսւում է թղ. 188ա^2 «Արդ եկայք, եղբարք, զաւգուտն» և այլն — վերջ թղ. 234ա^1 «թէ տր ած մեր դու ես» (տպ. էջ 419—512)։

Ծանօթութիւն. Ձեռագիրս չունի տպագրի, որ արտատպուած է Վենետիկի 1862 հրատարակութիւնից, ընդ ամենը ԾԻԶ հատուածների բաժանմունքն ու թուահամարները. բայց ունի ընտիր փոփոխակներ, որ պարզում է շատ մութ տեղեր։ Ուղղութեան նշաններից է «ոգւ-իք» թղ. 10ա^1 և այլն, «որդ-իք» 228բ^2 և այլն։ Տպագրի Աղքիանոսը ձեռագրումս է աղքեոս 228բ^2, Նոր շիրականը նու-շիրական 228բ^2, Արուեստական-ը արուեստան 229ա^1, Սպասկապետութեան սպարապետութեան 229ա^1, Բռոտանդակը յաւսդաւսակ 220ա^1, Մանայարքը մաննաւյրք 226ա^1, Այծքը աւյծք թղ. 210բ^2։

Digitized by Google

Բ. «**Ճառք Յաճախապատումք եւ Լուսաւորք վարդապետութեան սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի** (*թղ.* 236*ա*)»

1. *Ճառ թղ.* 236*ա*[1]. *Վերնագիր* («*Ի Ս. Երրորդութիւնն*» *տպագրութիւն Ս. Էջմիածնի* 1894) *չունի, այլ սկսւում է ուղղակի գլխից* «*Մ՛ի է ինքնութիւն գոյութեանն, որ*» *և այլն: — Վերջ թղ.* 238*ա*[1] «*այնպէս չէր Հայր առանց որդւոյ իւրոյ, եւ Հոգւոյն սրբոյ*»: (*տպ. էջ* 1—4):

2. *Խրդ.* 238*ա*[1] «*Առանձնաւորութիք: Կատարեալ Հայր անձամբ, զաւրութեամբ, գիտութբ, և իմաստութբ, արարչութբ, և բարերարութբ, զամենայն զիւրն անծին իսկութբ ունի*» *և այլն* — 246*բ*[2]: *Նրա պիտի լինի թղ.* 137*ա*[1]—138*բ*[2] «*և մնացուք յուսով ի փառս ամենասուրբ երրորդութեանն, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից:*», *որով վերջանում է այս գլուխը* (*տպ. էջ* 4—21):

> *Ծանօթութիւն. Այս ճառը բաժանուած չէ առաջինից և վերնագիրը մանր բոլորագիր չէ ինչպէս նախընթաց և յետագայ ճառերինն է:*

3. *Խրդ.* 139*ա*[1] «*Միտք հաւատոց սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի: Ճշմարտութիւն հաւատոյ լոյս է աչաց մտացն շարժմանց, զգացեալ զլոյսն գիտութեան*» *և այլն: — Վերջ թղ.* 141*բ*[1] «*միշտ մշտընջենաւոր երանութիւնս վաելել ի փառս ամենասուրբ երրորդութեանն Հաւր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:*» (*տպ. էջ* 22—26):

4. *Խրդ.* 141*բ*[1] «*Յանդիմանութիւն մոլորելոց ի գիտութիւն աստուածպաշտութեան երանելոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Զի անհամեմատ է ամենակալ ամ[են]ասուրբ երրորդութիւնն, եւ յանսկիզբն էութենէն և ի մշտընջենաւորութենէն հաստատեցան ամենայն արարածք*» *և այլն: — Վերջ թղ.* 144*ա*[2*] «*և որք մոլորեցան ի ճշմարտութենէ անտի, բարկութիւնն ա̄յ կա և մնա ի վերա նորա:*» (*տպ. էջ* 27—31, *տ.* 119):

> *Ծանօթութիւն. Ձեռագրիս թղ.* 144*ա*[2], *տող* 22 *և* 23-*ի միջև, ուրեմն թերթ չէ դուրս ընկած, պակաս է տպագրի էջ* 31, *տող* 120 «*Զի զտարերս ամենայն աստուածս արարին, զշնչաւորս և զանշունչս, զջուր և զհուր*» *և այլն — էջ* 38, *տող* 232՝ *ճառիս վերջը. ուրեմն և հետևեալ ճառի*

5. *Վերնագիրը և սկիզբը պակաս է* (*տպ.* «*Հաստատութիւն ճշմարտութեան և առաջնորդութիւն կենարար խրատուց Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ: Յայտնի է իմաստնոց սրբոց, որ ունի զգիտութիւն ի գրոց մարգարէից և առաքելոց և վարդապետաց*» *և այլն — էջ* 41, *տող* 65 «*զանմոլար գիտութիւն սփռել ի լսելիս մարդկան*») *և սկսւում է շարունակութիւնը թղ.* 144*ա*[2] «*և որք զարթուցանեն զսիրտս, և ունին զերեսանակս անձնիշխան կամաց*» *և այլն: — Վերջ թղ.* 153*ա*[1] «*Որ ունի ականջս լսելոյ լուիցէ խրատուցս ի քս յս ի տր մեր որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն*» (*տպ. էջ* 41—54):

Digitized by Google

6. Թղ. 153ա¹ «Յանդիմանութիւն ծածկութից իւրաց, որ զանսրբութիւն յերեւելիս ածէ, Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Զի ոչ Հայրն ծնեալ ուստեք, այլ որդի ծնեալ և ոչ չարչարեալ և ոչ Հոգին սր ստացեալ, այլ բղխեալ մշտընջենաւորք» և այլն — Թղ. 153բ²* և ի պղջումն ածելով զմեղաւորս լուսաւորեալ և փառաւորեալ» (տպ. էջ 55—56, տող 30)։ Ապա պէտք է լինի Թղ. 156ա¹—158բ² և վերջին Թղ. 154ա (տպ. էջ 62—67) որ սովորական վերջաբանութիւնից յետոյ ունի և «փառք քեզ տէր յաղագս ամենայնի»։

Ծանօթութիւն. Թղ. 153բ²*-ից յետոյ դուրս են ընկած մօտ հինգ թուղթ. պակասում է տպագրի էջ 56, տող 30 «սրբութիւնքն էր, և է ի պայծառացուցանել» և այլն — էջ 62, տող 226 «ի գործ ածել բարւոյ և զգուշանալ»։

7. Թղ. 154բ¹ «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, վասն յօրինուածոց Արարածոց։ Յորժամ բազմացաւ իմաստութիւն» և այլն — Թղ. 155բ², ապա 159ա¹բ², 271ա¹—273ա²* «և զխաղաղութիւնն և զշինութիւնն որ պարսպեալ ունին խնդամտութբ զմարդիկ» (զմարդիկ՝ չունի տպ. էջ 68—74)։ Ապա շարունակւում է Թղ. 273ա² «ըստ մարգարէին, եթէ զպատուիրանս իմ պահեսջիք» և այլն — 274բ¹ (տպ. էջ 77, տող 269 — էջ 78 վերջը)։

Ծանօթութիւն. Թղ. 273ա², տող 19 և 20-ի միջև, ուրեմն թերթ չէ դուրս ընկած, չկայ տպագրի էջ 74, տող 198 «ի խռովութիւն և, ի տարակուսանս դարձուցանիցէ» և այլն — էջ 77, տող 269 «Աստուծոյ միայն է կարողութիւն»։

8. Թղ. 274բ¹ «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի Յանդիմանութիւն դժընդակ վարուց, և ընծայութիւն Առաքինութեան հանդիսից։ Դարմանք բանին (բանին՝ չունի տպ.) մարգարէից և առաքելոցն քարոզութբք»։ Վերջ Թղ. 282ա¹ (տպ. էջ 79—89)։

9. Թղ. 282ա¹—291բ¹ «Վարդապետութիւն կատարեալ ի տր Ամենայն արուեստ («ամենարուեստ» տպ.) պահոց երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Եւ քանզի ամենայն կարգաց չափ եդեալ յամենակալ տէրն և յարարչէն, որպէս զի» և այլն (տպ. էջ 90—102)։

10. Թղ. 291բ¹ «Նորին Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Երախտաւորութիւն, անզեղջ բարերար կամացն, և յորդորումն ի լաւն և յառաւելն, ընդ ճշմարիտ առաքինութեանն ի փառս ամենասուրբ երրորդութեանն ճառեալ։ Շնորհ.ք («շնորհս» տպ.) ունիմ երախտեաց բարերարութե[ա]ն անսկիզբն, և անփոփոխ մշտընջենաւոր տրութեանն, սր երրորդութեանն որ աղբիւրն է ամենայն արարածոց» և այլն — 298բ²* «և յաղագս այսորիկ ասէ տրն չտալ զսրբութի շանց» (տպ. էջ 103—114)։ 298բ² - 301ա²։ (103—120).

Digitized by Google

Ծանօթութիւն. Թղ. 298բ^{2}, տասներկուերորդ և տասներեքերորդ տողերի միջև, ուրեմն թուղթ դուրս ընկած չէ, պակաս է տպագրի էջ 114, տող 331 «և արկանել զմարգարիտն առաջի խոզից» և այլն—էջ 117, տող 399 «խնդրեն զկեանսն յաւիտենից»։

11. Թղ. 301ա^{2} «Սորին Սրբոյն Գրիգորի վասն վարուց Առաքինութեան, որ հանդիսիւքն լաւութեան պսակեալ երանին։ Ամենայն արուեստից լաւութեան և քաջութեան, և առաքինութեան սա երրորդութիւնն է» և այլն — 311բ^{2}, 315ա^{1}բ^{2}, 313ա^{1}—314բ^{2}, 312ա^{1}բ^{2}, 316ա^{1}—320բ^{2} (տպ. էջ 120—148).

12. Թղ. 321ա^{1}—327բ^{2} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի վարդապետութիւն բարեբար արարչին խնամոց և կշտամբութիւն անհնազանդ ստահակութե[ա]ն, և առաջնորդութի բարութեան բարուցն լաւութեան։ Բազմադիմի են երախտիք շնորհաց մերոյ հաւրն բարեբարի, և միոյ տն կենարարի» և այլն (տպ. 149—160)։

13. Թղ. 328ա^{1}—334բ^{2} «Հանդէս լաւութեան Յիշատակաց ի պէտս աւգտի զաներևոյթս յերևելիս ցուցանելով ի գործս առաքինութեան փոխելոյ ի յոյսն կենդանի ի բանակս զուարթնոցն, որ աստ կատարեն զհաճոյսն այ. Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Ա՛ խորք մեծութեան, և գիտութեան, և իմաստութեանն այ.» և այլն (տպ. 161—172)։

14. Թղ. Առաջին 342. «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, Յաղագս Մարգարէութեան, որ յայ խնամք տեսչութեան։ Մեծ է խորհուրդ ածպաշտութեան» և այլն. ապա թղ. 336ա^{1}—338ա^{1} (տպ. էջ 173—178)։

15. Թղ. 338բ^{1} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, Վասն հոգւոց մարդկան, Բացայայտութի։ Ած ըստ մեծի մարդասիրութեանն իւրոյ» և այլն — թղ. 341բ^{2}. ապա թղ. 335 և 342 երկրորդ (տպ. 179—186)։

16. Թղ. 343ա^{1}—346ա^{2} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, վասն Մարտիրոսաց Վարդայ Պետութիւն [= վարդապետութիւն] Ուսմանց։ Սկսանիմ այս|ուհետև և վասն մարտ|իրոսաց ճառել բանիւ, զի պատուեսցուք զյիշատակս նոցա» և այլն (տպ. 187—191)։

17. Թղ. 346ա^{2} «Սորին երանելոյն Սրբոյն Գրիգորի, Զգուշութիւն զգաստութեան, Ահաւոր պատրաստութեան ընդ մտերիմն, և ընդ դժընդակսն, պատիւ, և պարծանք։ Գրեալ («գրել» տպ.) ձեզ և ուսուցանել կամիմ եղբայրք իմ և որդեակք, զորս» և այլն — թղ. 349բ^{1*} «միշտ մերձաւորք լիցին մարմնոյ և արեանն տն ի ներքին մարդն»։ (տպ. էջ 192—197)։

Ծանօթութիւն. Թղ. 349բ^{1}*, տող 23 և 24-ի միջև (Թուղթ դուրս ընկնել չէր կարող) պակասն է տպ. էջ 197, տող 140 «Ընակել Քրիստոսի, որ լուսաւորէ» և այլն — էջ 200, տող 56 «և զպատիւ արդարոց և մեղաւորաց»: Հետեւաբար

18. Ճառի վերնագիրը և սկիզբը պակաս է («Սորին երանելւոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին Գովութիւնք Աստուծոյ երախտեացն Հանդիսիւք մարտիրոսաց քաջաց և առաքինեաց: Ընդաւ են խնամք բարերարին» և այլն մինչև «ըստ արժանեաց տալ զպատիժս և զպատիւ արդարոց և մեղաւորաց» տպ. էջ 198—200, տող 56): Սկսւում է թղ. 349բ^{1} «Վասն զի («զի» տպ.) Հոգևոր աւրէ[ն]քն կենդանարար են» և այլն — թղ. 350ա^{1}* «և փշալից արար զամ|ենայն անդամս մտաց» («անդս մտաց» տպ. էջ 200, տող 56—75) և շարունակւում է թղ. 350ա^{1}—352բ^{1} (տպ. 202—205):

Ծանօթութիւն. Թղ. 350ա^{1}* 20 և 21 տողերի մէջ, ուրեմն թերթ դուրս ընկած չէ, պակասում է տպ. էջ 200, տող 75 «և անդամոցն և զմտաւորս և զբանաւորս» և այլն — էջ 202, տող 110 «ոչ յաղթահարեսցի հեզութեամբն»:

19. Թղ. 352բ^{2}—356բ^{2} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի, Յորդորումն Ապաշխարութեան խոստովանեալ: Մեծ են յարգանք Հրամանաց տն, և անբաւ շնորհք բարերարին այ» և այլն. ապա 366ա^{1}—366բ^{2}, 358ա^{1}—360բ^{2}* «միահաւան խնդութիւն երկնաւորաց և երկրաւորաց»:

Ծանօթութիւն. Թղ. 360բ^{2}, տող 7 «երկրաւորաց» բառից յետոյ պակաս է, ուրեմն թերթ չէ դուրս ընկած, տպ. էջ 217, տող 324 «երանութիւն ի փառս քրիստոսի» և այլն—էջ 220, տող 54 «ի խնամս մարդասիրութեան»: Հետևաբար հետևեալ

20. Ճառը թերի է (տպ. Երանելոյն Սրբոյն Գրիգորի Առաջնորդութիւն ամենարուեստ խրատուց Հանգամանք գիտութեան և իմաստից: Որպիսի գոհութիւն և օրհնութիւն և փառս տալ արժան է ամենակալ տէրութեանն» և այլն էջ 218—220, տող 55) և սկսւում է թղ. 360ա^{2}, տող 7 «և խլել զամենայն բոյս (տպ. «բոյսս») անաւրէնութեան», և այլն — 365բ^{2}. ապա թղ. 357ա^{1}բ^{2}, 367ա^{1}—373ա^{2} (տպ. 220—239):

21. Թղ. 373բ^{1}—375ա^{1} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի վասն տրոց իմաստութեան, Որ ի հոգւոյն սրբոյ պարգևեցաւ սուղ ինչ բան: Ընդաւ են խն|ամք տեսչութեան արարչին, և լուսաւորու|թիւն առ յաւրինուածս արարածոց իւրոց» (տպ. 240—242):

22. Թղ. 375ա^{1} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի վասն անփոփոխ ինքնութեան էութեան: Որ տկարութի դնէ ածութեանն» և այլն (տպ. էջ 243—247). Վերջ թղ. 377բ^{2}* «և զղջման ապաշխարողաց, և հանգուցելոց յայս|ոսիկ շարածեալ (տպ. «շարալծեալ»): Աւրհնեսցուք»:

Digitized by Google

Ծանօթութիւն. Այնուհետև վերջից շուրջ 15 թուղթ դուրս ընկած լինելով պակաս է այս ճառից տպ. էջ 247, տող 108 «գովեսցուք և բարձր արասցուք ամենասուրբ երրորդութիւնն» և այլն — էջ 247, տող 126։ Այլ և պակաս է 23-րդ ճառը «Ներբողեան Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի խրատք ճգնութեան և ցոյցք հանդիսից որ առաքինութեան յորդորմունս։ Ամենայն ոք որ հրաժարեցան» և այլն տպ. էջ 248—205. Նոյնպէս պակաս է Աղօթք յորժամ յորոգայթ անկանիցի ոք զոր ասացեալ է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Օրհնեալ է անբաւ մարդասիրութիւն քո» և այլն տպ. էջ 206—207։

Յիշատակարան գրչի 1. Թղ. 234ա^{2}—234բ^{2}։ «Յիշատակարան սուրբ գրոցս։ Որք տծարին փառացն են ցանկացեալ, և հետևեալ նորին ճանապարհ|աց, առ ի վերին դիտ|աւորութեանն պայման, զոր խոստացաւ ան|սուտն տծ, ամենայն կամարարաց, և սիրող|աց իւրոց, և պատմող|աց, ամենասուրբ պատ|ուիրանաց, և մարդ|եղութեան, և սքանչ|ելագործութեան, և չարչարանաց, և մահ|ուան, և յարութեան, տծորդւոյն, և վերան|ալոյն առ հայր, եւ միւսանգամ գալստեանն, և ամենքեան վասն յուս|ոյն, որ ի նա չարչարեալք, և ճգնութեամբ բազմ|աւ նահատակեալք, եւս առաւել սուրբ լուսաւորիչս հաաստան աշխարհիս, եւ ամենայն քրիստոնէից, և ամենայն սուրբ կուս|անքս, որ դիպեցան, և ի սուրբ մատեանս շարադասեալք կարգ|եցան։ Որ և քաջ քարտուղ|արս ագաթանգեղոս հրամանաւ և խնդր|ուածովք սբ արքա|յին տրդատա քաջի և զաւրաւորի, յանձ|ին կալեալ ոճով պատմ|եաց մեզ ըստ իւրում հոգելից իմաստու|թեանն, ուսեցելոյ ի շնորհաց պարգևողին, ի լուսաւորութի հաւատ|ացելոց, և ի փառս քի։

Արդ պատուական հայրապետին, տն համազասպա յուսով բարեբարին այ տն յի նաեցեալ ի սէր վկաիցն, և ի համբերութիւն սբ հաւրս մերոյ գրիգորի լուսաւորչիս ետ գրել զսբ մատեանս կոչեցեալ ագաթանկեղոս, վասն յիշատակի, և միջնորդութեան յաւուր ահ[աւ]որ, և մեծ ատ|ենի, անդ ուր բանքն սպ|առին, և գործքն թագ|աւորեն։

Էւ ընձաեցոյց զսա ի սբ կարապետն ի վանս յոհ|աննու, ի լուսաւորու|թիւն հաւատացելոց, և ի վարժումն մանկանց եկեղեցւոյ, և ի փառս անմահ բանին այ, որ է աւրհնեալ յաւ[իտեանս]։ ի թվ չխ բ (= 1293).

Ծանօթութիւն. Մատենիս տէր Տէր Համազասպ հայրապետն անշուշտ պէտք է լինի Յովհաննու վանքի առաջնորդը, որ յիշում է Զաքարիա Սարկաւագը. «Թուին ՉԻԸ (= 1279) եղև Հայր Համազասպ։ Այս Համազասպ բազում արդիւնս արար, և բազմացոյց զգրեանս Աստուածային. որ և բազումք կան դեռ ևս։ Սա էր յաւուրս որդւոց իշխանին Վրդոյ, և վարէր զառաջնորդութիւնն մարմնաւոր իշխանութեամբ. և էր ինքն յազգէ Մամիկոնէից. այր փառահեղ և ահարկու տեսողացն։ Զայս ուսաք ի բազում գրոց

Digitized by Google

յիշատակարանաց և յարձանաց բազում տեղիս (Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Ա. Էջմիածին, հատոր Ա. էջ 30: Հմմ. նոյն հատորի էջ 19. Յովհաննու վանքի գաւթի հարաւային որմի արձանագրութիւնը): Առաջնորդ կամ Հայր Համազասպի անունը յիշւում է վերջին անգամ վանքի աւազանի արձանագրութեան մէջ ՉԽԹ թուին (տես Նոյն, հատոր Ա., էջ 20). բայց Զաքարիան նորա առաջնորդութիւնը երկարեցնում է մինչև ՉԿ թիւը, երբ Համազասպին յաջորդեց Վասիլ:

2. Յիշատակարան Ծոռոգողի (Նոտրագիր). Թղ. 235ա[1]—235բ[2].

«Շնորհօք, և ողորմութբ ամենազօր սբ հոգւոյն, եղև նորոգումն այսմ պատմագրի, որ կոչի ագ|աթանգեղոս: Որ պատ|մէ զվարս և զգործս սբ|բոյն գրիգորի լուսաւ|որչին, և մեծազօր ար|քային Տրդատայ [ի] սկզբ|[ա]նէ մինչև ցկատարումն և զբուն վրդ"պտութիւն, և յաճախապատումն ի թուին Ռ. և Ճ. Խ. և Գ (= 1694), 'ի Թորգոմեան սեռի յերկրիս արարատեան. ի գաւառս կարբ|ւոյ. ի հրաշափառ և գե|րապանծ սուրբ ուխտս Յօհաննու վանք, ընդ հո|վանեաւ մեծի ամլորդւոյն Յովհաննու կար"պ"տին, և Մատթէոսի աւետարան|չի, և Պարսամայ ճգնաւ|որի, և Պանդալէոնի բժ|շկի, և այլ միայնղէն սբ|բոցս որք կան աստէն ժող|ովեալ: Ի թգ"րութե|[ա]ն պարսից Շահսուլէմանի, և յիշխանութե տանս ար|արատեան Շահղուլի բէկի: Եւ ի կթղկոսութեն սբ էջմի|ածնի Տեառն Նահապետ|ի: Եւ առաջնորդութե Սբ ուխտիս, Սարգիս վրդ"պտի: Ձեռամբ աղկաղկի և տրպի Զաքարիա արշխարկաւա|գի քանաքեռցւոյ, որ ամս Ծ և Դ աստ ծ"ռ"յեմ, անհաճոյ դեգերմամբ: որ կե ամի կենաց իմոց նորոգեցի չքաւորու|թբ և աղքատութբ իմով, և ոչ ոք էր որ օժանդակ լի|նէր: Սակայն ոպէ նորոգ|եալ աւարտեցի, և աւան|դեցի զսայ առաջին բնակ|ութի իւր Յօհաննու վանք ի դուռն մեծի ամլորդւոյն, որ յատին արագածու, հանդէպ արաւլերինն, ի գլուխս բարձրաբերձ քարանցն, իվերա կարկաճահօս, և ծիծաղա|ծաւալ գետին քասաղու: Արդ որք կայք աստ և ընթեռ|նուք զսայ, յիշեցէք առ քսունակ և ածընկալ յաղօթս ձեր զառ ջդ վանիցս զսարգիս վարդապետն. և այլ միայնղէն միա|բանք սորա, զբ [երկու] Գրիգոր, և զ|յակոբ վդպ"տք, զտէր ղազար, և զտէր յովասափ, զփակակալ մկրտիչ սարկաւագ, զխաչատուր, զմարգարէ սարկաւագ|ունք, զմօսէս վասիլ տնտես. զդօլան և զյովսէփ և զյարութի մուղտեսիք, և այլ մանկունք սո|րա թուով Լ. որք մակաղեալք կան ի գոգոց (այսպէս) և ի ծոց սբ կր"տին. և զիս խոկ զաքարիայս որ բզ"մ չարչարանօք հազիւ կարացի|ի կատարել քանզի յոյժ ապակ|անեալ էր, վս զի ր"զ"մ լուսան|ցս հատեալ էին և իւրեանց կարիքն անցուցեալ, և ես զոր ինչ կարացի նորոգեցի, և զոր ոչն կարացի, ներեցէք ինձ, և զաշխատանս իմ ապախտ մի առնէք վս այ, զի և դու որ ընթեռնուս յայ առցես զվարձս: Ամէն:

Սեղանս կազմեալ արքունական,
ի խրախութիւնս հոգեկան:
Յորժամ գայցէ անմահ փեսայն,
նստի աթոռ դատողական:
Յայնժամ կոչէ զազգս ամենայն,
Հատուցանել զվարձս մարդկան:
Անդ պատահի զաքարիայն,
երթ յետս յինէն լսէ զձայն:
Ո՜վ եղկելի թշուառական,
վայ և եղուկ ո՜հ քեզ կարդան:

Անուն իմ բաղկանայ չորիւք տառիւք. առաջինն ի միակէն, երկրորդն ի երկրորդէն, երրորդն և չորրորդն ի չորրորդէն [գի՛րք] և քի փառք յաւիտեանս ամէն:

Ծանօթութիւն. Այս յիշատակարան ուրեմն Զաքարիա պատմագրի ձեռնագիրն է:

3. Թղ. 378ա^1. 19 տող կէսից աւելին պատառուած: — և . . . . : սար . . . . : անա . . . . : գիրք . . . իմոց . . . ծընաւ . . . . ըն իմոյ տր . . . և մայրն իմ . . . եղբայրն իմ ո . . . . քվուվերացն իմ . . . սաբեդին որ առքն . . . Նգուցեալ. Հէրիքնազ . . . մուր[ա՛]դին. և այլոցն ամէ[ն]եցուն ամէն: Պարձեալ ես յակոբս ցանկացայ յայնմը բանի, որ ասէ Էջրանի այնոցիկ որ ունիցի ղաւակ ի սիոն. կամ . . . անտանի երուսաղէ[մ]: —

Ծանօթութիւն. Այս Յակոբը, ինչպէս երեւում է, մատենիս յետագայ տէրը կամ ստացողն է: Թղ. 115 Լուսանցքում «Յակոբ ծառայ». հմմ. և թղ. 261բ^1 «լուսանցագիրը»: —

Յիշատակագրութիւն 1. Թղ. 123բ. Լուսանցքում մանր նոտրագրով «ես յակոբս սա[ր]կաւագ գերեցի այս գրս ով կարդաք ած ողոմ տացէք. ամէն»: — Թղ. 259բ. լուսանցագիր անվարժ ձեռքով «ստացող (առաջի՛ն) գրոյս [Յա]կոբին, հայրն նորա Աանէսին մայրն . . . ճին. ով որ կարդ[ա]յք մին բերան ողորմի ասէք. ած ձեզ ողորմի»:

2. Անշան կամ անընթեռնլի գրութիւններ թղ. 1ա. 221ա^2, 378բ: — Անծանօթ (վրացերէ՞ն) թղ. 139ա ներքև լուսանցքում: — Թղ. 283բ միջի լուսանցքում ծածկագրութիւն նոր ձեռքով «1881, յունուարի 21»:

Digitized by Google

II.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ և ՈՍԿԵԲԵՐԱՆ

Խ. 1656/1614։ — Նմխքան 1261։

Թուղթ *այժմ* 368։ — **Դատարկ** *սկզբից կազմի թուղթ* 1,2 *և վերջից* 368, *միջում* 150 *և* 235, *բոլորն էլ նորագոյն թուղթ և* 325*բ*, *վերևում յետին ժամանակի գրուածք, ուրիշ ձեռքով։* **Մեծութիւն** 29×20 *սմ.*։ — **Գրութիւն** *երկսիւն, իւրաքանչիւրը* 23,5×7,5։ — **Տող** 22, *իսկ* 172—174 *ունի* 16—20, *գծուած կապարով և ճնշմամբ։* — **Թերք** 32 Ա—ԼԲ. *իւրաքանչիւրը* 12 *թուղթ.* Ա՝ 4, ԼԲ՝ 2. *թերթերի սկիզբը և վերջը նշանակուած։* — **Նիւթ** *թուղթ հաստ ու պինդ և կոկ։* — **Գիր** *խոշոր բոլորագիր։* — **Խորագիր** *Ոսկեբերանի ճառի և* **Վերնագիր** *բաժանմունքների և սկզբի մի քանի տողերը մուգ և բաց կարմիր։* — **Սկզբնագիր** *հատածների՝ սև։* — **Զարդագիր** *կարմրագոյն գլխագիր* Ի *ամբողջ երեսի երկարութեամբ թղ.* 261*ա*^{1} *և* 289*ա*^{1}. *միւսները մեծ մասամբ սև և երբեմն գունաւոր. Խորշնագիր* 26*ա*^{1}, 326*ա*^{2}։ — **Բառանջատում** *համարեա միշտ ունի։* **Լուսանցազարդ** 26*ա*, 48*ա*, 88*ա*, 275*բ*, 291*ա*, 326*ա՝ բոլորը մուգ կարմիր. սևագոյն* 267 *ա.* **Կիսախորան** 9*ա*, 48*ա*, 88*ա թռչնազարդով,* 261*բ և* 326*ա բոլորը մուգ կարմիր.* — **Կազմ** *փայտեայ կաշեպատ։* — **Թուական** ԺԲ—ԺԳ *դար։* — **Տեղ** *Ս.կներ անապատ* 361*ա*։ — **Գրիչ** *Պաւլիթ բջնեցի* 247*ա*^{1}. *հմմ.* 366*ա և այլն և* 275*բ*։ — **Կազմող** *և* **Ծաղկող** *անյայտ։* — **Տէր** *Ս.կներ անապատ կամ մենաստան* 366 *և այլն։* — **Յիշատակագրութիւն** *թղ.* 1*ա*, 4*բ*, 15*բ*, 26*ա*, 47*ա*, 48*ա*^{1}, 83*բ*, 174*բ*, 178*բ*, 200*ա*, 247*ա*^{2}, 261*ա*^{2}, 275*բ*^{1}. 323*ա*^{1}*բ*^{1} *և* 325*աբ խծբծանքներ։* — **Յիշատակարան** *թղ.* 366*ա*—367*բ*^{2}։ — **Տեղեկութիւն.** *կազմի մէջքին կպցուած սպիտակ տպուած թղթիկի վրայ* «1656» *և տակը դեղնագոյն թերթիկի վրայ ձեռագիր* «2» (*այսինքն՝ մատենադարանիս Ագաթանգեղոսի երկրորդ ձեռագիրը*)։ *Ձախ կողքի ներսի կողմին կպցուած նոր թղթի վրայ* 2*մր.* 2-*ի տակ գրուած է մատենիս բովանդակութիւնը։* — **Վիճակ** *շատ թղթեր, մանաւանդ վերջում սևացած, ծակոտուած թղ.* 339—368. *ճղճղուած, բայց նորոգուած՝ թղ.* 22, 172, 198, 316. *կազմելուս ծայրերը կտրուած են, հետը և լուսանցազարդերը, ներքնագրերը և թերթահամարները, որոնք շատ անգամ չեն էլ երևում։ Թղթեր են դուրս ընկած և տեղափոխուած. ուստի դասաւորել այսպէս. Ագաթանգեղոս թղ.* *4*աբ**, *3*աբ*, 5*ա*^{1}—94*բ*, 131*ա*—134*բ*, 99*ա*—130*բ*, 95*ա*—98*բ*, 135*ա*—143*բ*, 156*ա*—157*բ*, 146*ա*—149*բ*, *151*ա*—155*բ*, 144*ա*—145*բ և* 158*ա*—234*բ*, *236*ա*—261*ա** *և այլն։* — *Ոսկեբերանի լուսաւորչի ճառը թղ.* 326*ա*—365*բ**։ —

Մասեանս Ե

Ա. Պատմութիւն Ագաթանգեղոսի. թղ. 3ա¹—325բ².

1. Խորագիրը պակաս և յառաջաբանը սկզբից թերի. սկսւում է թղ. 3ա¹ «Սոքա և զգանձն երկնաւոր յաւելուն տան այնոցիկ որք առաւել ունիցին, զի որ ունիցի տացի նմա և յաւելցի» և այլն. թղ. 3բ² վերջանում է «միայն ծարաւի լեր սիրելոյն, և անդէն աղբիւրն» (տպ. Թիֆլիզ 1882, էջ 13, տ. 6 ներքևից — էջ 15, տ. 12 վերևից)։ Վերջ յառաջաբանին թղ. 9ա¹։

Նշանակ. Յառաջաբանի սկզբից դուրս է ընկած 1 թուղթ՝ թղ. *4աբ-ից առաջ (տպ. էջ 5 «Խղձ ըղձացեալք» և այլն — էջ 6, տ. 8 «զանցս եղելոյ աշխատութեան ճանապարհացն»). յետոյ պէտք է լինի թղ. 4ա¹բ², որ սկսւում է «զեղևէջ տարուբեր անդադարն սահմանաց, գրաւական եղեալ զանձինս շահաւորն աւգտութեան» և այլն և վերջանում է «մարտընչին ի մէջ բարձրացելոց ջերեղև վիրանց, և ի մէջ խռովուց եկեղեցւոյ ծովախին ձորոցն, ջանան զապրուստ անձանց փրկութե գտանել» (տպ. էջ 6, տ. 8 վ. — էջ 7, տ. 7 ն. ընդգծուած բառերը չկան տպագրում)։ Ապա դուրս է ընկած 4-5 թուղթ, որով պակասում է տպ. էջ 7, տ. 18 «զի ի շրջանացն չփոթեալ ուռուցեալ ի փոթորկացն բքացելոց» և այլն — էջ 13, տ. 19 «նոքա և զծարաւիս արբուցանեն առաքինութեան բաժակաւն»։

2. Թղ. 9ա. կարմիր կիսախորանով, լուսանցազարդով և վերնագրով սկսում է Պատմութեան առաջին մասը։ «Սկաբանութի Սրբոյն գրիգորի Հայոց լուսաւորչի. և առաքելանման վարդապետի։ Յագաթանգեղայ պատմութենէ։ Ընդ նուաղել ժամանակաց թագաւորութեանն պարթևաց, իբառնալ տէրութեանն արտաւանայ որդւոյ վաղարշու» և այլն (տպ. էջ 23—88, § Ա.—ԺԲ.)։

Բ. թղ. 48ա². իբրև նոր բաժանմունք ունի կարմիր լուսանցազարդ, կիսախորան և զարդագիր սկզբնատող։ «Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, խնդրեաց իւր կին կայսրն դեոկղետիանոս» և այլն (տպ. էջ 88—151, § ԺԳ—ԻԲ.)։

3. Թղ. 88ա. Վարդապետութիւնն սկսւում է կարմիր լուսանցազարդով, խորանով և զարդագրերով։ Վերնագրի տեղ ունի թղ. 178բ և 200ա ներքևի լուսանցքում հետևեալը. «Ածաբանութի սրբոյն գրիգորի Հայոց մեծաց լուսաւորչի»։ Սկիզբն է «Տր Ած որ նա միայն ինքնութիւն եւ ոչ ոք յառաջ քան զնա, և չիք ոք այլ որ երևի արարիչ և որ ոչն երևի» և այլն — թղ. 261ա* (տպ. էջ 153—417, § ԻԳ—ՂԸ)։

Digitized by Google

Ծանօթ. Թղ. 150 նորագոյն թուղթ է և դատարկ, պակասում է ուրեմն տպ. էջ 246, տ. 11 «իւրոյ ընդ իւր, և գործք իւրաքանչիւր» և այլն — էջ 247, վերջին տողը «զի ձայն բարբառոյ էր նա»: § ԽԱ-ի վերջից 21 տող և ԽԲ-ի սկզբից 11 տող: Այնպէս նորագոյն թուղթ և դատարկ է Թղ. 235, որտեղ պակաս է տպ. էջ 378, տ. 9 «. . . բեւրք և ծաղկաբերք ժամանակաւ ունէին» և այլն — էջ 379, տ. 4 ն. «զիւրոյ ժամանակին ըղէպս ի նմանութիւն օրինակաց յանդիւ»: Ընդամենը § ՁԱ-ի վերջի մասից 29 տող և ՁԲ-ի սկզբից 8 տող:

Թղ. 143բ* «զյովաննէս» վերջին բառից յետոյ, ուրեմն Թղ. 156ա¹-ից առաջ պակասում է տպ. էջ 236, տ. 6 ն. «մեծ մարգարէիցն պատրաստել ճանապարհ» և այլն — էջ 237, տ. 5 «Այնպէս և Յովհաննէս». ընդամենը 10 տող, սկսեալ § ԽՕ, տ. 5: Այս պակասը բացատրւում է սկզբում և վերջում եղած Յովհաննէս անունով. գրիչը սխալմամբ, ինչպէս ասում ենք, թռել է մի տեղից միւսը:

Այսպէս չէ Թղ. 261ա², որ չունի տպագրի «Կատարեցաւ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» և այլն 7 տողը:

4. Թղ. 261բ². Պատմութեան վերջին մասը չունի վերնագիր. բայց ունի կարմիր լուսանցազարդ, կիսախորան և զարդագիր սկզբնատող. «Արդ եկեալք եղբարք զաւգուտն վասն հասարակաց շինութե փութասցուք» և այլն, որ վերջանում է տեսիլքով Թղ. 275բ¹ «եւ զայս ասացեալ շարժումն եղեալ առաւ|աւտանալն ծածկեցաւ տեսիլն» (տպ. էջ 419—440, § ՂԹ—ՃԲ):

Բ. Թղ. 275բ² ունի կարմիր լուսանցազարդ և սկսւում է մի տողը կարմիր զարդագրով և երեք տող կարմիր երկաթագրով. «Արդ ամենաբարն, ամենաստեղծն, ամենահաստիչն, ամենիմաստն, ամենատրն, ամենակալն, ամենագիւտն, ամենաբժիշկն խրատեաց զձեզ» և այլն: Նոյն ձևով է և Թղ. 291ա¹ «Պատճէն հրովարտակին: ի վաղնջուց հետէ կորուսեալք տգիտութբ» և այլն: Մերջ. Թղ. 325ա² «Զի նոցա առ արարչութի անդր այսպիսի բարբառ արձակեալ ասաս|ցեն. մի ած մեր դու ես: Եւ նա ասաց ժողովուրդ իմ դուք էք»: (Ընդգծեալը չունի տպագիրը. էջ 440—512, § ՃԴ—ՃԻԷ):

Ծանօթ. Ձեռագիրս չունի տպագրի գլխաթիւ համարները. տպագիրն էլ չունի ձեռագրիս վկայութեանց չակերտները: Գաղափար օրինակը երևի հին և ընտիր է եղել (տես յիշատակարանը): Տպագրի էջ 19, վերջին տողի «զի կամակարագոյն նաւիցիմք զալեօք ժամանակագրական ծովուս» բառերից յետոյ ձեռագիրս ունի Թղ. 7բ² «զարմ|անալ յոյժ էյալ ժողով|րդեան տեսցելոյ որ ապրեցուցեր զոր: որք յետ այոր ան|ցեալ ժամանակի գոլոց էցեն» և այլն ըստ տպագրի: Այնպէս տպագրի էջ 511, տ. 5 «ի ներքոյ երկնից» բառերից յետոյ ձեռագիրս ունի Թղ. 324ա² «Աստուծ և երանել|ւոյս այս հաւրն|կասին տանել յառա|ջ» և այլն ըստ տպագրի:

Digitized by Google

Բ. Թղ. 326ա—365բ*. «Երանելոյն յովհաննու ոսկեբերանի կոստանդնուպաւ|լսի եպիսկոպոսապե[տ]ի ասացեալ. վասն վարուց և նահատա|կութե սրբոյն գրիգորի հայոց մեծաց լուսաւորչի: ի կոկիսոն հայոց մինչ յաք|սորս էր: ի խնդրոյ հայազին ուրեմն եպ|իսկոպոսի և վարդա|պետի համազգոյ նո|րին Պետոսկորոս ան|ուն կոչեցելոյ: Եւ այլ ևս յօնախումբ բազմութե որք ժո|ղովեալ էին յաւուր յիշա|տակի մեծատաւնի նորուն սբ լուսաւոր|չի արևելեան աշխարհին: Զարմանալի է մեզ տաւնս այս աւր և պայծառագոյն քան զսովորական շարադրութիւնս: և զե՞նչ իցէ պատ|ճառն, և կամ ո՞վ արդեւք կոչնատէր բազմահոյլ հանդիսի» և այլն: Վերջ Թղ. 365բ[2]* «ընդ հովիւն հով|ուեցեր զհաւտ քո բանաւոր: իբան|խարկու Թշնամոյն փորձեցար: ընդ քի»: (տպ. Վենետիկ, 1853. Սոփերք Հայկականք Ի. էջ 3—81):

Ծանօթ. Թղ. 365 բ-ից յետոյ դուրս են ընկած երեք թուղթ, պակասում է ուրեմն տպ. էջ 81, տ. 2 ն. «յաղթեցեր: Զի՞նչ այսուհետև կոչեցից զքեզ» և այլն մինչ վերջ՝ էջ 87: Նոյնպէս ուրեմն պակասում է տպագրի յիշատակարանը «Ի թուականիս ՇՂ (= 1141) թարգմանեցաւ յունականէն ի մերս, ի ձեռն Աբրահամու ղուամատիկոսի . . . իսկ յարմարեցաւ ըստ բանից դպրութեան և բառից յիմոյ նուաստութեան Ներսիսի, հրամանաւ տեառն իմոյ և հարազատի Գրիգորիսի Հայոց Կաթուղիկոսի» և այլն: Ոսկեբերանի այս ճառը հրատարակել է Մսեր Մսերեանց Ճ՚ռաքաղի երրորդ հատորում իբրև յաւելուած (տե՛ս Ճ՚ռաքաղ, Մոսկուա, 1861—1862, էջ 1—33), ուր, էջ 3, յառաջ բերելով յիշատակարանը, ասում է. «Գտանի և լատիներէնն ճառիս այսորիկ յեղեալ ի Հայկականէ երկասիրութեամբ Տէ Վիլլէֆրուայ քահանայի ծանօթի արևելեան լեզուաց. զոր և այլ ոք Մոնդֆաւգոն անուն ի լոյս ածեալ է ի Հաւաքոյթս գործոց Ոսկեբերանին (ի հատ. ԺԲ): Եթէ և Հայկականիս լեալ իցէ երբէք տպագրութիւն, այլ այնմ հանդիպել մեզ ոչ յաջողեցաւ»:

1. Յիշատակարան գրչի Թղ. 366ա—367բ*: «Իսկ յետ բազում ժա|մանակաց ծագեաց լոյս ածգիտութե ի խաւար մեղաւք յաշխար|հն Հայաստանեա[յ]ց, զոր և ինքն իսկ տր մեր ասաց՝ ոչ են կամք հաւ|ր իմոյ թէ կորիցէ մի ի|փոքրկանցս յայսցանէ»: Նաև գթացեալ փոխա|նակ առաքելոցն առա|քէ զում սբ, զգրիգոր|իոս ասեմ, զբազմաչարչարն, զխ[ո]տամբերողն, զխարազնազգեցն, զքսաւէրն, զհամ|բերատարն, զիշխան|ակիցն պետրոսի և պաւղոսի սբ առաքելոցն: Զարչարեալ տասն վանազան տանջանաւք. որ և զայս նամակս շարագրեաց մեծահանճար քարտուղարն ագադանգեղոս իսկզբան մինչև ցկատարումն: Յայս ի . . . [մխի]թար եղեալ իբազմա|չաւհ մեծագիր գանձուցս սբ եղբարց մեծ և հռչակաւոր անապա|տիս ակներ կոչեցեալ զի ունելով այլ(ս) գիրս դժուար ընթեռնլի, զի ոչ ախորժէին ընթեռ|նուլ իժամատեղ կամ ի|սեղանն համարձակ: Իսկ

Digitized by Google

կամակից եղեալ առաջնորդք ուխտիս փոխեալ զսա յայլ գիր, որով և իմ յանձն առ|եալ զհրամա[յ]եալս ի|պատուական հարց և եղբարցս գրել զսա: . . . . . ուք ամենա| . . . . կատարե| . . . . . արողութե . . . ոչ եթէ գիտէ|ի զարուեստ գրչու|թե յանդգնեցաք ի գործս, այլ ըստ յուսոյ մեր որ ի|սբ յուխտս, և ըստ հր|ամանի պատուական եղբարցս, որպէս և գր|եալ է թէ կեանք է լսողութիւն:

Եւ արդ աղաչեմ և մաղթեմ զձեզ ո՜վ ամենամաքուր և հոգ|իապայծառ սբ դասք քահանա|յ|ից և միայնա|կեցաց որք հանդիպիք այսմ տառի կամ ընթեր|ցմամբ՝ կամ գաղափար առնլով: յիշել առ քս զպատուական հայրն զգրիգոր մաքրակրօն քահանայ և զտր բարսեղ և զվարդան վրդ (= վարդապետ) սքանչելի վարուք փայլ|եալ ի մէջ եկեղեցոյ: և զփակակալ սիմէոն և զհայրապետ ամենայնի սրբասէր և ա̃ծահաճ|ոյք, նաև զհոգևոր եղբայրս իմ զներսէս և յոհանէս յոյժ պիտանի և աւգտակար ի գործս բարիս: և զայլ ամենայն եղբայր|ութիս որ ոչ էր կար մի ըստ միոջէ անուանել: աղաչեմ յիշել և զթոր|ոս միակեաց և զգրիգոր որ աշխատեցան ի կոկ թղթիս, նաև զմնտես և զմարմկան (մառանապա՜ն) և զհացպան և զփռնկան (փռնապա՜ն) և զամենայն աշխատողս առ քս յիշել: զսբ ծնրունիք զսարգիս և զկարապետ . . . . եմ: Յուցից և զձեզ սիրել|իք փոքրիշատէ զթշուառութի իմոյ տկարութես, որ տր|ուպ և անարգ և անպի|տան յամենայն գործս: զի չեմ ստացեալ գործ բարի, այլ զամենայնն խոտոր և չար և անշահ:

Ե՝ և ինձ պատմել, զի գոլով իմ, ի նահանգէն յարևելից, յայրարատ|եան գաւառէն, ի դղ|եակէն բջնոյ: և իմ խո|ցեալ չար վիրաւք հոգ|ովս, զանազան մեղաւք: ապա այնուհետև որպէս զչար վիրաւք հարեալ մարդ ի խնդիր ելեալ բժշկի և ոչ ուրեք գտեալ այլ միայն դէմ եդեալ գնալ ի սբ քաղաքն եմ, և ի հռ|ոմ ի պատկերն անձեռ|ագործ, և զսբ պետրոս և պաւղոս, նաև յա̃ծածին որ ի ծագս տիեզերաց և իսբ առաքեալն յակոբ: Քանզի ոչ եթէ վս պան|ծանաց գրեմ զայս, այլ վս մեծ մեղաց իմոց որ անհ̃ուն է և անչափ է: Իսկ դարձեալ զհամ|բաւ բարեաց և սբ կր|աւնք և կանոնք այս մենաստանիս, և յոյժ ցանկացայ, և եկեալ եմ յուսով մեծաւ և աշխա|տութբ յոյժ և տուայ([a]): Տեսեալ զիս աւտար և պանդուխտ, ոգեսէր եղբարցս և գթաց|ին յիս իբրև զծնաւղ և ցուցին ինձ սէր իբր|և զտր յս: զոր հատուսցէ քս սոցա ըստ իմ. . . (մի տող կորուած) տացէ հանգիստ յաւ|իտենից ընդ սբս իւր և ոչ միայն զայս այլ ևս առաւել ցուցին յիս գթութիւն: Եւ ես ոչ ունելով զձեւ սոցա և զկարգ, զի ամենեքեան իբրև զհրեշտակ ա̃յ արթ|ուն և զուարթուն յաւրինաբանութիս ա̃յ խոսէ և ի գիշեր|ի անդրդաղ և անհանգ|իստ, և զայս տեսա|նելով իմ, վա̃յ և եղուկ ասելով անձին իմոյ, զի թափուր գոլով ի|կրաւնից սոցա և յաւրաքինութենէ: Բամեալ զիս այնու|հետև զմտաւ ածի զգործս զայս

Թերևս լինիմ կցորդ բարեաց սոցա։ ուրեմն և որդորելով զիս և խրախուսելով սբ Հարցդ որ ի վերոյ գրեցաք։ Քանզի և մեր տրն անխարդամեծար է ընդունի զաշխատութիւս իմ որպէս զխերևեշ այրոյն, և զմազ այծիեաց ի սպաս տաճարին։ Այլ դարձեալ մոխրախառն դիմաւք և սրտխառուչ հառաչմամբ աղաչեմ զսրբութիւդ ձեր անմեղադիր լինել սխալանացս և սիրով ուղղել, զի այս էր կարողութի իմ։ այլ ի ստոյգ աւրինակէ գրեցի և ըստ չափու զգրադարձ . . .» (Թուղթ է դուրս ընկած)։

2. Յիշատակագրութիւն. Թղ. 48ա[1]. մանր բոլորագիր «Ով համագումար դասք սրբազանից յորժամ ընթեռնոյք կամ լսէք յիշեցէք ի քս զ[յ]որդորիչ գործոյս զհայրապետն և զսիմեոն փակակալ և զանմաքուր գծողս Թէ արժանի առնէք յիշատակի վս սիրոյն քի զի և դուք յիշեսջիք յայ մերմէ»։

Թղ. 247ա[2]. «Զամենամեղս և զբազմանչարս, զանարժանս յոքունց զգրիչս Դաւիթ յիշել յիշել աղաչեմ առաջի սբ տառիս ծնապատում. և զծնողսն մեր և զամենայն եղբայրութիւս, նաև զներսէս զհոգևոր եղբայր։ և որք յիշէք յիշե[ա]լ լիջիք ի քէ ամէն»։

Թղ. 325ա[2]. «Ողորմութբն այ սկսայ յամսեանն դէկտեմբեր։ ԺԱ։ և շնորհաւք սբ հոգոյն կատարեցի իմարտ։ Ա։ Որ հասուցեր զմեզ ի գիծ վերջի այսմ նամակի սբ երրոդութի։ Քեզ փառք։ և այլն։

Ծանօթ. Այս երեք յիշատակագրութեանց գրչութեան նմանութիւնից ինչպէս և Ագաթանգեղոսի պատմութեան նամակ անուանելուց (հմմ. գլխաւոր յիշատակարանը) կարելի է ասել գրքիս գծողը, գրիչն է Դաւիթ կրօնաւոր։

3. Թղ. 325բ. Անվարժ ձեռքերով և զանազան գրչութեամբ գրութիւններ սկսեալ վերևից։ «զԹաթէոս երէցս յիշեցէք. ով մեզ ողորմի աստ նայ ծն իրեն ողորմի»։ — Տարբեր գրչութեամբ, անվարժ մանր բոլորագրով «Տէր ես արիստակէս սուտանուն աբեղայ որ զմծարան գիրք տեսայ ու բերի ի վանքս մեյտեննու ի դուռն սբ յուսաւորչին, ով որ կարդայ ու բան աւկտի ծն Թողու զիւր մեղքն և զծնողին։ գրեցաւ գիրս Ջ.ՀԲ [= 1523]»։ — Միևնոյն ձեռքով քիչ ներքև «Զարմանք այս է որ զչարն որ չեմ կամենար նայ ամէն ժամ գործեմ։ ս զբարին զոր կամենամ գործել նա չեմ այներ հընձգուն մեղաւոր եմ ու գարշելի ու անյիշելի»։ Սորա կողքին այլ ձեռքով «Թվիս հայոց Չ։ Ժ» [ՉԺ = 1261]։ Նրա երկու Թուշնալարդ և ներքև «Թվիս հայոց ի։ ՊԽ» [= 1391]։

Ծանօթ. ԶՄ տառերը, ինչպէս և կից երկու բառերը նորագոյն գրչի ձեռնագիր են տարբեր մատենիս գրչութիւնից, այնպէս որ ձեռագիրս հաւանօրէն աւելի առաջ է քան 1261 թուականը։

4. Լուսանցագրեր մանր բոլորագրով. Թղ. 15բ, ներքև «ով եղբարք թ՛իթէ պակասէ յայս դէմս։ և յաւրինակէս է որ չգնես մեղ վս այ»։ — Թղ. 47ա, ներքև «տր յս ողորմեացի վարհամ միայնակեցի որ զիմ չուխայն կոխել երետ»։ — Թղ. 1ա. Նոտրագիր. «Թվ ՌՃԵ [= 1656] խաւարեցօ[= աւ] արեգակն օգոստոսի Բ օրն դշբթի [= չորեքշաբաթի]»։

Besprechungen.

Eusebius Kirchengeschichte, Buch VI und VII. Aus dem Armenischen übersetzt von Erwin Preuschen. Leipzig, J. C. Hinrichs, 1902. Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur. Herausgegeben von Oscar v. Gebhardt u. Adolf Harnack. Neue Folge VII. Band, 3. Heft.

Bei aller Anerkennung, die man Preuschens mühevoller Arbeit zollen muss, ist doch die Frage aufzuwerfen, ob unter den obwaltenden Verhältnissen eine Übersetzung nicht verfrüht war. Vor allem ist der mangelhafte Zustand der einzigen, von Djarian (= Ջարեան) veranstalteten, Ausgabe in Betracht zu ziehen. Bedenkt man, dass diese ein ziemlich kritikloser, nur hier und da verbesserter, Abdruck einer einzigen offenbar unvollkommenen Handschrift ist, so kann diese nicht als hinreichende Grundlage angesehen werden. Es wäre richtiger gewesen, möglichst viel handschriftliches Material heranzuziehen, das wohl in verschiedenen Bibliotheken vorhanden ist, beispielsweisc in Etschmiadsin, in Wien, in Venedig und anderswo (vgl. Կարենեանց, Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի ս. Աթոռոյն Էջմիածնի, ի Թիֆլիզ ի 1863 ամի, S. 179, No. 1619, S. 187, No. 1682. — Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց . . . Վիեննա, 1895, S. 243, No. 49 u. s. w.). Dann würde man auch erst in den Stand gesetzt werden, die sprachlichen Schwierigkeiten der armenischen Version richtig beurteilen zu können. Denn Preuschens Voraussetzung, der Übersetzer habe sich sklavisch an seine syrische Vorlage gehalten und einer indogermanischen Sprache ein semitisches Kolorit verliehen, kann allerdings zutreffen, bedarf aber ganz entschieden noch des Beweises. Ja, noch nicht einmal das kann als eigentlich bewiesen erachtet werden, dass überhaupt eine syrische Version zu Grunde gelegen hat, wenn dies auch wahrscheinlich sein mag. Die Stelle bei Moses Chorenatzi ist auf jeden Fall nicht beweisend.

Dass der armenische Text in seinem gegenwärtigen Zustande stellenweise sprachliche Schwierigkeiten bietet, steht fest. Auf den

Digitized by Google

ersten Blick sieht man Merkwürdigkeiten in der grammatischen Konstruktion und in der Wortbedeutung, die der Sprache des fünften Jahrhunderts fremd sind. Der mit der Geschichte der armenischen Sprache näher Vertraute wird deshalb aber nicht nur an Beeinflussung durch ein stammfremdes Idiom denken, sondern auch eine solche durch nichtklassische, jüngere Formen und Konstruktionen, mögen diese durch ungebildete Abschreiber eingeschleppt worden sein, oder mag die ganze armenische Übersetzung einer späteren Zeit angehören. Denn auch die Frage nach dem Alter des armenischen Textes ist noch unentschieden. Weder die Übereinstimmung des Abgarbriefes bei Moses Chorenatzi und Eusebius, noch die armenisehe Überlieferung über die Übersetzungszeit der Kirchengeschichte sind beweisend. Der auf uns gekommene Text braucht doch nicht derjenige zu sein, den Mesrop im 5. Jahrhundert hat abfertigen lassen. Er kann ja eine durch den Verlust des ersteren veranlasste zweite Übersetzung sein, worin auch der weithin bekannte Abgarbrief übernommen sein könnte. Denn die Sprache des jetzigen armenischen Textes hat entschieden eine spätarmenische Färbung.

Unter diesen Umständen, deren Ungunst durch den Mangel ausreichender Übersetzungswörterbücher noch vermehrt worden ist, hat denn auch die deutsche Übersetzung leider nicht wenig gelitten, wobei die Schuld ja zum Teil der armenischen Ausgabe mit zur Last fällt. Im nachstehenden Fehlerverzeichnis zu Buch VI S. 1—39 incl., worauf ich mich mit Rücksicht auf den zur Verfügung stehenden Raum beschränken muss, habe ich nebenbei in Fussnoten Verbesserungen des armenischen Textes vorgenommen, die nach paleographischen und anderen Erwägungen möglich sind. Diese sollen jedoch nur als Vorschläge gelten, die eventuell durch handschriftliche Differenzen entkräftet werden können. Die von Preuschen richtig getroffenen Verbesserungen habe ich nicht weiter erwähnt. Die Interpunktation dagegen, die einer gründlichen Verbesserung bedarf, habe ich mehrmals geändert, ohne es jedoch zu erwähnen.

S. 1, Z. 1. Fussnote. *ճառք* bedeutet nie „Gegenstand“, sondern nur „Reden, Aeusserungen, Worte“ etc. — St. „die Verfolgung“ l. „die Verfolgungen.“ — Z. 2. St. „stattfand“ l. „stattfanden.“ — Z. 3. St. „eine Verfolgung“ l. „die Verfolgung“, wegen des *զ*. — Z. 4 St. „gab es bewunderungswürdige Zeugnisse“ l. „bewunderungswürdig waren die Zeugnisse.“ — Z. 6 8. St. „in Alexandria und . . . . . . von Gotteskämpfern“ l. „in Alexandria. Und aus Ägypten und ganz Asien liessen

Digitized by Google

sie sie dorthin wegführen wie in ein grosses Stadium von bewunderungswürdigen Gotteskämpfern"[1]). — Z. 10. St. „Unter ihnen war aber [von diesen]" l. „Einer[2]) von diesen gerade war." — Die hierzu gehörende Fussnote 1 des Übersetzers ist ein Missverständnis der armen. regelrechten Form *ի նոցունց իսկ յայնցանէ*. — Z. 14. St. „warum" l. „welcher Art." — Z. 14—15. St. „der Menschen zu jener Zeit von ihm" l. „jenes Jünglings[3]) von jener[4]) Zeit an." — Z. 17—19. St. „Aber das Leben . . . . . Schrift." l. „Aber (für den), der über ihn durch die Schrift hören will, ist das Leben jenes Mannes zu vielgestaltig[5]), und seine Reden wären in besonderen [d. h. zerstreuten] Büchern[6]) zu suchen." — Z. 20—22. St. „kurz in kurzem Abriss . . . angemessen ist." l. „in Kürze zusammengefasst das Viele durch Weniges von ihm erzählen, wie es in unserem Vermögen liegt (oder: gemäss unserem Vermögen[7])." — S. 2, Z. 3. St. „freudigen" l. „festen." — Z. 6. St. „an seine Jugend" l. „von seiner Jugend an." — Z. 8. St. „die dortigen Kirchen . . . Demêtr." l. „ihrer Kirche hatte jüngst als Bischof nach Julianos Demêtr gestanden." — Z. 14. St. „auf die Leiden . . . . entgegen" l. „auf Leiden und Not und mit grosser Willigkeit festigte er sich." — Z. 18. Die Fussnote 1 zu „Fürsorge" ist unrichtig; *փութոյն* ist an der Stelle grammatisch ganz korrekt. — Z. 19. St. „durch die Hände seiner Mutter" l. „durch seine Mutter[8])." — Z. 20. St. „bat" l. „flehte und bat." — Z. 21—25. St. „ändern liessen . . . . festhielt" l. „ändern liessen, und er, als er wahrnahm, dass man den Vater ergriff und im Gefängnis bewahrte, in jeder Hinsicht kühn nach dem Zeugnis des Martyriums strebte, da nahm und versteckte seine Mutter alle seine Kleider und hielt ihn mit Gewalt im Hause fest[9])."

[1]) Im arm. Texte, S. 419, Z. 5, ist hinter *Աղէքսանդրիա* ein Punkt zu setzen. Hinter *ասիացւոց* aber sind das Komma und *և* zu streichen. — Z. 6. St. *'ի մեծ և 'ի սքանչելի* l. *մի մեծ սքանչելի*.

[2]) S. 419, Z. 8 ist *զի* zu *մի* zu verbessern.

[3]) S. 419, Z. 12 ist *մարդկանն* in *մանկանն* zu verbessern.

[4]) *յայնմանէ* bezieht sich auf *ի ժամանակէ անտի*.

[5]) S. 419, Z. 14 hinter *բազում* ist ein Punkt zu setzen; S. 420, Z. 1 hinter *զնմանէ* ist der Punkt durch ein Komma zu ersetzen.

[6]) S. 420, Z. 1 ist *առանձինն* in *առանձինս* zu verbessern.

[7]) S. 420, Z. 3 ist hinter *մերում* ein Komma zu setzen.

